ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
•
ՆՈՐ ԴԱՐԵՐ

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

VIII
ԴԱՍԱՐԱՆ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2012

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝
որպես դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Ս 000

Հեղինակներ՝
Ալբերտ Ստեփանյան. պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(Ներածություն, §§ 1–8, 11–19, 27, 28)
Ռուբեն Սաֆրաստյան. պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(§§ 9, 10, 22, 23)
Արամ Նազարյան. պատմագիտության թեկնածու
(§§ 20, 21, 24–26)
Արմինե Սարգսյան. պատմաբան, մանկավարժ
(I և II բաժինների ամփոփումներ, մեթոդական ապարատ)

Ստեփանյան Ա.
Ս 000 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ՆՈՐ ԴԱՐԵՐ: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 8–րդ դասարանի համար/ Ա. Ստեփանյան, Ռ. Սաֆրաստյան, Ա. Նազարյան, Ա. Սարգսյան.— Եր.: Զանգակ, 2012.— 000 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978–9939–68–000–0

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2012 թ.
© Հեղինակներ, 2012 թ.

Բոլոր իրավունքները պաշտպանված են

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական հասարակության երկու շրջափուլերը

Պատանի՛ բարեկամ, այս ուսումնական տարում դու կուսումնասիրես համաշխարհային պատմության երրորդ խոշոր շրջանը՝ **Նոր դարերը**: Պատմությունն ընդհանուր առմամբ ներկայանում է որպես հասարակության առաջադիմական զարգացման գործընթաց: Անշուշտ, այդ առաջընթացը չի եղել կայուն և հավասարաչափ: Տարբեր երկրներում այն ունեցել է իր առանձնահատկությունները. երբեմն՝ արագ վերելք, երբեմն՝ տևական լճացում կամ անկում:

Առաջընթացի կարևոր չափանիշներից է տվյալ հասարակության՝ նյութական բարիքներ արտադրելու կարողությունը: Դրան համապատասխան էլ ձևավորվում են մարդկանց տնտեսական, ընկերային (սոցիալական), մշակութային և քաղաքական հարաբերությունները:

Հասարակական նոր հարաբերությունների ձևավորումը տևական գործընթաց է: Այդպիսի մի գործընթաց սկզբնավորվեց **Նոր պատմության** արշալույսին՝ XVII դ. սկզբին: Այն հանգեցրեց **արդյունաբերական հասարակության** ձևավորմանը: Նկատի ունենալով նրա ձևավորման տարածաշրջանը՝ վերջինս անվանում են նաև **եվրոպական** կամ **արևմտյան հասարակություն**, իսկ երբեմն նաև կապիտալիստական կամ բուրժուական՝ նկատի ունենալով սեփականության այն նոր ձևը (**կապիտալ**), որը հատուկ էր նրան: Արդյունաբերական հասարակության պատմությունը ներկայացվում է երեք շրջափուլով: Դրանցից երկուսը ընդգրկում են Նոր դարերը:

Առաջինն ընդգրկում է XVII դ. մինչև XIX դ. կեսը: Այդ ժամանակաշրջանում սկզբնավորվեց և զարգացավ արդյունաբերական արտադրությունը, ձեռքի աշխատանքին փոխարինելու եկան մեքենաներն ու սարքավորումները: Դա արդյունք էր **արդյունաբերական հեղաշրջման**: Հասարակության առաջատար դասերը դարձան **ձեռներեցները և բանվորները**: Ձևավորվեց ազգային միասնական շուկան: Խորացան տարբեր երկրների և աշխարհամասերի միջև տնտեսական կապերը: Ի հայտ եկան մեծ քաղաքներ:

Երկրորդ շրջափուլն ընդգրկում է XIX դ. կեսից մինչև XX դ. սկիզբը: Այդ ընթացքում ավարտվեց արդյունաբերական հասարակության ձևավորումը: Հասարակական կյանքում մեծացավ գիտության և տեխնիկայի դերը: Արտադրությունն ընդլայնվեց և հասավ մեծ ծավալների: Առաջավոր երկրներում գերիշխող դարձավ ծանր արդյունաբերությունը: Առաջացավ համաշխարհային միասնական շուկա:

Ավելացավ խոշոր քաղաքների թիվը, բարձրացավ բնակչության կենցաղային ու կրթական մակարդակը:

Հասարակական–քաղաքական գործընթացները

Նոր դարերում տեղի ունեցան հասարակական կարգի արմատական փոփոխություններ: Ավատատիրական հասարակական հարաբերություններին փոխարինելու էր գալիս **ժողովրդավարությունը**: Միջնադարյան ժողովուրդն սկսում էր կազմավորվել որպես արդիական **ազգ**: Ազգը միասնական էր, գիտակցում էր իր շահերը և ուներ կամք՝ բարենորոգելու իր հասարակական կարգը և մասնակցելու դրա կառավարմանը: Վերացան դասերի (ազնվականություն, հոգևորականություն, գյուղացիություն) միջև առկա նախկին անջրպետները: Բոլորը օրենքի առաջ ճանաչվեցին ազատ և հավասար քաղաքացիներ: Սկսեց ձևավորվել **քաղաքացիական հասարակությունը**:

Հին կարգերը, սակայն, դժվարությամբ էին զիջում իրենց տեղը: Հաճախակի դարձան **հեղափոխությունները**: Իշխանության համար հնի և նորի կողմնակիցների միջև ծայր էր առնում քաղաքացիական պատերազմ: Հեղափոխությունները երբեմն մեծ ազդեցություն էին թողնում նաև այլ երկրների վրա: Այդպիսին էր, օրինակ՝ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը (1789–1799):

Սակայն հեղափոխությունները առաջընթացի միակ ուղին չէին: Նորի հաստատման ճանապարհին որոշ ազգեր գերադասում էին իրականացնել նպատակասլաց և աստիճանական **բարենորոգումներ:** Նրանք խուսափում էին մեծ ցնցումներից և հասնում հաջողությունների տնտեսության, պետական կառավարման, մշակույթի ասպարեզներում: Այդ ուղին ավելի հատկանշական էր Անգլիայի համար:

Նոր դարերին բնորոշ էր նաև **ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը և ազգային պետությունների ստեղծումը:** Դրանք ուղեկցվում էին հեղափոխական շարժումներով: Ասվածի լավագույն օրինակը հյուսիսամերիկյան գաղութների ազատագրական պատերազմն էր և ԱՄՆ–ի կազմավորումը (1775–1783):

Կարևոր փոփոխություններ տեղի ունեցան նաև միջազգային հարաբերություններում: Ձևավորվեցին արդի միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները:

Մեծ չափերի հասան **գաղութային նվաճումները Լատինական Ամերիկայում, Ասիայում, Աֆրիկայում**: Գաղութացումն ուներ երկակի բովանդակություն: Մի կողմից՝ զարգացած եվրոպական երկրները նվաճում էին հետամնաց ժողովուրդներին՝ կողոպտելով նրանց հարստությունները, ենթարկելով դաժան շահագործման, մյուս կողմից՝ հետամնաց ժողովուրդները հաղորդակից էին դառնում արդյունաբերական հասարակության նվաճումներին:

Ընդհանուր գծերով սրանք են պատմական զարգացման այն կարևոր արդյունքները, որոնց մասին ավելի հանգամանալից կխոսվի դասագրքում:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ

XVII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ

1 ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տեխնիկայի առաջընթացը

Դարեր շարունակ մարդիկ ձգտել են ավելացնելու նյութական բարիքների արտադրությունը, բարելավելու իրենց կյանքի պայմանները, բարձրացնելու կենսամակարդակը: Ստեղծել են գործիքներ, սարքավորումներ՝ ֆիզիկական ծանր աշխատանքը թեթևացնելու համար: Այդ ուղղությամբ տպավորիչ նվաճումներ արձանագրվեցին նոր ժամանակներում:

XV–XVI դդ., ինչպես գիտեք, աշխարհագրական հայտնագործությունների, ծովային առևտրի ծավալման, գաղութների հիմնման հետևանքով մեծ քանակությամբ ոսկի և արծաթ ներմուծվեց Եվրոպա: Դա նպաստեց մարդկանց բարեկեցության աճին: Ավելացավ բնակչության թիվը, մեծացավ ապրանքների պահանջարկը: Արհեստավորական արտադրությունն այլևս չէր կարող բավարարել մարդկանց աճող պահանջմունքները: Եվ միջնադարյան արհեստանոցի փոխարեն աստիճանաբար առաջացան ավելի խոշոր արտադրական ձեռնարկություններ՝ **մանուֆակտուրաներ**: Դրանք հայտնվեցին նախ Անգլիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, ապա նաև Եվրոպայի մյուս երկրներում:

Մանուֆակտուրայում վարձու աշխատող բանվորներից յուրաքանչյուրը հմտանում էր արտադրական մեկ կամ մի քանի գործողության մեջ: Օրինակ՝ մահուդագործ բանվորներից ոմանք լվանում էին բուրդը, մյուսները՝ մանում, մի մասը ներկում էր, մյուս մասը՝ գործում: Աշխատանքի բաժանման արդյունքում խորացավ **աշխատանքի մասնագիտացումը,** և բարձրացավ **արտադրողականությունը**: Սակայն մանուֆակտուրաներում աշխատանքը գերազանցապես ձեռքով էր կատարվում:

Դարեր շարունակ էներգիայի գլխավոր աղբյուրը եղել է մարդու և կենդանիների մկանային ուժը: Աշխատանքը հեշտացնելու համար օգտագործվել են նաև



Մանուֆակտուրա



ՋԵՅՄՍ ՈՒԱՏՏ
(1736–1819)

Ծնվել է Շոտլանդիայում: Պապը եղել է մաթեմատիկայի և ծովագնացության դասախոս, հայրը՝ գործարար: Վաղ հասակից սիրել է մաթեմատիկան և դրսևորել գյուտարարական հակումներ: Ի վերջո՝ Գլազգոյի համալսարանում դարձել է գործիքագործ վարպետ:
1768 թ. ստեղծել է իր առաջին շոգեշարժիչը: Այն կատարելագործելով՝ ստեղծել է նաև շոգեշարժիչի աշխատանքը կարգավորող այլ սարքեր:
Շոգեշարժիչի ստեղծումը XIX դարում Անգլիային և եվրոպական մյուս երկրներին հնարավորություն տվեց արդյունաբերության մեջ կատարելու մեծ թռիչք:
Առաջինը նա է, որպես հզորության չափման միավոր, առաջ քաշել ձիաուժի գաղափարը: Հետագայում նրա անունով կոչվեց հզորության չափման մյուս միավորը՝ վատտը:

բնության ուժերը՝ ջուրը, քամին, կրակը: Ուշ միջնադարում դրանց կիրառումն ավելի մեծ չափերի հասավ: **Ջրանիվը**, որ հայտնի էր դեռ Հին աշխարհում, լայն տարածում ստացավ: Արդեն XVI դ. ջրանիվի էներգիայով էին աշխատում խառատային հաստոցները, սղոցները, դարբնոցների փուքսերը, մահուդագործական մամլիչները և այլն:

Էական առաջընթաց ապրեց նաև զինագործությունը: Մեծացան թնդանոթների չափերը և հզորությունը: Գործողության մեջ մտան պատրույգով, ինչպես նաև կայծքարով հրացանները և ատրճանակները:

Այսպիսով՝ մանուֆակտուրաները էապես նպաստեցին աշխատանքի արտադրողականության աճին և տեխնիկայի առաջընթացին:

Գյուղատնտեսության վերազինումը

XVII–XVIII դդ. աշխարհի բնակչության մեծ մասը զբաղված էր գյուղատնտեսությամբ: Նույնիսկ արագ զարգացող Եվրոպայում հողի մշակմամբ զբաղված էր բնակչության գրեթե 90 %-ը: Տեխնիկան հետամնաց էր. հողը մեծ մասամբ մշակում էին արորով և բրիչով:

Գյուղատնտեսությունն ամենից արագ զարգանում էր Անգլիայում: Այնտեղ մանուֆակտուրաներ առաջանում էին նաև գյուղական վայրերում: Հատկապես շատ էին գործվածքեղեն արտադրող մանուֆակտուրաները: Դա մեծացնում էր բրդի պահանջարկը, որն էլ խթանում

էր ոչխարաբուծության զարգացմանը: Կենդանիներին կերակրելու և պահելու նպատակով ցանկապատում էին համայնական արոտավայրերը: XVIII դ. վերջին այդ գործընթացը հիմնականում ավարտվեց. ամրագրվեց հողի մասնավոր սեփականությունը:

Զարգացավ երկրագործությունը: Ընդլայնվեցին ցանքատարածությունները, ոռոգման ջրանցքները: Բերքատվության աճին նպաստում էր նաև հողի պարարտացումը գոմաղբով, կրաքարով, ծովատիղմով և այլն: Ունևոր տնտեսություններում հողը հերկում էին գութանով, ցանքսը կատարում սերմնացանով: Խոր հերկը, պարարտացումը, սերմերի համաչափ ցանքսը և ոռոգումը 2–2,5 անգամ ավելի բերք էին ապահովում:

Գյուղատնտեսության զարգացմանը խթանեց նաև խոշոր քաղաքների առաջացումը: Դրանք գյուղատնտեսական մթերքների մեծ սպառողներ էին: Ստեղծվեցին ցորենի, գարու, վարսակի, մրգերի ու բանջարեղենի նոր տեսակներ: Ներմուծվեցին նոր մշակաբույսեր՝ կարտոֆիլ, շաղգամ:

Այս ամենի հետևանքով գյուղատնտեսությունը վերածվեց արտադրության առանձին բնագավառի, որի կազմակերպումն սկսեց դրվել գիտական հիմքերի վրա: Միայն XVII դ. առաջին կեսին Անգլիայում լույս տեսավ գյուղատնտեսության մասին մոտ 50 անուն գիրք: Այս միտումները ժամանակի ընթացքում տարածվեցին նաև Եվրոպայի մյուս երկրներում:

Արդյունաբերական հեղաշրջումը

Մետաղաձուլման հնոց

Մանուֆակտուրան բավականին տարածված էր XVIII դ. Եվրոպայում: Սակայն արտադրության մեջ տիրապետող ձեռքի աշխատանքը այլևս չէր ապահովում արտադրության առաջընթացը: Աստիճանաբար անցում կատարվեց մանուֆակտուրայից **մեքենագործարանային** արտադրության: Այդ անցումը հայտնի է **արդյունաբերական հեղաշրջում** անունով:

Նման ուղիով առաջինն ընթացավ Անգլիան: Նրա վերազինումը տևեց XVIII դ. 60–ական թթ. մինչև XIX դ. 40–ական թթ.: Անգլիայում էին գտնվում ամենից շատ և կատարյալ մանուֆակտուրաները: Անգլիացի ձեռներեցնե-

ը կուտակել էին մեծ կապիտալ, որը սկսեցին ներդնել արտադրության մեջ:

Կապիտալը հարստություն է, որը ձեռներեցը, ներդնելով արտադրության մեջ, նոր շահույթ է ստանում:

Ժամանակի ընթացքում կապիտալը՝ դառնալով սեփականության գլխավոր ձև, հիմք է դնում **նոր՝ կապիտալիստական հասարակարգի ձևավորման:**

Ձեռներեցները միջոցներ չէին խնայում տեխնիկական գյուտեր և գիտական հայտնագործություններ հովանավորելու գործում: Առաջին սարքերը ներդրվեցին մանածագործության մեջ, **կառուցվեցին առաջին գործարանները**: Սարքերի և մեքենաների կիրառումը մի քանի անգամ ավելացրեց աշխատանքի որակն ու արտադրողականությունը:

Ճարտարագետները ձգտում էին ստեղծելու **համընդհանուր շարժիչ**: Արդիական էր **գոլորշու ուժի** օգտագործման գաղափարը, որն իրականություն դարձրեց անգլիացի ճարտարագետ **Ջ. Ուատտը**: Նա իր շոգեշարժիչի հիմքի վրա **1784 թ.** ստեղծեց առաջին **շոգեմեքենան**:

Շոգեշարժիչի գյուտը հեղաշրջում առաջացրեց: 1807 թ. **Ռ. Ֆուլտոնը** ԱՄՆ–ում ստեղծեց առաջին շոգենավը: XIX դ. առաջին կեսին հազարավոր շոգենավեր արդեն ակոսում էին ծովերն ու օվկիանոսները: 1814 թ. անգլիացի ճարտարագետ **Ջ. Ստեֆենսոնի** գլխավորությամբ ստեղծվեց առաջին շոգեքարշը, իսկ **1823 թ.**՝ առաջին երկաթուղին: Մինչև XIX դ. կեսը Անգլիայում և մյուս երկր-

ՋՈՐՋ ՍՏԵՖԵՆՍՈՆ
(1781–1848)

Անգլիացի ինքնուս ճարտարագետ: 1814 թ. ստեղծել է շոգեքարշ, որի օգնությամբ քարածուխ է հանվել հանքից: 1823 թ. հիմնել է աշխարհում առաջին շոգեքարշների գործարան, որտեղ ստեղծվել է «Հրթիռ» շոգեքարշը՝ ժամում 50 կմ արագությամբ: Նույն թվականին նրա գլխավորությամբ կառուցվել է առաջին երկաթուղին:
1836 թ. Լոնդոնում ստեղծել է երկաթուղիների նախագծման գրասենյակ:



Առաջին շոգենավը

ՌՈԲԵՐՏ ՖՈՒԼՏՈՆ
(1765–1815)

Ամերիկացի գյուտարար, ճարտարագետ: Ապրել է Փարիզում: 1800 թ. ստեղծել է լողացող ական և սուզանավ: 1803 թ. Սենա գետում փորձարկվեց նրա առաջին շոգենավը, որի արագությունը 7 կմ/ժ էր: ԱՄՆ–ում 1807 թ. Հուդզոն գետում փորձարկում է իր նոր շոգենավը: Դա շոգենավային երթևեկության սկիզբն էր: Ռ. Ֆուլտոնը նաև կառուցել է ռազմական շոգենավ, որն օգտագործվել է 1812–1814 թթ. Անգլիայի դեմ պատերազմում:

ներում կառուցվեցին հազարավոր կիլոմետր երկարությամբ երկաթուղիներ:

XIX դ. առաջին կեսին կտրուկ ավելացավ թուջի (չուգունի) և պողպատի արտադրությունը: Ստեղծվեցին նոր մետաղահալոցներ, որտեղ ստանում էին պողպատի բարձրորակ տեսակներ:

Արտադրության ամենատարբեր ճյուղերի աննախադեպ զարգացումը Անգլիան դարձրեց մեկ տնտեսական ամբողջություն: Զարգացավ **համազգային շուկան**: Շուկան էր որոշում՝ ինչ արտադրել, ինչ որակի ու քանակի և ինչ գնով վաճառել:

Արդյունաբերական հեղաշրջման ավարտին Անգլիան դարձավ աշխարհի ամենազարգացած երկիրը: 1851 թ. Լոնդոնում կազմակերպվեց տնտեսական նվաճումների առաջին համաշխարհային ցուցահանդեսը: Ցուցահանդեսին մասնակցել են նաև հայ ձեռներեցներ, որոնց արտադրանքի նմուշներն արժանացել են բարձր պարգևների:

«Բյուրեղապակյա ապարանքը» Լոնդոնում, որտեղ 1851 թ. անցկացվեց տնտեսական նվաճումների համաշխարհային առաջին ցուցահանդեսը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է մանուֆակտուրան: Ինչով էր այն տարբերվում միջնադարյան արհեստանոցից:
2. Ո՞ր երկրներում առաջինը ստեղծվեցին մանուֆակտուրաներ:
3. Փաստերով ցո՛ւյց տվեք, որ մանուֆակտուրաների առաջացումը նպաստեց աշխատանքի արտադրողականության աճին և տեխնիկական առաջընթացին:
4. XVII–XVIII դարերում ինչ գործոններ խթանեցին գյուղատնտեսության զարգացմանը:
5. Ինչ է արդյունաբերական հեղաշրջումը: Ո՞ր երկրում և ե՞րբ առաջինը տեղի ունեցավ արդյունաբերական հեղաշրջում:
6. Ե՞րբ է կառուցվել աշխարհում առաջին գործարանը:
7. Տեխնիկական ո՞ր գյուտերը և գիտական հայտնագործությունները նպաստեցին արդյունաբերական հեղաշրջման ծավալմանը:
8. Փաստերով հիմնավորե՛ք, որ Անգլիան արդյունաբերական հեղաշրջման ավարտին դարձել էր աշխարհի ամենազարգացած երկիրը:

Նոր հասկացություններ, անուններ

Տեխնիկական առաջընթաց, մանուֆակտուրա, աշխատանքի արտադրողականություն, ջրանիվ, մեքենագործարանային արտադրություն, արդյունաբերական հեղաշրջում, կապիտալ, շոգեմեքենա, շոգենավ, երկաթուղի, համազգային շուկա, տնտեսական նվաճումների առաջին ցուցահանդես, Ջ. Ուատտ, Ռ. Ֆուլտոն, Ջ. Ստեֆենսոն

2 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փոփոխություններ հասարակական կյանքում

XVII դ. սկսած՝ տնտեսական առաջընթացը հանգեցրեց Եվրոպայում նոր հասարակարգի ձևավորմանը: Այն ընդունված է անվանել **արդյունաբերական հասարակություն**:

Մենք գիտենք, որ միջնադարյան հասարակությունը բաղկացած էր երկու հիմնական դասից՝ ազնվականությունից և գյուղացիությունից: Կարևոր դեր էին խաղում նաև հոգևորականները, արհեստավորներն ու վաճառականները: Նոր ժամանակներում հասարակության ընկերային (սոցիալական) պատկերը հիմնովին փոխվեց: Արդյունաբերական հասարակության կարևոր դեմքը դարձան **ձեռներեցները** և **բանվորները**: Ձեռներեցներին անվանում էին **բուրժուա**, իսկ ավելի ուշ նաև **կապիտալիստ**:

Բուրժուա ասելով՝ նկատի ունեին քաղաքի պատվարժան բնակիչներին՝ բժիշկներ, փաստաբաններ, դատավորներ, դեղագործներ, վաճառականներ, դրամատերեր (բանկիրներ): Դրանք մարդիկ էին, ովքեր ունեին կարևոր մասնագիտություն, ինքնուրույն գործ և ապրում էին բարեկեցիկ կյանքով: Իսկ «կապիտալիստ» հասկացությամբ շեշտվում էր, որ տվյալ անձն ունի կապիտալ և ձգտում է այն բազմապատկել: Առավել արագ հարստանում էին վաճառականները, դրամատերերը, նավատերերը: Նրանք մասնակցում էին արտաքին առևտրին՝ ստեղծելով խոշոր ընկերություններ: Մասնակցում էին նաև անդրծովյան գաղութների հիմնմանը: Օրինակ՝ 1600 թ. Անգլիայում ստեղծվեց **Արևելահնդկական ընկերությունը**, որը գոյություն ունեցավ մինչև XIX դ. երկրորդ կեսը: Նրա հետ է կապված Հնդկաստանի գաղութացումը:

Նոր ժամանակներում կտրուկ մեծացավ **բանկերի** նշանակությունը: Գործարարները իրենց կապիտալը

շահավետ պայմաններով բանկերում էին պահում, իսկ ուրիշները վարկեր էին ստանում: Բանկերը նպաստում էին տնտեսության զարգացմանը՝ դրամական ներդրումներ կատարելով տնտեսության տարբեր ճյուղերում:

Անգլիայում ազնվականների մի մասն իր կալվածքները վերածեց բուրդ արտադրող տնտեսության: Նրանք սկսեցին կոչվել **նոր ազնվականություն**: Ավելի ուշ նման դաս ձևավորվեց Ֆրանսիայում և մյուս երկրներում:

Նոր ժամանակներում ծանր ճակատագիր բաժին ընկավ բնակչության մեծամասնությունը կազմող գյուղացիությանը: Գյուղը ներքաշվեց շուկայական տնտեսության մեջ: Համայնական հողերի ցանկապատումն ունեզրկեց գյուղացիների մեծ մասին: Այդուհանդերձ, գյուղացիների մի փոքր մասին հաջողվեց ստեղծել սեփական տնտեսություն և դառնալ **ագարակատեր (ֆերմեր)**:

Ինչպիսի՞ն էր սոցիալական վիճակը քաղաքներում: Արդյունաբերական հեղաշրջման հետևանքով կտրուկ աճեց քաղաքային բնակչության թիվը, և քաղաքներն սկսեցին վճռորոշ դեր խաղալ պետության կյանքում:

Նախ՝ ձևավորվեց ձեռներեցների դասը, որոնց շարքերում ազդեցիկ դարձան արդյունաբերողները՝ հանքահորերի, ձեռնարկությունների, փոխադրամիջոցների տերերը: Երկրորդ՝ գյուղից քաղաք տեղափոխված գյուղացիների զանգվածն աստիճանաբար վերածվեց արդյունաբերական բանվորության: **Արդյունաբերողներն ու բանվորները դարձան նոր հասարակության գլխավոր ուժերը:** Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր շահերը: Ձեռներեցները ձգտում էին հասնելու իշխանության, նպաստավոր պայմաններ ստեղծելու գործարարության համար և ստանալու մեծ եկամուտներ: Իսկ բանվորները ձգտում էին բարելավելու իրենց աշխատանքային, հասարակական և կենցաղային վիճակը:

Արդյունաբերական հասարակության առաջացման կարևոր սոցիալական հետևանքներից մեկն էլ մտավոր աշխատանքով զբաղվող մարդկանց թվաքանակի կտրուկ աճն էր: **Մտավորականությունը դարձավ բազմամարդ՝** գիտնականներ, ճարտարագետներ, իրավաբաններ, ուսուցիչներ, բժիշկներ և այլն: Զարգացած երկրներում միտում կար գրագիտությունը դարձնելու համատարած:

Նոր ժամանակների ագարակատեր

Քաղաքների զարգացումը

XVI դ. ի վեր Եվրոպայում քաղաքներն աննախադեպ զարգացում ապրեցին: Ձևավորվեցին արդյունագործական քաղաքներ, որտեղ կենտրոնացած էին մանուֆակտուրաները, շուկաները, պահեստները, դրամատները: Աշխուժություն էր տիրում **բորսաներում**, որտեղ ձեռներեցները հանդիպում և գործարքներ էին կնքում: Ամենահայտնին Լոնդոնի **Սիթի** կոչվող բորսան էր:

XVIII դ. կեսին Արևմտյան Եվրոպայում կար հարյուր հազարից ավելի բնակչությամբ 15 քաղաք: XIX դ. քաղաքներում ապրում էր Անգլիայի բնակչության կեսից ավելին: Նման միտում էր նկատվում նաև Ֆրանսիայում, Հոլանդիայում, Գերմանիայում, ԱՄՆ–ում: Հատկապես արագ էին աճում Լոնդոնը, Փարիզը, Նյու Յորքը:

Փոխվեց քաղաքների ենթակառուցվածքը: Միանման նախագծերով սկսեցին կառուցվել փողոցներ, տներ, զբոսայգիներ, հիվանդանոցներ, թատրոններ, գրադարաններ, թանգարաններ, դպրոցներ: Հատուկ ուշադրություն էր դարձվում համաքաղաքային ջրմուղի և կոյուղու ստեղծմանը: XIX դ. առաջին կեսին Փարիզում և Լոնդոնում սկսեց գործել առաջին հասարակական փոխադրամիջոցը՝ **ձիաքարշ մեծ կառքը** կամ **հանրակառքը** (օմնիբուս):

Հանրակառք պատկերող հին լուսանկար

Մարդկանց կենսապայմանների բարելավումը

Տեխնիկայի առաջընթացը, աշխատանքի արտադրողականության աճը նպաստում էին նյութական բարիքների ավելացմանը: XVIII դ. անգլիացի տնտեսագետ **Ա. Սմիթը** ապացուցեց, որ ազգերի հարստության աղբյուրը աշխատանքն է:

Բարեկեցության չափանիշով անգլիացիները նույնպես առաջինն էին: Նրանց հետևեցին ֆրանսիացիները, ամերիկացիները, գերմանացիները և այլք: Սակայն ազգերն այդպիսի հաջողության հասան աստիճանաբար՝ ոչ միանգամից: Արդյունաբերական հասարակության առաջին փուլում աշխատավորությունն ապրում էր ծանր պայմաններում:

Ամենաընչազուրկ մասը ժամանակավոր վարձու աշխատանքով ապրողներն էին՝ մեծ մասը նախկին հողազուրկ գյուղացիներ: Տեղափոխվելով քաղաքներ՝ նրանց միշտ չէ, որ հաջողվում էր աշխատանք գտնել: Շատերը դառնում էին շրջմոլիկ, մուրացկան կամ գող:

Բարվոք չէր նաև մշտական աշխատանք ունեցողների վիճակը: Ձեռներեցները նրանց աշխատեցնում էին շատ, սակայն վճարում՝ քիչ: Աշխատում էին օրական 14-18 ժամ: Բանվորներն ապրում էին խուղերում՝ առանց կենցաղային տարրական պայմանների: Մահացությունը (հատկապես՝ երեխաների) չափազանց մեծ էր: Ձեռնե-

Նոր ժամանակների արդյունաբերական քաղաք

ռեցները նաև շահագործում էին կանանց ու անչափահասների աշխատանքը: Ոմանք հուսահատված կոչ էին անում վերադառնալ գյուղ:

Սակայն կար ավելի արդյունավետ ճանապարհ: Իրենց իրավունքները պաշտպանելու համար բանվորներն ստեղծում էին **արհեստակցական միություններ**: Անգլիայում դրանք սկսեցին ի հայտ գալ XVIII դ. վերջին: Բանվորները հաճախ **գործադուլների** միջոցով պահանջում էին բարձրացնել իրենց աշխատավարձը, կրճատել աշխատաժամանակը և այլն:

Պետությունը մշտապես փորձում էր մեղմել սոցիալական հակասությունները: Օրինակ՝ մինչև 1834 թ. Անգլիայում հարուստներից հատուկ հարկ էր գանձվում՝ հոգուտ աղքատների: Իսկ XIX դ. 30–40–ական թթ. խորհրդարանն օրենքներ էր ընդունել, որոնք արգելում էին մինչև 9 տարեկան երեխաների աշխատանքը, իսկ մինչև 14 տարեկանների աշխատանքային օրը չէր կարող գերազանցել 9 ժամը: Նրանք պարտադիր պետք է դպրոց հաճախեին: Հետագայում բանվորների համար սահմանվեց 10–ժամյա աշխատանքային օր, ճաշի ընդմիջում, կյանքի ապահովագրություն և այլն: Ընդհանուր առմամբ՝ բնակչության կենսապայմանները, թեև դանդաղ, բարելավվում էին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է կոչվում նոր ժամանակներում ձևավորված հասարակարգը. ինչու՞:
2. Որո՞նք էին նոր հասարակարգի գլխավոր սոցիալական ուժերը: Ձեր կարծիքով՝ ինչո՞վ էին տարբերվում ձեռներեցն ու բանվորը միջնադարյան ազնվականից և գյուղացուց:
3. Ովքե՞ր և ինչպե՞ս էին դառնում ձեռներեց:
4. Ինչու՞ մտավորականության թիվը կտրուկ աճեց:
5. Նոր ժամանակներում ինչո՞վ էր պայմանավորված քաղաքների դերի և քանակի աճը:
6. Ո՞վ էր Ա. Սմիթը, ի՞նչն էր նա համարում ազգերի հարստության աղբյուրը:
7. Նկարագրե՛ք մարդկանց կենսապայմանները և դրանցում տեղի ունեցած փոփոխությունները Նոր պատմության առաջին փուլում:

Գործնական աշխատանք

«Տրամագիր» վարժության միջոցով համեմատե՛ք միջնադարյան և նոր ժամանակների եվրոպական քաղաքը:

Նոր հասկացություններ, անուններ

Արդյունաբերական հասարակություն, ձեռներեց (գործարար), բուրժուա, կապիտալիստ, բանվոր, նոր ազնվականություն, բորսա, հանրակառք, արհմիություն, գործադուլ, Ա. Սմիթ, Արևելահնդկական ընկերություն, արհեստակցական միություն

3 ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

ՋՈՆ ԼՈԿ
(1632–1704)

Համակողմանի զարգացած այս մտածողի և քաղաքական գործչի իդեալն այնպիսի հասարակության ստեղծումն էր, որտեղ առկա կլինեն բոլոր քաղաքացիների զարգացման հնարավորությունները: Բանական օրենքներ, արդարություն, մարդկանց համագործակցություն. ահա այն արժեքները, որոնցով պետք է միավորվի հասարակությունը: Այս գաղափարներն արտահայտված են հատկապես Ջ. Լոկի «Մարդկային բանականության մասին» և «Կառավարության մասին» գործերում:

Լուսավորական շարժումը

Հասարակության արմատական փոփոխությունները հեշտությամբ չէին ընթանում: Ավատատիրական վերնախավը և հոգևորականությունը կառչած էին հին կարգերից: Եկեղեցին ամեն մի էական նորամուծություն համարում էր Աստծու կամքին հակառակ: Ուստի անհրաժեշտություն առաջացավ նոր գաղափարներով հիմնավորելու առաջադիմությունը:

Հենց այդ նպատակին էր միտված **լուսավորական շարժումը**: Այն ծավալվեց հիմնականում XVIII դ., այդ պատճառով հարյուրամյակն անվանում են նաև **լուսավորության դար**: Շարժմանը մասնակցում էր առաջադեմ մտավորականությունը՝ իմաստասերներ, գրողներ, գիտնականներ, արվեստագետներ: Քիչ չէին նաև պետական ու հասարակական գործիչները:

Լուսավորականները քննադատում էին հին կարգերը, կրոնական մոլեռանդությունն ու միահեծան միապետությունը: Պահանջում էին ազատություն, իրավահավասարություն և օրենքի գերակայություն: Հասարակության զարգացման կարևորագույն նախապայման էին համարում կրթության և նոր գիտելիքների տարածումը:

Գաղափարախոսությունը

Լուսավորական գաղափարները լայն տարածում գտան զարգացած երկրներում, հատկապես Անգլիայում և Ֆրանսիայում:

Նոր դարաշրջանի մարդու և հասարակության հիմնախնդիրներին են նվիրված անգլիացի նշանավոր իմաստասեր **Ջ. Լոկի** բազմաթիվ գործեր: Ըստ նրա՝ գիտելիքները մարդկության զարգացման նախապայմանն են: Դրանք կարելի է ձեռք բերել փորձառությամբ և գործնական աշխատանքով: Այսինքն՝ իմացության աղ-

բյուրը նա համարում էր կյանքը: Նա առաջ քաշեց այն գաղափարը, որ **մարդիկ ի ծնե ազատ են, հավասար և անկախ**: Դա նրանց բնական վիճակն է, որը հնարավոր է ապահովել միայն **ազատության և սեփականության** շնորհիվ: Այդ նպատակով մարդիկ միմյանց հետ կնքում են դաշինք և ստեղծում պետություն:

Ֆրանսիացի **Շ. Մոնտեսքյոն** պնդում էր, որ հասարակության զարգացման գլխավոր խթանը **կատարյալ օրենքներն են և պետական կարգը**: Ըստ նրա՝ մարդու ազատությունը շաղկապված է կատարյալ օրենքներով ապրելու ձգտման հետ: Պատմությանը հայտնի է պետության երեք հիմնական տարատեսակ՝ **բռնապետություն**՝ հիմնված վախի, **միապետություն**՝ պատվի և **հանրապետություն**՝ առաքինության վրա: Իմաստասերը Ֆրանսիայի համար նախընտրում էր **սահմանադրական միապետությունը**, որի դեպքում օրենքները սահմանափակում են թագավորի իշխանությունը: Այդ կապակցությամբ Մոնտեսքյոն զարգացրել է **իշխանության տարանջատման գաղափարը՝ օրենսդիր, գործադիր և դատական**: Այս գաղափարը հսկայական ազդեցություն է ունեցել համաշխարհային իրավական մտքի զարգացման վրա:

Մոնտեսքյոյի ժամանակակիցն էր **Ֆ. Վոլտերը**: Նա հավատում էր մարդկային բանականությանը և ատում կրոնական հավատը: Ըստ նրա՝ հասարակության մեջ ամեն ինչ պետք է լինի բանականության պահանջներին համապատասխան: Միայն այդ դեպքում հասարակությունը կարող է առաջնորդվել արդարության, ազատության և օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքներով: Նա դեմ էր հեղափոխություններին: Կարծում էր, որ նպատակին կարելի է հասնել **լուսավորյալ միապետի** ջանքերով, ով տոգորված է առաջադիմական գաղափարներով և մտահոգված է ժողովրդի բարօրությամբ:

Մեծ մտածող էր **Ժ.-Ժ. Ռուսոն**: Նրան ամենից շատ հուզում էր մարդկանց անհավասարության հիմնախնդիրը: Նա կարծում էր, որ մարդիկ մի ժամանակ ապրել են երջանիկ, որովհետև չի եղել մասնավոր սեփականություն: Հետագայում մասնավոր սեփականության

ՇԱՐԼ ՄՈՆՏԵՍՔՅՈ
(1689–1755)

Աշխատասեր և մեծ ընդունակությունների տեր այս ֆրանսիացին ուսումնասիրել է բազմաթիվ երկրների պատմությունը, օրենքները, հասարակարգը և տնտեսությունը: Եղել է Ֆրանսիական ակադեմիայի անդամ: Նրա գրքերը, հատկապես «Օրենքների ոգու մասին» գիրքը, միտված են ժամանակի հասարակական-քաղաքական կարգերի բարեփոխմանը:

ՊԵՏՐՈՍ I ՄԵԾ
(1672–1725)

Նրա կյանքը և գործունեությունը օրինակելի են եղել շատ թագավորների և պետական գործիչների համար: Աշխատասեր էր, ատում էր ծույլերին: Մեծ սեր ուներ գիտելիքների նկատմամբ, տիրապետում էր 14 մասնագիտության: Տաղանդավոր զորապետ էր: Քաջ էր, բայց շրջահայաց ու զգուշավոր: Պահանջկոտ էր և պաշտոններ էր տալիս միայն աշխատասեր և ընդունակ անձանց: Անաչառ էր. չխնայեց անգամ որդուն, ով դեմ էր բարենորոգումներին և փորձում էր դավադրությամբ հասնել իշխանության:

առաջացումը մարդու կողմից մարդու շահագործման պատճառ դարձավ: Եվ ի հայտ եկան հարուստներ ու աղքատներ:

Ռուսոն հասկանում էր, որ մասնավոր սեփականությունը վերացնել հնարավոր չէ: Նա առաջարկում էր այն սահմանափակել այնպես, որ վերանան ծայրահեղ հարստությունը և ծայրահեղ աղքատությունը: Նա մտածում էր, որ մարդիկ փոխադարձ համաձայնությամբ պետք է բարեփոխեն պետական կարգը: Ռուսոն նախապատվությունը տալիս էր **հանրապետությանը.** մի կարգ, երբ ժողովուրդն իր ձեռքն է վերցնում իշխանությունը և կառավարումն իրականացնում ընտրովի պետական մարմինների և պաշտոնյաների միջոցով:

Լուսավորյալ արքաները

Ուշ միջնադարյան Եվրոպայում ուժեղանում է հասարակության համախմբումը թագավորական իշխանության շուրջը: Պատճառն արդյունաբերության զարգացումն էր, որը պահանջում էր հասարակության կայունություն ու խաղաղություն: Այս հրամայականով գրեթե ամենուրեք դասային միապետությանը փոխարինելու եկավ **բացարձակ միապետությունը՝ միահեծանությունը**: Արքայի ձեռքում կենտրոնացան օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները: Իսկ օրենքը արքայի կամքն էր՝ պարտադիր բոլորի համար:

XVII–XVIII դդ. լուսավորականները (հատկապես Վոլտերը) հույս էին տածում, թե բացարձակ միապետը, ունենալով համակողմանի կրթություն և կամք, կարող է իր ազգին տանել դեպի բարգավաճում: Հիրավի, շուտով երևացին **լուսավորյալ միապետներ**, որոնց գործունեությունն զգալի հետք է թողել պատմության մեջ:

Նման միապետների ամենացայտուն ներկայացիչը ֆրանսիացի **Լուի XIV–ն էր** (1643–1715): Երկրում ամեն ինչ կատարվում էր ըստ նրա կամքի: Մի առիթով նա հայտարարել է. **«Պետությունը ես եմ»**: Արքայի բացարձակ կամքով Ֆրանսիայում մտցվեցին միասնական օրենքներ, դատարաններ, հարկեր ու տուրքեր: Զարկ տրվեց տնտեսությանը. ստեղծվեցին բազմաթիվ մանուֆակտուրաներ, կառուցվեցին ճանապարհներ և ջրանցք-

ներ: Ֆրանսիան որդեգրեց **առևտրայնության (մերկանտիլիզմ)** քաղաքականությունը՝ նպատակ ունենալով ավելի շատ ապրանքներ արտահանել, քան ներմուծել:

Ռուսաստանում նման քաղաքականություն էր անցկացնում **Պյոտր I–ը** (1682–1725), Պրուսիայում՝ **Ֆրիդրիխ II–ը** (1740–1786), Ավստրիայում՝ **Յոզեֆ II–ը** (1765–1790): Սակայն լուսավորյալ միապետները նպատակ չունեին խարխլել ավատատիրական կարգերի հիմքերը, այլ ձգտում էին դրանք հարմարեցնելու նոր ժամանակների պահանջներին: Իսկ դա անհնար էր: Ուստի խնդիր առաջացավ հասարակության արմատական վերակառուցման համար: Նման վերակառուցումը սովորաբար իրականացվում է հեղափոխության միջոցով:

Պյոտր I–ի արձանը Սանկտ Պետերբուրգում

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է նշանակում լուսավորական շարժում:
2. Ձեր կարծիքով՝ որն է լուսավորական շարժման առաջացման հիմնական պատճառը:
3. Ո՞վ է Ջոն Լոկը: Ինչ տեսություն է նա զարգացրել:
4. Թվարկե՛ք ֆրանսիական լուսավորականներին և նրանց գլխավոր գաղափարները:
5. Ինչո՞ւ Մոնտեսքյոն առաջ քաշեց իշխանության տարանջատման գաղափարը:
6. Արդիական ինչ նշանակություն ունեն լուսավորական գաղափարները:
7. Նոր ժամանակների սկզբին ինչո՞ւ մեծացավ միապետության դերը: Ինչ է միահեծանությունը:
8. Ովքե՞ր էին լուսավորյալ միապետները: Ինչ քայլեր ձեռնարկեց Լուի XIV–ը Ֆրանսիան բարենորոգելու նպատակով:
9. Ինչ է առևտրայնությունը: Ինչ նշանակություն ունեցավ այն:

Նոր հասկացություններ, արտահայտություններ, անուններ

Լուսավորական շարժում, լուսավորության դար, «Մարդիկ ի ծնե ազատ են, հավասար և անկախ», սահմանադրական միապետություն, իշխանության տարանջատում, լուսավորյալ միապետ, Ջ. Լոկ, Շ. Մոնտեսքյո, Ֆ. Վոլտեր, Ժ.–Ժ. Ռուսո, բացարձակ միապետություն (միահեծանություն), առևտրայնություն (մերկանտիլիզմ), «Պետությունը ե՛ս եմ», Լուի XIV, Պյոտր (Պետրոս) I, Ֆրիդրիխ II, Յոզեֆ II

4 ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Ինչ է հեղափոխությունը

Հեղափոխությունը քաղաքական երևույթ է, որի շնորհիվ պատմական կարճ ժամանակահատվածում հասարակության մեջ կատարվում են արմատական փոփոխություններ: Հեղափոխություններ տեղի են ունենում այն հասարակություններում, որոնք ճգնաժամ են ապրում: Հնի կողմնակիցները չեն ցանկանում զիջել իրենց իշխանությունը կամ դա անում են սահմանափակ չափերով: Ուստի առաջադիմական ուժերը դիմում են վճռական գործողությունների: Հեղափոխությունները ուղեկցվում են քաղաքացիական պատերազմներով, երբ իշխանության համար միմյանց դեմ զինված պայքարի են ելնում տվյալ երկրի տարբեր քաղաքական ուժերը:

Հեղափոխությունների արդյունքում ավելի հաճախ հաղթում են նորի կողմնակիցները՝ ճանապարհ հարթելով պատմական բարենորոգումների համար: Երբեմն կայանում է փոխհամաձայնություն, երբեմն հաղթում է հետադիմությունը և հեղափոխությունն ավարտվում է պարտությամբ:

Ավելի նախընտրելի է այն ուղին, երբ ազգերն անընդհատ բարենորոգում են իրենց կյանքը: Այդպիսի ազգերը սովորաբար խուսափում են հեղափոխություններից: Սակայն այս ուղին պահանջում է պատմական հարուստ փորձ, կամք և գիտակցություն:

XVII–XVIII դդ. խոշոր հեղափոխություններ տեղի ունեցան Անգլիայում, Ամերիկայում և Ֆրանսիայում:

Անգլիական հեղափոխությունը

Անգլիացիները մյուս ազգերի համեմատությամբ ավելի շուտ կարողացան վերացնել առաջընթացի խոչընդոտները:

Անգլիայում նույնպես հաստատվել էր միահեծանություն: XIII դ. երկրում գործում էր խորհրդարան, որը բաղկացած էր **լորդերի** և **համայնքների պալատներից**: Կարևորագույն հարցերում արքան պարտավոր էր հաշվի առնել խորհրդարանի կարծիքը:

Սակայն XVII դ. սկզբից այս կարգը խախտվեց, որի պատճառով խորացան արքայի և խորհրդարանի միջև հակասությունները: Արքային պաշտպանում էին հին ազնվականությունը և անգլիկան եկեղեցին: Խորհրդարանին սատարում էին ձեռներեցները, նոր ազնվականությունը և ժողովրդի մեծ մասը: Նրանք առաջնորդվում էին **մաքրակրոն (պուրիտանական)** գաղափարներով, պահանջում էին բարենորոգել եկեղեցին և աշխարհիկ կարգը:

Պայքարը արքայական իշխանության և խորհրդարանի միջև ավելի սրվեց **Չարլզ I–ի** (1625–1649) օրոք: Նա սահմանում էր կամայական հարկեր, խոչընդոտում ձեռներեցությանը, հետապնդում ազատախոհներին: Ի վերջո՝ արքան ցրեց խորհրդարանը:

Սակայն պարզվեց, որ արքան անկարող է կառավարել առանց խորհրդարանի: Անհրաժեշտ էր ապահովել հարկերի ու տուրքերի անխափան գանձումը, գտնել դրամական միջոցների նոր աղբյուրներ: Մինչդեռ հարկատուները հրաժարվում էին մուծումներ կատարելուց, գանձարանը դատարկվում էր: Ուստի 1640 թ. Չարլզ I–ը հրավիրեց խորհրդարան: Այն գործեց մինչև 1653 թ. և հայտնի է **Երկարատև խորհրդարան** անունով:

Ունենալով ժողովրդի աջակցությունը՝ խորհրդարանն իրականացրեց բարենորոգումներ՝ օրինակարգեց իր գործունեությունը, արգելեց կամայական հարկերը, խրախուսեց ձեռներեցությունը, պատասխանատվության ենթարկեց մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների: Այս իրադարձություններով սկսվեց **Անգլիական հեղափոխությունը**, որը շարունակվեց մինչև 1660 թ.:

Չարլզ I–ը մերժեց խորհրդարանի նախաձեռնությունը և հեռացավ Լոնդոնից: Նա պատերազմ հայտարարեց: Խորհրդարանն էլ ստեղծեց իր բանակը՝ **Օ. Կրոմվելի** գլխավորությամբ: 1642–1649 թթ. ծավալվեց քաղաքացիական պատերազմ, որտեղ հեղափոխականները

ՉԱՐԼԶ I
(1600–1649)

Անգլիայի արքա: Նրբաճաշակ էր ու բարեկիրթ: Ուներ գրավիչ արտաքին: Սիրում էր սպորտը և արվեստները: Դրա հետ մեկտեղ թուլակամ էր և եսասեր: Հավատացած էր, որ իր իշխանությունն ունի աստվածային ծագում: Հակված չէր համագործակցելու խորհրդարանի հետ: Լսել չէր ուզում արմատական բարենորոգումների մասին: Չէր հասկանում, որ Անգլիայում սկսվել է հեղափոխություն: Կարծում էր, թե դա սոսկ խռովություն է: Սիրում էր կրկնել. «Ես դրանց մի լավ ջարդ կտամ, և ամեն բան կլինի առաջվա պես»:

ՕԼԻՎԵՐ ԿՐՈՄՎԵԼ
(1599–1658)

Անգլիական հեղափոխության ղեկավար: Եղել է գյուղական ազնվական, մեծացել է մաքրակրոն ընտանիքում: Իր պայքարում սկզբունքային էր և մեծ կամքի տեր:
Քաղաքական գործունեությունն սկսել է իբրև խորհրդարանի երկրորդական դեմքերից մեկը: Առաջընթացն սկսվել է քաղաքացիական պատերազմի ժամանակ: Ստեղծել է բանակի նոր տեսակ՝ միավորված խոր հավատով և կարգապահությամբ: Այն ստացել է «երկաթակողերի բանակ» անվանումը: Վերջինիս օժանդակությամբ գրավել է իշխանությունը և 1653 թ. իրեն հռչակել ազգի հովանավոր՝ պրոտեկտոր:
Հաղթանակներ է տոնել Շոտլանդիայի և Իռլանդիայի նկատմամբ: Դրանք միավորել է Անգլիայի իշխանության ներքո: Երկիրն սկսել է առաջին քայլերը կատարել համաշխարհային գերիշխանության ուղղությամբ:

հաղթանակ տարան: Արքան գերեվարվեց և մահապատժի ենթարկվեց: Անգլիան հռչակվեց հանրապետություն:

Սակայն շուտով ի հայտ եկավ մի նոր շարժում, որի մասնակիցները պահանջում էին օրենքի առաջ բոլորի հավասարություն, ընդհանուր ընտրական իրավունք: Մյուս կողմից՝ պայքարը շարունակում էին միապետականները: Հասարակության նոր պառակտումը կանխելու համար Կրոմվելը դիմեց վճռական քայլերի: Զենքով ճնշեց ծայրահեղականներին, ցրեց խորհրդարանը և հաստատեց իր անձնիշխանությունը: Նա իրեն հռչակեց **պետության և ազգի հովանավոր՝ պրոտեկտոր**: Այս իրավիճակը շարունակվեց մինչև նրա մահը՝ 1658 թ.:

Սահմանադրական միապետության հաստատումը Անգլիայում

Տարիներ շարունակ Անգլիան ալեկոծում էին հեղափոխական ալիքները: Ժողովուրդը հոգնել էր: Մարդիկ երազում էին խաղաղություն և կայունություն: Նախկին անհաշտ հակառակորդները համաձայնեցին վերականգնել արքայական իշխանությունը՝ պայմանով, որ արքան հաշվի առնի հեղափոխության նվաճումները և ճանաչի խորհրդարանի իրավունքները: 1660 թ. գահը հանձնվեց գլխատված արքայի որդուն: Բայց նա դրժեց պայմանը և փորձեց վերադառնալ մինչհեղափոխական կարգերին: Ավելի հեռուն գնաց նրա հաջորդը՝ **Ջեյմս II–ը**:

Սակայն փոխհամաձայնության գաղափարը կենսական էր: Անգլիական խորհրդարանի հրավերով Հոլանդիայի կառավարիչ **Վիլհելմ Օրանացին** ժամանեց Անգլիա և զենքով վտարեց Ջեյմս II–ին: Շուտով նա օծվեց արքա: Ընդունվեց **«Իրավունքների մասին օրենքը»**, որն իշխանության միակ աղբյուր էր ճանաչում ինքնիշխան ազգի կամքը, իսկ դրա օրինական արտահայտիչ՝ ընտրովի խորհրդարանը: 1688–1689 թթ. տեղի ունեցած այս իրադարձությունների արդյունքում Անգլիայում հաստատվեց **սահմանադրական միապետություն**: Արքան էր հաստատում նախարարներին և հետևում նրանց գործունեությանը, սակայն հաշվետու էր խորհրդարանին: Այս շրջանը (1688–1689 թթ.) պատմության մեջ է մտել **Փառահեղ հեղափոխություն** անունով:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմավորումը

XVII–XVIII դդ. Հյուսիսային Ամերիկայում ձևավորվեց անգլիական 13 գաղութ: Այստեղ հաստատվեց բազմազգ բնակչություն՝ հիմնականում անգլիացիներ: Վերաբնակիչները կրոնական հալածյալներ էին, հողազուրկներ, հասարակությունից մերժվածներ: Շուտով ի հայտ եկան ձեռներեցներ, որոնք կազմակերպում էին տնտեսությունը՝ զարկ տալով գյուղատնտեսությանը, արհեստներին, առևտրին: Ամենուրեք զգացվում էր աշխատող ձեռքի պակաս: Այդ պատճառով սկսեցին Աֆրիկայից Ամերիկա բերել հարյուր հազարավոր **սևամորթ ստրուկներ**:

Գաղութները ղեկավարում էին անգլիական արքայի կողմից նշանակված նահանգապետները: Անգլիան խոչընդոտում էր դրանց զարգացումը, որպեսզի գաղութները մնան լոկ հումքի մատակարար: Սակայն գաղութներում ժամանակի ընթացքում ձևավորվեց միասնական տնտեսություն, յուրահատուկ մշակույթ և ազգային ինքնագիտակցություն: XVIII դ. կեսերին բնակչության մեծ մասն իրեն համարում էր **ամերիկացի**:

Ամերիկացիները սկսեցին գիտակցել գաղութային լուծը թոթափելու, ինքնիշխան պետություն ստեղծելու հրամայականը: Այդ առումով շրջադարձային եղան XVIII դ. 60–70–ական թթ.:

Ազգային–ազատագրական պայքարը վերաճեց **Անկախության պատերազմի, որն ընթացավ 1775–1783 թթ.:** Ֆիլադելֆիա քաղաքում հրավիրված գաղութների ներկայացուցիչների համաժողովը **(Կոնգրեսը)** հռչակեց ամերիկացիների բնական իրավունքները՝ Անգլիայից պահանջելով ճանաչելու դրանք: Սակայն մերժում ստանալով՝ սկսեց ձևավորել կանոնավոր բանակ: Այդ գործը հանձնարարվեց **Ջ. Վաշինգտոնին**:

Մինչ ընթանում էին ռազմական գործողությունները, **1776 թ. հուլիսի 4–ին** Կոնգրեսն ընդունեց **Անկախության հռչակագիրը**: Այն հիմնված էր լուսավորական գաղափարների վրա. ճանաչել ամերիկյան ազգի իրավունքը՝ ստեղծելու իր ինքնուրույն կյանքը, ազատությունը և երջանկությունն ապահովող պետություն: Կոնգրեսը հռչա-



ՋՈՐՋ ՎԱՇԻՆԳՏՈՆ
(1732–1799)

Ծնվել է հարուստ հողատիրոջ (պլանտատորի) ընտանիքում: Ծառայել է տեղի աշխարհազորում, ստացել գեներալի կոչում: 1775 թ. նշանակվում է հրամանատար և ստեղծում ԱՄՆ–ի կանոնավոր բանակը: Փառաբանվել է որպես զորավար: Համարվում է ԱՄՆ–ի «ստեղծող հայրերից» մեկը: ԱՄՆ–ի առաջին նախագահն է (1789–1797): 1791 թ. նրա անունով հիմնադրվեց Վաշինգտոն քաղաքը, որը 1800 թ. դարձավ ԱՄՆ–ի մայրաքաղաքը:

կեց **Ամերիկայի Միացյալ Նահանգների** կազմավորման մասին: Հուլիսի 4–ը մինչ օրս նշվում է որպես ամերիկացիների ազգային տոն:

Ամերիկյան բանակը տպավորիչ հաղթանակներ տարավ անգլիացիների նկատմամբ: Այդ գործում կարևոր էր նաև միջազգային հանրության դիրքորոշումը. Ֆրանսիան, Իսպանիան և Հոլանդիան օժանդակում էին ԱՄՆ–ին զենքով: Անգլիան ի վերջո ճանաչեց ԱՄՆ–ի անկախությունը:

1787 թ. ստեղծվեց ԱՄՆ–ի **Սահմանադրությունը**, որը գործում է առ այսօր: ԱՄՆ–ը **դաշնային հանրապետություն է**: Սահմանված է բարձրագույն իշխանության տարանջատում. **Կոնգրես**՝ օրենսդիր, **նախագահ**՝ գործադիր, և **Գերագույն դատարան**, դատական: 1791 թ. ուժի մեջ մտան Սահմանադրության առաջին տասը ուղղումները: Դրանք սահմանում էին ժողովրդավարական արժեքներ՝ խոսքի, կրոնի ազատություն, անձի անձեռնմխելիություն և այլն: 1787 թ. ԱՄՆ–ի առաջին նախագահ ընտրվեց Ջ. Վաշինգտոնը:

Անկախության հռչակագրի ստորագրումը. Ֆիլադելֆիա, 1776 թ. հուլիսի 4

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է հեղափոխությունը: Ինչ արդյունքների կարող է հանգեցնել այն:
2. Որոնք են Անգլիական հեղափոխության պատճառները:
3. Երբ է գործել Երկարատև խորհրդարանը:
4. Ո՞վ էր Կրոմվելը և ինչ դեր է խաղացել Անգլիական հեղափոխության ժամանակ:
5. Անգլիայում երբ և որ իրադարձությունների արդյունքում հաստատվեց սահմանադրական միապետություն: Ինչ անունով է հայտնի Անգլիայի պատմության այդ շրջանը:
6. Հյուսիսային Ամերիկայում երբ և քանի՞ անգլիական գաղութ էր ձևավորվել: Ներկայացրեք դրանց բնակչության սոցիալական և ազգային կազմը:
7. Ինչո՞ւ հյուսիսամերիկյան անգլիական գաղութների բնակչությունը դիմեց ազատագրական պայքարի:
8. Ներկայացրե՛ք Ջ. Վաշինգտոնի դերը ԱՄՆ–ի ստեղծման գործում:

Քննարկման հարց

Ինչո՞ւ ԱՄՆ–ում հաստատվեց հանրապետական կարգ:

Նոր հասկացություններ, անուններ

Հեղափոխություն, Երկարատև խորհրդարան, մաքրակրոն, Չարլզ I, Օ. Կրոմվել, հովանավոր (պրոտեկտոր), Վ. Օրանացի, Փառահեղ հեղափոխություն, ամերիկացի, Անկախության պատերազմ, «Անկախության հռչակագիր», ԱՄՆ, դաշնային հանրապետություն, Ջ. Վաշինգտոն

5 ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԼՈՒԻ XVI
(1754–1793)

Թուլակամ արքան ավելի շատ զբաղվում էր որսով և թագուհու՝ Մարիա Անտուանետի կազմակերպած պալատական զվարճանքներով:

Նախադրյալները և սկիզբը

Հեղափոխության նախօրյակին Ֆրանսիան առավելապես գյուղատնտեսական երկիր էր: Ավատատիրական վերապրուկները խոչընդոտում էին նրա զարգացմանը: Գյուղացիները անձնապես ազատ էին, սակայն հողազուրկ էին և ավատատիրոջը բազմապիսի հարկեր էին վճարում: Ծանր էր վիճակը նաև արդյունագործության մեջ: Պետությունը մենաշնորհներ և արտոնություններ էր տալիս առանձին ձեռներեցների, իսկ մնացածներին զրկում ազատ գործելու հնարավորությունից:

Վերնախավը՝ հոգևորականությունը և ազնվականությունը (առաջին և երկրորդ դասեր), անում էր ամեն ինչ՝ իր արտոնությունները պահպանելու համար: Նրանք չէին վճարում հարկեր, ապրում էին անհոգ ու շվայտ կյանքով, մինչդեռ գանձարանը դատարկվում էր, իսկ տնտեսությունը՝ քայքայվում: Իշխող վերնախավի ժամանակի մտայնությունը և գործելակերպը ակնառու ձևակերպել է Լուի XV–ը՝ «Մեզանից հետո՝ թեկուզ ջրհեղեղ» թևավոր դարձած իր արտահայտությամբ:

Ստեղծված իրավիճակից դժգոհ էր ֆրանսիական հասարակության երրորդ դասը՝ ձեռներեցները, բազմամիլիոն գյուղացիությունը, արհեստավորները և այլք: Նրանք էին ստեղծում նյութական բարիքները, սակայն պետության կառավարման գործում որևէ մասնակցություն չունեին:

Հակասությունները մեղմելու և նոր հարկեր սահմանելու նպատակով Լուի XVI–ը (1774–1793) որոշեց հրավիրել **Գլխավոր շտատներ (Դասային համաժողով)**: Դա միջնադարից եկող մարմին էր, որին մասնակցում էին հասարակության երեք դասերը (հոգևորականներ, ազնվականներ, քաղաքացիներ): Վերջին անգամ այն հրավիրվել էր 1614 թ.:



Բաստիլի գրավումը հեղափոխական զանգվածների կողմից

Այդ գիշեր, երբ արթնացրին Լուի XVI–ին և զեկուցեցին, որ Բաստիլը գրավել են, արքան բացականչեց. «Բայց դա խռովություն է»: Պատասխանը եղավ. «Ո՛չ, տիրակա՛լ, դա հեղափոխություն է»:

1789 թ. մայիսին Վերսալում Գլխավոր շտատների բացմամբ նշանավորվեց հեղափոխության սկիզբը: Արքան համաժողովից պահանջեց նոր հարկեր: Սակայն, մերժում ստանալով, փորձեց ցրել համաժողովը: Դրան ընդդիմացան երրորդ դասի պատգամավորները, որոնց օժանդակեց նաև հոգևորական և ազնվական պատգամավորների մի մասը: Ընդդիմադիր ուժերն իրենց հռչակեցին **Ազգային ժողով** (հետագայում կոչվեց Սահմանադիր ժողով): Նրանք հայտարարեցին, որ միայն իրենք են արտահայտում ֆրանսիական ազգի հավաքական կամքը և պատրաստակամ են ստեղծելու Սահմանադրություն:

Սակայն թագավորը և հին կարգերի կողմնակիցները չհաշտվեցին դեպքերի նման ընթացքի հետ: Զայրացած ժողովուրդը **1789 թ. հուլիսի 14–ին Փարիզում գրավեց Բաստիլ ամրոցը**՝ հին կարգերի խորհրդանիշը (այդ օրը համարվում է Ֆրանսիայի ազգային տոնը): Երկրում ծայր առավ համաժողովրդական շարժում: Սարսափած ազնվականությունը հեռանում էր երկրից: Հեղափոխությունը պաշտպանելու նպատակով կազմավորվեց **Ազ-**

գային գվարդիան: Այսպես սկսվեց ֆրանսիական **Մեծ հեղափոխությունը**:

Հեղափոխության սահմանադրական շրջափուլը (1789–1792 թթ.)

Սահմանադիր ժողովը 1789 թ. օգոստոսի 26–ին ընդունեց **«Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը»**: Դա նոր դարաշրջանի կարևորագույն իրավական փաստաթղթերից մեկն է: Հռչակագիրը հաստատում էր քաղաքացիների հավասարությունն օրենքի առաջ: Իշխանության գերագույն աղբյուր էր ճանաչվում ոչ թե արքան, այլ ազգի հավաքական կամքը: Շեշտվում էր մարդկանց ազատ լինելու, մասնավոր սեփականություն ունենալու, ցանկացած բռնաճնշման դիմակայելու, սեփական կարծիքը ազատորեն արտահայտելու, անձամբ կամ ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու և այլ բնական իրավունքները:

1791 թ. ընդունվեց Ֆրանսիայի առաջին Սահմանադրությունը: Երկիրը հռչակվեց սահմանադրական միապետություն: Արքան պահպանում էր գործադիր իշխանու-

Քաղվածք «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրից»

Հոդված 1. Մարդիկ ծնվում և ապրում են հավասար իրավունքներով: Նրանց հասարակական տարբերությունները կարող են կառուցվել միայն ընդհանուր օգուտի վրա:

Հոդված 2. Մարդկանց քաղաքական միավորման նպատակը նրանց բնական և անօտարելի իրավունքների պաշտպանությունն է: Դրանք են ազատությունը, ունեցվածքը, ապահովությունը և դիմադրությունը (ցանկացած) բռնաճնշման:

Հոդված 3. Ազգն է ամբողջ իշխանության կրողը: Ո՛չ անհատները, ո՛չ առանձին խմբերը իրավասու չեն իշխանություն գործառելու, եթե դա չի բխում ազգի շահերից:

Հոդված 6. Օրենքը իրավունքի (մասնակի) արտահայտությունն է: Բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն անձնապես կամ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իշխանության ձևավորմանը: Օրենքը պետք է լինի նույնիմաստ թե՛ խրախուսանքի, թե՛ պատժի պարագայում:

Հոդված 7. Ոչ ոք չի կարող դատապարտվել, կալանվել կամ ձերբակալվել՝ առանց օրենքով նախատեսված դեպքի:

Հոդված 10. Ոչ ոք չի կարող հետապնդվել իր մտքերի և կրոնական զգացմունքների համար, եթե դրանց դրսևորումը չի խաթարում հասարակական կարգը:

Հոդված 11. Մտքերի և կարծիքների ազատ փոխանակությունը մարդու ամենագնահատելի իրավունքներից է:

Հոդված 17. Ունեցվածքը, լինելով սրբազան և անձեռնմխելի, չի կարող օտարվել առանց հասարակական անհրաժեշտության…

թյունը, նշանակում էր նախարարներին և ուղղորդում նրանց գործունեությունը: Սակայն արքայի իրավունքները սահմանափակվում էին Սահմանադրությամբ:

Հեղափոխության հանրապետական շրջափուլը (1792–1799 թթ.)

Հին կարգերի կողմնակիցները, սակայն, կատաղի դիմադրություն ցույց տվեցին: Ազնվականությունն սկսեց խռովություններ: Արքան փորձեց երկրից փախչել և օտար պետությունների օգնությամբ վերականգնել իր իշխանությունը: Ավստրիան և Պրուսիան, վախենալով հեղափոխության տարածումից, դաշինք կնքեցին և պատրաստվում էին ներխուժել Ֆրանսիա: Սկսվեց պատերազմ, որն աստիճանաբար ընդլայնվեց և տարածվեց ողջ Եվրոպայում:

Ֆրանսիական ժողովրդի մեջ հայրենասիրական ոգին վերելք ապրեց: Շատերը կամավոր անդամագրվում էին բանակին, մեկնում ռազմի դաշտ: Նրանց շուրթերին **«Մարսելյոզն»** էր՝ Ֆրանսիայի ապագա օրհներգը:

Ժողովուրդն ապստամբեց: **1792 թ. սեպտեմբերին Ֆրանսիան հռչակվեց հանրապետություն:** Լուի XVI–ը

Սանկյուլոտ (ֆրանսերեն՝ «սան» – առանց, և «կյուլոտ» – կարճ տաբատ): Ֆրանսիացի ազնվականները հեգնանքով այդպես էին կոչում քաղաքային ցածր խավի ներկայացուցիչներին, որոնք, ի տարբերություն իրենց, կրում էին երկար տաբատներ: Սանկյուլոտները հեղափոխության ամենաակտիվ մասնակիցներն էին:

հեռացվեց իշխանությունից և իր ընտանիքի հետ դատապարտվեց մահվան: Մտցվեց ընդհանուր ընտրական իրավունք: Արական սեռի բոլոր չափահաս քաղաքացիները կարող էին ընտրել և ընտրվել պետական պաշտոններում՝ առանց ունեցվածքային սահմանափակման:

Հանրապետության ստեղծումը, սակայն, ազգային համերաշխություն չբերեց: Քայքայվել էր երկրի տնտեսությունը, ամենուրեք թանկություն էր ու սով: Դրան հակառակ՝ աշխուժացել էին միապետականները: Նոր ուժով էր գործում հակաֆրանսիական դաշինքը, որին միացել էին նաև Անգլիան, Իսպանիան և այլ երկրներ:

Ֆրանսիական բանակը պարտություններ կրեց: Դա հող նախապատրաստեց ծայրահեղական տրամադրությունների համար, որոնց կրողները **յակոբիններն** էին: **1793 թ. նրանք գրավեցին իշխանությունը**: Ծայր առավ **ահաբեկությունը**: Հազարավոր ֆրանսիացիներ որակվեցին «հեղափոխության թշնամի» և մահապատժի ենթարկվեցին:

Յակոբինները ճնշեցին խռովությունները, ստեղծեցին մարտունակ բանակ և թշնամիներին վտարեցին Ֆրանսիայից: Սակայն նրանց ղեկավարները տարված էին համաշխարհային հեղափոխության գաղափարով և կատարում էին անհեռատես քայլեր: Եվ հասարակությունն սկսեց դժգոհել. անհնար էր ապրել վախի և կեղծիքի պայմաններում:

1794 թ. յակոբինյան բռնատիրությունը տապալվեց: Ղեկավարները մահապատժի ենթարկվեցին: Իշխանության գլուխ եկան անկայունության տարիներին հարստացածները: Սակայն նրանք անկարող եղան կարգ ու կանոն հաստատելու: Մեծ տարածում ստացան կեղծիքը և կաշառակերությունը: Վատթարացավ Ֆրանսիայի արտաքին դրությունը. բանակն սկսեց պարտություններ կրել:

Հասարակության վերնախավի շրջանում հասունացավ «ուժեղ ձեռքի» իշխանություն ստեղծելու ծրագիր: Այդպիսի «ձեռք» կարելի էր գտնել բանակում, որտեղ հեղափոխության տարիներին ձևավորվել էր երիտասարդ և տաղանդավոր սպայություն: Դրա ներկայացուցիչն էր երեսնամյա գեներալ **Նապոլեոն Բոնապարտը:**

Նա 1799 թ. նոյեմբերին կատարեց պետական հեղաշրջում: Բարձրագույն իշխանությունը հանձնվեց **երեք կոնսուլներին**: Նապոլեոնն առաջին կոնսուլն էր: Թեպետ նա և իր կողմնակիցները խոսում էին հանրապետության անունից, սակայն բոլորը հասկանում էին, որ Ֆրանսիայի պատմության մեջ սկսվում է նոր՝ **բուրժուական միապետության** շրջափուլը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Ֆրանսիական հեղափոխության պատճառները:
2. Ինչո՞ւ Լուի XVI–ը հրավիրեց Գլխավոր շտատներ: Ովքե՞ր ստեղծեցին Ազգային ժողովը:
3. Ինչո՞վ է նշանավոր 1789 թ. հուլիսի 14–ը:
4. Նշե՛ք Ֆրանսիական հեղափոխության փուլերը:
5. Ներկայացրե՛ք հեղափոխության առաջին շրջափուլի կարևոր արդյունքները:
6. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ առաջացավ յակոբինյան բռնատիրությունը:
7. Ո՞րն էր «ուժեղ ձեռքի» իշխանության ստեղծման գլխավոր նպատակը: Ե՞րբ հաստատվեց այն, ո՞ւմ գլխավորությամբ:
8. Օգտվելով դասագրքում տրված քաղվածքից՝ ցույց տվե՛ք «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» նշանակությունը և արդիականությունը:

Քննարկման հարց

Ինչո՞ւ են Ֆրանսիական հեղափոխությունն անվանում Մեծ:

Նոր հասկացություններ, արտահայտություններ, անուններ

Մեծ հեղափոխություն, Ազգային ժողով, ազգային գվարդիա, «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր», «Մարսելյոզ», Լուի XV, «Մեզանից հետո՝ թեկուզ ջրհեղեղ», Լուի XVI, Բաստիլ, յակոբին, ահաբեկություն, «ուժեղ ձեռքի» իշխանություն, Նապոլեոն Բոնապարտ, բուրժուական միապետություն

6 ՆԱՊՈԼԵՈՆԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ (1799–1815)

ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏ
(1769–1821)

Զորավար և պետական գործիչ: Ծնվել է Կորսիկա կղզում, ռազմական կրթություն ստացել է Ֆրանսիայում: Մասնակցել է Մեծ հեղափոխությանը, 24 տարեկանում դարձել է գեներալ:
1796–1797 թթ. գլխավորել է իտալական հաղթական արշավանքը, 1798 թ.՝ եգիպտական արշավանքը: 1799 թ. հեղաշրջումից հետո ստեղծել է մի նոր վարչակարգ՝ կառուցված Մեծ հեղափոխության գաղափարների հիման վրա: Վարել է նվաճողական պատերազմներ, որոնց նպատակն էր Եվրոպայում հաստատել Ֆրանսիայի գերիշխանությունը: Նվաճված երկրներում բազմաթիվ բարենորոգումներ է իրագործել: «Նապոլեոնի դարաշրջան» են անվանում Ֆրանսիայի և Եվրոպայի պատմության՝ նրա գործունեության տարիները:

Նապոլեոնի վարչակարգը

1799 թ. հեղաշրջումից հետո հանրապետությունը շարունակեց ձևականորեն գոյություն ունենալ մինչև 1804 թ.: Գալով իշխանության՝ Նապոլեոնը հայտարարեց. **«Հեղափոխությունը հասել է այն նպատակներին, որոնց համար սկսվել էր: Հեղափոխությունն ավարտված է»**: Նա խոստանում էր պահպանել հեղափոխության նվաճումները և դրանք զարգացնել միայն բարենորոգումների ճանապարհով:

1804 թ. անցկացվեց հանրաքվե, և Նապոլեոնը հռչակվեց **«բոլոր ֆրանսիացիների կայսր»**: Փարիզի Ս. Աստվածամոր տաճարում տեղի ունեցավ նրա շքեղ թագադրությունը: Այսպես հիմնադրվեց **Առաջին կայսրությունը**, որը գոյատևեց մինչև 1814 թ.:

Բարենորոգումները

Նապոլեոնի բարենորոգումները վերաբերում էին հասարակական կյանքի բոլոր ասպարեզներին: Նա անձամբ էր հետևում դրանց ընթացքին:

Տնտեսություն: Կայսեր ջանքերով զարկ տրվեց ծանր արդյունաբերությանը: Տասը տարիների ընթացքում հիմնվեց հարյուր խոշոր ձեռնարկություն՝ հանքահարստացման, մետաղաձուլության, զինագործության, նավաշինության, սարքաշինության: Բուռն ճանապարհաշինության արդյունքում կայուն կապ հաստատվեց երկրի տարբեր շրջանների միջև:

Աշխուժացան տնտեսական կապերն ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս: Տնտեսության զարգացման նպատակով հիմնվեց **Ֆրանսիական բանկը**: Շրջանառության մեջ դրվեց դրամական նոր միավոր՝ **ֆրանկը**:

Արդյունաբերության ցուցանիշներով Ֆրանսիան զբաղեցրեց երկրորդ տեղը աշխարհում՝ զիջելով միայն Անգլիային:

Օրենսդրություն: Մեծ հեղափոխությունից հետո Ֆրանսիայում հաստատվել էին հասարակական նոր հարաբերություններ: Հարկ էր դրանց տալ իրավական ձևակերպում: Կայսրը կազմեց **«Քաղաքացիական օրենսգիրքը»**, որը տարածվեց նաև Եվրոպայում: Այն ամրագրում էր մարդկանց բնական իրավունքները: Առանձնակի ուշադրություն էր դարձվում ընտանիքի և սեփականության խնդիրներին: Ընտանիքը ճանաչվում էր որպես հասարակության կարևորագույն բջիջ: Կարգավորվեցին նաև տնտեսական, քրեական, դատական բնագավառները:

Վարչական համակարգ: Հեղափոխության տարիներին Ֆրանսիայում ձևավորվել էր նոր վարչական կառույց: Երկիրը բաժանվել էր **դեպարտամենտների** (նահանգ)՝ յուրաքանչյուրն իր ընտրովի վարչակազմով: Նապոլեոնը պահպանեց այդ: Նրա նշանակած պաշտոնյաները (պրեֆեկտ) տնօրինում էին նահանգների բոլոր կարևոր գործերը: Այս կերպ պետության կառավարումը խիստ կենտրոնացվեց:

Մշակութային ձեռնարկումներ: Կայսրը՝ իրեն համարելով լուսավորականների հետևորդ, ձգտում էր նրանց գաղափարներով ձևավորել ազգային նոր վերնախավ: Բոլոր դեպարտամենտներում ստեղծվեցին պետական վարժարաններ, որոնք տալիս էին միջնակարգ կրթություն: Այնուհետև բացվեցին բարձրագույն բժշկական, իրավաբանական և ռազմական դպրոցներ: Այդ բոլորի պսակը դարձավ **Կայսերական համալսարանը**:

Նապոլեոնը հովանավորում էր գիտությունը և արվեստը: Ձևավորվեց կայսերական նոր ազնվականությունը, որի շատ ներկայացուցիչներ դուրս էին եկել ստորին խավերից:

Կրոնական հանդուրժողականություն: Հեղափոխության տարիներին պայքար էր ծավալվել կաթոլիկ եկեղեցու դեմ: Բայց Նապոլեոնը հասկանում էր, որ դա վիրավորում է միլիոնավոր կաթոլիկների կրոնական զգացմունքները և պառակտում ազգը: Հետևելով խղճի

Նապոլեոն I կայսրը «Քաղաքացիական օրենսգրքի» մասին

Իմ իսկական փառքն այն չէ, որ հաղթել եմ քառասուն ճակատամարտերում: Վաթերլոոն կջնջի այդ բոլոր հաղթանակների մասին հիշողությունները: Բայց այն, ինչը չի կարող մոռացվել, ինչը կապրի հավերժ, իմ «Քաղաքացիական օրենսգիրքն» է:

Հատված Ժ.-Լ. Դավիդի «Նապոլեոնի թագադրությունը» կտավից

Եվրոպան Նապոլեոնի նվաճումների ժամանակաշրջանում

ազատության սկզբունքին՝ նա կաթոլիկությունը ճանաչեց **«ֆրանսիացիների մեծ մասի կրոն»**:

Հարկավ, ամեն բան այսչափ հարթ չէր: Հին կարգերի կողմնակիցները շարունակում էին պայքարը: Կայսրը երբեմն դիմում էր խստությունների: Անգամ մտցրեց գրաքննություն, փակեց որոշ թերթեր ու ամսագրեր: Սակայն Նապոլեոնի վարչակարգի անկումից հետո էլ բարենորոգումները պահպանեցին իրենց ուժը: Մեծ էր դրանց ազդեցությունը նաև այլ երկրների վրա:

Պատերազմները և «Մեծ տերության» կազմավորումը

Բարենորոգումների ուղիով ընթացող Ֆրանսիան արագորեն հզորանում էր: Դա սարսափեցնում էր հարևան երկրներին, այդ թվում Անգլիային և Հոլանդիային: Եվ նրանց ընդհարումն անխուսափելի էր:

Հեղափոխության ընթացքում Ֆրանսիայում ձևավորվել էր նոր բանակ: Դրա շարքերում աճել էին այնպիսի տաղանդավոր զորավարներ, ինչպիսիք էին **Նեյը, Դավուն, Մյուրատը** և այլք: Նորություն էր **սպայակույտի (ռազմական շտաբ)** ստեղծումը, որը կոչված էր մշակելու մարտական գործողությունների ծրագրեր:

Սկզբում Ֆրանսիան վարում էր պաշտպանողական պատերազմ, բայց հետո անցավ հարձակման և հասավ հաջողությունների: Պատերազմները հեղափոխական էին՝ միտված տապալելու ավատատիրական կարգերը: Նրանք ողջ Եվրոպայում տարածում էին ժամանակի առաջավոր գաղափարները՝ մարդու և քաղաքացու ազատությունները, ազգերի ինքնորոշման իրավունքը:

Այդ պատերազմները նպաստում էին Ֆրանսիայի տիրապետության տարածմանը: Շուտով Եվրոպայի առաջատար երկրները հայտնվեցին Ֆրանսիայի տիրապետության կամ ազդեցության ներքո՝ Իտալիան, Իսպանիան, Ավստրիան, Պրուսիան: Բացառություն էին Ռուսաստանը և Անգլիան:

Նապոլեոնի բանակի սպա

Տերության կործանումը

Ռազմական ուժի վրա հիմնված «Մեծ տերությունը» անընդհատ ծավալման միտում ուներ: Նապոլեոնը երազում էր հասնել համաշխարհային տիրապետության:

Այդ նպատակով ստեղծել էր **Մեծ բանակը**, որի կազմում հավաքագրված էին նաև դաշնակից երկրների ուժերը: **1812 թ.** Մեծ բանակը մտավ Ռուսաստան: Օգոստոսին **Բորոդինոյի դաշտում** տեղի ունեցավ գլխավոր ճակատամարտը: Ռուսական բանակը պարտվեց և հանձնեց Մոսկվան:

Ռուսաստանի համար պատերազմն ընդունեց համաժողովրդական բնույթ. բանակը համալրվում էր և զորանում: Այրված և կողոպտված Մոսկվայում Նապոլեոնն իրեն զգում էր թակարդում: Ռուսական զորքերն անցան հակահարձակման և ստիպեցին ֆրանսիացիներին նահանջել: 1812 թ. դեկտեմբերին Մեծ բանակի մնացորդները լքեցին Ռուսաստանը:

Ֆրանսիայի դեմ ձևավորվեց մի նոր ռազմական դաշինք՝ Ռուսաստան, Անգլիա, Պրուսիա, Ավստրիա և այլ

Տեսարան Լայպցիգի 1813 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ճակատամարտից. անվանվել է «Ժողովուրդների ճակատամարտ»

երկրներ: **1813 թ. Լայպցիգի ճակատամարտում** դաշնակիցները հաղթանակ տարան և մտան Փարիզ: Նրանք Նապոլեոնին աքսորեցին և Ֆրանսիայում վերականգնեցին տապալված արքայատոհմը:

Հին վարչակարգի վերականգնումը մեծ դժգոհություն առաջացրեց Ֆրանսիայում: Օգտվելով դրանից՝ **1815 թ. մարտին Նապոլեոնը փախավ աքսորից, վերադարձավ** և վերականգնեց կայսրությունը: Սակայն նրա իշխանությունը տևեց ընդամենը հարյուր օր: Դաշնակիցներն արագ վերամիավորվեցին: Նապոլեոնը պարտություն կրեց և այս անգամ աքսորվեց Ատլանտյան օվկիանոսի հեռավոր կղզիներից մեկը, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք Նապոլեոն Բոնապարտի՝ կոնսուլից կայսր դառնալու հաջորդական քայլերը:
2. Թվարկե՛ք Նապոլեոնի իրականացրած բարենորոգումները: Ի՞նչ նշանակություն ունեցան դրանք Ֆրանսիայի համար:
3. Ինչո՞ւ Նապոլեոնը մղեց «հեղափոխական պատերազմներ»: Ինչի՞ շնորհիվ Ֆրանսիան ռազմական հաջողություններ ունեցավ:
4. Ե՞րբ սկսվեց և ի՞նչ ավարտ ունեցավ ֆրանս–ռուսական պատերազմը:
5. Ո՞ր երկրները միավորվեցին Ֆրանսիայի դեմ:
6. Ներկայացրե՛ք Առաջին կայսրության անկման ընթացքը:

Գործնական աշխատանք

Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք Նապոլեոնի բարենորոգումները և դրանց արդյունքները:

Բնագավառը	Ռազմական	Օրենսդրական	Վարչական	Մշակութային	Կրոնական
Բարենորոգումները					

Քննարկման հարց

ինչո՞ւ Նապոլեոնի կայսրությունը կործանվեց:

Նոր հասկացություններ, անուններ

«Բոլոր ֆրանսիացիների կայսր», «Քաղաքացիական օրենսգիրք», դեպարտամենտ, պրեֆեկտ, Առաջին կայսրություն, Կայսերական համալսարան, Նեյ, Դավու, Մյուրատ, հեղափոխական պատերազմ, Մեծ բանակ, Բորոդինոյի և Լայպցիգի ճակատամարտեր

7 ԵՎՐՈՊԱՆ 1815–1850 ԹԹ. (ՀԵՏԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ, ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ)

Հետնապոլեոնյան դարաշրջանը Եվրոպայում նշանավորվեց հասարակական տարաբնույթ ուժերի բախումներով: Երբեմն գերակայում էր **հետադիմությունը**, երբեմն՝ **բարենորոգումների** ոգին: Իսկ հաճախ էլ հասարակական զարգացումը մտնում էր փակուղի: Ստեղծվում էին ճգնաժամային իրավիճակներ, որոնք ավարտվում էին նոր **հեղափոխություններով**:

Վիեննայի վեհաժողովը

1814–1815 թթ. Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում Նապոլեոնին հաղթած պետությունների ղեկավարները հրավիրեցին վեհաժողով: Նպատակն էր ոչ միայն հաշտություն կնքել պարտված Ֆրանսիայի հետ, այլև Եվրոպայում հաստատել «կայուն խաղաղություն»: Բոլորը խոսում էին «արդարության և խախտված օրինականության» վերականգնման մասին:

Վեհաժողովում իրենց կամքն էին թելադրում Ռուսաստանը, Անգլիան, Ավստրիան և Պրուսիան: Նրանք էլ վերաձևեցին Եվրոպայի պետական սահմանները՝ հաշվի չառնելով այլ ազգերի շահերը:

Վիեննայի վեհաժողովը

Իր ընդգրկմամբ նախադեպը չունեցող այս վեհաժողովին մասնակցում էին 2 կայսր, 4 թագավոր, 2 թագաժառանգ և 215 իշխանական տների ղեկավարներ: Այստեղ հավաքվել էր 450 դիվանագետ: Առաջին անգամ ողջ Եվրոպան բանակցելու էր հավաքվել: Չկար մի նիստ, որին բոլորն անխտիր մասնակցեին: Բանակցությունները հաճախ ընդհատվում էին պարահանդեսներով, ներկայացումներով, որսով: «Պարող վեհաժողով». այդպես է այն մնացել բոլորի հիշողության մեջ: Պայմանագրերը մշակվում էին առանձին աշխատանքային խմբերում:

Եվրոպան ըստ Վիեննայի վեհաժողովի

Լեհական հողերի վրա Նապոլեոնի ստեղծած Վարշավայի դքսությունը լուծարվեց: Լեհաստանի տարածքը բաժանվեց Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև: Ճանաչվեց Ֆինլանդիայի բռնակցումը Ռուսաստանին: Պահպանվեց Իտալիայի և Գերմանիայի մասնատվածությունը: Անգլիան ստացավ Մալթա կղզին և հոլանդական մի շարք գաղութներ:

Վեհաժողովի մասնակիցները կարծում էին, որ Մեծ հեղափոխությունը խախտել է Եվրոպայի բնականոն կյանքը: Նրանք որոշեցին վերականգնել նախկին կարգը՝ իշխանությունը վերադարձնելով տապալված արքայատոհմերին ու իշխանական տներին: Պայմանավորվեցին նաև համատեղ ուժերով պայքարել նոր հեղափոխությունների դեմ:

Ընդունված որոշումներն իրագործելու համար ստեղծվեց եվրոպական գահակալների «**Սրբազան դաշինք»:** Այդտեղ գերիշխում էին Ռուսաստանը, Ավստրի-

ան և Պրուսիան: Համատեղ ջանքերով նրանք 1820–1830–ական թթ. ճնշեցին հեղափոխական շարժումներն Իտալիայում, Իսպանիայում, Լեհաստանում:

Բարենորոգումների ուղին (փոխհամաձայնություն)

Բարենորոգումների ուղիով զարգացող երկրի բնորոշ օրինակ էր Անգլիան: Արդեն գիտենք, որ XVII դ. հեղափոխությունից հետո այստեղ ձևավորվեց **սահմանադրական միապետություն**: Հետագայում Անգլիան խուսափեց հեղափոխական նոր ցնցումներից:

Այս խաղաղ ընթացքին նպաստում էր նաև մեծ չափերի հասնող **արտագաղթը**: Տարեկան ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլ երկրներ էին հեռանում հարյուր հազարավոր անգլիացիներ:

Այնուամենայնիվ, XIX դ. առաջին կեսին Անգլիան ևս կարիք ուներ բարենորոգումների: Արդյունաբերական հեղաշրջման հետևանքով մեծապես փոխվել էր հասարակության տնտեսական և ընկերային (սոցիալական) կառուցվածքը: Առաջացել էին ձեռներեցների և բանվորների դասակարգերը, որոնք ունեին բազում չլուծված հիմնախնդիրներ:

Բանվորների աշխատանքային ու կենսական պայմանները ծանր էին: Իրենց շահերի համար նրանք պայքարում էին դեռ XVIII դ. վերջերից՝ ստեղծելով **արհմիություններ** (արհեստակցական միություններ): **1824 թ.** խորհրդարանն օրինականացրեց արհմիությունների գործունեությունը: Կառավարության, ձեռներեցների և արհմիությունների փոխհամաձայնությամբ XIX դ. 20-40-ական թթ. կատարվեցին առաջին լուրջ բարենորոգումները: Օրենքով արգելվեց անչափահասների գիշերային աշխատանքը, կրճատվեց աշխատանքային օրը:

Ձեռներեցները և բանվորները ձգտում էին մասնակցություն ունենալ պետական կյանքին: Համառ պայքարից հետո խորհրդարանը **1832 թ.** ընդունեց նոր ընտրական օրենք, որը զգալիորեն ընդլայնեց ընտրողների թիվը՝ ի հաշիվ անշարժ գույք ունեցող անձանց: Սակայն բանվորները չստացան ընտրական իրավունք, և պայքարը շարունակվեց:

ՉԱՐՏԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Անգլիական աշխատավորների զանգվածային ելույթը 1830–1840 թթ. խնդիր ուներ ժողովրդավարացնել երկրի կյանքը: Ղեկավարները մտածում էին լուծել աշխատավորների խնդիրները՝ ապահովելով նրանց մասնակցությունը խորհրդարանի աշխատանքներին: Օգտագործում էին պայքարի թե՛ խաղաղ, թե՛ բռնի միջոցները: Կառավարությունը ճնշեց շարժումը: Սակայն հետագա տարիներին նրա շատ պահանջներ իրագործվեցին: Ժամանակակիցներն ասում էին. «Դա պարտվածների անվիճելի հաղթանակն է հաղթողների նկատմամբ»:

Նկարում՝ դրվագ չարտիստական շարժումից:

1837 թ. բանվորները կազմեցին **պահանջագիր (չարտեր)** և ներկայացրին խորհրդարան: Փաստաթղթի անունով շարժումը կոչվեց **չարտիստական**: Չարտիստները պահանջում էին ընդհանուր ընտրական իրավունք, գաղտնի քվեարկություն, պատգամավորների աշխատավարձ և այլն: Պահանջագիրը երեք անգամ ներկայացվեց խորհրդարան, բայց մերժվեց: Այնուամենայնիվ, պայքարն անհետևանք չմնաց: Հետագայում կրճատվեց ընտրական իրավունքի համար սահմանված ունեցվածքի չափը: Եվ ընտրողների թիվն ավելանում էր:

Բարենորոգումների մյուս ասպարեզը **տնտեսության ազատականացումն** էր, այսինքն՝ ազատ ձեռներեցությանը և տնտեսական մրցակցությանը խոչընդոտող զանազան արգելքների վերացումը: Այդ ճանապարհին կարևոր էր խորհրդարանի ընդունած որոշումը այսպես կոչված **հացի օրենքները** վերացնելու մասին: Սեփական հաց արտադրողներին պաշտպանելու համար կառավարությունը ժամանակին սահմանել էր արտերկրից ներմուծվող հացահատիկի բարձր մաքսատուրքեր: Ժողովուրդը ստիպված գնում էր սեփական թանկ հացը: Հացի գներն ազատականացվեցին: Անգլիան աշխարհի

տարբեր երկրներից ներմուծում էր էժան հաց: Փոխարենն այդ երկրներն իջեցնում էին անգլիական արդյունաբերական ապրանքներից գանձվող բարձր տուրքերը: Դրանից Անգլիան շահում էր, քանի որ արտահանումն ավելի շատ էր, քան ներմուծումը: Դա հնարավորություն էր տալիս փոխհատուցելու գյուղատնտեսության կորուստները:

Այս ճանապարհով **Անգլիան դարձավ աշխարհի ամենաազատական տնտեսություն ունեցող երկիրը**: Բազմաթիվ երկրներ հեղեղված էին անգլիական էժան և բարձրորակ արդյունաբերական ապրանքներով: Անգլիան չէր վախենում մրցակցությունից, քանի որ ուներ հզոր արդյունաբերություն: Նա պաշտոնապես վարում էր ազատ առևտրի քաղաքականություն:

Այսպես՝ փոխզիջումային բարենորոգումներով Անգլիան ուրք դրեց արդյունաբերական հասարակության նոր շրջափուլ: Պատմությունը ցույց տվեց, որ անգլիական ուղին առավել արդյունավետ էր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին գումարել Վիեննայի վեհաժողովը և ի՞նչ նպատակով:
2. Ի՞նչ վերաձևման ենթարկվեց Եվրոպայի քաղաքական քարտեզը:
3. Ովքե՞ր և ի՞նչ նպատակով ստեղծեցին Սրբազան դաշինքը:
4. XVII դարի վերջերից սկսած՝ ինչո՞ւ Անգլիային հաջողվեց խուսափել նոր հեղափոխություններից:
5. Ի՞նչ բարենորոգումներ իրականացվեցին Անգլիայում XIX դարի առաջին կեսին:
6. Ե՞րբ է սկսվել չարտիստական շարժումը: Ներկայացրե՛ք անգլիացի բանվորների պայքարի արդյունքները:
7. Տնտեսության ազատականացման նպատակով ի՞նչ բարենորոգումներ արվեցին Անգլիայում: Ի՞նչ արդյունքներ տվեցին դրանք:

Նոր հասկացություններ, անուններ

Հետադիմություն, Վիեննայի վեհաժողով, «արդարության և խախտված օրինականության» վերականգնում, Սրբազան դաշինք, պահանջագիր (չարտեր), չարտիստական շարժում, տնտեսության ազատականացում, «հացի օրենքներ», ազատ առևտուր

8 ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 1830–1840–ԱԿԱՆ ԹԹ.

Հեղափոխությունները XIX դ. առաջին կեսի եվրոպական պատմության անբաժանելի մասն էին: Դրանք դրսևորվեցին հիմնականում երկու ձևով: 1) **Սոցիալական հեղափոխություն.** գերակայում էին հետևյալ հիմնախնդիրները՝ իշխանության գրավում, քաղաքական ազատությունների ընդլայնում, տնտեսության ազատականացում և այլն: 2) **Ազգային հեզափոխություն.** գերակայում էին ազգային հիմնախնդիրները՝ ազատագրություն, վերամիավորում, անկախ պետության ստեղծում կամ վերականգնում:

1848 թ. հեղափոխությունը Ֆրանսիայում

Ֆրանսիայում 1830 թ. հաստատվեց սահմանադրական միապետություն՝ **Լուի Ֆիլիպի** գահակալությամբ: Իշխանության եկավ բուրժուազիայի վերնախավը՝ խոշոր դրամատերերն ու վաշխառուները: Նրանք աշխատում էին ժողովրդավար երևալ. խոսում էին քաղաքական ազատություններից, աշխարհիկ կրթությունից: Սակայն դրանից կառավարման բովանդակությունը չէր փոխվում: Պետական հովանավորության շնորհիվ (արտոնություններ, մենաշնորհներ) հարստանում էին դրամատերերը և վաշխառուները: Երկրում բացակայում էր ազատական տնտեսությունը: Ծաղկում էր կաշառակերությունը, տարածված էր աղքատությունը: Ֆրանսիացիների մեծ մասը զրկված էր ընտրության իրավունքից:

Դրությունը հատկապես սրվեց 1845–1847 թթ., երբ անբերրիության հետևանքով սով և համաճարակ սկսվեց: **1848 թ. փետրվարին** ժողովուրդը Փարիզում ապստամբեց: Լուի Ֆիլիպը փախավ երկրից: Հեղափոխությունը տարածվեց: Կազմվեց ժամանակավոր կառավարություն, և Ֆրանսիան հռչակվեց հանրապետություն:

Երկրորդ հանրապետությունը գոյատևեց 1848–1852 թթ.: Մտցվեց ընդհանուր ընտրական իրավունք, ընդ-

ԼՈՒԻ ՖԻԼԻՊ
(1773–1850)

Նրան անվանում էին «թագավոր բուրժուա»: Անվանի գրող Ստենդալը նրան համարում էր ամենախորամանկ թագավորը:

1848 թ. ժողովրդին ուղղված
հեղափոխական կոչեր Ֆրանսիայում

Քաղաքացիներ
Դուք մի անգամ ևս ձեր հերոսությամբ հաղթահարեք բռնապետությունը: Դուք արդեն հաղթել եք նրան 1789 թ. հուլիսի 14–ին, 1792 թ. օգոստոսի 10–ին, 1830 թ. հուլիսի 29–ին, և ամեն անգամ ձեզանից խլել են ձեր հաղթանակի պտուղները…
Թո՛ղ այս օրինակները ձեզ դաս լինեն… Վերջին անգամ որոշո՛ւմ կայացրեք: Շտապե՛ք Թյուիլրի (Ֆրանսիայի թագավորների նստավայրը Փարիզում – հեղ.): Գրավե՛ք այն: Մի՛ վստահեք խաբեբաներին, մարդկանց, որոնք ցույց են տվել իրենց վախկոտությունը կամ քաղաքական անկարողությունը…
Ի զե՛ն: Դեպի Թյուիլրի՛:

1848 թ. փետրվարի 24

լայնվեցին քաղաքական ազատությունները, վերացվեց մահապատիժը, ինչպես նաև ստրկությունը գաղութներում:

Հեղափոխության մասնակիցների հիմնական զանգվածը բանվորներ էին: Նրանց շրջանում մեծ ազդեցություն ունեին **սոցիալիստները (ընկերվարները)**, որոնց նպատակն էր արագ փոփոխությունների միջոցով ստեղծել մի նոր հասարակություն՝ առանց աղքատության և շահագործման:

Երկրորդ հանրապետության Սահմանադրությամբ Ֆրանսիան հռչակվեց **նախագահական հանրապետություն**: Կառավարման լծակները լինելու էին ընտրովի նախագահի ձեռքում:

Երկիրը, սակայն, մնում էր պառակտված: Շարունակվում էր սուր պայքարը միապետականների և հանրապետականների միջև: Անհրաժեշտ էր «ուժեղ ձեռքի» իշխանության և ազգային համերաշխության հաստատում: Իրավիճակն հիշեցնում էր 1799 թ.: Այնժամ այդպիսի «ուժեղ ձեռք» դարձավ Նապոլեոն Բոնապարտը: Նա չկար, բայց ապրում էր նրա հերոսական անունը: Անուն, որը ֆրանսիացիների մեջ արթնացնում էր ազգային հպարտություն: Դրանից էլ օգտվեց Բոնապարտի եղբորորդի **Լուի Նապոլեոնը**: 1848 թ. նա ընտրվեց հանրապետության նախագահ և ձեռնամուխ եղավ տերության վերականգնմանը: Նա հայտարարում էր, որ ինքն արտահայտում է բոլոր ֆրանսիացիների շահերը: Կատարելով պետական հեղաշրջում՝ 1852 թ. իրեն հռչակեց «բոլոր

ֆրանսիացիների կայսր»: Ստեղծվեց **Երկրորդ կայսրությունը**, որը գոյատևեց մինչև 1870 թ.:

Հեղափոխությունը գերմանական պետություններում

Վիեննայի վեհաժողովը պահպանել էր Գերմանիայի քաղաքական մասնատվածությունը: Ավստրիայի գլխավորությամբ ստեղծվել էր **Գերմանական միությունը**, որը թույլ էր և անկարող: Միասնական պետության ստեղծմամբ մանր պետությունները շահագրգռված չէին: Նրանք չէին ցանկանում հրաժարվել իրենց ինքնիշխանությունից: Սակայն կյանքն ընթանում էր իր հունով: Արդյունաբերական հեղաշրջման, շուկայական հարաբերությունների զարգացման հետևանքով XIX դ. առաջին կեսին Գերմանիայի առանձին շրջանների միջև հաստատվեցին տնտեսական սերտ հարաբերություններ: Երկիրն սկսեց տնտեսապես միավորվել: Միավորման զորեղ միջոցներից էին նաև միասնական կրթական համակարգը և մշակույթը:

Նման պայմաններում **1848–1849 թթ. Գերմանիայում ծավալվեց հեղափոխություն**, որի կարևորագույն նպատակը ազգի քաղաքական միավորումն էր: Այն սկսվեց **Պրուսիայում**: Ապստամբ ժողովուրդը թագավորին ստիպեց ընդունել սահմանադրություն, որը հռչակում էր ժողովրդավարական ազատություններ:

Շուտով **Մայնի Ֆրանկֆուրտ** քաղաքում հրավիրվեց **Ազգային ժողով**: Այն ընդունեց **համագերմանական Սահմանադրություն**, որը նախատեսում էր միասնական Գերմանական տերության ստեղծում: Սակայն հետադիմությունը համախմբեց ուժերը և հաղթեց: Համագերմանական Ազգային ժողովը ցրվեց:

Չնայած պարտությանը՝ հեղափոխության ընթացքում ավելի խորացավ գերմանացիների ազգային ինքնագիտակցությունը: Դա արագացրեց երկրի միավորումը հաջորդ տասնամյակներին:

ՆԱՊՈԼԵՈՆ III
(1808–1873)

Ֆրանսիայի նախագահ, ապա՝ կայսր (1852–1870): Կառավարումը բաժանվում է մի քանի փուլերի: Նախապես խոսում էր ընդհանուր բարօրության և ազատության մասին: Սակայն հաստատվելով գահին՝ սկսեց կառավարել միահեծան կերպով. հետապնդում էր այլախոհներին, փակում ընդդիմադիր թերթերը:
1860–ական թթ. ընդդիմության ճնշման տակ անցկացրեց ազատական բարենորոգումներ: Սակայն դրանք ավելի շատ ցուցադրական էին, քան իրական:
Արտաքին քաղաքականության մեջ հետամուտ էր Եվրոպայում Ֆրանսիայի տիրապետության հաստատման անիրական նպատակին: Պրուսիայի դեմ պատերազմում (1870–1871) ֆրանսիական բանակը կրեց խայտառակ պարտություն: Նապոլեոն III–ը գերի ընկավ և ընդմիշտ հեռացավ քաղաքական ասպարեզից:

ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆ
(1788–1824)

Անգլիացի գրող: Նրան մեծ հռչակ բերեց «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմը: Հարոլդն ազնվական է, որը հիասթափվել է դաժան կյանքից: Դառնալով ճանապարհորդ՝ նա մերթ հիանում է իսպանացիների ազատասիրությամբ, մերթ հույներին կոչ է անում կռվել թուրքերի դեմ, երբեմն էլ սգում է Իտալիայի դառը ճակատագիրը: Ընթերցողի առջև հառնում է նրա ազատասեր, քնարական, երազկոտ, զգայուն ու զարմանահրաշ կերպարը:
Ջ. Բայրոնը նաև հայերի ջերմ բարեկամն էր: Մխիթարյան միաբանությունում սովորել է հայերեն, կատարել թարգմանություններ:

Ազգային հեղափոխությունները Եվրոպայում

Միևնույն հայրենիքը, լեզուն և մշակույթն ունեցող ազգերը միշտ էլ ձգտել են ունենալու կամ վերականգնելու սեփական ազգային կյանքն ու անկախ պետությունը: Դրան հասնում էին երկարատև պայքարի, հաճախ՝ ազգային հեղափոխությունների շնորհիվ:

Եվրոպայում այդ ուղիով առաջինը **Հունաստանը** ձեռք բերեց ազատություն: XIV–XV դդ. ի վեր հույները տառապում էին օսմանյան լծի ներքո: Նրանց մեջ հասունանում էր հեղափոխության ճանապարհով ազատագրվելու գաղափարը: 1821 թ. սկսվեց հույների ապստամբությունն ընդդեմ Օսմանյան կայսրության: Պայքարը վայելում էր առաջադեմ Եվրոպայի համակրանքը. չէ՞ որ Հունաստանը նրա քաղաքակրթության բնօրրանն էր: Հունաստան էին գալիս բազում կամավորներ: Նրանց թվում էր անգլիացի մեծ բանաստեղծ և մարդասեր **Ջ. Բայրոնը**:

Հույները հասան հաջողության, երբ ի պաշտպանություն նրանց հանդես եկան Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան: **1830 թ.** նրանք ճանաչեցին Հունաստանի անկախությունը, իսկ երկու տարի անց երկիրը հռչակվեց թագավորություն:

Հաղթանակով ավարտվեց նաև 1831 թ. հեղափոխությունը **Բելգիայում**: Բելգիացիներն ազատագրվեցին Հոլանդիայից և ստեղծեցին անկախ պետություն: Նույն թվականին ազգային հեղափոխություն սկսվեց նաև **Լեհաստանում**, սակայն ռուսական զորքերն այն արյան մեջ խեղդեցին:

1848–1849 թթ. ազգային հեղափոխություններ տեղի ունեցան Իտալիայում և Հունգարիայում: Երկու հեղափոխություններն էլ ուղղված էին ավստրիական տիրապետության դեմ: Ստանալով Ռուսաստանի օգնությունը՝ Ավստրիան կարողացավ ճնշել իտալական և հունգարական ազգային հեղափոխությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հեղափոխություններն ըստ դրսևորման երկու ձևի են լինում. թվարկե՛ք և բնորոշե՛ք դրանք
2. Նշե՛ք 1848 թ. ֆրանսիական հեղափոխության պատճառները:
3. Որքա՞ն ժամանակ է գոյություն ունեցել Երկրորդ հանրապետությունը: Ո՞վ ստեղծեց Երկրորդ կայսրությունը Ֆրանսիայում:
4. Փորձե՛ք ապացուցել, որ Ֆրանսիան, այնուհանդերձ, զարգանում էր Մեծ հեղափոխության մատնանշած ուղիով:
5. Բնութագրե՛ք գերմանական հեղափոխությունը: Ո՞րն էր նրա գլխավոր արդյունքը:
6. Ինչո՞ւ են բոլոր ազգերը ձգտում ունենալու անկախ պետություն: Ի՞նչ նշանակություն ունի անկախությունը:
7. Ե՞րբ է անկախացել Հունաստանը: Որո՞նք են հույների ազատագրական պայքարի հաջողության պատճառները:
8. XIX դ. առաջին կեսին եվրոպական ո՞ր երկրներում են տեղի ունեցել ազգային հեղափոխություններ: Ինչո՞վ են ավարտվել դրանք:

Քննարկման հարց

Զարգացման ո՞ր ուղին է նախընտրելի՝ հեղափոխական, թե՞ բարենորոգումների:

Նոր հասկացություններ, արտահայտություններ, անուններ

Սոցիալական և ազգային հեղափոխություններ, Երկրորդ հանրապետություն, նախագահական հանրապետություն, սոցիալիստ (ընկերվար), ազգային հեղափոխություն, Լուի Ֆիլիպ, Լուի Նապոլեոն III, Երկրորդ կայսրություն, Գերմանական միություն, 1848–1849 թթ. Գերմանական հեղափոխություն, Ջ. Բայրոն, Բելգիա

9 ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ (ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՆ)

Ինչ է ավանդական հասարակությունը

Նոր ժամանակներում Արևելքի երկրները իրենց զարգացման մակարդակով բավական հետ մնացին եվրոպական առաջատար երկրներից: Գլխավոր պատճառը մինչարդյունաբերական դարաշրջանում ստեղծված հասարակության բնույթի մեջ էր: Նոր դարաշրջանում երկար ժամանակ այդ հասարակությունը մնաց անփոփոխ, այդ պատճառով էլ ստացել է **ավանդական հասարակություն** անվանումը: Նրան բնորոշ են՝ պետության բացառիկ դերը, սովորույթների և ավանդույթների վրա հիմնված մարդկանց հոգևոր կյանքը, ապրելակերպը և հարաբերությունները: Այդպիսի հասարակություններ գոյություն ունեին ամենից առաջ Արևելքի երկրներում՝ Օսմանյան կայսրություն, Իրան, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա:

Ավանդական հասարակությունում պետության գլուխ կանգնած էր **միահեծան ղեկավարը** (սուլթան, արքա, շահ, կայսր և այլն): Նրա կամքը պարտադիր էր բոլորի համար: Կառավարումն իրականացվում էր մեծաքանակ պետական ապարատի միջոցով: Սովորութային և ավանդական նորմերի, հասարակական կարգ ու կանոնի պահպանումը վերահսկվում էր բանակի, ոստիկանության և դատարանի միջոցով:

Գյուղատնտեսությունը շարունակում էր մնալ երկրի տնտեսության գլխավոր հատվածը: Պետությունն էր երկրի հողերի գերագույն սեփականատերը: Արտադրության մեջ գերիշխում էր ձեռքի աշխատանքը: Գյուղացիությունը ապրում էր համայնքներով, գտնվում էր կիսազատ կամ ճորտային վիճակում: Արհեստավորները և առևտրականները միավորված էին համքարությունների մեջ:

Հասարակությունը ուներ հստակորեն ընդգծված **դասային կառուցվածք**: Հիմնական դասերն էին ազնվա-

կանությունը, հոգևորականությունը, պաշտոնեությունը, գյուղացիությունը, արհեստավորները, վաճառականները: Յուրաքանչյուր դասի վերապահված էին որոշակի իրավունքներ և պարտականություններ: Նրանց միջև կային լուրջ անջրպետներ: Մեծ էր նաև ընտանիքի, ազգակցական կապերի դերը այս հասարակություններում:

Հասարակական կյանքում, հատկապես մշակութային, մեծ դեր էր խաղում **կրոնը**: Շատ դեպքերում (բացառությամբ Չինաստանի) կրթությունը հասանելի էր միայն վերնախավին: Ընդհանուր առմամբ բնակչությունն անգրագետ էր:

Նոր դարերում ավանդական հասարակությունների համար հրատապ դարձավ **արդիականացման** խնդրի լուծումը: Առանց դրա անհնար էր հաղթահարել արդյունաբերական երկրներից հետ մնալը և ապահովել պատմական առաջընթացը:

Օսմանյան կայսրությունը

Նոր դարերի սկզբին Օսմանյան կայսրությունը դեռևս տիրում էր ահռելի տարածքի: Նրա վերահսկման տակ էին Արևմուտք–Արևելք կարևորագույն ռազմավարական և առևտրական ուղիները: Սակայն երկիրը տնտեսապես հետամնաց էր:

Պետությունը միահեծան կառավարում էր **սուլթանը**, որը միաժամանակ բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդն (**խալիֆա**) էր: Երկիրը բաժանված էր **վիլայեթների**, որոնք կառավարում էին փաշաները: Սակայն օսմանյան սուլթաններին այդպես էլ չհաջողվեց ստեղծել ամուր վարչական, տնտեսական և մշակութային կառույց: Տերության միասնականությունը պահպանվում էր միայն խոշոր բանակի միջոցով:

Օսմանյան տերության կազմում ապրում էին բազմաթիվ ժողովուրդներ, որոնք դաժանորեն շահագործվում էին տիրապետող թուրք տարրի կողմից: Չնայած դրան՝ տերության հիմնական արտադրող և ստեղծագործ ուժը կազմում էին ոչ թուրք ժողովուրդները: Արտադրության, առևտրի և մշակույթի ոլորտներում առավելապես զբաղված էին **հույները, հայերը, հրեաները, արաբները, բալկանյան ժողովուրդները, ասորիները**:

Օսմանյան կայսրության դերը միջազգային ասպարեզում սկսեց նվազել: Տերության գլխավոր հակառակորդներն էին Ավստրիան և Ռուսաստանը: Թուրքերը հատկապես անհաջողություններ կրեցին Ռուսաստանի դեմ XVIII դ. երկրորդ կեսին տեղի ունեցած պատերազմներում:

Այս դրությունից հաջողությամբ օգտվում էին Անգլիան և Ֆրանսիան, որոնք ամրապնդում էին իրենց ազդեցությունը սուլթանի վրա:

Այսպես՝ XVII–XVIII դարերում Օսմանյան տերությունը պարբերաբար կորցնում էր իր տիրույթները և թուլանում: Օսմանյան տերությունում ազդեցություն ստանալու, նրա տարածքների համար մեծ տերությունների միջև ծավալված պայքարը միջազգային դիվանագիտության մեջ XVIII դ. երկրորդ կեսին ձևակերպվեց **Արևելյան հարց** անունով: Աստիճանաբար մեծացավ տերության կախվածությունը եվրոպական պետություններից: Վերջիններս լայնորեն օգտագործում էին տերության հպատակ ժողովուրդների, հատկապես քրիստոնյաների ազատագրական պայքարը:

Հպատակ ժողովուրդներին օսմանցիները վերաբերում էին իբրև կրոնական համայնքների (միլլեթներ): Կ. Պոլսի գրավումից հետո (1453 թ.), սուլթանական հրովարտակներով հիմնվեցին հունական և հայկական պատրիարքությունները: Պատրիարքներն ունեին ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանություն: Նրանք էին ղեկավարում իրենց համայնքների ներքին ազգային գործերը:

Տերության անկումային ընթացքից թուրքական վերնախավը փորձեց դուրս գալ բարենորոգումների ճանապարհով: Փորձ արվեց եվրոպական օրինակով ուժեղացնել բանակը, կառավարման համակարգը և զիջումների միջոցով թուլացնել հպատակ քրիստոնյա ժողովուրդների պայքարը:

XVIII դ. վերջին դրվեց բարենորոգումների սկիզբը: Ստեղծվեցին նոր զինվորական ստորաբաժանումներ, հիմնվեցին ռազմական ուսումնարաններ: Իսկ սուլթան **Մահմուդ II–ը** 1826 թ. վերացրեց օսմանյան բանակի ենիչերիական ստորաբաժանումները: Սակայն 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմում Օսմանյան կայսրությունը նորից պարտվեց և ստիպված էր ճանաչելու Հունաստանի անկախությունը:

Որոշ ժամանակ անց՝ 1839 թ., սկսվեց արևմտամետ բարենորոգումների նոր փուլը: Այն ստացավ **թանզիմաթ** (բարենորոգում) անվանումը: Նախատեսվում էր ապահովել ոչ մուսուլմանների իրավահավասարություն մուսուլմանների հետ, նրանց կյանքի և ունեցվածքի անձեռնմխելիություն և այլն: Սակայն դրանք չհասան իրենց նպատակին:

Իրանը

Նոր ժամանակների սկզբին Իրանը Ասիայի խոշոր երկրներից մեկն էր: Բուն իրանական հողերից բացի՝ նրա կազմի մեջ էին մտնում Աֆղանստանի և Միջին Ասիայի մի մասը, Ատրպատականը, Արևելյան Հայաստանը, Այսրկովկասի արևելյան մասը: Պետության կազմում կային տասնյակ ժողովուրդներ և ցեղեր: XVII դ. կեսերից Իրանը մտավ անկման ժամանակաշրջան:

Իրանական պետությունը ղեկավարում էր **շահը:** Պետությունը վարչականորեն բաժանված էր **խանությունների**, որոնք ղեկավարում էին **խանները:** Երկրի կյանքում հսկայական էր իսլամ հոգևորականության դերը: Իրանը գլխավորապես գյուղատնտեսական երկիր էր: Երկրում զարգացած էր նաև արհեստագործությունը: Միջազգային առևտրում հռչակված էին իրանական գորգերն ու գործվածքեղենը:

1722 թ. անկում ապրեց Սեֆյան արքայատոհմը: Հենց այդ ժամանակ Արցախում և Սյունիքում կազմակերպվեց հայկական բանակ, և փորձ էր արվում ստեղծել հայկական պետություն:

Իրանին անկայուն վիճակից դուրս բերեց, կարճ ժամանակով միավորեց և ուժեղ պետություն ստեղծեց **Նադիր շահը**: Սակայն նրանից հետո երկիրը կրկին թուլացավ:

1794 թ. Իրանում հաստատվեց Ղաջարների թյուրքական ցեղի հարստությունը: Հիմնադիրը **Աղա Մոհամմադ** խանն էր՝ այդ ցեղի առաջնորդը: Նա, սակայն, չհասցրեց ուժեղացնել երկիրը. երկու տարի անց Շուշիում նրան քնած ժամանակ դավադրաբար սպանեցին:

Իրանը XIX դար թևակոխեց տնտեսապես հետամնաց վիճակում: Նրա և Ռուսաստանի միջև շարունակվեց պայքարը Կովկասի համար, որն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Այսրկովկասը, այդ թվում նաև Արևելյան Հայաստանի հիմնական հատվածը, միացվեցին Ռուսաստանյան կայսրությանը:

Փորձելով վերականգնել հզոր տերության իր կարգավիճակը՝ ղաջարական Իրանն սկսեց վարել նվաճողական քաղաքականություն Միջին Արևելքում: Սակայն դրա պատճառով սրվեցին հարաբերությունները Անգլիայի հետ: Ի վերջո, 1841 թ. ստորագրված առևտրական պայմանագրով հաստատվեց անգլիացիների հսկողությունը Իրանի տնտեսության վրա:

Իրանը, կորցնելով իր երբեմնի հզորությունը, Նոր դարերի երկրորդ փուլում վերածվեց Անգլիայի և Ռուսաստանի կիսագաղութի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է ավանդական հասարակությունը: Որո՞նք են դրա բնորոշ կողմերը:
2. Թվարկե՛ք ավանդական մի քանի երկրներ: Ձեր կարծիքով՝ Հայաստանը մտնո՞ւմ էր այդ երկրների շարքը:
3. Ներկայացրե՛ք Օսմանյան կասրության վիճակը նոր ժամանակների սկզբին: Ինչպիսի՞ն էր հայերի դրությունը կայսրությունում:
4. Փաստերով հիմնավորե՛ք, որ Օսմանյան կայսրությունը Նոր ժամանակներում գնալով թուլանում էր: Տվե՛ք Արևելյան հարցի բացատրությունը:
5. Ե՞րբ սկսվեցին բարենորոգումներ իրականացվել Օսմանյան կայսրությունում: Ինչ է թանզիմաթը, ինչո՞ւ այն հաջողություն չունեցավ:
6. Ներկայացրե՛ք Իրանի կառավարման համակարգը: Ե՞րբ Սեֆյան արքայատոհմը անկում ապրեց: Ինչո՞վ է հայտնի Նադիր շահը: Ե՞րբ և ո՞ւմ կողմից է հաստատվել Ղաջարների հարստությունը:
7. Ներկայացրե՛ք ռուս–իրանական հակամարտության արդյունքները XIX դարի առաջին կեսին: Վերհիշե՛ք Հայոց պատմությունից ռուս–պարսկական պատերազմների մասին ձեր սովորածը:
8. Ե՞րբ կնքվեց անգլո–իրանական առևտրական պայմանագիրը և ի՞նչ հետևանք ունեցավ:

Գործնական աշխատանք

Կազմե՛ք աղյուսակ և համեմատե՛ք Օսմանյան կայսրությունն ու Իրանը. ի՞նչ նմանություններ և տարբերություններ կարող եք նշել:

Նոր հասկացություններ, տերմիններ, անուններ

Ավանդական հասարակություն, միլլեթ, Արևելյան հարց, Մահմուդ II, թանզիմաթ, Նադիր շահ, Խամսայի մելիքություններ, Աղա Մոհամմադ խան, Ղաջարական հարստություն, Թուրքմենչայի պայմանագիր, անգլո–իրանական առևտրական պայմանագիր:

10 ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ (ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆ)

«Բրիտանական թագի մարգարիտը»

Միջնադարի պատմությունից գիտեք, որ XVI դարում Հնդկաստանի հյուսիսային և կենտրոնական մասում առաջացել էր **Մեծ Մողոլի կայսրությունը**: Նոր դարերում այն սկսեց թուլանալ: Սակայն երկիրը միասնական չէր, ինչը հեշտացրեց եվրոպացիների ներթափանցումը և Հնդկաստանի գաղութացումը:

Տեղի բազմաթիվ ժողովուրդներն ապրում էին իրենց ավանդական կենցաղով և հոգևոր կյանքով, ստեղծել էին ուրույն մշակույթ: Հասարակությունը ավանդաբար բաժանված էր **կաստաների:** Արգելված էր անցումը մի կաստայից մյուսին, ինչպես նաև՝ նրանց միջև ամուսնությունները: Տարածված կրոններն էին **հինդուիզմը** և **մահմեդականությունը:**

Տնտեսության մեջ տիրապետող էր գյուղատնտեսությունը: Երկրի տարբեր մասերի միջև, սակայն, թույլ էին տնտեսական կապերը: Կային մեծ թվով խոշոր քաղաքներ, հատկապես՝ ծովափերին. օրինակ՝ Բոմբեյը, Մադրասը, Կալկաթան: Դրանք արհեստի և առևտրի կենտրոններ էին: Հնդիկ արհեստավորների արտադրանքը մեծ հռչակ էր վայելում ժամանակի շատ երկրներում:

Սակայն Նոր դարերի առաջին փուլում Հնդկաստանում պահպանվեց ավանդական հասարակությունը: Այդ պատճառով նա բավական հետ մնաց եվրոպական առաջատար երկրներից: Սակայն դեռ հին ժամանակներից եվրոպացիների մոտ ձևավորվել էր համոզմունք Հնդկաստանի հեքիաթային հարստությունների մասին: Պատահական չէ, որ աշխարհագրական հայտնագործությունների մեծ մասը կատարվեց դեպի այս երկիր տանող ճանապարհը որոնելիս:

Առաջինն այստեղ գաղութներ ստեղծեցին պորտուգալացիները դեռ XV դարում: Հետագայում՝ Հոլանդիան, Ֆրանսիան, Անգլիան, Դանիան: Գաղութացման գոր-

Լուսանցք–XVI դարից ի վեր Հնդկաստանում սկսեցին առաջանալ հայկական համայնքներ: Հնդկահայ գաղութները մարդաշատ դարձան XVII–XVIII դդ.՝ ի հաշիվ հատկապես Նոր Ջուղայից ներգաղթածների: Հայերը հաստատվում էին ծովափնյա քաղաքներում: 1690 թ. անգլիացիները Կալկաթան վերածեցին նավահանգստային քաղաքի, որին մասնակցեցին նաև հայերը: Անգլիացիները սկզբում սիրաշահում էին հայերին, սակայն հետո առաջացավ մրցակցություն: Ահա թե ինչու տեղի հայերը մասնակցեցին գաղութարարների դեմ հնդիկ ժողովրդի պայքարին: Միաժամանակ հնդկահայ ազգային–քաղաքական ուժերի մոտ ամրապնդվեց սեփական պետություն ունենալու գաղափարը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀՆԴԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղծվել է 1600 թ.՝ ըստ արքայական հրովարտակի: Գործունեությունը կենտրոնացել է Հնդկաստանի առափնյա շրջաններում՝ Բենգալ, Մադրաս, Կալկաթա, հետագայում՝ ողջ երկրում: Հաղթահարել է իր բոլոր մրցակիցների՝ ֆրանսիացի, հոլանդացի, հայ վաճառականների դիմադրությունը:
Ընկերությունն ուներ իր բազմաքանակ վարչակազմը, զինված ուժերը և նավատորմը: Հնդկաստանից արտահանում էր մետաքս, բամբակ, համեմունք, ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր: Ստանում էր ահռելի շահույթներ:
XVIII դ. կեսերից էլ ավելի ամրապնդվեցին ընկերության դիրքերը: Այն փաստորեն վերածվել էր ինքնուրույն պետության: Դա էլ ստիպեց Անգլիայի կառավարությանը սահմանափակել նրա իրավունքները:
1857–1858 թթ. Հնդկաստանում բռնկվեց ուժեղ ապստամբություն: Անգլիական կառավարությունը ճնշեց դա և իր ձեռքն առավ Հնդկաստանի կառավարումը:
Նկարում՝ Արևելահնդկական ընկերության գրասենյակը

ծընթացն իրականացնում էին այդ երկրների կողմից Հնդկաստանում հիմնված առևտրական ընկերությունները: Դրանք կրում էին **Արևելահնդկական ընկերություն** անվանումը:

Եվրոպայի գաղութատեր երկրներից յուրաքանչյուրը պայքարում էր իր մասնաբաժինը մեծացնելու կամ Հնդկաստանին ամբողջովին տիրելու համար: Ի վերջո հաղթեց Մեծ Բրիտանիան: Հնդկաստանի նվաճումն իրականացրեց անգլիական **Արևելահնդկական ընկերությունը**: Այն հիմնադրվել էր դեռ 1600 թվականին, ուներ սեփական բանակ ու նավատորմ: Անգլիացիները մղեցին երկարատև պատերազմներ տեղի պետությունների դեմ: Հրահրում էին երկպառակություններ, արհեստական սով: Միլիոնավոր հնդիկներ զոհվեցին գաղութացման շրջանում:

Հնդկաստանի նվաճման երկարատև գործընթացն իր ավարտին հասավ XIX դարի կեսին: **1857 թ.** անգլիացիների դեմ հզոր ապստամբություն սկսվեց, որը Հնդկաստանում հայտնի է անկախության համար առաջին պատերազմ անունով: Այն գլխավորում էր մողոլական վերջին կայսրը: Մեկ տարի անց ապստամբությունը ճնշվեց, Մեծ մողոլի հարստությունը դադարեց գոյություն ունենալ: Արդյունքում՝ ամբողջ Հնդկաստանը դարձավ բրիտանական գաղութ և դրվեց բրիտանական թագի անմի-

Չինաստանը նոր ժամանակներում

ջական կառավարման ներքո: Իսկ Արևելահնդկական ընկերությունը, որը դարձել էր գրեթե ինքնուրույն մի պետություն, լուծարվեց: Հնդկաստանում հաստատվեց անգլիացիների **գաղութային վարչակազմ՝ գեներալ–նահանգապետի գլխավորությամբ**: Անգլիացիներն անխնա շահագործում էին երկրի հարստություններն ու տեղի ժողովուրդներին: Այս գաղութի նշանակությունն այնքան մեծ էր անգլիական կապիտալի և տերության համար, որ այն պատկերավոր անվանում էին **«բրիտանական թագի մարգարիտ»**:

Չնայած դաժան շահագործմանը՝ անգլիացիները Հնդկաստան ներմուծեցին արդյունաբերական հասարակության տարրեր: Լուսավորական գաղափարների ազդեցությամբ սկսեց ձևավորվել հնդիկ մտավորականությունը, որը հակված էր դեպի եվրոպական արժեքները: Այդ ամենն աստիճանաբար ճանապարհ հարթեց Հնդկաստանի ավանդական հասարակության արդիականացման համար:

Չինաստանի «բացվելը»

Նախորդ տարվա դասընթացից գիտեք, որ XVII դ. կեսերին Չինաստանից հյուսիս–արևելքում բնակվող մանջուրները, 1644 թ. գրավելով Պեկինը, ստեղծեցին Ցին կայրությունը: Ամբողջ Չինաստանը հայտնվեց նրանց գերիշխանության ներքո: Ցին արքայատոհմը կառավարեց երկիրը մինչև XX դարի սկիզբը:

Նոր դարերում շարունակվում էր Չինաստանի **ինքնամեկուսացումը արտաքին աշխարհից**, հատկապես եվրոպացիներից: Պետությունը խիստ վերահսկողություն էր սահմանել արտադրության և շուկայի նկատմամբ, սահմանափակել էր արտաքին առևտուրը: Նույնիսկ արգելված էր մեծ նավերի կառուցումը: Այս իրավիճակը մեծապես խանգարում էր երկրի տնտեսության զարգացմանը:

Չինաստանում պահպանվեցին հասարակական կյանքի կազմակերպման ավանդական ձևերը, մարդկանց կենցաղն ու հոգևոր կյանքը: Չինացիների զգալի մասը դավանում էր բուդդայականությունը, մյուսները՝ իսլամ կամ դաոսականություն: Սակայն պաշտոնական գաղափարախոսությունը նախկինի պես մնում էր **կոնֆուցիականությունը:**

Եվրոպացիների գաղութային նկրտումներն ուղղվեցին նաև դեպի Չինաստան: Նրանք փորձում էին ստանալ ազատ առևտրի և ձեռներեցության իրավունք: Առաջինը չինական նավահանգիստներ մուտք գործեցին պորտուգալացիները: Նրանց հետևեցին ֆրանսիացիները և անգլիացիները:

Չինական կողմը անվստահությամբ էր վերաբերվում եվրոպացիներին: Աստիճանաբար կաթոլիկ միսիոներները վտարվեցին երկրից, փակվեցին քրիստոնեական եկեղեցիները: Իսկ XVIII դ. կեսին կայսերական հատուկ հրովարտակով բոլոր նավահանգիստները, բացի մեկից՝ **Գուանչժոու**, փակվեցին նրանց առջև: Չինաստանում քաջատեղյակ էին հարևան երկրներում եվրոպացիների վարած գաղութային քաղաքականության մասին:

XVIII դ. վերջերին սկսեց աճել Ցին կայսրության առևտուրը արտաքին աշխարհի հետ: Չինական մետաքսը, ճենապակին, թեյը և այլ ապրանքներ մեծ պահանջարկ ունեին Եվրոպայում: Սակայն չինացիները եվրոպացիներից ոչ մի ապրանք չէին գնում:

Այդժամ անգլիացիները դիմեցին նախադեպը չունեցող քայլի: Սկսեցին Հնդկաստանից մաքսանենգ ճանապարհով Չինաստան ներմուծել ափիոն: Դրա ներկրումը շարունակ աճում էր՝ ահռելի եկամուտներ ապահովելով անգլիացիներին: Աննախադեպ չափերի հասավ թմրամոլությունը, երկիրը կանգնեց աղետի առջև: Չինաստանն արգելեց թմրանյութի ներկրումը, որի պատճառով Մեծ Բրիտանիան պատերազմ սկսեց: **Ափիոնի առաջին պատերազմն ընթացավ 1839–1842 թթ.** և ավարտվեց անգլիացիների հաղթանակով: Կնքված անիրավահավասար պայմանագրով Չինաստանը բացեց հինգ նավահանգիստ, Մեծ Բրիտանիային զիջեց Հոնկոնգ կղզին և վճարեց մեծ ռազմատուգանք: Շուտով Չինաստանի հետ նման պայմանագրեր կնքեցին նաև Ռուսաստանը և Ֆրանսիան:

Այսպես տեղի ունեցավ Չինաստանի «բացումը» արտաքին աշխարհին: Սակայն, ի տարբերություն Հնդկաստանի, եվրոպացիներին չհաջողվեց նվաճել Չինաստանը: Երկիրը հնարավորություն ստացավ նախապատրաստվելու և որոշ ժամանակ անց իրականացնելու հասարակության արդիականացում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք, թե ինչ կաստաներ կային Հնդկաստանում հնուց ի վեր: Փորձե՛ք նկարագրել հնդկական հասարակությունը:
2. Ինչո՞ւ եվրոպացիների միջև դաժան մրցակցություն ծավալվեց Հնդկաստանը նվաճելու համար: Ո՞ր երկրները և ինչ ընկերություններ ստեղծեցին Հնդկաստանում: Ինչ դեր էին խաղում հայերը Հնդկաստանի կյանքում նոր ժամանակների առաջին փուլում:
3. Ե՞րբ է տեղի ունեցել անկախության համար հնդիկների առաջին պատերազմը: Ինչո՞վ այն ավարտվեց:
4. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ անգլիացիներին հաջողվեց նվաճել Հնդկաստանը: Ինչ նշանակություն ուներ Հնդկաստանը Մեծ Բրիտանիայի համար:
5. Ներկայացրե՛ք նոր դարերի սկզբի Չինաստանը: Ինչո՞ւ էր երկիրը փակվել եվրոպացիների առջև:
6. Ե՞րբ է տեղի ունեցել ափիոնի առաջին պատերազմը, ո՞րն էր դրա գլխավոր պատճառը: Ինչ պայմանագիր կնքվեց պատերազմի ավարտին, ներկայացրե՛ք դրա հիմնական պայմանները:
7. Ո՞ր երկրները Չինաստանի հետ նման պայմանագրեր կնքեցին: Չինաստանի «բացվելը» ունեցա՞վ դրական նշանակություն նրա համար:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Անգլիական Արևելահնդկական ընկերություն, Հնդկաստանի գաղութացում, անկախության համար հնդիկների առաջին պատերազմ, գաղութային վարչակազմ, «բրիտանական թագի մարգարիտ», Ափիոնի առաջին պատերազմ, Չինաստանի «բացում», Բոմբեյ, Մադրաս, Կալկաթա, Գուանչժոու, Հոնկոնգ:

11 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVII – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

Միջազգային հարաբերություններն ընդգրկում են պետությունների և ազգերի միջև կապերն ու առնչությունները: Դրանք կառուցվում են տվյալ դարաշրջանում գործող կամ հաստատված չափանիշների համաձայն: Ժամանակի ընթացքում միջազգային հարաբերությունները կարգավորող այդ չափանիշները փոփոխվում են:

Փոփոխություններ միջազգային հարաբերությունների կարգավորման գործում

Միջնադարյան Եվրոպայում միջազգային հարաբերությունները կարգավորվում էին առավելաբար աստվածաշնչյան պատվիրաններով: Այն պատերազմները, որոնք նպաստում էին պատվիրանների հաստատմանը, համարվում էին **արդարացի**, իսկ խոչընդոտողները՝ **անարդարացի**:

Արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլում աստվածընծա արքաներին (և արքայատներին) փոխարինելու եկան պետություններ, որոնք հանդես էին գալիս ողջ ազգի անունից: Ազգի հավաքական կամքը համարվում էր օրենքի և ինքնիշխանության աղբյուր: Այս առումով լավագույն օրինակը Նապոլեոնն էր՝ «**բոլոր ֆրանսիացիների կայսրը**»:

Յուրաքանչյուր **ազգային պետություն** ներկայացնում էր իր շահերը՝ տարածքային, քաղաքական, տնտեսական: Դրանք հաճախ բախվում էին՝ տեղիք տալով պատերազմների: **Արդարացի պատերազմ** հասկացությունը՝ իր կրոնական և բարոյական բովանդակությամբ, դարձավ անցյալ: Այժմ պատերազմի արդյունքներին համապատասխան (հաղթանակ կամ պարտություն)՝ դրանք ընդունում էին նոր ձև ու բովանդակություն: Պարտվող կողմը վճարում էր ռազմատուգանք,

զիջում տարածքներ, հրաժարվում տնտեսական շահավետ գործարքներից:

Իր երկարատև պատերազմների ընթացքում Նապոլեոնը հանդես էր գալիս հեղափոխության, առաջադիմության, ազգերի ինքնորոշման կարգախոսներով: Իհարկե, դրանք նպաստում էին ֆրանսիական ազդեցության և տիրապետության տարածմանը, սակայն անժխտելի էր նաև առաջընթացը:

Դրան հակառակ՝ եվրոպական միապետները հանդես էին գալիս «հին աստվածընծա կարգերի» և սահմանների պաշտպանությամբ: Երկու հակամետ մոտեցումները բախվեցին Վիեննայի 1814–1815 թթ. վեհաժողովում: Հաղթեց հետադիմությունը, և ազգերի ինքնորոշման իրավունքը զոհաբերվեց մեծ տերությունների շահերին: Անտեսվեց իտալացիների, գերմանացիների, բելգիացիների, նորվեգացիների, լեհերի ինքնուրույն պետություն ունենալու իրավունքը:

Սակայն հետադիմությունը ժամանակավոր էր: Ուժերի հավասարակշռությունն արագ փոխվում էր: Հետագա տասնամյակների ընթացքում վերը նշված ազգերը հասան իրենց նպատակին: Այսինքն՝ Եվրոպայում հիմնականում հաղթանակեց **ազգերի ինքնորոշման իրավունքը**:

Տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց անհրաժեշտություն առաջացավ կարգավորելու նաև երկրների միջև առևտրական հարաբերությունները: Կնքվեցին **ձեռնարկատիրության** և **ծովագնացության** վերաբերյալ պայմանագրեր: XIX դ. 40–ական թթ. նախ Անգլիայի և Ֆրանսիայի, իսկ ապա նաև այլ պետությունների միջև հաստատվեցին հստակ կարգավորված ազատ առևտրի հարաբերություններ: Դա մեծապես նպաստեց Եվրոպայի տնտեսական միավորմանը:

Գաղութային համակարգի ձևավորման սկիզբը

Նոր տարածքների նվաճումը դարձավ զարգացած երկրների արտաքին քաղաքականության անբաժանելի կողմը: Նրանք սկսեցին հաստատվել Ամերիկայում, Ասիայում, Աֆրիկայում՝ ստեղծելով **գաղութներ**՝ նահանգա-

ՍԻՄՈՆ ԲՈԼԻՎԱՐ
(1783–1830)

Լատինական Ամերիկայի ազատագրական պայքարի առաջնորդ: Ականավոր ռազմական և պետական գործիչ: Գտնվում էր լուսավորական գաղափարների ազդեցության ներքո: Համոզված էր, որ գաղութաբնակներն ունեն բնական իրավունքներ՝ ապրելու ազատ, ինքնիշխան կյանքով: Հանրապետական էր, բայց գտնում էր, որ նախագահը պետք է ունենա մեծ լիազորություններ:
1810–1820–ական թթ. ղեկավարեց գաղութների ազատագրական պայքարը:
Բոլիվարը երազում էր միավորել ազատագրված երկրները և ստեղծել Լատինական Ամերիկայի միացյալ նահանգներ: Սակայն ծրագիրը չիրագործվեց, մեծ էին հակասությունները նորանկախ պետությունների միջև:

պետներով, վարչակազմով, ոստիկանությամբ, դատարաններով, զորքով: Շահագործվում էին գաղութների բնական պաշարները և տեղի ժողովուրդները:

Բնակչության կազմով և կարգավիճակով գաղութները նույնական չէին: Այսպես՝ Հյուսիսային Ամերիկայում XVII դ. սկզբից հաստատվել էին եվրոպացիների հոծ խմբեր՝ անգլիացիներ, ֆրանսիացիներ, հոլանդացիներ, գերմանացիներ: Դրանք ունեին ներքին ինքնավարություն՝ նահանգապետ, տեղական օրենսդրական մարմին, ոստիկանություն, դատարաններ: Սակայն տեղացիներն այլևս չէին ցանկանում մնալ Անգլիայի տիրապետության ներքո: Արդեն ասվել է՝ սկսվեց ազգային հեղափոխություն, և կազմավորվեց ԱՄՆ–ն:

Ինչ վերաբերում է Կենտրոնական և Հարավային (Լատինական) Ամերիկային, ապա այստեղ տիրապետում էին իսպանացիներն ու պորտուգալացիները: Ժամանակի ընթացքում նրանցից շատերը ձուլվեցին տեղաբնիկների հետ: Ձևավորվեց ուրույն ազգային ինքնագիտակցություն, որն էլ 1810–1820 թթ. հանգեցրեց ազգային հեղափոխությունների: Դրանց հետևանքով քարտեզի վրա հայտնվեցին այսօրվա **Վենեսուելան, Կոլումբիան, Բոլիվիան, Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան** և այլն:

Կային երկրներ, որտեղ թեպետ գերակշռում էին եվրոպական վերաբնակները, բայց ազգային ինքնագիտակցությունը թույլ էր: Օրինակ՝ **Կանադայում** և **Ավստրալիայում** հաստատվածներից շատերն իրենց շարունակում էին համարել անգլիացի՝ ապրելով անգլիական կառավարման ներքո:

Միանգամայն այլ էր պատկերը **Աֆրիկայում**: Հիմնված գաղութներում եվրոպացիները երբեք մեծամասնություն չեն կազմել: Ավելին՝ մինչև XIX դ. կեսերը նրանք դեռ չէին թափանցել մայրցամաքի խորքերը: Ինչ վերաբերում է բազմազգ աֆրիկացիներին, ապա նրանք դեռևս ապրում էին տոհմացեղային կամ ավատատիրական հասարակությունների պայմաններում:

Մայրցամաքի առափնյա շրջաններում ստեղծելով **ռազմական և առևտրական հենակետեր**՝ եվրոպացիներն արտահանում էին ոսկի, արծաթ, ադամանդ, փայտանյութ,

ստրուկներ: Այլ էր իրավիճակը հյուսիսում (Եգիպտոս, Ալ-ժիր, Թունիս և այլն), որտեղի արաբ բնակչությունը դիմադրում էր եվրոպացիների ներթափանցմանը:

Իսկ **Ասիայում** եվրոպական պետությունները (Անգլիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Հոլանդիա) տեղի երկրներին ստիպում էին կնքել ստորացուցիչ պայմանագրեր, զիջել տարածքներ, խառնվում էին նրանց ներքին գործերին և թելադրում իրենց կամքը: Անվանապես անկախ այս պետությունները վերածվում էին կիսագաղութի: Արդեն ասվել է, որ XIX դ. առաջին կեսին նման իրավիճակում էին հայտնվել Օսմանյան կայսրությունը, Իրանը, Չինաստանը: Ինչ վերաբերում է Հնդկաստանին և հարակից երկրներին, ապա դրանք վերածվեցին գաղութի:

Արևելքի գաղութացմանը շուտով սկսեց մասնակցել նաև **Ռուսաստանը**: 1826–1828 թթ. պատերազմում հաղթանակ տանելով Իրանի նկատմամբ՝ նա ավարտեց Այսրկովկասի գրավումը: Երկրամասը (դրա կազմում և Արևելյան Հայաստանը) միացվեց կայսրությանը և վերածվեց գաղութի: Դրանից հետո Ռուսաստանն իր ուշադրությունը սևեռեց դեպի Միջին Ասիա:

Այս ամենով հանդերձ գաղութացման գործընթացն ուներ նաև դրական հետևանքներ: Եվրոպացիները հեռավոր երկրներ էին բերում արդյունաբերական հասարակության նվաճումները. կառուցում էին նավահանգիստներ, ճանապարհներ, հանքահորեր, ձեռնարկություններ: Տարածում էին եվրոպական գիտությունն ու մշակույթը: Մյուս կողմից՝ տեղական մշակութային արժեքները ներմուծվում էին Եվրոպա:

Այսպես՝ դարերով միմյանցից տարանջատված ժողովուրդները մտնում էին բազմապիսի կապերի մեջ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Միջազգային հարաբերությունները ինչի՞ հիման վրա էին կարգավորվում միջնադարյան Եվրոպայում:
2. Եվրոպական ազգային պետությունների միջև հարաբերությունների կարգավորման ի՞նչ սկզբունքներ էին գործում արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլում:
3. Փաստերով հիմնավորե՛ք, որ Եվրոպայում գործնականում հաստատվեց ազգերի ինքնորոշման իրավունքը:
4. Եվրոպայում ինչո՞ւ անհրաժեշտություն առաջացավ տնտեսական հարաբերությունները կարգավորելու առանձին պայմանագրերով: Ի՞նչն էր նպաստում Եվրոպայի տնտեսական միավորման գործին:
5. Որո՞նք էին գլխավոր գաղութատեր երկրները:
6. Ինչպիսի՞ անկախ պետություններ ձևավորվեցին Լատինական Ամերիկայում:

Քննարկման հարց

Գաղութացման գործընթացն ուներ բացասական և դրական կողմեր: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր գերակշռում:

Նոր հասկացություններ, անուններ

Արդարացի և անարդարացի պատերազմներ, ազգերի ինքնորոշման իրավունք, ձեռնարկատիրության և ծովագնացության պայմանագրեր, գաղութացման գործընթաց, գաղութ, Ս. Բոլիվար, Լատինական Ամերիկա, Կոլումբիա, Վենեսուելա, Բոլիվիա, Արգենտինա, Մեքսիկա, Բրազիլիա, Կանադա, Ավստրալիա

12 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

Կրթական համակարգը

Եվրոպայում արդյունաբերական հասարակության կայացմանը համընթաց կրթության և գիտության ոլորտներում արձանագրվեցին մեծ տեղաշարժեր: Էապես փոխվեց մարդկանց վերաբերմունքը գիտելիքի նկատմամբ: Միջնադարում գիտելիքը առավելապես տեսական էր, կյանքից կտրված, գործնական նպատակներից հեռու: Աստիճանաբար այդ մոտեցումը սկսեց փոխվել: XVII–XVIII դդ. գիտության նվաճումները սկսեցին ավելի ու ավելի ներդրվել առօրյա կյանքում:

Նոր գիտելիքների արմատավորման համար մեծ կարևորություն ուներ նոր դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությունը: **Պարտադիր տարրական կրթություն** ներդրվեց Պրուսիայում, ապա՝ Ավստրիայում, Շվեդիայում և այլուր: Բացվեցին նաև միջնակարգ ուսումնարաններ՝ **գիմնազիաներ, լիցեյներ, քոլեջներ**: Ուսուցանում էին լեզուներ, մաթեմատիկա, բնագիտություն, պատմություն և այլն:

Նոր պայմաններին համապատասխան՝ իրենց գործունեությունը վերակառուցեցին միջնադարյան համալսարանները՝ **Քեմբրիջը, Օքսֆորդը (Անգլիա), Սորբոնը (Ֆրանսիա)**, հետագայում նաև **Վիեննայի, Բեռլինի, Մոսկվայի** և այլ համալսարաններ: Բացվեցին **Հարվարդի (ԱՄՆ), Սանկտ Պետերբուրգի (Ռուսաստան)** համալսարանները:

Այդ ամենի հետևանքով կրթությունը սկսեց մեծ տարածում գտնել: Եվրոպայում ձևավորվեց մտավորականության մի ստվար խավ, որի գործունեությունը ուղղված էր մտավոր արժեքների ստեղծմանը:

ՌԵՆԵ ԴԵԿԱՐՏ
(1596–1650)

Ֆրանսիացի նշանավոր մաթեմատիկոս, ֆիզիկոս և իմաստասեր, որի հայացքներն ընկած են արդի հիմնարար գիտությունների հիմքում: Տիեզերքը դիտարկում էր իբրև ներդաշնակ ամբողջություն, որը կարելի է ուսումնասիրել տրամաբանության ճշգրիտ օրենքներով: «Ես մտածում եմ, հետևաբար՝ գոյություն ունեմ». ահա նրա գիտական հավատամքը:



Օքսֆորդի համալսարանը

Հիմնարար գիտությունները

Հիմնարար գիտությունները՝ մաթեմատիկան, ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, աշխարհագրությունը և այլն, որոնք ուսումնասիրում են բնության կարևորագույն օրինաչափությունները, Նոր դարաշրջանում բուռն զարգացում ապրեցին: Այդ գործում, բացի համալսարաններից, մեծ դեր ունեին նաև ակադեմիաները և գիտական ընկերակցությունները՝ Արքայական գիտական ընկերությունը (Անգլիա), գիտությունների ակադեմիաները Ֆրանսիայում, Պրուսիայում, Ռուսաստանում, Շվեդիայում և այլուր:

XVII դ. հաճախ անվանում են մաթեմատիկայի դար: Ֆրանսիացի մաթեմատիկոս և իմաստասեր **Ռ. Դեկարտը** ասում էր, որ նյութական աշխարհի բոլոր երևույթները հնարավոր է բացատրել մաթեմատիկայի և մեխանիկայի օրենքներով: Նման մոտեցմամբ աշխարհը ներկայանում է իբրև կարգաբերված մի միջավայր, որը կարելի է հասկանալ և բացատրել «առանց Աստծու միջնորդության»: Դեկարտյան տեսությունը բացառիկ ազդեցություն է ունեցել մաթեմատիկայի և բնագիտության զարգացման վրա:

Ասվածը հաստատում է անգլիացի մեծ հետազոտող **Ի. Նյուտոնի** գործունեությունը: Նա առաջինն էր, ով

տիեզերական ձգողության, երկնային և երկրային մարմինների շարժման հիմնարար օրենքները ձևակերպեց ճշգրիտ մաթեմատիկական բանաձևերով:

XVIII դ. վերջից ստեղծվեցին առաջին **գիտական աշխատանոցները (լաբորատորիա)**: Նշանակալի արդյունքներ գրանցվեցին հատկապես քիմիայի և ֆիզիկայի բնագավառներում:

Գիտափորձերի միջոցով հնարավոր դարձավ նյութի մինչ այդ անհայտ հատկանիշների ուսումնասիրությունը: Այդ առումով մեծ են ֆրանսիացի հետազոտող **Ա. Լավուազիեի** ծառայությունները:

Տպավորիչ էին **էլեկտրականության** բնագավառի նվաճումները: Այդ ասպարեզում բացառիկ է անգլիացի ֆիզիկոս **Մ. Ֆարադեյի** ներդրումը: Նա հայտնաբերել է էլեկտրամագնիսական մակածման (ինդուկցիա), էլեկտրատարրալուծման (էլեկտրոլիզ) երևույթները: Դրա շնորհիվ մարդկությունը ստացավ էներգիայի նոր աղբյուր, որին մեծ ապագա էր սպասվում:

Գիտական նվաճումների օգտագործմամբ ստեղծվեցին կենցաղային կարիքների բավարարման նյութեր, գործիքներ, սարքեր, փոխադրամիջոցներ և այլն: Նախորդ դասերից գիտեք շոգեշարժիչի, շոգեքարշի, շոգենավի գյուտերի մասին:

Ճարտարագետները նախագծեցին և կառուցեցին **օդապարիկը**՝ առաջին քայլն անելով **օդագնացության** ասպարեզում: 1839 թ. ստեղծվեց **առաջին լուսանկարչական սարքը**: Քիմիական համադրմամբ ստացան **ռետին** և **անջրանցիկ գործվածք**, որոնք սկսեցին օգտագործվել տնտեսության ամենատարբեր ճյուղերում:

ԻՍԱՀԱԿ ՆՅՈՒՏՈՆ
(1642–1727)

Անգլիացի խոշորագույն գիտնական: Արդի հիմնարար գիտությունների հիմնադիրներից մեկը: Հայտնաբերել և բանաձևել է մեխանիկայի, տիեզերագիտության, օպտիկայի, բարձրագույն մաթեմատիկայի կարևորագույն օրենքներ: Նրա շնորհիվ շատ բան աշխարհում հասկանալի է դարձել: Սակայն բնությունն անսպառ է: Ասում են՝ մահից առաջ մեծ գիտնականը բացականչել է. «Իմ դիմաց ծփում է ճշմարտության չհետազոտված օվկիանոսը»:

ՕԴԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

1783 թ. Մոնգոլֆիե եղբայրները պատրաստեցին օդապարիկ՝ լցված ծղոտի և բրդի այրումից առաջացած ծխով: Այդ օդապարիկով նրանք կարողացան օդ բարձրանալ: Եղբայրներից մեկը նաև ստեղծեց անկարգելը (պարաշյուտ)՝ օդապարիկից վայրէջք կատարելու համար: Փարիզի գիտությունների ակադեմիայում պատրաստեցին ամուր թաղանթ ունեցող օդապարիկներ՝ լցված ջրածնով: Փարիզի մոտ կար օդագնացության դպրոց, որտեղ պատրաստված օդապարիկներով Մեծ հեղափոխության տարիներին կատարում էին մարտական թռիչքներ: Դրանք մեծ տարածում ստացան XIX դարում:

ԱՆՏՈՒԱՆ ԼԱՎՈՒԱԶԻԵ
(1743–1794)

Համարվում է դասական քիմիայի հիմնադիրներից մեկը: Նա բացահայտել է օքսիդացման և այրման գործընթացների շատ օրինաչափություններ: Շարունակելով ռուս գիտնական Մ. Լոմոնոսովի միտքը՝ ձևակերպել է նյութի զանգվածի պահպանման օրենքը: Ստեղծել է քիմիայի առաջին դասագիրքը: Մեծ հեղափոխության ժամանակ եղել է սահմանադրական միապետության կողմնակից: Յակոբինների դատարանը նրան դատապարտել է մահապատժի: Ազատելու խնդրանքին իշխանությունները պատասխանել են. «Հանրապետությունը քիմիկոսների կարիք չունի»:

1839 թ. ֆրանսիացի նկարիչ և ֆիզիկոս Լ. Դագերը ստեղծեց առաջին լուսանկարչական սարքը:

Ստեղծվեց նաև **Մորզեի սարքը**, որը հատուկ մշակված ծածկագիր–այբուբենի օգտագործմամբ՝ մեծ հեռավորությունների վրա տեղեկություններ էր հաղորդում էլեկտրական ազդանշանների միջոցով: Դրանով սկիզբ դրվեց հեռահաղորդակցությանը:

Մարդկանց ապրելակերպը

Գիտության մեծ թռիչքը և հատկապես կիրառական նվաճումները հսկայական փոփոխություններ առաջացրին մարդկանց կյանքում և կենցաղում: Միջնադարից մարդկությունը ստացել էր բավականին ծանր ժառանգություն: Նրան հետապնդում էին պարբերաբար կրկնվող սովն ու համաճարակները: Կյանքի միջին տևողությունը 50–55 տարի էր: Չափազանց մեծ էր երեխաների մահացությունը:

Արդյունաբերական հասարակությունն աստիճանաբար փոխեց իրադրությունը: Նրան անհրաժեշտ էր մեծ աշխատուժ՝ օրավուր բացվող հանքահորերի, գործարանների պահանջմունքը բավարարելու համար: Ժամանակի ընթացքում այդ պահանջմունքն առաջ բերեց ծնելիության աննախադեպ աճ: Օրինակ՝ Անգլիայում XVII–XVIII դդ. ազգաբնակչությունը եռապատկվեց, իսկ Ֆրանսիայում կրկնապատկվեց: Հետագայում այդ գործընթացը ծավալվեց նաև Պրուսիայում, Ավստրիայում, Ռուսաստանում:

Ցանքատարածությունների և արոտավայրերի ընդարձակումը, նոր մշակաբույսերի և գյուղմեքենաների ներդրումը հարստացրին բնակչության կերակրացանկը: Այն դարձավ ավելի բազմազան: Բացվեցին հասարակական սննդի բազմաթիվ կետեր՝ ճաշարաններ, թեյարաններ, պանդոկներ: Փոխվեց նաև մարդկանց հագուստը: Այն դարձավ ավելի հարմար՝ տաբատ, բաճկոն, գլխարկ, կոշիկներ: Օճառի տարածումն էականորեն բարելավեց մարդկանց անձնական հիգիենան:

Բարելավվեց նաև առողջապահությունը: Հայտնաբերվեցին բազմապիսի դեղամիջոցներ, և շատ անբուժելի հիվանդություններ սկսեցին բուժվել: XIX դ. առաջին կեսին զարգացած երկրներում ստեղծվեցին հանրային առողջապահության համակարգեր: Եթե նախկի-

նում գործում էին անհատ բժիշկներ, որոնք բուժում էին առանձին հիվանդների, ապա այժմ բացվում էին **հիվանդանոցներ**, որոնց աշխատանքը վերահսկվում էր պետության կողմից:

Հարստացավ բնակավայրերի ճարտարապետական պատկերը՝ սալապատված փողոցներ, ջրմուղ, կոյուղի, զբոսայգիներ, հրապարակներ, հասարակական շենքեր և այլն: Գործարկվեցին հասարակական փոխադրամիջոցներ: Բնակավայրերը կապվեցին երկաթուղային ցանցով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նոր ժամանակներում ինչո՞ւ աճեց գիտության և կրթության դերը հասարակության կյանքում:
2. Կրթության համակարգում ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան: Թվարկե՛ք նոր շրջանի հայտնի համալսարանները:
3. Որո՞նք են հիմնարար գիտությունները: Նշե՛ք գիտական գլխավոր նվաճումները:
4. Դասանյութում նշված գիտնականներից ովքե՞ր են ձեզ ծանոթ և ո՞ր առարկաներից:
5. Ինչո՞ւ ենք ասում, որ գիտությունն ազգային սահմաններ չի ճանաչում:
6. Որո՞նք են մարդու առօրյա կյանքում կատարված փոփոխությունների պատճառները:
7. Փորձե՛ք ներկայացնել նոր ժամանակների մարդկանց՝ աշխատանքը, հագուստը, սնունդը, բնակարանը, առօրյա հոգսերը:

Նոր հասկացություններ, անուններ

Պարտադիր տարրական կրթություն, գիմնազիա, քոլեջ, լիցեյ, համալսարան, հիմնարար գիտություն, գիտական աշխատանոց (լաբորատորիա), Ռ. Դեկարտ, Ի. Նյուտոն, Ա. Լավուազիե, Մ. Ֆարադեյ, օդապարիկ, լուսանկարչական սարք, ռետին, անջրանցիկ գործվածք, Մորզեի սարք

13 ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ (XVII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

ԱԴԱՄ ՍՄԻԹ
(1723–1790)

Տնտեսագիտության հիմնադիրներից է: Ստացել է հիմնավոր իմաստասիրական կրթություն: Ի մի բերելով լուսավորականների գաղափարները՝ ստեղծել է իր հիմնարար աշխատությունը՝ «Ուսումնասիրություն ազգերի հարստության բնույթի և պատճառների մասին»: Դրանում համակողմանի վերլուծել է արդյունաբերական հասարակության տնտեսական կյանքը՝ արտադրություն, կապիտալ, առևտուր, ազգային շուկա, գնագոյացում և այլն: Սիրում էր կրկնել. «Բարեկեցության հասնելու համար պետությունը պետք է ապահովի խաղաղություն, թեթև հարկեր և նպատակասլաց զարգացում»:

Ի տարբերություն հիմնարար գիտությունների, որոնք հետազոտում են բնությունը, հումանիտար գիտության և գեղարվեստական մշակույթի խնդիրը մարդն է և նրա հասարակական միջավայրը: Դա է վկայում նաև նրա անվանումը. լատիներեն նշանակում է մարդուն վերաբերող, մարդկային: Հումանիտար գիտությունները սկզբնավորվել են ուշ միջնադարում, սակայն նոր դարաշրջանում ստացան նոր բովանդակություն և արժեք:

Հումանիտար գիտությունները

XVII դ. մինչև XIX դ. առաջին կեսը նշանակալի հաջողություններ արձանագրվեցին իմաստասիրության (փիլիսոփայություն), տնտեսագիտության և պատմագիտության բնագավառներում:

Նոր դարաշրջանի իմաստասիրության հիմնական խնդիրը մարդու ներաշխարհի և հասարակական կյանքի իրողությունների բացահայտումն էր: Այդ առումով ակնառու էին լուսավորականների ձեռքբերումները:

Արդյունաբերական հասարակության պահանջներին համապատասխան՝ ձևավորվեց **տնտեսագիտությունը:** Դրա խոշոր ներկայացուցիչներն էին անգլիացի **Ա. Սմիթը** և **Դ. Ռիկարդոն**: Նրանք մշակեցին արդյունաբերական արտադրության, կապիտալի, շուկայական հարաբերությունների տեսությունները, որոնք տնտեսության կառավարման հիմք հանդիսացան:

Բարձր մակարդակի հասավ նաև **պատմագիտությունը**: Անհատի, ժողովրդի, պետության, կրոնի, մշակույթի դերը ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում դարձավ պատմագիտական ուսումնասիրությունների հիմնախնդիրը: Ազգերը սկսեցին նորովի գնահատել սեփական և այլոց նվաճումները, որը դարձավ նրանց ինքնաճանաչման կարևոր խթանը:

Գրականությունը և թատրոնը

Արդյունաբերական դարաշրջանի լուսավորյալ գաղափարներն իրենց արտահայտությունը ստացան նաև գրականության տարբեր ժանրերում: Դրանց հերոսը նոր ժամանակների մարդն էր՝ իր մտքերով ու հույզերով, ստեղծագործական ծրագրերով ու գործողություններով: Նա ձգտում էր տնօրինելու անձնական ճակատագիրը՝ այն ծառայեցնելով ազգի, հայրենիքի և մարդկության շահերին:

XVIII դ. և XIX դ. առաջին կեսին ի հայտ եկան մեծ բանաստեղծներ գերմանացի **Յ. Վ. Գյոթեն**, անգլիացի **Ջ. Բայրոնը**, ռուս **Ա. Պուշկինը** և այլք: Նրանք ստեղծեցին համաշխարհային գրականության գլուխգործոցներ:

Մեծ նվաճումներ ունեցավ արձակը: Այստեղ նույնպես նկատելի էր տարբեր ազգությունների գրողների «համատեղ գործը»: Նրանցից խոշորագույններն էին անգլիացի **Չ. Դիքենսը**՝ քաղաքի հետնախորշերում ապրող, բայց հոգու մաքրությունը պահպանած «փոքր մարդկանցով», ֆրանսիացի **Վ. Հյուգոն**՝ ազատատենչ և աննկուն ճակատագրերի նկարագրությամբ, **Օ. Բալզակը**՝ բուրժուական բարոյականության (կեղծիք, ստորություն, ընչաքաղցություն) քննադատությամբ:

Թատրոնը դարձավ նոր հասարակության հոգևոր կենտրոններից մեկը: Նրա զարգացման ելակետը անգլիացի մեծ թատերագիր **Վ. Շեքսպիրի** ստեղծագործությունն էր: Դրանում տարբեր հոգեբանության ու հասարակական դիրքի մարդիկ (արքաներ, ազնվականներ, ծառաներ) կերպավորված են սահմանային վիճակներում՝ սիրուց, հավատարմությունից ու արդարությունից մինչև ատելություն, խարդավանք և ստորություն: Շեքսպիրը մարդ էակի «ճշմարիտ հետազոտողն էր»: Նույնը կարելի է ասել նաև XVII դ. ֆրանսիացի թատերագիր **Ժ. Մոլիերի** մասին:

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ
(1799–1850)

Ֆրանսիական ռեալիզմի հիմնադիրը: Վ. Հյուգոն նրա մասին ասել է. «Բալզակը առաջիններից մեկն էր մեծագույնների մեջ, լավագույններից մեկը՝ ընտրյալների մեջ»:

ԺԱԿ ԼՈՒԻ ԴԱՎԻԴ
(1748–1825)

Ֆրանսիացի հայտնի գեղանկարիչը Մեծ հեղափոխության մասնակից էր: Նշանավոր գործերից են «Հորացիոսների երդումը», «Մարատի մահը», «Թագադրում»:

ՎՈԼՖԳԱՆԳ ԱՄԱԴԵՈՒՍ ՄՈՑԱՐՏ
(1756–1791)

Ապրել է Վիեննայում: Սկսել է ստեղծագործել հինգ տարեկանից: Առ այսօր աշխարհի բեմերից չեն իջնում նրա «Ֆիգարոյի ամուսնությունը», «Դոն Ժուան», «Կախարդական սրինգ» օպերաները: Նրա վերջին ստեղծագործությունը «Ռեքվիեմն» է:

ՋՈԱԿԻՆՈ ՌՈՍԻՆԻ
(1792–1868)

Իտալացի երգահան, օպերային արվեստի մեծագույն վարպետ: Գրել է նաև բազմաթիվ երգեր, երաժշտական պատկերներ, հոգևոր խմբերգեր: Առավել հայտնի է «Սևիլյան սափրիչը» երգիծական օպերայով:

Գեղանկարչությունը և ճարտարապետությունը

Նոր դարաշրջանի գեղանկարչությունը նույնպես զգայուն էր հասարակության մեջ ընթացող տեղաշարժերի նկատմամբ: XVII–XVIII դդ. այն սևեռված էր առավելաբար մարդկանց առօրյա կյանքին՝ աշխատանք, ընտանեկան միջավայր, հագուստ, ճաշկերույթներ, զբոսանքներ և այլն: Այդ ամենը ճիշտ արտահայտելու համար արվեստագետից պահանջվում էր նուրբ ճաշակ և հոգեբանություն: Այդպիսիք էին իսպանացի **Դ. Վելասկեսը**, ֆրանսիացի **Ա. Վատտոն** և այլք:

Հեղափոխությունների դարաշրջանը տեղիք տվեց մարդկային խոր և հակասական ապրումների՝ տառապանքից, զրկանքից ու թշվառությունից մինչև հերոսացում ու վեհացում: Դրանք մեծ արվեստով արտացոլել է գեղանկարիչների մի ամբողջ աստղաբույլ՝ իսպանացի **Ֆ. Գոյան**, անգլիացի **Ու. Թըրները**, ֆրանսիացիներ **Ժ. Դավիդը, Է. Դելակրուան** և այլք:

Նոր դարաշրջանում երևացին խոշոր ճարտարապետներ, որոնք նախագծում ու կառուցում էին ոչ միայն առանձին շինություններ, այլև ճարտարապետական համալիրներ: Այլ խոսքով՝ նրանք զբաղված էին քաղաքաշինությամբ: Նրանց մտահղացմամբ է, որ գոյություն ունեն Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի, Սանկտ Պետերբուրգի արդի ճարտարապետական համալիրները:

Երաժշտությունը և օպերային արվեստը

Աննախադեպ էր նաև երաժշտական արվեստի զարգացումը: Տարբեր ուղղությունների ու դպրոցների ներկայացուցիչներ մշակեցին արդի երաժշտական համարյա բոլոր ժանրերը՝ երգ, գործիքային երաժշտություն, սիմֆոնիա, օպերա և այլն: Այդ գործում հատկապես մեծ էր գերմանացի երգահանների ներդրումը՝ **Յ. Բախ, Լ. Բեթհովեն**: Իրենց մեղեդայնությամբ և խոր ապրումներով առանձնանում են ավստրիացի երգահան **Վ. Մոցարտի** ստեղծագործությունները:

Օպերան համադրական արվեստ է: Դրանում միավորված են թատրոնը, պարը և երաժշտությունը՝ կենսա-

կան տարբեր իրադրություններ, գործողություններ, զգացմունքներ, մտքեր: Այն ձևավորվել է Իտալիայում XVI դ. վերջին և XVII դ. սկզբին: Նրա խոշորագույն ներկայացուցիչներն են **Ջ. Ռոսինին, Ջ. Վերդին** (XIX դ.) և այլք: Օպերային արվեստը զարգացավ նաև այլ երկրներում՝ Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է հումանիտար գիտությունների հետազոտության առարկան:
2. Ի՞նչ հարցերի ուսումնասիրությամբ էին զբաղվում՝ ա) իմաստասերները, բ) տնտեսագետները, գ) պատմաբանները:
3. Թվարկե՛ք XVII դարից մինչև XIX դարի առաջին կեսն ընկած ժամանակաշրջանի հայտնի գրողների անուններ. նրանց ո՞ր ստեղծագործություններին եք ծանոթ:
4. Որո՞նք են գեղանկարչության և ճարտարապետության մեջ տեղ գտած բովանդակային հիմնական նորույթները: Թվարկե՛ք հայտնի գեղանկարիչների:
5. Ինչո՞վ է նշանավորվել նոր ժամանակների երաժշտական արվեստը:

Գործնական աշխատանք

Տետրում լրացրե՛ք գրականության և արվեստի հիմնական նվաճումներին վերաբերող աղյուսակը՝ օգտվելով նաև լրացուցիչ նյութերից:

Ուղղությունը	Նշանավոր հեղինակները	Ստեղծագործությունները
Գրականություն		
Թատրոն		
Գեղանկարչություն		
Երաժշտություն		

Նոր հասկացություններ, անուններ

Տնտեսագիտություն, պատմագիտություն, Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո, Յ. Վ. Գյոթե, Չ. Դիքենս, Օ. Բալզակ, Դ. Վելասկես, Ա. Վատտո, Ֆ. Գոյա, Ու. Թըրներ, Ժ. Դավիդ, Է. Դելակրուա, Վ. Շեքսպիր, Ջ. Բայրոն, Ա. Պուշկին, Վ. Հյուգո, Լ. Բեթհովեն, Վ. Մոցարտ, Յ. Բախ, Ջ. Վերդի, Ջ. Ռոսինի

ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. XVII դարից մինչև XIX դարի կեսերը արդյունաբերական հասարակության պատմության առաջին շրջափուլն է: Արևմտյան Եվրոպայի երկրներում աստիճանաբար ձևավորվեց նոր հասարակությունը, արմատական փոփոխությունների ենթարկվեց մարդկանց հասարակական և անձնական կյանքը:

   - *Ինչ է արդյունաբերական հեղաշրջումը: Որոնք էին դրա նախադրյալները: Տնտեսական և սոցիալական ինչ հետևանքներ ունեցավ այն: Առաջին շրջափուլում ո՞ր երկիրն էր ամենազարգացածը աշխարհում:*

2. XVII–XVIII դարերում Եվրոպայում և Ամերիկայում ծավալվեց մի հուժկու գաղափարական շարժում, որը պատմության մեջ հայտնի է «լուսավորություն» անունով:

   - *Ինչո՞ւ է շարժումն այդպես կոչվել: Թվարկե՛ք նշանավոր լուսավորական գործիչների: Որոնք են լուսավորականների հիմնական գաղափարները: Ինչ հայ լուսավորականների գիտեք: Ներկայացրե՛ք շարժման նշանակությունը:*

3. Լուսավորության դարաշրջանի կարևոր առանձնահատկություններից էր լուսավորյալ միապետների ի հայտ գալը: Նրանք փորձում էին կատարել վերափոխումներ՝ պահպանելով ավատատիրական կարգերի հիմքերը:

   - *Բացատրե՛ք «լուսավորյալ միապետ» հասկացությունը: Ո՞ր երկրներում կային լուսավորյալ միապետներ, ե՞րբ են նրանք կառավարել: Համեմատե՛ք նրանց: Ո՞ւմ կերպարն է ձեզ համար նախընտրելի: Հիմնավորե՛ք ձեր մոտեցումը:*

4. Նոր դարերի առաջին փուլում՝ XVII դ. մինչև XIX դ. կեսը, մի շարք երկրներում տեղի ունեցան հեղափոխություններ: Հեղափոխական ճանապարհով հասարակական կյանքում ներդրվեցին մարդու և ազգի բնական իրավունքները: Հեղափոխությունը ձերբազատեց ազգերի ստեղծագործ ներուժը և մղեց կենսական խնդիրների լուծման նպատակին: Միշտ չէ, որ հեղափոխությունները հասնում էին իրենց նպատակին, սակայն այդ ընթացքում ազգերը հասունանում էին և ինքնահաստատվում: Դրանք ունեցան պատմական մեծ նշանակություն:

- *Ինչ է հեղափոխությունը: XVII դ. մինչև XIX դ. կեսը ո՞ր երկրներում և ե՞րբ են տեղի ունեցել հեղափոխություններ, նշե՛ք հայտնի գործիչներին, ներկայացրե՛ք այդ հեղափոխությունների արդյունքներն ըստ երկրների. կազմե՛ք համապատասխան աղյուսակ: Դրանցից ո՞րն է պատմության մեջ մտել Մեծ հեղափոխություն անունով:*

5. Նապոլեոնի բարդ ու հակասական դարաշրջանը միավորում էր լուսավորյալ միապետությունների և հեղափոխությունների փորձն ու նվաճումները: Այն հզոր խթան դարձավ արդյունաբերական հասարակության կայացմանը ոչ միայն Ֆրանսիայում, այլև եվրոպական մյուս երկրներում: Մարդու բնական իրավունքներն ու ազատությունները դարձան եվրոպական արժեքների անբաժանելի մասը: Ազգերն սկսեցին ըմբռնել իրենց ինքնորոշման և ինքնիշխանության իրավունքը: Տապալվեց Նապոլեոնի կայսրությունը, և դա բնական էր: Բայց նրա տարածած գաղափարներն ու արժեքներն ուղեկցում են մարդկությանը մինչև օրս:

- *Ո՞ր թվականներն է ընդգրկում Նապոլեոնի դարաշրջանը: Ներկայացրե՛ք Նապոլեոնի պատմական կերպարը: Նա համաշխարհային պատմության ամենահայտնի դեմքերից է. ձեր կարծիքով՝ ո՞րն է դրա գլխավոր պատճառը:*

6. Հետադիմությունն ու բարենորոգումը XIX դարի առաջին կեսի եվրոպական կյանքի երկու հակադիր դրսևորումներն էին: Առաջինը ձգտում էր զենքի ուժով կասեցնել հասարակական առաջընթացը և վերականգնել իրենց դարն ապրած կարգերը: Երկրորդը նպատակ ուներ հասարակությունը տանելու անընդհատ ինքնանորացման ճանապարհով:

- *Ե՞րբ է տեղի ունեցել Վիեննայի վեհաժողովը: Ներկայացրե՛ք դրա ընդունած հիմնական որոշումները: Ովքե՞ր և ինչ նպատակով ստեղծեցին Սրբազան դաշինքը: Բարենորոգումների ուղիով ընթանալով Անգլիան ինչ արդյունքներ արձանագրեց XIX դ. առաջին կեսին:*

7. Նոր դարերում ավանդական հասարակական հարաբերությունները խոչընդոտում էին Արևելքի երկրների առաջընթացը: Դա ակնառու էր Օսմանյան տերությունում և Իրանում: Այս երկրները XIX դարում վերածվեցին կիսագաղութի:

- *Պարզաբանե՛ք ավանդական հասարակության բնորոշ կողմերը: Թվարկե՛ք ավանդական համարվող երկրներ: Ինչո՞ւ թանզիմաթի քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում ձախողվեց: Ինչ է Արևելյան հարցը: Կառավարման ինչ համա-*

կարգ էր գործում Իրանում: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր Իրանի հետամնացության գլխավոր պատճառը:

8. Հնդկաստանի և Չինաստանի ավանդական հասարակությունները, միջնադարում հասնելով տնտեսական և մշակութային նշանակալի հաջողությունների, Նոր ժամանակներում զարգացման առումով բավական հետ մնացին արդյունաբերական երկրներից:

   - *Նոր դարերում ինչո՞ւ Հնդկաստանն ու Չինաստանը հետադիմեցին: Ովքե՞ր էին մրցակցում Հնդկաստանին տիրանալու համար, և ի վերջո ո՞ւմ գաղութը դարձավ նա: Ե՞րբ և ո՞ր իրադարձություններից հետո Չինաստանը «բացվեց» եվրոպացիների առջև: Ինչ հետևանքներ դա ունեցավ:*

9. Նոր դարերի առաջին փուլում փոփոխություն կրեցին նաև միջազգային հարաբերությունները: Առավել կարևորվեցին առանձին ազգային պետությունների տնտեսական և քաղաքական շահերը: Հաճախակի դարձան նվաճողական պատերազմները: Զարգացած երկրների անդրծովյան ծավալման հետևանքով աշխարհի տարբեր ծագերում ձևավորվեցին գաղութներ ու կիսագաղութներ:

   - *Ի տարբերություն միջնադարի՝ ինչի՞ հիման վրա սկսեցին կարգավորվել միջազգային հարաբերությունները նոր ժամանակներում: Ինչ է ազգերի ինքնորոշման իրավունքը, և ինչ արդյունքներ տվեց դրա իրականացումը: Թվարկե՛ք գաղութատեր երկրների: Ներկայացրե՛ք գաղութացման հետևանքները:*

10. Արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլում զարգացած երկրներում ձևավորվեց ժամանակի պահանջներին համապատասխան կրթական համակարգ, իսկ գիտությունը բռնեց բուռն վերելքի ուղին: Գիտությունը սահմաններ չէր ճանաչում, նրա միջոցով աշխարհը միավորվում էր: Աստիճանաբար բարելավվում էին մարդկանց կենսապայմանները:

   - *Որո՞նք էին կրթության և գիտության զարգացման պատճառները: Այս ժամանակաշրջանի ինչ համալսարաններ են հայտնի: Դրանցից որո՞նք են գործում նաև մեր օրերում: Ներկայացրե՛ք գիտության գլխավոր նվաճումներն այս փուլում: Փորձե՛ք նկարագրել Նոր ժամանակների մարդուն, նրա ապրելակերպը:*

11. Ի տարբերություն միջնադարի՝ բազմազան դարձան հումանիտար գիտությունները, գրականությունը և արվեստը: Ուսումնասիրության կամ ստեղծագործության հիմնական առարկա դարձան մարդը, նրա ներաշխարհը, հասարակական ամենատարբեր հարաբերությունները:

- *Թվարկեք հումանիտար գիտությունները և դրանց հետազոտած հարցերը: Այս ժամանակաշրջանի ինչ նշանավոր հեղինակների և նրանց ստեղծագործություններ գիտեք գրականության և արվեստի բնագավառներում:*

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԶԱՐԳԱՑԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ

XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ

14 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼԸ

Ընդհանուր ձեռքբերումները

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին աշխարհում կատարվեցին հսկայական տնտեսական, հասարակական–քաղաքական և մշակութային փոփոխություններ: Դրանց հետևանքով **ավարտվեց արդյունաբերական հասարակության ձևավորումը**: Շարունակվեցին նախորդ շրջափուլի նվաճումները և կյանքի կոչվեցին նորերը.

• Արտադրության վերազինում՝ ըստ գիտության նորագույն նվաճումների, և համաշխարհային տնտեսության ձևավորում:

• Բնակչության թվաքանակի կտրուկ աճ, կենսամակարդակի բարձրացում, աղքատության նվազում: Միջին ունեցվածքի հասարակական խավի ձևավորում:

• Ընդհանուր ընտրական իրավունքի հաստատում և ժողովրդավարության հետագա զարգացում: Այսինքն՝ ընտրությունների միջոցով ժողովրդի շարունակ ընդլայնվող մասնակցություն պետական կյանքին:

• Հանրակրթության համակարգի ձևավորում, գրագիտության լայն տարածում:

• Գիտության և տեխնիկայի մեծ թռիչք:

Այս ամենով հանդերձ զարգացումն ուներ դժվարին, երբեմն ճգնաժամային ընթացք: Ուղեկցվում էր հասարակական ցնցումներով՝ ընդդիմադիր ուժերի պայքար, գործադուլներ, հեղափոխություններ, ազգային–ազատագրական պատերազմներ:

Եվրոպայի պատմական դերը

Արդյունաբերական հասարակությունը ավելի արագ ձևավորվում էր Եվրոպայում: Նվաճումների կարևորությունը գիտակցվում էր ամենուր: Այդ առումով Եվրոպայի դերն աշխարհում աննախադեպ մեծացավ: Սա-

կայն Ատլանտյան օվկիանոսից մինչև Ուրալյան լեռներ ձգվող այդ աշխարհամասը միակերպ չէր զարգանում:

Անգլիայում (Մեծ Բրիտանիա), Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում արդյունաբերական հասարակությունն առավել արագ էր զարգանում: XIX դ. 50–60–ական թթ. դարձան Անգլիայի տնտեսական զարգացման գագաթնակետը: Երկիրը համարվում էր **«աշխարհի արհեստանոցը»**: Սակայն դարի վերջին նրա տնտեսական զարգացումը դանդաղեց: Վերամիավորված **Գերմանիան XX դ. սկզբին** նրանից առաջ անցավ և դարձավ **Եվրոպայի տնտեսապես ամենահզոր երկիրը**: Հույժ տպավորիչ էր Ֆրանսիայի զարգացումը տնտեսության ամենատարբեր ասպարեզներում:

Զարգացման ճանապարհ բռնեց նաև միավորված Իտալիան: Արդյունաբերական հասարակության կայացումը բնորոշ էր նաև Հոլանդիային, Բելգիային, Շվեդիային և այլն:

Դրանց կողքին Եվրոպայում կային երկրներ, որտեղ արդյունաբերական հասարակության կայացումն ընթանում էր դանդաղ: Այդ երկրներում՝ Ռուսաստան, Ավստրո–Հունգարիա, Իսպանիա, տիրապետող էին **ավատատիրական կարգերի վերապրուկները**: Ամենահետամնաց երկրները Բալկանյան թերակղզում էին՝ Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Սերբիա:

Աշխարհի անհավասարաչափ զարգացումը

Այս դարաշրջանի առանձնահատկություններից էր **տարբեր մայրցամաքների և երկրների անհավասարաչափ զարգացումը**:

Եվրոպական առաջավոր ազգերին հաջողությամբ հետևում էին Ամերիկա մայրցամաքի երկրները: Դա նախ և առաջ վերաբերում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Անկախության նվաճումից ի վեր (1783 թ.) բնական հարուստ պաշարներ ունեցող այդ երկիրն առաջադիմում էր: Զարգանում էր տնտեսությունը, ընդլայնվում էին տարածքները, աճում՝ բնակչությունը: Միլիոնավոր մարդիկ Եվրոպայից և աշխարհի տարբեր ծագերից վերաբնակվում էին ԱՄՆ–ում: Զարգացման

Լուսանկարում՝ Ամերիկայի սևամորթ ստրուկների ընտանիքը իրենց խրճիթի մոտ

լուրջ խոչընդոտ էր սևամորթների ստրկությունը, որին վերջ դրեց **Ամերիկյան երկրորդ հեղափոխությունը (1861–1865)**: Դրանից հետո երկիրն աներևակայելի թռիչք կատարեց: **XX դ. սկզբին արդյունաբերական զարգացման մակարդակով ԱՄՆ–ն աշխարհում գրավում էր առաջին տեղը**:

ԱՄՆ–ից հյուսիս՝ Կանադայում, XVIII դ. ի վեր հաստատվել էր Անգլիայի տիրապետությունը: Չնայած գաղութային պայմաններին՝ այն XIX դ. առաջադիմում էր՝ ձգտելով բարձրացնել իր կարգավիճակը: **1867 թ. Կանադան ստացավ ինքնավարություն** Բրիտանական թագի ներքո և ճանաչվեց **դոմինիոն** (տիրույթ): Դրանից հետո առաջընթացն անհամեմատ արագացավ:

Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրների զարգացումն ավելի դանդաղ էր ընթանում: Դրանք (բացառությամբ պորտուգալական Բրազիլիայի) Իսպանիայի նախկին գաղութներն էին՝ Մեքսիկա, Չիլի, Արգենտինա, Վենեսուելա, Կոլումբիա և այլն: Սակայն նորանկախ երկրներում սուր պայքար էր ընթանում ազատական և պահպանողական ուժերի միջև: Դրանք ուղեկցվում էին քաղաքացիական պատերազմներով, բռնատիրությունների հաստատումով և օտարերկրյա միջամտություններով: Բարենորոգումները դժվարությամբ էին իրագործվում: **Կողք կողքի գոյատևում էին նախնադարյան համայնքը, ստրկությունը, ավատատիրությունը և կապիտալիզմը:** Արդյունաբերական հասարակության

ձևավորումն այս տարածաշրջանում արագացավ միայն XIX դ. վերջին և XX դ. սկզբին:

Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում շարունակվում էր Ասիայի երկրների՝ Օսմանյան տերության, Իրանի, Հնդկաստանի, Չինաստանի, ընդհանուր հետամնացությունը: Դրանք վերածվել էին եվրոպական տերությունների գաղութների կամ կիսագաղութների: Սակայն նկատելի էր նաև արդյունաբերական առաջընթացը:

Ուրույն ուղիով զարգացավ Ճապոնիան: 1870–ական թթ. այստեղ կատարվեցին բարենորոգումներ, որոնց շնորհիվ երկիրն աստիճանաբար **դարձավ Ասիայի ամենազարգացած և հզոր երկիրը:**

Նոր դարաշրջանում համաշխարհային զարգացումից էլ ավելի հետ էին մնում Աֆրիկայի երկրները: Այստեղ կարելի էր հանդիպել ամենատարբեր կացութաձևերի: Մայրցամաքի հյուսիսային երկրները (Եգիպտոս, Թունիս, Ալժիր, Մարոկկո) ապրում էին միջնադարյան կյանքով: Սահարա անապատից հարավ՝ Արևադարձային և Հարավային Աֆրիկայի ժողովուրդները զարգացման ավելի ցածր (նախնադարյան) մակարդակի վրա էին:

XIX դ. կեսերից եվրոպացիները (անգլիացիներ, ֆրանսիացիներ, հոլանդացիներ, պորտուգալացիներ, գերմանացիներ) սկսեցին Աֆրիկա **մայրցամաքի գաղութացումը**: Բաժանումն ավարտվեց միայն XIX դ. վերջին: Մարդկային և բնական պաշարների անխնա շահագործումը երկարաձգեց Աֆրիկայի հետամնաց վիճակը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում արդյունաբերական հասարակության զարգացման երկրորդ շրջափուլը:
2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Եվրոպան դարձավ արդյունաբերական հասարակության ձևավորման բնօրրան:
3. Մեկնաբանեք «Անգլիան աշխարհի արհեստանոց» արտահայտությունը:
4. Ինչո՞ւ Գերմանիան և ԱՄՆ–ն կարողացան XX դարի սկզբին առաջ անցնել Անգլիայից:
5. Օգտվելով նաև բառարանից՝ բացատրեք, թե ի՞նչ է նշանակում դոմինիոն: Կանադան ե՞րբ դարձավ դոմինիոն:
6. Որո՞նք էին XIX դարի վերջի և XX դարի սկզբի զարգացած արդյունաբերական երկրները:
7. Թվարկեք արդյունաբերական հասարակության զարգացման երկրորդ շրջափուլի հիմնական նվաճումները:

Քննարկման հարց

Ինչո՞վ էր պայմանավորված աշխարհի տարբեր երկրների և ժողովուրդների անհավասարաչափ զարգացումը:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Արդյունաբերական հասարակության զարգացման երկրորդ շրջափուլ, «աշխարհի արհեստանոց», աշխարհի անհավասարաչափ զարգացում, դոմինիոն

15 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ



ՀԵՆՐԻ ՖՈՐԴ
(1863–1947)

Ամերիկացի հանրահայտ ճարտարագետ–գյուտարար, արտադրության կազմակերպիչ: 1903 թ. հիմնել է ավտոմեքենայի արտադրության սեփական ընկերությունը: Ձեռնարկություններում սկսել է կիրառել հարահոսը (կոնվեյեր): Դա բարձրացրել է արտադրանքի որակը և քանակը, իջեցրել է վաճառքի գինը: Եվ ավտոմեքենան հասու է դարձել նաև միջին խավի մարդկանց: Իր շուրջն է համախմբել տաղանդավոր ճարտարագետների և ստեղծել ավտոմեքենաների նորանոր տեսակներ: Շեշտակի բարձրացրել է բանվորների աշխատավարձը: Բարելավել է նրանց կենցաղային պայմանները: «Ֆորդ» ընկերությունը գոյություն ունի նաև մեր օրերում: Այն ավտոմեքենաների արտադրության առաջատարներից է:

Գիտության և տեխնիկայի դերի մեծացումը

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Եվրոպայի և Ամերիկայի առաջավոր երկրներում կատարվեցին արմատական տեղաշարժեր: Դրանք նախ և առաջ պայմանավորված էին գիտության և տեխնիկայի նվաճումներով: **Հայտնագործություններն ու գյուտերը զանգվածաբար ներդրվում էին արտադրության մեջ**: Այլ խոսքով՝ **գիտությունը** դառնում էր **արտադրողական ուժ**: Միայն ԱՄՆ–ում XIX դ. վերջին արտոնագրվել է ավելի քան **600 000 գյուտ**: Պատկերը նույնն էր նաև Եվրոպայում:

XX դ. սկզբին արդեն գործում էր **ավտոմատացված (ինքնաշխատ) և հոսքային արտադրությունը (կոնվեյեր)**: Դրա արդյունքը չափաբերված և միօրինակ ապրանքներն էին: Առաջինը դա հաջողությամբ կիրառվեց ԱՄՆ–ում՝ **Հենրի Ֆորդի** ավտոմեքենայի ձեռնարկությունում:

Էժան և որակյալ պողպատի, պղնձի, ալյումինի ստացման նոր եղանակները հնարավորություն տվեցին զարգացնելու հաղորդակցության միջոցները, ընդլայնելու արտադրությունը: Դրա շնորհիվ աշխարհում կտրուկ ավելացավ երկաթուղիների ցանցը: Շոգենավերը փոխարինեցին առագաստանավերին: Ստեղծվեց **ներքին այրման շարժիչը**, որը կյանքի կոչեց նոր տիպի փոխադրամիջոցներ՝ **ավտոմեքենա և ինքնաթիռ**: Քաղաքներում հայտնվեց տրամվայը, կառուցվեց առաջին **մետրոպոլիտենը**: XIX դ. 50–60–ական թթ. աշխարհի տարբեր հատվածների միջև արդեն կար հեռագրակապ: Մինչև դարավերջ տարածվեցին **հեռախոսը** և **ռադիոկապը**:

Մեծագույն առաջընթաց արձանագրվեց էլեկտրականության ասպարեզում: Մետաղալարի միջոցով հոսանքը հաղորդում էին հեռավոր վայրեր: **Կառուցվեցին առաջին էլեկտրակայանները**: Էլեկտրաէներգիան



Ներքին այրման առաջին շարժիչներից

մուտք գործեց ինչպես արդյունաբերություն, այնպես էլ կենցաղ:

Տնտեսական զարգացման հիմնական միտումները

Գիտության և տեխնիկայի նվաճումները մեծ փոփոխություններ առաջացրին տնտեսության մեջ: Արտադրանքի տեսականին դարձավ ավելի բազմազան: Ձևավորվեց առաջատար երկրների **ներքին միասնական շուկան**: Նրանցից յուրաքանչյուրն սկսեց ներկայանալ իբրև միասնական տնտեսական միավոր:

Դրա հետ մեկտեղ ի հայտ եկան նաև նոր միտումներ: Մինչև XIX դ. կեսը տնտեսության մեջ **գերակշռում էր թեթև արդյունաբերությունը**, այսինքն՝ մարդու անմիջական սպառման ապրանքների՝ հագուստ, սնունդ, կենցաղային իրեր և այլն, արտադրությունը: Նոր դարաշրջանում պատկերը փոխվեց: Սկսեց զարգանալ **ծանր արդյունաբերությունը**՝ տարբեր տեսակի մետաղների, աշխատանքի գործիքների, մեքենաների, սարքավորումների, էներգիայի արտադրությունը:

Այս ամենը պահանջում էր խոշոր կապիտալի ներդրում: Հումքի աղբյուրների, ապրանքների վաճառման շուկաների համար կատաղի պայքար ծավալվեց ձեռնարկատերերի միջև: Նրանցից շատերն այդ պայքարում սնանկանում էին: Ոմանք միավորվում և ստեղծում էին **բաժ-**

Ամերիկացի նշանավոր գյուտարար և ձեռներեց Թ. Էդիսոնի ստեղծած աշխարհում առաջին շիկացման էլեկտրական լամպը: Այս թանգարանային նմուշն անխափան աշխատել է ամերիկյան գինու պահեստներից մեկում 1890–ից մինչև 1926 թ.:

նետիրական ընկերություններ՝ իրենց **մենաշնորհը** դարձնելով արտադրության այս կամ այն բնագավառը: Միավորվում էին նաև դրամատները: Արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլին բնորոշ ազատ մրցակցությունը դարձավ անցյալ: Տնտեսության բոլոր բնագավառներում ստեղծվեցին մոնոպոլիաներ (մենատիրություններ): Դրանք էին որոշում արտադրանքի քանակը, գինը, տեսականին: Գերիշխող դիրք էին զբաղեցնում արտադրության, նաև իրացման և ֆինանսների տնօրինման գործում:

Ձևավորվեցին նաև **միջազգային մոնոպոլիաներ**: Տարբեր երկրների խոշոր ձեռներեցներն իրենց ձեռքն էին առնում համաշխարհային արտադրության այս կամ այն բնագավառը: **Կապիտալն այլևս ազգային սահմաններ չէր ճանաչում**: Իր հերթին դա հանգեցրեց **համաշխարհային շուկայի և տնտեսության ձևավորմանը**:

Սոցիալական տեղաշարժերը

Գիտության, տեխնիկայի և տնտեսության թռիչքը նկատելի կերպափոխեց հասարակության կյանքը: Արդյունաբերական քաղաքների աճը կատարվում էր գյուղական բնակչության հաշվին: Դրան համընթաց գյուղական վայրերում կտրուկ աճեց ագարակների քանակը: Դրանցում ներդրվող տեխնիկայի նոր միջոցների կիրառմամբ գյուղատնտեսական ապրանքների քանակը շեշտակի աճեց: Այդ առումով հատկանշական էր ԱՄՆ–ն: Կարճ ժամանակաշրջանում այն դարձավ ցորենի ամենամեծ արտահանողը և էժան հացով ողողեց եվրոպական շուկան:



Ամերիկացի գյուտարարներ Ռայթ եղբայրները՝ Օրվիլը և Վիլբուրը, 1903 թ. ստեղծեցին առաջին լիարժեք ինքնաթիռը:

Կտրուկ փոխվեց նաև մարդկանց ունեցվածքային վիճակը: Ձևավորվեց գերհարուստ մարդկանց մի փոքր խավ՝ ձեռնարկատերեր, դրամատերեր: Պատմությունը պահել է նրանցից խոշորագույնների անունները՝ Ա. Կրուպ, Է. Սիմենս (Գերմանիա), Հ. Ֆորդ, Ջ. Ռոկֆելեր, Ջ. Մորգան (ԱՄՆ):

Մյուս միտումը բազմամարդ **միջին խավի** ձևավորումն էր: Ձեռներեցության տարածման, օրենսդրության կատարելագործման շնորհիվ ավելի ու ավելի շատ մարդիկ էին կարողանում ստեղծել մանր ու միջին ձեռնարկություններ և ապրել բարեկեցիկ կյանքով: Այդ խավին պատկանում էին նաև մտավորականները՝ ճարտարագետներ, բժիշկներ, իրավաբաններ և այլն: Դարի վերջին նրանց շարքերը համալրեցին նաև որակյալ և բարձր վարձատրվող բանվորները:

Միջին խավի կազմավորումը զգալիորեն մեղմեց հակասությունները և կայունություն հաղորդեց հասարակական կյանքին, նպաստեց ժողովրդավարության զարգացմանը:

Երրորդ կարևոր միտումը **բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացումն էր**: Կրթությունն ընդունեց զանգվածային բնույթ: XIX դ. վերջին զարգացած երկրներում մինչև 12 տարեկան երեխաների կրթությունը դարձավ պարտադիր: Կտրուկ աճեց միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը: Միայն ԱՄՆ–ում XX դ. սկզբին արդեն կար շուրջ 1000 բուհ:

Խորացավ կրթության աշխարհիկ բովանդակությունը: Կրթական համակարգում նվազեց կրոնի ազդեցությունը: Գերակա նշանակություն ձեռք բերեցին գործնական գիտելիքները: Մտավորականությունը դարձավ բազմամարդ և սկսեց ակտիվորեն ներազդել հասարակական կյանքի վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գիտության և տեխնիկայի ի՞նչ նվաճումներ ներդրվեցին արտադրության մեջ արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում:
2. Որտե՞ղ և ո՞վ առաջինը կիրառեց ինքնաշխատ և հոսքային արտադրությունը:
3. Նշե՛ք գիտության և տեխնիկայի ներդրման շնորհիվ տնտեսության մեջ առաջացած փոփոխությունները:
4. Ձեր կարծիքով՝ տնտեսության մեջ ինչո՞ւ գերակշռող դարձավ ծանր արդյունաբերությունը:
5. Ի՞նչ է նշանակում մենաշնորհ:
6. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին հասարակության ընկերային կյանքում:
7. Պարզաբանե՛ք, թե ինչու երկրորդ շրջափուլում կտրուկ աճեց զարգացած երկրների կրթական և մշակութային մակարդակը:

Նոր հասկացություններ և անուններ

Գիտությունը՝ արտադրողական ուժ, ավտոմատացված և հոսքային արտադրություն, թեթև արդյունաբերություն, ծանր արդյունաբերություն, բաժնետիրական ընկերություն, մենատիրություն (մոնոպոլիա), կապիտալի արտահանում, համաշխարհային շուկա, միջին խավ, զանգվածային կրթություն, գերհարուստ, Ա. Կրուպ, Է. Սիմենս, Հ. Ֆորդ, Ջ. Ռոկֆելեր, Ջ. Մորգան

16 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄՆ–ՈՒՄ

Պահպանողականներ և ազատականներ (լիբերալներ)

Արդյունաբերական հասարակության գլխավոր նվաճումներից մեկը ժողովրդավարական կարգերի կայացումն էր: Իսկ դա հնարավոր է միայն **քաղաքացիական հասարակության** պայմաններում: Հասարակություն, որի **բոլոր քաղաքացիներն իրավահավասար են, հստակ սահմանված են նրանց իրավունքներն ու պարտականությունները**:

Զարգացած երկրներում ժողովրդավարության առաջընթացն ապահովվում էր առավելաբար խաղաղ բարենորոգումների ճանապարհով: Պետություններն ավելի հակված էին ընդառաջելու ներքևից եկող պահանջներին: Ժողովուրդն ավելի ու ավելի շատ էր մասնակցում պետական–հասարակական կյանքին: Արդեն գիտեք, որ առաջինն այդ ուղիով ընթացավ Անգլիան: Ինչ վերաբերում է հեղափոխական ցնցումներին, ապա դրանք հիմնականում տեղի էին ունենում թերզարգացած երկրներում՝ Ռուսաստան, Օսմանյան կայսրություն, Իրան, Չինաստան:

Բարենորոգումները դարձան մարդկության առաջընթացի առավել արդյունավետ ուղին: Սակայն դա չի նշանակում, թե դրանք իրագործվում էին առանց պայքարի: Պայքարն ընթանում էր հասարակական հոսանքների և դրանց գաղափարախոսությունների միջև: XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին ավելի ազդեցիկ էր երկու հոսանք՝ **պահպանողական և ազատական**:

Պահպանողականությունն առաջացել է արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլում: Սկզբնապես պահպանողականությունը համարյա նույնական էր հետադիմությանը: Պայքարում էր ինչպես հեղափոխական, այնպես էլ բարենորոգչական փոփոխությունների դեմ: Արդյունաբերական հասարակության երկ-

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄՆ–ՈՒՄ

Ավելի հինը Ժողովրդավարական կուսակցությունն է, ստեղծվել է 1792 թ. Թ. Ջեֆերսոնի կողմից: Նրա խորհրդանիշն ավանակն է՝ իբրև աշխատասիրության, ուղղամտության և համեստության մարմնացում:
Հանրապետական կուսակցությունը հիմնվել է 1854 թ., երբ սրվել էին Հարավի և Հյուսիսի հարաբերությունները: Նրա կայացման գործում մեծ էր Ա. Լինկոլնի դերը: Կուսակցության խորհրդանիշը փիղն է՝ ուժի, մեծահոգության և համառության մարմնացումը:
Այսօր էլ այս երկու կուսակցությունները գերիշխում են ԱՄՆ–ի քաղաքական կյանքում:

որորդ շրջափուլում այն էապես փոխվեց: Հասարակության նորացման խնդրին մոտենում էր՝ ելնելով բանական չափանիշներից. պահպանել դարերով կուտակված ազգային արժեքները, հասարակությունը վերակառուցել անընդհատ և աստիճանական բարենորոգումներով:

Ազատականության գաղափարները սերտորեն առնչվում էին XVII–XVIII դդ. լայն տարածում գտած բնական իրավունքի տեսության հետ: Այն պահանջում էր հասարակական առաջադիմության հիմքում դնել մարդու, հասարակության և պետության շահերի համադրումը:

Կուսակցությունների ձևավորումը

Կուսակցությունները բնորոշ են զարգացած հասարակություններին: **Դրանք համախոհ մարդկանց քաղաքական կազմակերպություններ են, որոնց խնդիրը հասարակական կյանքի բարելավումն է՝ ըստ իրենց գաղափարների և գործողության ծրագրերի:**

Նպատակին հետամուտ՝ նրանք ձգտում են խորհրդարանական ընտրություններում հաղթելու կամ հեղափոխության միջոցով հասնելու իշխանության: Վաղ շրջանում առաջացած կուսակցությունները գործում էին միայն խորհրդարանների շրջանակներում: Հետագայում իրենց գործունեությունը ծավալեցին ողջ երկրում: Այդպիսի ճանապարհ անցան, օրինակ, անգլիական **Թորի** և **Վիգ** կուսակցությունները: XIX դ. երկրորդ կեսին դրանք վերածվեցին պահպանողական և ազատական կուսակցությունների, որոնց պայքարը շատ կողմերով պայմանավորեց երկրի քաղաքական կյանքը:

Նման երկկուսակցական համակարգ ձևավորվեց նաև ԱՄՆ–ում: **Ժողովրդավարական** և **Հանրապետական** կուսակցությունները սկզբում խիստ հակադիր էին: Ժողովրդավարները ներկայացնում էին հարավի ստրկատեր հողատերերի շահերը, իսկ հանրապետականները՝ հյուսիսի արդյունաբերողների: Սակայն ստրկատիրության վերացումից հետո վերացավ նաև դրանց հիմնական հակասությունը: 1870–ական թթ. այդ կուսակցությունները դարձան ամերիկյան քաղաքական կյանքի բևեռները: Երկրի արտաքին և ներքին հիմնախնդիրնե-

րի վերաբերյալ դրանց պայքարը մեծապես նպաստեց ամերիկյան ժողովրդավարության զարգացմանը:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա այստեղ XIX դ. կեսերին կուսակցությունները ձևավորվում էին հակամիապետական պայքարի պայմաններում: Նպատակը Նապոլեոն III–ի վարչակարգի տապալումը և ժողովրդավարության հաստատումն էր: Այդ առումով իր գործունեությամբ առանձնանում էր **Հանրապետական միությունը**, որի հիմքի վրա հետագայում առաջացան տարբեր ուղղությունների կուսակցություններ:

Այլ էր իրավիճակը Գերմանիայում: Այստեղ գերակա էր միապետական կարգը, և իշխող կուսակցությունները հիմնականում պահպանողական էին: Ռուսաստանում կուսակցություններն սկսեցին կազմավորվել միայն XIX դ. վերջին և XX դ. սկզբին:

Պետք է նկատի ունենալ, որ քաղաքական պայքարում կուսակցությունները հաճախ պառակտվում էին կամ միավորվում: Առաջանում էին նաև նորերը: Այդ գործընթացը նպաստում էր հասարակական առաջընթացին:

Ընտրական իրավունքի ընդլայնումը

Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում ներքաղաքական պայքարի հիմնախնդիրներից մեկն էլ ընտրական իրավունքի ընդլայնումն էր: Այդ ժողովրդավարական պահանջը կար նաև նախորդ դարաշրջանում: Այժմ դրա շուրջ պայքարն ավելի թեժացավ:

Մինչև XIX դ. կեսերը տիրապետող էր այն մոտեցումը, թե ընտրական իրավունք կարող են ունենալ միայն սեփականություն ունեցող անձինք: Սակայն ժողովրդավարության ծավալմանը համընթաց՝ իրավիճակը փոխվեց: Քաղաքական պայքարի գլխավոր խնդիրներից մեկը դարձավ ընդհանուր ընտրական իրավունքի հաստատումը: Արդյունքում՝ ընտրական իրավունք ունեցողների շրջանակն աստիճանաբար ընդլայնվում էր: Անգլիայում, օրինակ, դա սկսվեց 1832 թ. և իր ավարտին հանգեց միայն 1918–ին: Ընդհանուր ընտրական իրավունքը (միայն տղամարդկանց համար) Գերմանիայում

Ֆրանսիա. Երրորդ Հանրապետության Սահմանադրություն (1875 թ.) (Բաժին առաջին)

Հոդված 12. Ֆրանսիան ազատ, ժողովրդավարական երկիր է, որի գերագույն իշխանությունը պատկանում է ֆրանսիական ազգին՝ կազմակերպված իբրև ընկերային անխախտ միասնություն:

Հոդված 13. Ֆրանսիական ազգը բաղկացած է ազատ և ինքնաբավ քաղաքացիներից, որոնք իրավունք ունեն տարբեր ձևերով ու մակարդակներով մասնակցելու նրա ընկերային–քաղաքական կյանքին:

Հոդված 14. Յուրաքանչյուր քաղաքացու իրավունքն է իր մասը բերելու ընկերային կյանքին և իշխանական կառույցին ազատ, հավասար և ուղղակի ընտրությունների միջոցով:

Հոդված 23. Քաղաքացու սահմանադրական իրավունքների խախտումը համարվում է քրեորեն հետապնդելի արարք:

Հոդված 27. Քաղաքացու իրավունքները երաշխավորվում են Սահմանադրությամբ և Ֆրանսիայի պետական և իրավական ողջ համակարգի անխափան գործառույթով:

օրինադրվեց 1871 թ., իսկ Ֆրանսիայում՝ 1875 թ. Սահմանադրությամբ:

Համընդհանուր ընտրական իրավունքը (ներառյալ կանանց) զարգացած երկրներում հաստատվեց միայն Առաջին աշխարհամարտից հետո:

Ժողովրդավարացման գործընթացի անբաժան մասն էր նաև տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծումը: 1870–1880–ական թթ. դրանք կազմավորվեցին Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, անգամ Ռուսաստանում: Ստեղծվում էին ընտրովի խորհուրդներ, որոնք հոգում էին տեղական կարիքները: Այդ կերպ ընդլայնվեց նաև քաղաքների ինքնակառավարումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձե՛ք բացատրել «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը:
2. Թվարկե՛ք պահպանողականների և ազատականների հիմնական գաղափարները:
3. Ինչ եք հասկանում՝ կուսակցություն ասելով:
4. Ո՞ր երկրներում է ձևավորվել երկկուսակցական համակարգ:
5. Ինչ է ընդհանուր ընտրական իրավունքը:
6. Գերմանիայում և Ֆրանսիայում ե՞րբ է հաստատվել ընդհանուր ընտրական իրավունքը (տղամարդկանց համար):
7. Ինչ եք հասկանում տեղական ինքնակառավարում ասելով: Այդ մարմինները ինչ խնդիրներ են լուծում:

Քննարկման հարց

Համընդհանուր ընտրական իրավունքը համարվում ժողովրդավարության պարտադիր պայման. ինչո՞ւ: Խմբային քննարկման միջոցով հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

Նոր հասկացություններ

Պահպանողականություն, ազատականություն, քաղաքացիական հասարակություն, կուսակցություն, ընդհանուր ընտրական իրավունք, տեղական ինքնակառավարում

17 ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Զանգվածային հասարակական շարժումները

Ժողովրդավարության կայացումը երկարատև ու բարդ գործընթաց է: Ինչպես գիտենք, XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին այն նպատակաուղղված էր ընտրական իրավունքի ընդլայնմանը: Գործընթացն ուղեկցվում էր քաղաքական կուսակցությունների ի հայտ գալով:

Դարաշրջանին բնորոշ էին նաև բազմաբնույթ հասարակական միությունների ստեղծումը և գործունեությունը: Հատկապես առանձնանում էին **արհմիությունները**, որոնք միավորում էին աշխատավորներին ըստ մասնագիտությունների: Դրանք պայքարում էին աշխատանքային, կենցաղային, հասարակական պայմանների բարելավման համար: Ժամանակի ընթացքում զարգացած երկրներում արհմիությունների կարգավիճակն ամրագրվեց օրենքով: Արդեն XX դ. սկզբին կային միլիոնավոր անդամներ ունեցող արհմիություններ, որոնք մեծ ազդեցություն ունեին հասարակական կյանքում:

Հասարակության մեջ կարևոր դեր էին խաղում նաև լուսավորչական, մշակութային, գիտական, կրոնական տարաբնույթ միությունները: Դրանք հատկապես շատ էին Գերմանիայում և ԱՄՆ– ում: Լայն տարածում ստացավ կանանց շարժումը, որը պայքարում էր նրանց շահերի և իրավունքների համար:

Ժողովրդավարության կայացման պայմաններում հասարակական կյանքում ավելի ու ավելի մեծ դեր էին ստանում **խոսքի ազատությունը** և **հասարակական կարծիքը**: Սկսեցին ձևավորվել **զանգվածային լրատվության միջոցները** (ԶԼՄ)՝ թերթեր, ամսագրեր, տարեգրքեր: Դրանք լույս էին տեսնում հարյուր հազարավոր օրինակներով:

ԱՆՐԻ ՍԵՆ–ՍԻՄՈՆ
(1760–1825)

Ֆրանսիացի մեծ մտածող Սեն–Սիմոնին մշտապես հուզել է հասարակության բարեփոխման հիմնախնդիրը: Զանասիրաբար ուսումնասիրել է լուսավորականների գաղափարները և Մեծ հեղափոխությունը: Հանգել է այն հետևության, որ հասարակությունը կարելի է բարեշրջել գիտության և արդյունաբերության զարգացման շնորհիվ: Այդ նպատակով պետք է վերակառուցել հասարակությունը և պետությունը: Մտածում էր, որ այդ ճանապարհով կյանքն արմատապես կբարելավվի: Սեն–Սիմոնն ունեցել է բազմաթիվ հետևորդներ: Նա սոցիալիզմի (ընկերվարության) գաղափարի հիմնադիրներից մեկն է:



ՇԱՐԼ ՖՈՒՐԻԵ
(1772–1837)

Ֆրանսիացի նշանավոր մտածող: Նրան մտահոգել են արդյունաբերական հասարակությունում աշխատավորների տառապանքները և թշվառ վիճակը: Համոզված էր, որ պետք է ստեղծել նոր ներդաշնակ հասարակարգ: Դրա համար նա առաջարկում էր աշխատանքային համայնքներ ստեղծել: Դրանք պետք է լինեին ինքնավար՝ բաղկացած 1500–1800 մարդուց: Աշխատանքը պետք է լիներ գրավիչ, հետաքրքիր և բավարարեր բոլորի պահանջմունքները:
Նրա գաղափարները բնութագրվում են իբրև «ուտոպիական սոցիալիզմ»: Այսինքն՝ ոչ գիտական, երևակայական, անիրագործելի սոցիալիզմ:

Հասարակական շարժումների դրսևորումներից էին նաև փողոցային երթերը, ցույցերն ու հանրահավաքները: Մարդկանց այդ իրավունքները նույնպես ամրագրվեցին օրենքներով:

Բանվորական շարժումները

Բանվորությունը արդյունաբերական հասարակության **ամենամեծ դասակարգն էր**: Նա էր նյութական բարիքների անմիջական արտադրողը: Նոր դարաշրջանում նրա հասարակական դերը կտրուկ աճեց:

Սակայն բանվորությունն ուներ բազում հիմնախնդիրներ՝ իրավազրկություն, ցածր աշխատավարձ, երկար աշխատօր, աշխատանքի և կենցաղի վատ պայմաններ, ցածր կրթական մակարդակ և այլն: Դրանց բարելավման համար նրանք համառ և տևական պայքար էին մղում: Այդ պայքարը հասարակության ժողովրդավարացման գործընթացի անբաժանելի մասն էր:

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին բանվորների պայքարը տվեց շոշափելի արդյունքներ: Նրանք նախ և առաջ ձեռք բերեցին ընտրական իրավունք: Ավելին՝ երբեմն ընտրապայքարում կարողանում էին հասնել հաջողության և իրենց ներկայացուցիչներին ուղարկել խորհրդարան: Դրա շնորհիվ հօգուտ բանվորների սկսեցին ընդունվել բազմաթիվ օրենքներ. բարձրացավ աշխատավարձը, աշխատանքային օրը կրճատվեց՝ հասնելով 10 ժամի, սահմանվեցին հանգստյան օրեր, ընդմիջում և այլն: Ստեղծվեց կյանքի ապահովագրության համակարգ: Որոշ երկրներում սահմանվեց ծերության կենսաթոշակ:

Բանվորների պայքարի հիմնական ձևերից էր **գործադուլը**: Իրենց շահերը պաշտպանելու համար բանվորները ստեղծում էին արհմիություններ, ակումբներ, կիրակնօրյա դպրոցներ և այլ կազմակերպություններ:

Զարգացած երկրներում բանվորներն ստեղծեցին իրենց կուսակցությունները: Հատկապես մեծ ազդեցություն ունեին գերմանական, ֆրանսիական, իտալական բանվորական (սոցիալիստական և սոցիալ–դեմոկրատական) կուսակցությունները: Քայլեր էին ձեռնարկվում միավորելու աշխարհի բոլոր բանվորներին:

Բանվորական շարժման գաղափարախոսները

Բանվորների վիճակը հուզում էր շատերին: XIX դ. առաջին կեսին կային մտածողներ, որոնք երազում էին իդեալական հասարակական կարգերի մասին: Նրանցից էին **ֆրանսիացիներ Ա. Սեն–Սիմոնը, Շ. Ֆուրիեն, անգլիացի Ռ. Օուենը:** Բանվորների վիճակի բարելավման համար նրանք ծրագրեր կազմեցին: Եվ նույնիսկ փորձում էին իրագործել դրանք: Սակայն այդ փորձերն **անիրական էին (ուտոպիական)**, ուստի ձախողվեցին:

XIX դ. կեսերին բանվորների պատմական դերը յուրովի գնահատեցին **գերմանացի մտածողներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը**: Իրենց աշխատություններում նրանք փորձում էին ապացուցել, որ բանվորները հասարակության կարևորագույն հատվածն են: Ուստի պետք է կատարեն հեղափոխություն, ստեղծեն բանվորական պետություն, վերացնեն կապիտալիստական հասարակարգը և կառուցեն նորը: Այդ նոր հասարակարգը նրանք անվանեցին **սոցիալիստական** (լատիներեն «ընկեր, դաշնակից» բառից): Նրանց տեսակետի համաձայն՝ սոցիալիզմի ժամանակ մարդիկ պետք է միավորվեն համընդհանուր շահերով: Համաժողովրդական սեփականությունը կարող է պայմաններ ստեղծել ավելի շատ նյութական բարիքներ արտադրելու, առատություն և բարեկեցություն ապահովելու համար:

Ավելի ուշ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը շեշտը դրեցին **կոմունիզմի** (համայնավարություն. լատիներեն «ընդհանուր» բառից) գաղափարի վրա: Մի հասարակություն, որտեղ պետք է վերանան պետությունը և մարդկանց հասարակական տարբերությունները: Բոլորը պետք է աշխատեն և օգտվեն բոլոր բարիքներից:

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի շատ հետևորդներ հետագայում վերանայեցին նրանց հայացքները՝ ասելով, որ սոցիալիզմին կարելի է հասնել տևական, խաղաղ բարեկարգումների ճանապարհով: Գործողության այդ կերպը որդեգրեցին եվրոպական զարգացած երկրների (Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Շվեդիա) բանվորա-



ԿԱՐԼ ՄԱՐՔՍ
(1818–1883)

Գերմանացի իմաստասեր, տնտեսագետ, համայնավար: Նրա գաղափարները հսկայական ազդեցություն են թողել ժամանակակիցների և հետագա սերունդների վրա: Նրա հիմնական գաղափարն է՝ արդյունաբերական հասարակությունն անկատար է, հետևաբար դրա փոխարեն պետք է ստեղծվի սոցիալիստական և ապա կոմունիստական հասարակարգ: Այդ գաղափարը հիմնավորելու համար գրել է տասնյակ հատորներ: Առավել հայտնի է նրա «Կապիտալը»:
Մարքսը չարիքի աղբյուր է համարել մասնավոր սեփականությունը: Ուստի առաջարկել է ստեղծել համաժողովրդական սեփականություն: Նա և նրա հետևորդները (մարքսականները) համոզված էին, որ անցումը սոցիալիստական հասարակարգին հնարավոր է իրագործել միայն բռնի, հեղափոխական ճանապարհով:

ՄԱՅԻՍԻ 1–Ի ՇԱՐԺՄԱՆ
ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

XIX դ. 80–ական թթ. ԱՄՆ–ում բանվորների գլխավոր պահանջը 8–ժամյա աշխատանքային օրն էր: Չիկագո քաղաքում 1886 թ. մայիսի 1–ին նշանակվեց ընդհանուր գործադուլ՝ ի պաշտպանություն այդ պահանջի: Այն վերջացավ ողբերգությամբ: Անհայտ սադրիչը ռումբ պայթեցրեց, զոհվեց մեկ ոստիկան: Ի պատասխան՝ ոստիկանները կրակ բացեցին, որին զոհ գնացին տասնյակ բանվորներ: Դատարանը գործադուլի կազմակերպիչներից 5 հոգու դատապարտեց մահապատժի, 2 հոգու՝ ցմահ բանտարկության: ԱՄՆ–ում նրանց արդարացման համար շարժում սկսվեց, որը տարածվեց նաև Եվրոպայում: 1889 թ. Սոցիալիստների միջազգային համաժողովը որոշեց ամեն տարի մայիսի 1–ը նշել որպես աշխատավորների համերաշխության օր:

կան կուսակցությունները: Եվ պատմությունը ցույց տվեց նրանց ուղու ճշմարտացիությունը:

Հակառակ դրան՝ կոմունիզմի անիրական (ուտոպիական) գաղափարները պարարտ հող էին գտնում հատկապես թերզարգացած երկրների բանվորության շրջանում: Դրանց շարքում էր Ռուսաստանը: Ռուսական մարքսականների ծայրահեղ թևը երկիրը տարավ դասակարգային անհաշտ պայքարի և հեղափոխության ուղիով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հասարակական ինչ միություններ էին գործում զարգացած երկրներում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:
2. Ինչի՞ համար էին պայքարում բանվորները արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում: Ինչ արդյունքներ տվեց այդ պայքարը:
3. Ներկայացրե՛ք ուտոպիստ–սոցիալիստների հայացքները:
4. Նոր հասարակության ստեղծման գործում Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսն ինչ դեր էին հատկացնում բանվոր դասակարգին: Նրանց հետևորդները հետագայում ինչ երկու ուղղություն որդեգրեցին:

Նոր հասկացություններ, անուններ

Հասարակական կարծիք, ԶԼՄ, հանրահավաք, գործադուլ, սոցիալիզմ (ընկերվարություն), կոմունիզմ (համայնավարություն), Ա. Սեն–Սիմոն, Շ. Ֆուրիե, Ռ. Օուեն, Կ. Մարքս, Ֆ. Էնգելս

18 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՄՆ–ՈՒՄ ԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Ստրկության վերացումը ԱՄՆ–ում

ԱՄՆ–ի ձևավորումից հետո ստրկությունը չվերացվեց: Այն խոչընդոտում էր երկրի բնականոն զարգացմանը:

Երկրի արդյունաբերապես զարգացած հյուսիսային նահանգներում խնդիրը լուծվեց բարենորոգումների ճանապարհով: Այլ էր պատկերը հարավում: Այստեղ տարածված էին ստրկական աշխատանքի վրա հիմնված խոշոր տնտեսությունները՝ **պլանտացիաները**: Դրանք արտադրում էին թեյ, կակաո, շաքարեղեգն, բրինձ: Տերերը գերշահույթ էին ստանում և դեմ էին ստրկության վերացմանը: Ավելին՝ ցանկանում էին այն տարածել նաև արևմուտքում յուրացվող նոր հողերում:

ԱՄՆ–ի առաջադեմ ուժերը պայքար սկսեցին հանուն ստրկության վերացման: Դրա գաղափարները թափանցեցին արվեստի և գրականության մեջ: **Պայքարի ընթացքում ստեղծվեց Հանրապետական կուսակցությունը:** Հանրապետականները դեմ էին ստրկությանը: Իսկ ավելի վաղ ստեղծված **Ժողովրդավարական կուսակցությունը** դրա ջատագովն էր:

1860 թ. հանրապետական **Ա. Լինկոլնը** ԱՄՆ–ի նախագահ ընտրվեց: Հարավի նահանգները, չհաշտվելով այդ փաստի հետ, խռովություն բարձրացրին և ստեղծեցին իրենց կառավարությունը: Լինկոլնը փորձեց կանխել պառակտումը, սակայն հաջողություն չունեցավ: Սկսվեց **քաղաքացիական պատերազմ**, որը տևեց չորս տարի (**1861–1865**): Այս իրադարձությունը շրջադարձային էր ԱՄՆ–ի պատմության մեջ: Ուստի այն հաճախ անվանում են նաև **Ամերիկյան երկրորդ հեղափոխություն:**

Լինկոլնն իր շուրջը համախմբեց առաջադեմ բոլոր ուժերին: Ի վերջո՝ կոտրվեց հարավի դիմադրությունը: Սևամորթները ստացան իրավունքներ, բայց նրանց



ԱԲՐԱՀԱՄ ԼԻՆԿՈԼՆ
(1809–1865)

ԱՄՆ–ի տասնվեցերորդ նախագահը: Ծնվել է ագարակատիրոջ ընտանիքում: Ֆիզիկապես ուժեղ էր, աշխատասեր, սկզբունքային և հետևողական: Ինքնակրթությամբ կարողացել էր դառնալ փաստաբան և քաղաքական գործիչ:
Համոզմունքներով ժողովրդավար էր: Եղել է Հանրապետական կուսակցության ստեղծողներից: Փառաբանվել է իր ազնվությամբ, բացառիկ հմայքով, նրբանկատությամբ: Կարողացել է ամենադժվարին իրավիճակներում լավագույն լուծումներ գտնել: Սպանվել է թատրոնում մի մոլեռանդ դերասանի ձեռքով:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ

Առաջին հայերն Ամերիկայում հայտնվել են XVII դարում: Նրանք հիմք դրեցին շերամապահությանը: Հայ վերաբնակիչները հիմնականում Արևմտյան Հայաստանից էին: XIX դարի սկզբից հայերի ներհոսքն Ամերիկա ավելացավ: Առաջինը, ով փորձել է հայերին համախմբել Ամերիկայում, Խաչատուր Ոսկանյանն էր: 1854 թ. ի վեր նա մամուլում շատ հոդվածներ է հրապարակել հայերի մասին: Մեկ այլ վերաբնակիչ՝ Խաչատուր Սերոբյանը, ստեղծել է կայուն կանաչ գույնի ներկ, որով ներկվել է ամերիկյան թղթադրամը՝ դոլարը:

Քաղվածք ԱՄՆ–ի Սահմանադրության 13–րդ ուղղումից

Միացյալ Նահանգներում կամ նրանց իշխանությանը ենթակա ցանկացած վայրում չի կարող գոյություն ունենալ ո՛չ ստրկություն, ո՛չ հարկադիր աշխատանք, բացի հանցագործության դիմաց պատժի դեպքերից, երբ անհատը դատապարտված է՝ ըստ սահմանված կարգի:

նկատմամբ խտրականությունը դեռ երկար պահպանվում էր:

Երկրորդ հեղափոխության հետևանքով ԱՄՆ–ում տեղի ունեցան դրական խոր տեղաշարժեր:

Ամրապնդվեց ժողովրդավարությունը, կատարելագործվեց պետական կառավարումը: Վերակառուցվեցին արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտն ու հեռահաղորդակցությունը: Ներդրվեցին գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները: Եվ արդյունքները երկար սպասել չտվեցին: XX դ. սկզբին ԱՄՆ–ն տնտեսական զարգացմամբ աշխարհում դուրս եկավ առաջին տեղը:

Ճգնաժամը Ֆրանսիայում և դրա հաղթահարումը

Երկրորդ կայսրության տարիներին (1852–1870) Ֆրանսիան տնտեսական առաջընթաց ապրեց: **Ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը:** Գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներով վերազինվեցին արդյունաբերության տարբեր ճյուղեր: Արտադրանքի ծավալը եռապատկվեց:

Սակայն Նապոլեոն III–ի անձնիշխանությունը խոչընդոտում էր Ֆրանսիայի հետագա զարգացմանը: Ձևական էին դարձել Սահմանադրությունը և խորհրդարանը: Չկար ազատ մամուլ: Ի պատասխան դրա՝ ծավալվեց ազատական շարժում:

Իր դիրքերն ամրապնդելու համար Նապոլեոն III–ը վարում էր նվաճողական պատերազմներ: Դրանք, սակայն, հաճախ ավարտվում էին ձախողումներով: Եզրափակողը դարձավ ֆրանս–պրուսական պատերազմը: Ֆրանսիան խոչընդոտում էր Գերմանիայի վերամիավորմանը. չէր ցանկանում զորեղ հարևան ունենալ: Այդ

Բարիկադ Փարիզի կոմունայի օրերին

հողի վրա **1870–1871 թթ. պատերազմ ծավալվեց նրա և Պրուսիայի միջև**: Ֆրանսիական բանակը խայտառակ պարտություն կրեց: Կայսրը գերի ընկավ, և միապետությունը տապալվեց:

Երկիրը կրկին հռչակվեց հանրապետություն: Սակայն ճգնաժամը շարունակվեց: Գերմանացիները պաշարեցին Փարիզը, սկսվեց սով: Հանրապետական կառավարությունը, վախենալով ժողովրդի հուզումներից, ձգտում էր շուտափույթ հաշտություն կնքել: Վիճակն օրեցօր վատանում էր: **1871 թ. մարտի 18–ին** ապստամբություն ծագեց: Կառավարությունը փախավ: Ժողովուրդն ստեղծեց իր իշխանությունը՝ **Փարիզի կոմունան**: Դա տևեց 72 օր: Կառավարական ուժերն արյան մեջ խեղդեցին ապստամբությունը:

Սուր պայքար ծավալվեց միապետականների և հանրապետականների միջև: Հաղթեցին հանրապետականները: **1875 թ. ընդունվեց Երրորդ հանրապետության Սահմանադրությունը**: Այն պայմաններ ստեղծեց Ֆրանսիայի հետագա զարգացման համար: Երկիրը բռնեց բարգավաճման ուղին: Արդեն XX դ. սկզբին այն աշխարհի առաջավոր և զարգացած երկրներից էր:

1905–1907 թթ. հեղափոխությունը Ռուսաստանում

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Ռուսական տերությունն իր տարածքով աշխարհում ամենամեծն էր: Չնայած մեծ ներուժին՝ այն իր զարգացմամբ զիջում էր առաջավոր երկրներին: Պատճառը միահեծանությունն

Հեղափոխականների երթ Սանկտ Պետերբուրգում 1905 թ.

էր և ավատատիրության վերապրուկները: Չկար ոչ սահմանադրություն, ոչ խորհրդարան: **Ճորտությունը վերացվեց միայն 1861 թ.** ցար Ալեքսանդր II–ի կողմից: Այդ և մյուս բարենորոգումները իրագործվում էին մեծ դժվարությամբ:

Արդյունաբերությունը դանդաղ էր զարգանում: Ձեռներեցների դասը թույլ էր: Ինչ վերաբերում է բանվորությանը, ապա նրա որակավորումը ցածր էր: Բանվորներն ապրում էին կենցաղային ծանր պայմաններում: Չկային աշխատանքի, առողջության, ծերության ապահովագրության համակարգեր: Բարվոք չէր նաև գյուղացիության վիճակը՝ սակավահողություն, ծանր հարկեր, պարբերաբար կրկնվող սով:

Հակասություններն առանձնակի սրվեցին 1904–1905 թթ.: Ընթանում էր ռուս–ճապոնական պատերազմը, որն ավարտվեց ռուսների պարտությամբ:

1905 թ. հունվարի 9–ին Ս. Պետերբուրգում խաղաղ ցույցի զնդակոծմամբ սկսվեց Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը: Այն աստիճանաբար տարածվեց տերության բոլոր ծագերում: Հեղափոխականների և կառավարական զորքերի միջև արյունալի ընդհարումներ էին տեղի ունենում: Ջոհվեցին հազարավոր մարդիկ:

Սակայն հեղափոխությունը հանգեցրեց նաև դրական արդյունքների: **1905 թ. հոկտեմբերի 17–ին** Նիկոլայ II ցարը հրապարակեց հրովարտակ, որով տերության բոլոր քաղաքացիներին խոստանում էր ժողովրդավարական ազատություններ՝ անձի, խոսքի, հասարակական

Հատվածներ Նիկոլայ II ցարի՝ 1905 թ. հոկտեմբերի 17–ի «Պետական կարգի կատարելագործման մասին» հրովարտակից

1. Շնորհել բնակչությանը քաղաքացիական ազատության անսասան սկզբունքները՝ անձի իրական անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, հավաքների և միությունների ազատություն:
2. …Դումային մասնակցությանը ներգրավել… բնակչության այն դասերը, որոնք ներկայումս բոլորովին զրկված են ընտրական իրավունքից…
3. Որպես անսասան կանոն հաստատել. ոչ մի օրենք չի կարող ուժ ստանալ առանց Պետական դումայի հավանության:
Կոչ ենք անում Ռուսաստանի բոլոր հավատարիմ զավակներին՝ հիշել իրենց պարտքը հայրենիքի առջև, օգնել այս չլսված խռովությունը դադարեցնելու և մեզ հետ միասին լարել ողջ ուժերը՝ հարազատ հողի վրա հանգստությունն ու խաղաղությունը վերականգնելու համար:

ՆԻԿՈԼԱՅ II
(1868–1918)

Ռուսաստանի վերջին միապետը: Նրա կառավարումը նշանավորված է Ռուսաստանի զարգացմամբ, միևնույն ժամանակ սոցիալ–քաղաքական հակասությունների և հեղափոխական շարժման աճով, ինչը վերաճեց 1905–1907 և 1917 թթ. հեղափոխությունների:
Նիկոլայ II–ը հրաժարվեց գահից 1917 թ. Փետրվարյան հեղափոխության ժամանակ, ապա աքսորվեց Տոբոլսկ:
1918 թ. բոլշևիկների կողմից տեղափոխվեց Եկատերինբուրգ, որտեղ նույն թվականի հուլիսին գնդակահարվեց ընտանիքի և մերձավորների հետ:

կազմակերպությունների, կրոնի: Հրավիրվում էր Խորհրդարան (Պետական դումա): Այսինքն՝ Ռուսաստանը բռնում էր սահմանադրական միապետության ուղին:

Սակայն կային ուժեր, որոնք ավելին էին ուզում: **Դրանց ղեկավարում էին ծայրահեղ մարքսականները (բոլշևիկներ)՝ Վ. Լենինի գլխավորությամբ:** Նրանք ցանկանում էին գրավել իշխանությունը: Բարձրացրին ապստամբություն, բայց պարտվեցին:

1907 թ. կեսերին հեղափոխությունն ավարտվեց: Ռուսաստանում սկսվեցին բարենորոգումներ, որոնք ընթանում էին շատ դանդաղ ու անհետևողականորեն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Զարգացման ինչ ուղիով էին ընթանում ԱՄՆ–ի հյուսիսային և հարավային նահանգները:
2. Որո՞նք էին ԱՄՆ–ի քաղաքացիական պատերազմի պատճառները:
3. Ներկայացրե՛ք ԱՄՆ–ի քաղաքացիական պատերազմի արդյունքները:
4. Ե՞րբ սկսվեց ֆրանս–պրուսական պատերազմը և ինչ հետևանքներ ունեցավ: Ինչո՞ւ տապալվեց Նապոլեոն III–ի անձնիշխանությունը:
5. Ինչ էր Փարիզի կոմունան: Ե՞րբ է ընդունվել Երրորդ հանրապետության Սահմանադրությունը:
6. Որո՞նք էին Ռուսաստանի հետամնացության պատճառները:
7. Ե՞րբ է սկսվել ու որքա՞ն տևել Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը: Ինչ նպատակ էին հետապնդում բոլշևիկներն այս հեղափոխության ժամանակ: Ներկայացրե՛ք հեղափոխության արդյունքները:
8. Փորձե՛ք ինքնուրույն պարզել՝ արդի աշխարհում գոյություն ունի արդյոք ստրկություն:

Գործնական աշխատանք

Աղյուսակի միջոցով ներկայացրե՛ք ԱՄՆ–ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի զարգացման ընթացքն ու արդյունքները XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Պլանտացիա, Ա. Լինկոլն, ԱՄՆ–ի քաղաքացիական պատերազմ, Երրորդ հանրապետություն, Նապոլեոն III–ի անձնիշխանություն, ֆրանս–պրուսական պատերազմ, Փարիզի կոմունա, ճորտատիրության վերացումը Ռուսաստանում, Ռուսաստանյան առաջին հեղափոխություն, Նիկոլայ II, մարքսականներ (բոլշևիկներ), Պետական դուման

19 ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (ԳԵՐՄԱՆԻԱ, ԻՏԱԼԻԱ)

Գերմանիայի վերամիավորումը

Ինչպես գիտեք, Վիեննայի վեհաժողովի որոշմամբ Գերմանիան մնացել էր պառակտված, իսկ 1848–1849 թթ. հեղափոխությունը չլուծեց նրա վերամիավորման խնդիրը: Սակայն ակնառու դարձավ, որ առանց դրա անհնար է երկրի հետագա զարգացումը:

Վերամիավորման նախադրյալներն առկա էին: Նախ՝ 1850–1860–ական թթ. Գերմանիայում ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը: Աշխուժացել էին տնտեսական կապերը առանձին շրջանների միջև, ձևավորվել էր համազգային շուկա: Այսինքն՝ **Գերմանիան տնտեսապես միավորված էր**: Բուռն ծաղկում էին ապրում համագերմանական մշակույթն ու գիտությունը: Դրանցով էր պայմանավորված գերմանացիների համազգային ինքնագիտակցության ձևավորումը: Գերմանացիները համոզված էին, որ ունեն նույն հայրենիքը, լեզուն, մշակույթը և ազգային շահերը:

Վերամիավորման նախաձեռնողը **Պրուսիան** էր: Պրուսական թագավորությունը դարձել էր գերմանական հողերի սիրտը: Այստեղ շարունակվեցին բարենորոգումները: Հակառակ Ավստրիայի՝ Պրուսիան ձգտում էր բարենորոգել նաև Գերմանական միությունը: Ոգեշնչողը Պրուսիայի վարչապետ **Օ. Բիսմարկն** էր: Նա կարճ

ՕՏՏՈ ԲԻՍՄԱՐԿ
(1815–1898)

Գերմանիայի նշանավոր պետական գործիչ և դիվանագետ, երկրի միավորման գլխավոր դերակատարը: Նա համոզված էր, որ Գերմանիայի միավորումը պետք է կատարվի ամենաուժեղ գերմանական պետության՝ Պրուսիայի շուրջ: Ուներ երկաթյա կամք: Սկզբունքային էր և համառ իր նպատակների մեջ: Ըստ նրա՝ միասնական Գերմանիայի պետությունը վեր է ամեն ինչից:

Հատված Օ. Բիսմարկի «Մտքեր և հուշեր» գրքից

Գերմանական ժողովուրդը և նրա ազգային կյանքը չեն կարող բաժանվել առանձին իշխանությունների միջև՝ որպես մասնավոր սեփականություն… Գերմանական պատմության մեջ առանձին տիրակալ իշխանների տարածքային անկախությունը ձեռք է բերել անբնական նշանակություն: Առանձին իշխանատոհմեր, չբացառելով Պրուսիան, գերմանական ժողովրդի նկատմամբ երբեք չեն ունեցել պատմական իրավունք, սեփական շահի համար այն բաժանել են մասնավոր տիրույթների, տիրել ազգային մարմնի առանձին մասերին…



Գերմանիայի միավորումը 1866–1871 թթ.

ժամանակում Եվրոպայում դարձավ հայտնի քաղաքական դեմք: Կարծում էր, որ Գերմանիան պետք է վերամիավորվի զենքի միջոցով՝ ասպարեզից հեռացնելով բոլոր հակառակորդներին: **«Դարաշրջանի հիմնահարցերը վճռվում են ոչ թե ճառերով և քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ»**. ահա նրա հավատամքը: Դա ուղղված էր առաջին հերթին Ավստրիայի և Ֆրանսիայի դեմ:

1866 թ. պրուսական բանակը ջախջախեց Ավստրիային: Ստանալով գործելու ազատություն՝ Բիսմարկը ստեղծեց **Հյուսիսգերմանական միությունը**՝ բաղկացած 22 պետությունից: Դա Գերմանիայի փաստացի վերամիավորումն էր: Սակայն դեռ պետք էր հաղթահարել Ֆրանսիայի դիմադրությունը:

Գերմանական տերության խորհրդանիշներից մեկը՝ Բրանդենբուրգյան դարպասները, մայրաքաղաք Բեռլինում

Ինչպես գիտեք, 1870–1871 թթ. ընթացավ ֆրանս–պրուսական պատերազմը: Այս անգամ ևս պրուսական բանակի հաղթանակը կատարյալ էր: Կնքված հաշտությամբ Ֆրանսիան ճանաչեց Գերմանիայի վերամիավորումը և վճարեց մեծ ռազմատուգանք:

1871 թ. հունվարի 18–ին Փարիզից ոչ հեռու գտնվող Վերսալի դղյակում հանդիսավորությամբ հռչակվեց Գերմանական տերության ստեղծումը: Հետագայում ընդունվեց **Սահմանադրություն**, որով ամրագրվում էր

նրա **դաշնային** կառուցվածքը՝ 22 պետություն և երեք ազատ քաղաք: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր տեղական սահմանադրությունը: Համագերմանական գործադիր իշխանությունը պատկանում էր կայսրին: Նա երկիրը ղեկավարում էր համագերմանական միակ նախարարի՝ **կանցլերի** միջոցով: Տերության բարձրագույն օրենսդիր մարմինը խորհրդարանն էր՝ **Ռայխստագը:** Այլ խոսքով՝ **Գերմանիան դարձավ սահմանադրական միապետություն**:

Գերմանական միասնական պետության ստեղծումը մեծապես նպաստեց երկրի զարգացմանը: Ընդունվեցին բազմաթիվ օրենքներ, որոնք ամրապնդում էին երկրի ազգային և պետական միասնությունը: Բարելավվեց հասարակական կյանքը: Մտցվեց ընդհանուր ընտրական իրավունք (չափահաս տղամարդկանց համար): Գործում էին բազմաթիվ կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ: Կրճատվեց աշխատանքային օրը: Աշխարհում առաջինը Գերմանիայում մտցվեց ապահովագրություն ծերության, հիվանդության և դժբախտ պատահարների համար:

Վերամիավորումն առաջ բերեց տնտեսության անանախընթաց զարգացում հատկապես ծանր արդյունաբերության մեջ: Ներդրվում էին գիտության նորագույն նվաճումները: 1913 թ. արդյունաբերական զարգացմամբ Գերմանիան աշխարհում գրավում էր երկրորդ տեղը՝ ԱՄՆ–ից հետո:

Իտալիայի վերամիավորումը

Վիեննայի վեհաժողովի որոշմամբ Իտալիան նույնպես մնացել էր մասնատված: Նրա հյուսիսային շրջանները Ավստրիայի տիրապետության տակ էին: Ուստի Իտալիայի վերամիավորման պայքարն ուներ նաև ազգային–ազատագրական բովանդակություն:

Երկրում ստեղծվել էին գաղտնի ընկերություններ, որոնք ղեկավարում էին պայքարը: Դրանցից էր **Երիտասարդ Իտալիան**: Ինչպես գիտեք, 1848–1849 թթ. իտալական ազգային հեղափոխությունը պարտվեց: Սակայն ազգային վերամիավորման և առաջադիմության գաղափարները չմարեցին:

ՋՈՒԶԵՊԵ ԳԱՐԻԲԱԼԴԻ
(1807–1882)

Իտալիայի ազատագրական պայքարի նշանավոր գործիչ, ազգային հերոս: 1833 թ. դառնում է «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության անդամ: 1834 թ. ապստամբությանը մասնակցելու համար դատապարտվում է մահապատժի: Սակայն կարողանում է փախչել:
1848–1849 թթ. ազգային հեղափոխության հերոսն էր: Սակայն դրա պարտությունը նրան չի ընկճում:
1860 թ. նրա «կարմիր շապկավորների հազարյակը» կարողացավ ազատագրել Իտալիայի հարավը, ինչը բեկումնային դարձավ երկրի միավորման գործում: Գարիբալդին ոչ միայն իտալացիների, այլև բոլոր ճնշված ժողովուրդների, այդ թվում՝ հայերի համար, հերոսի կերպար էր և լեգենդ: Նրան մեծարել են Մ. Նալբանդյանը, Ա. Իսահակյանը և այլք:

ՎԱՏԻԿԱՆ

Տարածքով ամենափոքր պետությունն է (44 հա): Գտնվում է Իտալիայի մայրաքաղաք Հռոմի շրջագծում: Գերագույն իշխանությունը պատկանում է աշխարհի բոլոր կաթոլիկների հոգևոր առաջնորդ Հռոմի պապին:
Պետության կարգավիճակը վերջնականորեն հաստատվել է 1929 թ. հատուկ հրովարտակով: Հարուստ է ճարտարապետական հուշարձաններով՝ կերտված Վերածնունդի խոշորագույն վարպետների մտահղացմամբ՝ Ռաֆայել, Միքելանջելո, Բեռնինի:
Կենտրոնը Պապական պալատն է և Ս. Պետրոսի կաթողիկե տաճարը (տես նկարը):

1850–1860–ական թթ. դրանց իրագործման նախադրյալներն ակներև էին: Իտալիայում ծավալվում էր արդյունաբերական հեղաշրջումը: Տնտեսության տարբեր բնագավառներում նկատվում էին արմատական տեղաշարժեր: Աշխուժանում էին կապերը երկրի տարբեր շրջանների միջև: **Կազմավորվում էր համազգային շուկան:** Ավելի տպավորիչ էին մշակութային ձեռքբերումները՝ երաժշտություն, գրականություն, գեղանկարչություն: Ամրապնդվում էր ազգային ինքնագիտակցությունը: Իտալացիները այդ ամենն անվանում էին **Վերածնություն (Ռիսորջիմենտո)**: Այս բոլորն անխուսափելի դարձրին միասնական պետության ստեղծումը:

Ազգային վերամիավորման դրոշակակիրը դարձավ **Սարդինական թագավորությունը:** Դաշինք կնքելով Նապոլեոն III–ի հետ՝ այն պատերազմ սկսեց Ավստրիայի դեմ: Դա առաջ բերեց համազգային խանդավառություն: Իտալական մյուս պետությունները միացան պայքարին: Սկսվեց կամավորական մեծ շարժում:

Ազգային հերոս **Ջ. Գարիբալդին** 1860 թ. իր զորաջոկատով ափ իջավ Սիցիլիայում և կարճ ժամանակում ազատագրեց Իտալիայի ողջ հարավը:

1861 թ. հրավիրվեց համաիտալական խորհրդարանը, որը **հռչակեց Իտալական թագավորության ստեղծումը**: Սակայն Հռոմը և Վենետիկը դեռևս դրա կազմում չէին: Առաջինի վերամիավորմանը խոչընդոտում էր Հռոմի պապը, իսկ երկրորդը շարունակում էր մնալ Ավստրիայի տիրապետության ներքո:

Ավստրիայի՝ Պրուսիայից կրած պարտությունը (1866 թ.) նպաստավոր պայմաններ ստեղծեց Վենետիկի ազատագրման համար: Իսկ **Հռոմն Իտալիային միացավ և մայրաքաղաք հռչակվեց** ֆրանս–պրուսական պատերազմից հետո՝ **1871 թ.**: Դա Իտալիայի վերամիավորման հարյուրամյա պայքարի ավարտն էր:

1871 թ. իտալական պետությունը ճանաչեց պապին՝ իբրև աշխարհի կաթոլիկների հոգևոր առաջնորդ: Նրա նստավայր **Վատիկանը** ստացավ ինքնիշխանություն:

Իտալիան նույնպես **սահմանադրական միապետություն էր**: Գործադիր իշխանությունը ներկայացնում էին թագավորը և նախարարների խորհուրդը, իսկ օրենս-

դիր իշխանությունը՝ համաիտալական Խորհրդարանը: Հռչակվեցին ժողովրդավարական ազատություններ՝ քաղաքացիների իրավահավասարություն, սեփականության անձեռնմխելիություն, մամուլի և ժողովների ազատություն:

Վերամիավորումից հետո Իտալիան նույնպես բռնեց զարգացման ուղին: Ավարտվեց արդյունաբերական հեղաշրջումը: Զարգացան տնտեսության զանազան ճյուղեր: Իտալական ապրանքներն արտահանվում էին աշխարհի շատ երկրներ: XX դ. սկզբին երկրում արդեն առկա էր զարգացած արդյունաբերական հասարակություն: Միջազգային հարաբերություններում Իտալիան ազդեցիկ դեր ուներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ նախադրյալներ կային Գերմանիայի միավորման համար:
2. Գերմանական պետություններից ո՞րը գլխավորեց նրա միավորումը: Ինչ միջոց ընտրվեց դրա համար:
3. Ինչո՞ւ է անհրաժեշտ ազգային պետության ստեղծումը: Փաստարկե՛ք Ձեր պատասխանը Գերմանիայի օրինակով:
4. Ինչ է Ռիսորջիմենտոն:
5. Իտալական ո՞ր պետությունը գլխավորեց ազգային միավորման գործընթացը: Ներկայացրե՛ք Ջ. Գարիբալդիի դերը Իտալիայի միավորման գործում:
6. Ե՞րբ ավարտվեց Իտալիայի միավորումը: Ինչ նշանակություն ունեցավ այն:

Գործնական աշխատանք

Համեմատե՛ք Գերմանիայի և Իտալիայի միավորման գործընթացները և արդյունքները:

Նոր հասկացություններ, անուններ, տերմիններ

Հյուսիսգերմանական միություն, Օ. Բիսմարկ, կանցլեր, «երկաթով և արյամբ», Գերմանական տերություն, Ռայխստագ, Վերածնություն (Ռիսորջիմենտո), Երիտասարդ Իտալիա, Ջ. Գարիբալդի, Սարդինական թագավորություն, Իտալական թագավորություն, Վատիկան

20 ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

Հունաստանի ազատագրության համար պայքարող «Ֆիլիկի հետերիա» կազմակերպության զինանշանը

Հայկական «Մշակ» թերթը բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի մասին

Արդեն մի ամբողջ տարի է, ինչ Բալկանյան թերակղզու քրիստոնյա ազգը, զենքը ձեռքին, պայքարում է իր ազատության համար…
Նրանք գերադասում են մեռնել կռվի դաշտում, քան նորից ընկնել թուրքական տիրապետության լծի տակ, ուր մարդը զրկված է ամենատարրական իրավունքներից: Դա մի պատերազմ է, որ մղվում է ոչ միայն ապստամբ քրիստոնյա ժողովուրդների գոյության պաշտպանության համար, այլ քաղաքակրթության պատերազմ բարբարոսության դեմ:

1876 թ. հուլիսի 1

Բալկանյան ժողովուրդները Օսմանյան կայսրության կազմում

Նոր դարերի առաջին փուլում Բալկանյան թերակղզու ժողովուրդների մեծ մասը շարունակում էր մնալ օսմանյան դաժան տիրապետության տակ: Մնացած մասը Ավստրիայի տիրապետության տակ էր: Բռնի ուժի և իսլամի գաղափարախոսության վրա հենվող հետամնաց Օսմանյան կայսրությունը կասեցրեց բալկանյան ժողովուրդների՝ **սերբեր, հույներ, բուլղարներ, ալբանացիներ, ռումիններ** և այլն, զարգացումը: Նրանք ենթարկվում էին ազգային և կրոնական հալածանքների: Բազմաթիվ հարկեր էին վճարում, ծանր էր հատկապես գյուղացիության վիճակը: Խզվել էին այդ ժողովուրդների բազմաբնույթ կապերը հավատակից քրիստոնյա Եվրոպայի հետ: Այնժամ, երբ եվրոպական առաջատար երկրներում ձևավորվում էր արդյունաբերական հասարակություն, Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդները զրկված էին առաջադիմելու և արժանապատիվ կյանքով ապրելու հնարավորությունից:

Ահա թե ինչու թուրքական նվաճման պահից սկսած բալկանյան ժողովուրդները պայքարում էին իրենց անկախության վերականգնման և ազգային պետության ստեղծման համար: Նրանք հերոսաբար կռիվներ էին մղում թուրքական տիրապետությունը թոթափելու համար, սակայն մինչև XIX դարի սկիզբը էական հաջողությունների չհասան: Ժողովուրդների ազատատենչ ոգին բարձր էր պահում մեծ տարածում գտած **հայդուկային շարժումը**: Հայդուկները այն մարդիկ էին, ովքեր միայնակ կամ փոքր խմբերով, սարերում ու անտառներում պատսպարվելով, կռվում էին իրենց հայրենիքի թշնամիների դեմ: Նրանք վրիժառուական գործողություններ էին իրականացնում հատկապես թուրք պաշտոնյաների

հանդեպ: Հայդուկային շարժումը, ինչպես գիտեք, տարածվեց նաև հայկական միջավայրում:

Բալկանյան ժողովուրդները, հատկապես սլավոնները, իրենց ազատագրական պայքարում աջակցություն ստացան հզորացող Ռուսաստանից: Վերջինս XVIII դ. երկրորդ կեսից հաղթական պատերազմներ էր մղում Օսմանյան կայսրության դեմ և նպատակ ուներ ամրապնդվելու այս տարածաշրջանում: Լուսավորական գաղափարների և Ֆրանսիական մեծ հեղափոխության ազդեցությունը շուտով հասավ Բալկանյան թերակղզի, ինչը նույնպես նպաստեց տեղի ժողովուրդների ազատագրական պայքարի վերելքին: Պայքարի բովում ամրապնդվում էին նրանց ազգային ինքնագիտակցությունը և հավատը հաղթանակի հանդեպ; Այսպես՝ մոտենում էր նրանց ազատության ժամը:

Սերբիայի, Ռումինիայի և Բուլղարիայի անկախության նվաճումը

Նախորդ բաժնից իմացաք, որ Բալկանյան թերակղզում առաջինը իր անկախությունը վերականգնեց եվրոպական քաղաքակրթության բնօրրան Հունաստանը (1830թ): Դա ոգևորեց թուրքական տիրապետության տակ գտնվող բալկանյան մյուս երկրներին:

Անկոտրում կամք և հավատ ցուցաբերեցին սերբերը: XIX դ. սկզբի հաղթական ապստամբության արդյունքում **Սերբիան** 1830 թ. դարձավ **ինքնավար իշխանություն**՝ Օսմանյան կայսրության կազմում: Դրանից հետո ավելի կազմակերպված բնույթ ստացավ անկախացման

1878 թ. Բեռլինի վեհաժողովը

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ
(1820–1907)

Եկեղեցական–քաղաքական գործիչ, 1892 թ. ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս: Պայքարել է հայոց ազգային վերածննդի և ինքնիշխանության համար: Նպատակին հետամուտ՝ դիմել է պայքարի տարբեր միջոցների՝ լուսավորության տարածում, զինյալ խմբերի կազմակերպում, դիվանագիտական բանակցությունների վարում:
1877–1878 թթ. պատերազմում Օսմանյան տերության պարտությունից հետո դիվանագիտական առաքելությամբ այցելել է Հռոմ, Փարիզ, Լոնդոն: Այնուհետև ժամանել է Բեռլին՝ վեհաժողովին մասնակցելու մտադրությամբ: Սակայն ապարդյուն:
Հայոց հարցը չգտավ իր արդարացի լուծումը: Այն դարձավ մեծ տերությունների դիվանագիտության խաղաքարտը:

գործընթացը: Ռուսաստանի պահանջով թուրքական կայազորները դուրս բերվեցին Սերբիայից: Երկրի ժողովրդավարացման համար կարևոր նշանակություն ունեցավ 1869 թ. ընդունված Սահմանադրությունը:

Օսմանայն տերության սահմանները հասնում էին Դանուբ գետի ձախափնյա տարածքները: Այստեղ վաղուց ձևավորվել էին երկու ինքնավար իշխանություններ՝ **Վալախիան** և **Մոլդովան:** Նրանց իրավունքները, սակայն, մշտապես ոտնահարվում էին թուրքական սուլթանների կողմից: Համառ պայքարի շնորհիվ այս երկու իշխանությունները 1859–1861 թթ. միավորվեցին և ստեղծեցին նոր պետություն՝ **Ռումինիան:** Նա դեռ լիովին անկախ չէր՝ մի որոշ ժամանակ մնաց սուլթանի գերիշխանության տակ:

Անկախության ուղին մեծ դժվարություններով անցավ **Բուլղարիան:** Այստեղ ուժեղ էր հայդուկային շարժումը: Բուլղարները ժամանակին օգնել էին հույներին: 1869 թ. ստեղծվեց պայքարի հեղափոխական կոմիտե, որի ազդեցությունը շուտով տարածվեց ամբողջ երկրում: **1876 թ.** բռնկվեց բուլղարների խոշոր ապստամբությունը: Մեծ տերությունները սուլթանից պահանջեցին ինքնավարություն տալ Բուլղարիային: Սուլթանը մերժեց: Այդ նույն ժամանակ ոտքի էին կանգնել նաև սերբերը, չեռնոգորիացիները և բոսնիացիները: Թուրքական իշխանությունները ճնշեցին ապստամբությունները՝ իրականացնելով նաև ցեղասպանական գործողություններ սլավոնների նկատմամբ:

Ռուսաստանը, որ համարվում էր թուրքերի գլխավոր թշնամին և սլավոնների գլխավոր պաշտպանը, **1877 թ. ապրիլին** պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը: Ռուս–թուրքական այս պատերազմը մեծ նշանակություն ունեցավ բալկանյան երկրների ազատագրման գործում:

Ռազմական գործողություններն ընթացան երկու ճակատներում (վերհիշե՛ք նաև Հայոց պատմության համապատասխան դասը): Ռուսական բանակը **Բալկանյան** ճակատում ջախջախեց թշնամուն, ազատագրեց Բուլղարիան և ընդհուպ մոտեցավ Կ. Պոլսին: Իսկ **Կովկա-**

սյան ճակատում գրավեց Արդահանը, Բաթումը, Կարսը և Էրզրումը:

1878 թ. փետրվարի 19–ին Կ.Պոլսի մոտ գտնվող Սան Ստեֆանո բնակավայրում կնքվեց հաշտության պայմանագիր, որով Ռուսաստանը մեծապես ուժեղացնում էր իր դիրքերը Բալկաններում և Կովկասում: Բնականաբար մեծ տերությունները չէին կարող հաշտվել դրա հետ: Նրանք միացյալ ուժերով Ռուսաստանին ստիպեցին վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Այդ նպատակով **1878 թ.** հունիսին Բեռլինում հրավիրվեց մեծ տերությունների վեհաժողով: **Հուլիսի 1–ին** կնքված Բեռլինի պայմանագրով ճանաչվեց **Սերբիայի, Ռումինիայի և Չեռնոգորիայի** լիակատար անկախությունը: Բուլղարիայի տարածքը երկատվեց: **Հյուսիսային Բուլ-**

Բալկանյան պետությունները 1878–1913 թթ.

Ռուսաստանի հետ մեծ հույսեր էր կապում նաև հայ ժողովուրդը: XIX դ. երկրորդ կեսին զարթոնք ապրեց հայ ազգային մշակույթը, ամրապնդվեց ազգային ինքնագիտակցությունը, ստեղծվեցին ազատագրական կազմակերպություններ: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը, բալկանյան ժողովուրդների համեմատ ավելի ուշ, նույնպես բռնեց վերելքի ուղին:

1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմը ոգևորեց նաև հայերին: Սան Ստեֆանոյի պայմանագրի 16–րդ հոդվածը պարտավորեցնում էր սուլթանին՝ Արևմտյան Հայաստանում կատարել բարեփոխումներ՝ հայերի անձի, գույքի, ազգային կյանքի ապահովության երաշխիքներով: Մեկ այլ հոդվածով այդ բարեփոխումների երաշխավորը դառնում էր ռուսական կողմը: Բեռլինի վեհաժողովում պատկերը փոխվեց. պայմանագրի 61–րդ հոդվածով այդ բարեփոխումների ընթացքին միայն հետևելու էին եվրոպական վեց տերությունները: Սուլթանից ստանալով զանազան զիջումներ՝ վերջիններս հետագայում ոչինչ չարեցին դրանք իրականացնելու համար: Այսպես Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության հիմնախնդիր:

Հայկական «Մշակ» թերթը Բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի մասին

Արդեն մի ամբողջ տարի է, ինչ Բալկանյան թերակղզու քրիստոնյա ազգը զենքը ձեռքին պայքարում է իր ազատության համար…Նրանք գերադասում են մեռնել կռվի դաշտում, քան նորից ընկնել թուրքական տիրապետության լծի տակ, ուր մարդը զրկված է ամենատարրական իրավունքներից: Դա մի պատերազմ է, որ մղվում է ոչ միայն ապստամբ քրիստոնյա ժողովուրդների գոյության պաշտպանության համար, այլ քաղաքակրթության պատերազմ բարբարոսության դեմ:

(1876 թ. հուլիսի 1)

դարիան դարձավ ինքնիշխան պետություն: Հարավային մասը ստացավ ինքնավարություն և մնաց սուլթանի գերիշխանության տակ: Ռուսաստանին անցավ Հայաստանի մի մասը՝ Կարս կենտրոնով, ինչպես նաև Բաթում նավահանգստային քաղաքը:

Բալկանյան երկրների անկախության գործընթացի ավարտը

Բեռլինի վեհաժողովից հետո շարունակվեց բալկանյան ժողովուրդների անկախության գործընթացը: Մի քանի տարի անց միավորվեց երկատված Բուլղարիան: Իսկ **1908 թ.**, երբ Ավստրո–Հունգարիան Օսմանյան կայսրությունից բռնազավթեց Բոսնիայի և Հերցեգովինայի տարածքը, Բուլղարիան հայտարարեց իր լիակատար անկախության մասին:

Բալկանյան նորանկախ պետությունների միջև շուտով ի հայտ եկան տարածքային հակասություններ: Սակայն մի պահ նրանք միավորվեցին: Հունաստանը, Սերբիան, Բուլղարիան և Չեռնոգորիան ստեղծեցին ռազմական դաշինք ու **1912 թ. հոկտեմբերին** պատերազմ սկսեցին Օսմանյան կայսրության դեմ: Գլխավոր նպատակն էր թուրքերին դուրս վռնդել Եվրոպայից: Այսպես կոչված **Բալկանյան առաջին պատերազմում** նրանք ջախջախեցին թշնամուն և հասան իրենց գլխավոր նպատակին: Կարևոր արդյունքներից էր այն, որ պաշտոնապես ճանաչվեց **Ալբանիայի** անկախությունը:

Սակայն դաշնակիցների միջև լուրջ խնդիրներ ծագեցին թուրքերից խլված տարածքների բաժանման ժամանակ: Արդյունքում՝ **1913 թ. ամռանը** սկսվեց **Բալկանյան երկրորդ պատերազմը**՝ Բուլղարիայի և նրա երեկվա դաշնակիցներ Հունաստանի ու Սերբիայի միջև: Վերջիններիս միացան նաև Ռումինիան և Թուրքիան: Բուլղարական բանակը մի քանի օր միայն կարողացավ դիմադրել: Տարածքային ձեռքբերումներ ունեցան Հունաստանը, Սերբիան և Ռումինիան: Իսկ թուրքերին հաջողվեց կառչած մնալ Եվրոպային՝ պահելով մի փոքր տարածք՝ Ադրիանապոլիս կենտրոնով:

Բալկանյան ժողովուրդների **անկախության գործընթացն իր ավարտին հասավ** միայն Առաջին աշխարհա-

մարտից հետո: Այսպիսով՝ տևական պայքարի արդյունքում նրանք, ի վերջո, հասան բաղձալի նպատակին:

Բալկանյան երկրներն անկախության շնորհիվ կրկին Եվրոպայի մաս կազմեցին: Աշխուժացան և զարգացան նրանց հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային ոլորտները: Աստիճանաբար ծավալվեց արդիականացման գործընթացը:

Այսպես՝ ազգային այդ նոր պետություններում սկսեց ձևավորվել արդյունաբերական հասարակություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք, թե ե՞րբ և ինչպե՞ս բալկանյան երկրները հայտնվեցին Օսմանյան կայսրության կազմում: Ներկայացրե՛ք դրա հետևանքները:
2. Ովքե՞ր էին հայդուկները:
3. Որո՞նք էին բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի վերելքի պայմանները XIX դարում:
4. Ե՞րբ են օսմանյան լծից ազատագրվել Սերբիան, Ռումինիան և Բուլղարիան: Նրանցից որի՞ անկախացումն էր ավելի տևական ու դժվար:
5. Որո՞նք էին 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի պատճառները, ներկայացրե՛ք դրա հիմնական արդյունքները:
6. Ե՞րբ են տեղի ունեցել Բալկանյան առաջին և երկրորդ պատերազմները: Նշե՛ք դրանց պատճառները և արդյունքները:
7. Ե՞րբ է ավարտվել Օսմանյան կայսրությունից բալկանյան ժողովուրդների անկախացումը: Ի՞նչ նշանակություն ունեցավ ազգային պետությունների ստեղծումը նրանց համար:

Քննարկման հարց

Ինչո՞ւ վերանայվեց Սան Ստեֆանոյի պայմանագիրը:

Նոր հասկացություններ, անուններ

Հայդուկ, Սերբիա, Ռումինիա, Չեռնոգորիա, Բուլղարիա, 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմ, Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրեր, Հայկական հարց, Ալբանիա, Բալկանյան առաջին և երկրորդ պատերազմներ

21 ԱԶԳԱՅԻՆ ՀԻՆՄԱԽՆԴԻՐԸ ԲԱԶՄԱԶԳ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բազմազգ պետություն

Միջնադարի պատմությունից գիտեք, որ Եվրոպայում ստեղծվեցին առաջին ազգային պետությունները՝ Անգլիա, Ֆրանսիա և այլն: Նոր դարերում այս գործընթացը ծավալվեց ոչ միայն Եվրոպայում, այլ նաև Ամերիկայում, առաջացան բազմաթիվ **նոր ազգային պետություններ** (վերհիշե՛ք նախորդ դասերը): Ազգերի գիտակցության մեջ ամրակայվում էր **հայրենիքի** գաղափարը: Հայրենիքը ոչ միայն հոգևոր իմաստ ուներ, այլև ներկայանում էր որպես որոշակի պատմաաշխարհագրական տարածք: Ազգերը այն ժամանակներում, ինչպես և մեր օրերում, ձգտում էին իրենց հայրենիքում ապրել անկախ և ազատ օտարի տիրապետությունից ու ճնշումներից: Նրանք ուզում էին ինքնուրույն տնօրինել իրենց կյանքը, իրենց հայրենիքում ստեղծել սեփական պետություն ու զարգանալ: Եվ դա բնական երևույթ էր, այնպիսին, ինչպիսին որ մարդիկ պայքարում էին ժողովրդավարական իրավունքների և ազատ ու արդար հասարակությունում ապրելու համար: Ազատության և անկախության ազգերը հասնում էին համառ պայքարի, հավաքական կամքի դրսևորման ու հաճախ մեծ զոհողությունների գնով:

Նոր ժամանակներում ազգային պետությունների կողքին գոյություն ունեին նաև **բազմազգ պետություններ**: Բազմազգ տերության բնորոշ կողմն այն էր, որ տիրապետող ազգի գերիշխանության ներքո գտնվում էին տասնյակ նվաճված ազգեր և ժողովուրդներ: Ճիշտ է, նրանք ապրում էին իրենց հայրենիքներում, սակայն չունեին իրենց լեզուն և մշակույթը ազատորեն զարգացնելու իրավունք, ենթարկվում էին ազգային ու կրոնական խտրականության: Բնականաբար, ճնշված ազգերը պայքարում էին իրենց իրավունքների համար և գլխավոր նպատակ դնում անկախության հասնելը:

Բազմազգ պետությունները սովորաբար կոչվել են կայսրություններ կամ տերություններ: Նոր դարերում այդպիսի տերությունների բնորոշ օրինակ էին **Ռուսաստանը, Ավստրո–Հունգարիան և Օսմանյան Թուրքիան**: Այս դասին կխոսենք առաջին երկու կայսրությունների մասին:

Ավստրո–Հունգարիա երկմիասնական պետության առաջացումը

Նոր դարերում Ավստրիական բազմազգ միապետությունը դասվում էր հզոր պետությունների շարքում: **1804 թ.** այն հռչակվեց **կայսրություն**՝ ի հակակշիռ Նապոլեոնի կայսրության: Երկրում տիրապետող ազգը ավստրիական **գերմանացիներն** էին՝ Հաբսբուրգների հարստության կայսրերի գլխավորությամբ: Բուն Ավստրիայից բացի՝ նրա կազմի մեջ էին **Հունգարիան, Չեխիան, Խորվաթիան, Սլովակիան**, ինչպես նաև իտալական, լեհական և սերբական որոշ տարածքներ:

Հաբսբուրգների տիրապետության տակ գտնվող ազգերը ձգտում էին անկախության: Պայքարի տոն տվողները հունգարները և իտալացիներն էին, որոնք 1848–1849 թթ. ազգային հեղափոխություն ծավալեցին: Միայն Ռուսաստանի ռազմական օգնության շնորհիվ Ավստրիան չտրոհվեց: Սակայն կայսրությունը զգալիորեն թուլացավ: Երկրում չդադարեցին ազգային շարժումները: Միջազգային ասպարեզում նա հայտնվեց մեկուսացված վիճակում, իսկ 1866 թ. Պրուսիայի դեմ պատերազմում ջախջախիչ պարտություն կրեց:

Այս իրավիճակում Հաբսբուրգները կայսրությունը փրկելու նպատակով համաձայնության եկան հունգարական վերնախավի հետ: **1867 թ.** ընդունվեց **Սահմանադրություն**, որով Ավստրիական կայսրությունը վերածվեց երկմիասնական կայսրության՝ **Ավստրո–Հունգարիա** անունով: Այն սահմանադրական միապետություն էր, ուներ դաշնային կառուցվածք՝ բաղկացած Ավստրիա և Հունգարիա մասերից: Տերության գլուխ կանգնած էր ավստրիական կայսրը, որը միաժամանակ հանդիսանում էր նաև Հունգարիայի թագավոր: Ընդհանուր էին միայն համակայսերական բանակը, ֆինանսների և արտաքին գործերի նախարարությունները:

Ռուսական տերությունը 1796–1914 թթ.

Մնացած հարցերում նրանք ինքնուրույն էին, յուրաքանչյուրն ուներ իր խորհրդարանը և կառավարությունը:

Ավստրիական իշխող վերնախավը հույս ուներ այդ քայլով պահպանել կայսրության ամբողջականությունը: Որոշ իրավունքներ տրվեցին նաև ենթակա մյուս ազգերին՝ հատկապես մշակութային և կրոնական հարցերում: Սակայն հունգարներին արտոնյալ կարգավիճակ տալը խթանեց սլավոնների ազատագրական պայքարը:

XIX դ. վերջերին երկմիասնական կայսրությունը մեծ առաջընթաց ունեցավ տնտեսական և սոցիալական ոլորտներում: Զևավորվում էր արդյունաբերական հասարակություն, բարելավվում էին մարդկանց կյանքի պայմանները, փոխվում էր նրանց ապրելակերպը: Սակայն ազգային հիմնախնդիրը այդպես էլ չլուծվեց, շարունակվեց ճնշված ազգերի անկախության համար պայքարը: Առաջին աշխարհամարտի ավարտին երկմիասնական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց:

Ռուսաստանյան կայսրությունը

Ռուսաստանը կայսրություն էր հռչակվել Պյոտր Մեծի կողմից դեռ 1721 թ.: Դրանից հետո այն շարունակաբար ընդարձակվելով դարձավ աշխարհում ամենամեծ

Ալ. Մանթաշյանցը հայ խոշոր ձեռներեց և բարերար էր: Հարստության հիմքը Բաքվի նավթահորերն էին և նավթամշակման գործարանները: 1899 թ. հիմնել է «Ալ. Մանթաշյանց և ընկ. առևտրական տուն» ընկերությունը: Այն իր բաժանմունքներն ուներ աշխարհի բազում երկրներում՝ Անգլիա, Լեհաստան, Ռումինիա, Հնդկաստան, Թուրքիա, Իրան և այլուր: Վայելել է ռուսական կառավարության հովանավորությունը: Զբաղվել է բարեգործությամբ, միջոցներ է տրամադրել ազգային, եկեղեցական, մշակութային, կրթական հաստատություններին: Նրա նյութական օժանդակությամբ բարձրագույն կրթություն են ստացել հարյուրավոր հայ երիտասարդներ: Նախատեսում էր հիմնել ազգային համալսարան և հայագիտական ակադեմիա:
1895 թ. ընտրվել է «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» պատվավոր նախագահ: Սիրում էր կրկնել. «Իմ ունեցվածքը վերջին հաշվով ազգիս ունեցվածքն է»:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇՅԱՆՑ
(1842–1911)

կայսրությունը: Ռուսաստանի սահմանները XIX դ. վերջին Արևելյան Եվրոպայից հասնում էին մինչև Խաղաղ օվկիանոս, Սառուցյալ օվկիանոսից մինչև Իրան և Հնդկաստան: Այստեղ ապրում էին հասարակական զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ:

Տիրապետող ազգը ռուսներն էին, որոնք կազմում էին կայսրության բնակչության շուրջ 43 տոկոսը: Սլավոնական մյուս ժողովուրդները՝ ուկրաինացիները և բելառուսները, գտնվում էին զարգացման համեմատաբար տանելի պայմաններում: Ճիշտ է, նրանք չունեին ինքնավարություն, բայց ռուսների հետ միասին կազմում էին կայսրության միջուկը և բնակչության գերակշիռ մասը:

Իրենց հասարակական զարգացմամբ նրանք, սակայն, զգալիորեն հետ էին մնում եվրոպական ազգերից: Դրա գլխավոր պատճառը անսահմանափակ միապետությունն էր: Երկար ժամանակ պահպանվում էր ճորտատիրությունը, և արդյունաբերական հասարակություն սկսեց ձևավորվել միայն XIX դ. վերջերից: Տերության տարբեր մասերի, հատկապես ծայրամասային շրջանների, միջև թույլ էին զարգացած տնտեսական կապերը, անբավարար էին հաղորդակցության արդիական միջոցները: Ահա թե ինչու կայսրության միասնականությունը պահպանվում էր ահռելի չափերի հասած պետական ապարատի և ռազմական ուժի շնորհիվ: Մշտական էին դարձել ազգային ու կրոնական ճնշումները:

XIX դարում սկսեց ծավալվել ենթակա երկրների ու ազգերի ազատագրական պայքարը: Անկախության վե-

ռականգնման համար բազմիցս ապստամբեց երբեմնի հզոր **Լեհաստանը**, ինքնավարության համար տևական պայքար մղեցին **Ֆինլանդիան** և **Ուկրաինան:** Ազգային ինքնությունը պահպանում էին համեմատաբար զարգացած վիճակում գտնվող լատիշները, լիտվացիները և էստոնացիները:

Ինչպես գիտեք, XIX դ. սկզբներին Ռուսաստանը դուրս մղեց Իրանին և ավարտեց Այսրկովկասի նվաճումը: **Արևելյան Հայաստանը, Վրաստանը և մահմեդական խանությունները** (ներկայիս Ադրբեջանի տարածքում) դրվեցին ռուսական վարչակարգի անմիջական կառավարման ներքո: Ազգային գործոնը անտեսելով՝ կատարվեց անարդար սահմանաբաժանում, ստեղծվեցին նահանգներ և մարզեր: Դրանցից կազմավորվեց **Կովկասի փոխարքայությունը**՝ Թիֆլիս կենտրոնով: Այն ազգային ինքնավարություն չէր, այլ կայսրության վարչական առանձին միավոր: Առավել զարգացած էին Թիֆլիսը և Բաքուն: Դրանցում ապրում էին մեծ թվով հայեր, ովքեր լուրջ հաջողությունների հասան տնտեսության և մշակույթի տարբեր ասպարեզներում, ամենամեծ ներդրումն ունեցան այդ քաղաքների զարգացման գործում:

Ցարական կայսրության կազմում էր նաև **Միջին Ասիան**, որի նվաճումն ավարտվեց միայն XIX դ. երկրորդ կեսին: Տեղի մահմեդական ժողովուրդները՝ ղազախները, ուզբեկները, թուրքմենները, ղրղզները, տաջիկները, ապրում էին ավանդական ներփակ ապրելակերպով և դուրս էին մնացել արդիականացման գործընթացից:

Կայսրության նվաճած ազգերը չունեին իրենց ներքին կյանքի (լեզու, մշակույթ, դպրոց, կրոն) կառավարման անխախտ իրավունքներ: Եթե մշակութային կամ կրոնական որոշ իրավունքներ էին տրվում, ապա դրանք պարբերաբար ոտնահարվում էին կամ վերացվում, ինչպես օրինակ, հայերի պարագայում: Ռոմանովների մեծապետական վարչակարգը շարունակաբար վարում էր ոչ ռուս ազգերի ռուսացման քաղաքականություն: Պատկերավոր՝ Ռուսաստանին, ինչպես և Ավստրո–Հունգարիային, անվանում էին **«ժողովուրդների բանտ»**: Այդ պատճառով ավելի ուժեղացավ ճնշված ազգերի անկախության ձգտումը:

Այդուհանդերձ, ռուսական գերիշխանությունը ունեցավ նաև որոշ դրական արդյունքներ: Շատ ժողովուրդ-

ներ Ռուսաստանյան կայսրության արդիականացման գործընթացի միջոցով ծանոթացան արդյունաբերական հասարակության ձեռքբերումներին՝ երկաթուղի, ավտոմեքենա, էլեկտրականություն, տրամվայ, հեռահաղորդակցում և այլն:

Բազմազգ կայսրության ժողովուրդներն իրենց ազատագրության հույսերը կապում էին Ռուսաստանի ժողովրդավարացման հետ: Նրանց ականավոր ներկայացուցիչները մասնակցում էին երկրում թափ առնող հեղափոխական շարժումներին: Կայսրության ներքին կյանքի հիմնախնդիրները, այդ թվում ազգայինը, ժամանակին չլուծվեցին: Այդ պատճառով Ռուսաստանյան կայսրությունը 1917 թվականի փետրվարին անկում ապրեց:

Այսպիսով՝ ազգային հարցը բազմազգ կայսրությունների համար մնաց անլուծելի հիմնախնդիր, և նոր դարերի ավարտին նրանք կործանվեցին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք, թե ինչ է ազգային պետությունը: Ինչու՞ են բոլոր ազգերը ձգտում ունենալ անկախ պետություն:
2. Ընդհանուր կողմերով բնութագրե՛ք բազմազգ պետությունը: Նշե՛ք Ձեզ հայտնի մի քանի բազմազգ պետություններ:
3. Թվարկե՛ք Ավստրիական կայսրության կազմում գտնվող երկրներ ու ժողովուրդների:
4. Ո՞րն էր Ավստրո–Հունգարիա երկմիասնական տերության ստեղծման պատճառը: Ե՞րբ է այն առաջացել և ի՞նչ կառուցվածք ուներ:
5. Ե՞րբ է ստեղծվել Ռուսաստանյան կայսրությունը: Թվարկե՛ք այդ կայսրությունում ապրող ազգերի և ժողովուրդների:
6. Ներկայացրե՛ք ռուսական գերիշխանության բացասական և դրական կողմերը Ռուսաստանում ապրող ազգերի և ժողովուրդների համար:
7. Ի՞նչ տեղ էին զբաղեցնում հայերը Ռուսաստանյան կայսրությունում:

Քննարկման հարց

Ինչու՞ են բազմազգ կայսրությունները փլուզվում:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Բազմազգ պետություն, Հաբսբուրգների հարստություն, երկմիասնական կայսրություն, Ավստրո–Հունգարիա, Ռուսաստանյան կայսրություն, «ժողովուրդների բանտ», Կովկասի փոխարքայություն:

22 ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Օսմանյան կայսրության բարեփոխումների ձախողումը

Օսմանյան տերությունում իրականացվող արևմտամետ բարենորոգումները, ինչպես ասվել է, ստացան **թանզիմաթ** անվանումը: Այդ բարենորոգումները, որ սկսվել էին իրականացվել 1839 թ., ի վիճակի չեղան հաղթահարելու երկրի հետամնացությունը: Չհաջողվեց նաև թուլացնել հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային–ազատագրական շարժումները:

Ռուսաստանը 1853 թ. պատերազմ սկսեց Օսմանյան կայսրության դեմ: Անգլիան ու Ֆրանսիան աջակցեցին Օսմանյան կայսրությանը: Սկիզբ առած **Ղրիմի պատերազմը** ավարտվեց 1856 թ. Ռուսաստանի պարտությամբ: Արդյունքում՝ Օսմանյան կայսրությունում ուժեղացավ Անգլիայի ու Ֆրանսիայի ազդեցությունը:

Դժգոհությունը համակել էր նաև իշխող թուրքական տարրին, ինչի արդյունքում առաջացավ **«նոր օսմանցիներ»** ընդդիմադիր շարժումը: Ըստ նրանց ծրագրի՝ կայսրության տարածքային ամբողջականության պահպանման միակ միջոցը սուլթանի իշխանության սահմանափակումն էր և սահմանադրության հռչակումը:

1876 թ. Օսմանյան կայսրության ճգնաժամը սուր բնույթ ընդունեց: Նոր գահ բարձրացած **Աբդուլ Համիդ II–ը** իր հրովարտակով ազդարարեց սահմանադրության ընդունումը: Սա թանզիմաթի շրջանի (1839–1876) վերջին բարենորոգումն էր:

Ընտրվեց օսմանյան խորհրդարան: Սակայն Աբդուլ Համիդը 1878 թ. ցրեց խորհրդարանը և հաստատեց իր միանձնյա կառավարման բռնատիրական համակարգը: Կասկածամիտ և վախկոտ սուլթանը ստեղծեց հզոր գաղտնի ոստիկանական ծառայություն և հաստատեց խիստ գրաքննություն:

ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II
(1842–1918)



Օսմանյան տերությունը
1914 թ.

Նրա գործունեությունը շատ դեպքերում վերածվում էր զավեշտի: Այսպես, օրինակ՝ արգելված էր օգտագործել H2O բանաձևը, քանի որ այն կարող էր հասկացվել որպես «Համիդ II–ը հավասար է զրոյի»: Պատահական չէ, որ ժամանակակիցներն Աբդուլ Համիդ II–ի կառավարման շրջանը բնութագրում էին որպես «զուլյում», ինչը կարելի է թարգմանել որպես զանգվածային ահաբեկում և կոտորած: Իսկ նրան անվանում էին «արյունարբու» կամ «կարմիր սուլթան»:

Սուլթանը, վերջ դնելով արևմտամետ բարենորոգումների քաղաքականությանը, որդեգրեց **համաիսլամականության** (պանիսլամիզմ) քաղաքականությունը: Դրա նպատակն էր համախմբել աշխարհի մուսուլման ժողովուրդներին Օսմանյան կայսրության ղեկավարության ներքո:

Աբդուլ Համիդ II–ի կառավարման շրջանում ավելի ակնառու դարձավ կայսրության հետամնացությունը, ուժեղացավ նրա կախվածությունն արտասահմանյան կապիտալից:

XIX դարի 70–ական թթ., արդեն գիտեք, միջազգային բնույթ ձեռք բերեց Հայկական հարցը: Աբդուլ Համիդը հայ ժողովրդի ազգային–ազատագրական շարժումը

Երիտթուրքերի հանրահավաք Ստամբուլում

կասեցնելու նպատակով ստեղծեց քրդերից կազմված «համիդիե» հրոսակախմբերը: Վերջիններս, ահ ու սարսափ տարածելով հայ խաղաղ բնակչության շրջանում, ստիպում էին նրանց արտագաղթել հայրենի հողերից:

Սակայն դա դեռ բոլորը չէր: 1894–1896 թթ. թուրքական իշխանություններն սկսեցին հայ ժողովրդի ցեղասպանական ծրագրի իրագործումը: Նրանց նպատակն էր հայերին ֆիզիկապես ոչնչացնել իրենց պատմական հայրենիքում և այդպես «լուծել» Հայկական հարցը: Զանգվածային կոտորածներին զոհ գնացին շուրջ 300 հազար հայեր:

Երիտթուրքական շարժումը, 1908 թ. պետական հեղաշրջումը

Աբդուլ Համիդ II–ի բռնատիրական քաղաքականությունը դժգոհություն էր առաջացրել նաև թուրքական միջավայրում: **1889 թ.** ստեղծվեց գաղտնի կազմակերպություն՝ **«Միություն և առաջադիմություն»**: Դրա նպատակն էր գահընկեց անել սուլթանին և վերականգնել սահմանադրությունը: Այդ կազմակերպությունը վերածվեց նույնանուն կուսակցության, որի անդամներն իրենց անվանում էին **երիտասարդ թուրքեր**:

Երիտթուրքերը **1908 թ. հուլիսին** կատարեցին հեղաշրջում և ստիպեցին սուլթանին հռչակել սահմանադրության վերականգնումը: Օսմանյան կայսրությունն իրավական առումով դարձավ **սահմանադրական միա-**

Երիտթուրքերի գաղտնի խորհրդակցություններից մեկում դոկտոր Նազըմի ելույթից

...Ես ձեր ընկերը, զինակիցը և եղբայրն եմ դարձել, որ վերածնենք թրքությունը: Ուզում եմ, որ այս հողի վրա ապրի ու լիակատար տեր ու տնօրեն լինի թուրքը և միայն թուրքը: Թող անհետանան բոլոր ոչ թուրք տարրերը, ինչ ազգության և կրոնի էլ որ նրանք պատկանեն: Մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից: Կրոնն ինձ համար իմաստ և նշանակություն չունի: Իմ կրոնը Թուրանն է:

պետություն: Հաղթելով խորհրդարանական ընտրություններում՝ երիտթուրքերը եկան իշխանության: Սկզբում նրանք Աբդուլ Համիդ II–ին թողեցին գահի վրա, սակայն երբ մեկ տարի անց վերջինս փորձեց կազմակերպել հեղաշրջում, գահընկեց արին:

Չկարողանալով լուծում տալ հասարակական բազմաթիվ խնդիրներին՝ երիտթուրքերը 1911 թ. սկսած պաշտոնական գաղափարախոսություն հռչակեցին **պանթուրքիզմը:** Ազգայնամոլական այդ ուսմունքը քարոզում էր կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացման անհրաժեշտությունը: Արտաքին քաղաքականության ոլորտում պանթուրքիզմը որպես գլխավոր նպատակ էր հռչակում աշխարհի թյուրքալեզու ժողովուրդների միասնական պետության ստեղծումը Օսմանյան Թուրքիայի ղեկավարության ներքո:

Երիտթուրքերի կառավարման տարիներին, սակայն, ազգային–ազատագրական շարժումն ներառեց նաև մուսուլման ժողովուրդներին՝ ալբանացիներին և արաբներին: Շարունակվեցին նաև ռազմական պարտությունները և տարածքային կորուստները: Մասնավորապես թուրք–իտալական և երկու Բալկանյան պատերազմներն ակնառու դարձրին Օսմանյան կայսրության սնանկությունը:

1905–1911 թթ. հեղափոխությունն Իրանում

Իրանի տնտեսական, քաղաքական և ռազմական թուլությունը մեծ հնարավորություններ ստեղծեց ժամանակի հզոր տերությունների, հատկապես Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի համար: Նրանք կարողացան «խաղաղ» մուտք գործել այդ երկիր և հաստատել այստեղ իրենց հսկողությունը:

Անգլիացիներն ստեղծեցին **Անգլո–պարսկական նավթային ընկերությունը** և իրենց վերահսկողության տակ վերցրին իրանական նավթը:

Օտար պետությունների գաղութային քաղաքականությունը խոչընդոտում էր բնական հարստություններով առատ երկրի սոցիալ–տնտեսական զարգացումը: Ամենուրեք տիրում էր աղքատություն, չքավորություն, սով, կաշառակերություն:

ՄԱԼՔՈՄ ԽԱՆ
(ՀՈՎՍԵՓ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ)
(1833–1908)

Իրանի նշանավոր պետական գործիչ, լուսավորական, հրապարակախոս և գրող: Ծնվել է Նոր Ջուղայում: Սովորել է Թեհրանում և Փարիզում, ստացել իրավաբանի մասնագիտություն: Եղել է հմուտ դիվանագետ, Իրանի դեսպանը Կ. Պոլսում, Փարիզում և Լոնդոնում: Բեռլինի վեհաժողովում Իրանի շահերը պաշտպանելու համար շահը նրան շնորհել է «Մեծ դեսպանի» և իշխանի տիտղոսներ: Լոնդոնում հրատարակել է «Կանուն» պարբերականը, որը մեծ դեր է խաղացել Իրանում ազգային գաղափարների տարածման գործում: Տաղանդավոր գրող էր: Գրել է ժողովրդին մատչելի պարսկերենով: Նրա նպատակն էր Իրանը դուրս բերել հետամնացությունից և դարձնել հզոր երկիր:

Իրանի առաջադեմ մտավորական շրջանակները գիտակցում էին իրենց հայրենիքի անմխիթար վիճակը և փորձում էին գտնել դրանից դուրս գալու ուղիներ: Նրանք հակվեցին դեպի արևմտամետ բարենորոգումները:

XIX դ. երկրորդ կեսի բարենորոգիչների կարկառուն ներկայացուցիչներից էր հայազգի **Մալքում (Մելքոն) խանը** (Հովսեփ Մելքումյան): Նա հանդես էր գալիս հասարակությունն արդիականացնելու և սահմանադրություն հռչակելու օգտին:

1905 թ. Թեհրանում իշխանությունների դեմ տարերայնորեն ծագեցին զանգվածային ընդվզումներ: Դրանց մասնակիցները պահանջեցին հռչակել սահմանադրություն ու գումարել մեջլիս (խորհրդարան): Այսպես սկսվեց իրանական հեղափոխությունը: Շահը ստիպված էր զիջումների գնալ: Շուտով հրապարակվեց նրա հրովարտակը՝ սահմանադրություն ընդունելու և մեջլիս հիմնադրելու վերաբերյալ:

Սակայն երկրի հետադիմական ուժերը շահ **Մոհամմադ Ալիի** գլխավորությամբ անցան հակահարձակման: Նրանց օգնեցին նաև օտարերկրյա պետությունները: Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան, օգտվելով հեղափոխական իրավիճակից, ամրապնդեցին իրենց դիրքերն Իրանում նաև ռազմական ներկայությամբ: 1907 թ. կնքված ռուս–անգլիական համաձայնագրով երկրի հյուսիսում տեղակայվեցին ռուսական, իսկ հարավում՝ անգլիական զորքեր:

Երկրում սուր պայքար ծավալվեց սահմանադրականների և շահի կողմնակիցների միջև: Ռուս կազակների գումարտակը ձերբակալեց մեջլիսի անդամներին:

Իրանի սահմանադրական ուժերին աջակցում էին նաև Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչները: Առավել աչքի ընկավ հայազգի տաղանդավոր զորավար **Եփրեմ խանը**: Ստանալով ժողովրդի աջակցությունը՝ հեղափոխական ուժերին հաջողվեց վերականգնել սահմանադրական կարգերը:

Սակայն Ռուսաստանը, 1911 թ. գրավելով հյուսիսային Իրանը, պարտադրեց առաջադեմ ուժերին հեռանալ իշխանությունից և հանձնել այն շահի կողմնակիցներին:

Այդպիսով՝ սահմանադրական շարժումը պարտություն կրեց:

Այնուհանդերձ՝ հեղափոխությունը նպաստեց երկրի ազգաբնակչության քաղաքական և ազգային գիտակցության վերելքին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է տեղի ունեցել Ղրիմի պատերազմը, ի՞նչ հետևանք ունեցավ այն Օսմանյան կայսրության համար:
2. Ովքե՞ր էին «նոր օսմանները» և ի՞նչ նպատակ ունեին: Ո՞րն էր թանզիմաթի շրջանի վերջին բարենորոգումը:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ձախողվեց Օսմանյան կայսրության բարեփոխման քաղաքականությունը:
4. Բնութագրե՛ք սուլթան Աբդուլ Համիդին:
5. Ովքե՞ր էին երիտթուրքերը, ի՞նչպես էր կոչվում և ե՞րբ էր հիմնադրվել նրանց կուսակցությունը:
6. Երիտթուրքերը ե՞րբ իրականացրեցին պետական հեղաշրջում: Ինչո՞ւ նրանք որդեգրեցին ազգայնամոլական քաղաքականություն:
7. Բացատրե՛ք «պանիսլամիզմ», «զուլյում» և «պանթյուրքիզմ» հասկացությունները:
8. Ո՞ր երկրները հաստատեցին իրենց ազդեցությունը Իրանում: Ի՞նչ հետևանքներ ունեցավ դա Իրանի համար:
9. Ո՞վ էր Մալքոմ խանը: Ի՞նչ բարենորոգումներ էին ձգտում իրականացնել Իրանի առաջադեմ ուժերը:
10. Ներկայացրե՛ք 1905–1911 թթ. իրանական հեղափոխության ընթացքն ու նշանակությունը:

Քննարկման հարց

Ինչո՞ւ Աբդուլ Համիդը սկսեց իրականացնել հայերի ցեղասպանության քաղաքականություն:

Նոր հասկացություններ, անուններ

«Նոր օսմաններ», երիտթուրքեր, «Միություն և առաջադիմություն», պանիսլամիզմ, «զուլյում», պանթյուրքիզմ, Անգլո–պարսկական նավթային ընկերություն, 1905–1911 թթ. իրանական հեղափոխություն, մեջլիս, Աբդուլ Համիդ II, Մալքոմ խան, Մոհամմադ Ալի, Եփրեմ խան:

23 ՃԱՊՈՆԻԱՅԻ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Արևելքի առաջին արդիականացած երկիրը

Արդեն գիտեք. ըր միջնադարի ավարտին Ճապոնիան նույնպես ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից և դարձավ «փակ պետություն»: XVIII դ. վերջերից ճապոնական ծովափերի մոտ սկսեցին հաճախակի երևալ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, ԱՄՆ–ի և Ֆրանսիայի նավերը: Երկրում իշխող Տոկուգավա սյոգունները ամեն կերպ խոչընդոտում էին նրանց մուտքը երկիր, սակայն օտարերկրյա ճնշմանը երկար դիմանալ չէին կարող:

ԱՄՆ–ը պատերազմի սպառնալիքով Ճապոնիային հարկադրեց **1854 թ.** պայմանագիր կնքել, որով ամերիկացիներին տրվեցին առևտրային արտոնություններ և բացվեցին երկու նավահանգիստներ: Շուտով անիրավահավասար պայմանագրեր կնքվեցին նաև ռուսների, անգլիացիների և ֆրանսիացիների հետ: Ճապոնիան զրկվեց որոշակի ինքնուրույնությունից:

Ճապոնիայում գնալով աճում էր բնակչության տարբեր խավերի դժգոհությունը Տոկուգավաների իշխանությունից: Նրանք, ինչպես գիտեք, 1603 թ. սկսած կայսեր անունից կառավարում էին երկիրը: Ընդդիմադիր շարժումը հանգեցրեց **1867–1868 թթ. հեղափոխությանը**: Տոկուգավաների իշխանությունը տապալվեց: Երկրի կառավարումը վերադարձվեց կայսերական ընտանիքին, և 15–ամյա **Մուցուխիտոն** հռչակվեց կայսր: Նա ստացավ **Մեյձի** (նշանակում է՝ Լուսավորյալ կառավարիչ) անունը: **Տոկիոն** դարձավ մայրաքաղաք:

Ճապոնիան կտրուկ շրջադարձ կատարեց իր զարգացման մեջ՝ հիմքում դնելով քաղաքական, տնտեսական, դատական և ռազմական ոլորտներում արևմտաեվրոպական նվաճումները:

Ճապոնիան **1889 թ.** ընդունված հիմնական օրենքով դարձավ **սահմանադրական միապետություն**: Կայսրը, ըստ Սահմանադրության, համարվում էր սրբազան և

անձեռնմխելի: Նա ավելի մեծ իրավունքներ ուներ, քան երկատյան խորհրդարանը: Կայսրն էր հրավիրում և արձակում խորհրդարանը, պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում և այլն: Իսկ Ճապոնական ազգային կրոն **սինտոյականության** ուսմունքի համաձայն՝ կայսրն իր իշխանությունը ստացել է արևի աստծուց: Ուստի բոլորը, որպես հայրենասիրության գերագույն դրսևորում, պետք է նվիրված լինեին կայսրին: Ճապոնացիները համոզված էին, որ իրենք, որպես ազգ, ունեն կայսեր շուրջ Ասիայի ժողովուրդներին Արևմուտքի դեմ համախմբելու առաքելություն:

Սահմանադրությունը, չնայած իր պահպանողական բնույթին, նպաստեց հասարակական կյանքի աշխուժացմանը: Քաղաքացիներն ստացան ժողովրդավարական ազատություններ: Առաջացան կուսակցություններ, արհմիություններ և բազմազան հասարակական կազմակերպություններ:

XIX դ. վերջերին և XX դ. սկզբին, իրականացված բարեփոխումների շնորհիվ, Ճապոնիան **թռիչքաձև զարգացում** ապրեց: Երկրի տնտեսությունը և հասարակական–քաղաքական կյանքը արդիականացվեցին: Ճապոնիան տնտեսապես միավորվեց, ստեղծվեց միասնական ազգային շուկա: Առաջացան մենատիրություններ, դրամատներ, ճապոնական ապրանքներն սկսեցին արտահանվել տարբեր երկրներ: Ճապոնիան սկսեց արտաքին շուկաներում հաջողությամբ մրցակցել արևմտաեվրոպական զարգացած երկրների հետ: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Ճապոնիան նույնիսկ իր **զարգաց-**

Լուսանկարում՝ ռուսական «Վարյագ» հածանավի անհավասար մարտը ճապոնական հզոր նավախմբի հետ 1904~1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմի ժամանակ:
Տեսնելով, որ պարտվում են, ռուս ծովայինները նախընտրեցին խորտակել սեփական ռազմանավը, բայց անձնատուր չլինել:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄԻՑՈՒԻ ՄԵՆԱՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեռնարկությունն առաջացել է դեռևս XVI դարում: Հետագայում այն ծաղկում է ապրել վաշխառության շնորհիվ: XVIII դարում մենատիրությունն ուներ բազում հանրախանութներ: Դրանցում սահմանվել էր այսպիսի կարգ. անձրևի ժամանակ խանութ մտած գնորդը կամ պատահական այցելուն անվճար ստանում էր անձրևանոց:
Ուշադրություն էր դարձվում գովազդին: Նույնիսկ կազմակերպվում էին թատերական ներկայացումներ՝ սեփական արտադրանքը գովազդելու համար: XIX դարի վերջին և XX դարի սկզբին այն վերածվեց հզոր մենատիրական միավորման: Մի ճանապարհորդ վկայում է. «Դուք կարող եք Ճապոնիա գալ Միցուին պատկանող շոգենավով, որն աշխատում է նրա հանքերից ստացված քարածխով: Նավահանգիստ մտնել, որը սարքավորել է Միցուին, նրա կառուցած հյուրանոցը հասնել Միցուիին պատկանող տրամվայով: Հյուրանոցում պառկել Միցուիի պատրաստած մահճակալին, կարդալ նրա հրատարակած գիրքը լամպի լույսի տակ, որն արտադրվել է Միցուիին պատկանող գործարանում»:

ման արագությամբ առաջ էր անցել ԱՄՆ–ից և Գերմանիայից:

Ճապոնիայում ձևավորվեց արդյունաբերական հասարակություն: Զարգացան երկաթուղային և հեռագրային հաղորդակցությունը, մեքենաշինությունը, փոստային ծառայությունը և այլն: Պետությունը հովանավորում էր տեղական ձեռներեցներին: Ստեղծվեց ազգային տարադրամը՝ ճապոնական իենը:

Փոխվեց հասարակության սոցիալական կառուցվածքը, հաստատվեց դասային հավասարություն: Մարդկանց կենսամակարդակի կտրուկ բարձրացման արդյունքում բնակչության թիվը գրեթե կրկնապատկվեց՝ հասնելով ավելի քան 72 միլիոնի: Կազմավորվեցին դարաշրջանին բնորոշ խոշոր քաղաքներ՝ Տոկիո, Օսակա և այլն: Եվրոպականի օրինակով զարգացավ կրթական համակարգը: Ճապոնացի հազարավոր երիտասարդներ կրթություն էին ստանում նաև արևմտյան առաջավոր համալսարաններում:

Միջազգային ասպարեզում Ճապոնիան հասավ լուրջ հաջողությունների: Մինչև XX դարի սկիզբը երկիրն ազատվեց նախկինում կնքված 15 անիրավահավասար պայմանագրերից: Ստեղծելով մարտունակ բանակ՝ Ճապոնիան վարեց **ծավալապաշտական քաղաքականություն**: Գլխավոր թիրախներն էին Կորեան և Չինաստանը: Հատկապես տպավորիչ էին հաղթանակները 1894–1895 թթ. չին–ճապոնական և 1904–1905 թթ. ռուս–ճապոնական պատերազմներում: Արտաքին նվաճումների արդյունքում պետության տարածքը կրկնապատկվեց:

Այդպես՝ Ճապոնիան դարձավ նաև գաղութային տերություն:

Չինաստան. պայքար արդիականացման համար

Չինաստանը, ինչպես ասվել է, XIX դ. կեսերին դուրս եկավ ինքնամեկուսացման վիճակից: Արևմուտքի զարգացած երկրների հետ տարաբնույթ կապերի հաստատումը հնարավորություն տվեց հաղորդակցվելու արդյունաբերական հասարակության նվաճումների հետ: Աստիճանաբար Չինաստանը բռնեց արդիականացման ուղին:

Ժամանակի հզոր տերությունները իրենց գաղութային ներթափանցումը դյուրացնելու նպատակով մղեցին բազմաթիվ պատերազմներ, որոնցում Չինաստանը գրեթե միշտ պարտվում էր: Կնքվում էին անիրավահավասար պայմանագրեր, որոնցով նրանք Չինաստանում բազմաթիվ արտոնություններ էին ստանում: Օտարերկրյա բանկերը փոխառություններ էին տրամադրում պետությանը, վերահսկում նրա եկամուտները, ձեռք բերում երկաթուղիներ, գործարաններ կառուցելու և հանքերը շահագործելու իրավունքներ:

Ճիշտ է, Չինաստանի տարածքը ռազմական առումով չնվաճվեց, սակայն բաժանվեց **ազդեցության գոտիների** Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ–ի, Գերմանիայի և Ճապոնիայի միջև:

ՍՈՒՆ ՅԱԹ ՍԵՆ
(1866–1925)

Չին նշանավոր հեղափոխական: Պայքարել է Ցին արքայատոհմի տապալման և ժողովրդավարական հանրապետության հաստատման համար: Ստեղծել է «Չինաստանի վերածնության ընկերությունը»: Եղել է 1911–1912 թթ. հեղափոխության ղեկավարներից մեկը: Սահմանել է Չինաստանի նորացման երեք սկզբունքները.
ա) ազգայնականություն, որը մեկնաբանում էր որպես օտար տիրապետության վերացում, ազգային վարչակարգի հաստատում,
բ) ժողովրդապետություն, որը հասկացվում էր որպես միապետության տապալում, ժողովրդավարական հանրապետության ստեղծում,
գ) ժողովրդական բարեկեցություն, որը նշանակում էր օտար կապիտալի ազգայնացում, հողի նկատմամբ համազգային սեփականության հաստատում՝ այն մշակողներին հանձնելու համար:

Ձերբակալված ապստամբ չին «բռնցքամարտիկները»

Ռազմական անհաջողությունները Չինաստանի իշխող վերնախավում առաջացրին համոզում, որ եվրոպացիները ռազմական ասպարեզում ուժեղ են: Ուստի որոշվեց հրաժարվել մեկուսացումից և յուրացնել արևմտյան պետությունների տնտեսական և ռազմատեխնիկական փորձը:

Չինական ավանդական հասարակության բարեփոխման հիմնավորմամբ հանդես եկավ առաջադեմ գործիչ **Կան Յուվեյը**: Նրա գաղափարների հիման վրա ձևակերպվեցին հետևյալ կարևոր նպատակները՝ կրթական նոր համակարգի ստեղծում, ազգային արդյունաբերության և առևտրի զարգացում, գյուղատնտեսության արդիականացում, բանակի բարեփոխում, պետական ապարատի մաքրում: Սակայն **1898 թ.** ամռանը սկսված արմատական բարեփոխումների շրջանը տևեց ընդամենը 100 օր: Հին կարգերի կողմնակիցները պետական հեղաշրջում կատարեցին և չեղյալ համարեցին բարեփոխումները:

Չին ժողովրդը բազմիցս ոտքի ելավ պաշտպանելու իր հայրենիքը և ազգային ավանդույթները: **1898–1901 թթ.** տեղի ունեցավ հուժկու ելույթ, որն ուղղված էր ոչ միայն օտարերկրյա ներթափանցման, այլ նաև ներքին բարեփոխումների դեմ: Այն հայտնի է **Բռնցքամարտիկների** կամ **Իխետուան ապստամբություն** անունով (**իխետուան** նշանակում է՝ արդարության և խաղաղության ջոկատներ): Սակայն ժամանակի ութ հզոր տերությունները միացյալ ուժերով դաժանորեն ճնշեցին ապստամբությունը:

Այսպես՝ XIX դ. վերջերին և XX դ. սկզբին Չինաստանը վերածվեց մեծ տերությունների կիսագաղութի: Չնայած դրան՝ երկրում ձևավորվեց տեղական ձեռներեցների խավը, առաջացավ արդյունաբերական տնտեսություն:

Երկրի արդիականացման գլխավոր խոչընդոտը շարունակում էր մնալ ավատատիրական միապետությունը և հին ազնվականությունը: Ահա թե ինչու նրանց դեմ սկսվեց հեղափոխական պայքար: Գլխավոր նպատակն էր իրականացնել հասարակության ամբողջական արմատական նորացում: Այդ պայքարը գլխավորում էր **Սուն Յաթսենը**:

Չինաստանում **1911–1912 թթ.** տեղի ունեցավ **հեղափոխություն:** Ցին արքայատոհմը տապալվեց և հռչակվեց

Չինական հանրապետությունը: Սակայն ժողովրդավարության և ազգային ինքնիշխանության հաստատման համար չին ժողովրդի պայքարը շարունակվեց նաև պատմության հաջորդ՝ նորագույն շրջանում:

Հարցեր և առաջադրանք

1. Ինչո՞ւ Ճապոնիային չհաջողվեց պահպանել «փակ պետության» կարգը:
2. Ճապոնիայում ե՞րբ սկսեց հեղափոխությունը, ի՞նչ նշանակություն ունեցավ այն: Ո՞վ դարձավ կայսր, ի՞նչ անունով է հայտնի:
3. Ընդհանուր կողմերով ներկայացրե՛ք XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Ճապոնիայի արդիականացման գլխավոր արդյունքները:
4. Ճապոնիայում ե՞րբ է ընդունվել սահմանադրություն: Ինչպիսի՞ պետություն դարձավ նա ըստ Սահմանադրության: Ինչպե՞ս էին վերաբերվում ճապոնացիները կայսրին:
5. Թվարկե՛ք արտաքին քաղաքականության բնագավառում Ճապոնիայի ունեցած հաջողությունները: Կարո՞ղ եք նշել դրանց պատճառները:
6. Ի՞նչպես Չինաստանը բաժանվեց ազդեցության գոտիների տերությունների միջև: Ի՞նչ արտոնություններ ստացան մեծ տերությունները Չինաստանում:
7. Ո՞վ էր Կան Յուվեյը: Նրա գաղափարների հիման վրա ի՞նչ բարեփոխումներ ձևակերպվեցին հասարակության արդիականացման նպատակով: Ե՞րբ է ընթացել և ինչո՞ւ չեղյալ համարվել արմատական բարեփոխումների 100 օրը:
8. Արևմտականացման և օտարերկրյա ազդեցության դեմ ուղղված ե՞րբ և ի՞նչ ապստամբություն տեղի ունեցավ: Ինչո՞վ այն ավարտվեց:
9. Ո՞վ էր Սուն Յաթսենը: Ներկայացրե՛ք 1911–1912 թթ. չինական հեղափոխության գլխավոր արդյունքները:

Գործնական աշխատանք

Համեմատե՛ք Ճապոնիայի և Չինաստանի XIX դ. վերջի և XX դ. սկզբի զարգացման արդյունքները՝ կատարելով «Տրամագիր» վարժությունը:

Նոր հասկացություններ, անուններ

«Փակ պետություն», 1854 թ. ամերիկա–ճապոնական պայմանագիր, 1867–1868 թթ. հեղափոխությունը Ճապոնիայում, Մուցուխիտո կայսր, Մեյձի (Լուսավորյալ կառավարիչ), թռիչքաձև զարգացում, ազդեցության գոտիներ, Կան Յուվեյ, «արմատական բարեփոխումների 100 օր», Բռնցքամարտիկների կամ Իխետուան ապստամբություն, Սուն Յաթսեն, 1911–1912 թթ. չինական հեղափոխություն, Չինական հանրապետություն:

24 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XIX դարի վերջ–XX դարի սկիզբ)

Աշխարհի գաղութային բաժանման ավարտը

Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում ավարտվում է աշխարհի գաղութային բաժանումը խոշոր տերությունների միջև: Արդյունաբերական երկրներն իրենց տնտեսությունը զարգացնելու համար հումքի աղբյուրների և սպառման շուկաների կարիք ունեին: Բացի այդ՝ **մայր երկրում (մետրոպոլիա)** կուտակվում էր մեծ կապիտալ, որի մի մասը ներդրվում էր հետամնաց և գաղութային երկրներում: Հենց այս պատճառներով է բացատրվում զարգացած տերությունների ձգտումը ձեռք բերելու նորանոր գաղութներ:



Աֆրիկայի գաղութացման քարտեզ

ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Գաղութային նվաճումներից հետո աֆրիկյան ժողովուրդների տնտեսական վիճակը կտրուկ վատանում է: Գաղութները դառնում են մայր երկրի հումքային կցորդ: Գաղութարարները տեղացիներին հարկադիր աշխատեցնում են հանքերում, ստիպում մայր երկրի համար արտադրել գյուղատնտեսական հումք (բամբակ, սուրճ, թեյ, մեխակ և այլն): Աֆրիկացին պարտավոր է իր հողը վարձակալության իրավունքով զիջել եվրոպացուն, եթե պարզվի, որ դրանում հանքավայր կա: Առանձին տեղերում գաղութարարները հողը բռնագրավում են առանց փոխհատուցման: Բնիկներին տարվա ընթացքում հարկադիր աշխատանքի են քշում՝ ճանապարհներ, կամուրջներ, պահեստներ և նավահանգիստներ կառուցելու համար: Շատ մասնավոր ընկերություններ ստեղծում են սեփական զինված ջոկատները, որոնք իրենց պայմաններն են թելադրում աֆրիկացի գյուղացիներին: Անհնազանդության դեպքում հրդեհում են գյուղեր, գնդակահարում կամ պատանդ վերցնում մարդկանց:

XX դ. սկզբին գաղութները և կիսագաղութները կազմում էին երկրագնդի բնակելի տարածքի 2/3-ը և բնակչության կեսից ավելին: Գաղութացված երկրները հիմնականում գտնվում էին Աֆրիկայում և Ասիայում: Հետաքրքրական է այն փաստը, որ 1876 թ. դրությամբ եվրոպացիները զավթել էին Աֆրիկայի տարածքի ընդամենը 10 %-ը, իսկ դարավերջին նրա գաղութացումն արդեն ավարտվել էր:

Ամենամեծ գաղութային կայսրությունը Մեծ Բրիտանիան էր, որի տիրույթները սփռված էին աշխարհով մեկ: **«Բրիտանական կայսրությունում արևը երբեք մայր չի մտնում»**՝ այս արտահայտությունն ամենադիպուկն է բնութագրում այդ տերության ընդարձակությունը:

Հակասությունների սրումը տերությունների միջև

XIX դ. երկրորդ կեսից միջազգային ասպարեզում սկսեց գերակայել պետությունների սահմանները ընդլայնելու և նոր գաղութներ ձեռք բերելու ձգտումը: Տարածքային ընդարձակումը և հումքի նոր աղբյուրներին ու իրացման շուկաներին տիրանալը սուր մրցակցություն առաջացրին ժամանակի պետությունների միջև: Խոր հակասություններ ծագեցին հատկապես մեծ տերությունների միջև:

Տարածքային զավթումները, գաղութացումը և այլ ազգերին նվաճելը հիմնավորելու համար ստեղծվեցին զանազան տեսություններ: Ուրիշ ազգերին տիրելու և դա իրենց ազգային գերազանցությամբ հիմնավորելու

Անգլիացի գաղութարարը Հնդկաստանում

գաղափարախոսությունը ստացել է **իմպերիալիզմ (կայսերապաշտություն)** անունը: Նման գաղափարախոսություն մշակեցին և զավթողական քաղաքականություն էին վարում ժամանակի **տերությունները՝ Մեծ Բրիտանիան, Գերմանիան, ԱՄՆ–ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Իտալիան, Ավստրո–Հունգարիան և Ճապոնիան**: Անգլիացիները, օրինակ, շեշտում էին իրենց կողմից քաղաքակրթություն տարածելու փաստը, իսկ գաղութներից ստացված ահռելի հարստությունների մասին նախընտրում էին չխոսել:

Խոշոր տերությունների միջև անհաշտ մրցակցություն ծավալվեց հատկապես հումքի հարուստ պաշարներ, ինչպես նաև ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների համար: Նրանց պայքարը սրվեց այն պատճառով, որ հին գաղութատեր երկրների կողքին հայտնվել էին նորերը՝ Գերմանիան, ԱՄՆ–ը, Ճապոնիան և Իտալիան:

Անգլիացի հայտնի գաղութարար Սեսիլ Ռոդսը Մեծ Բրիտանիայի գաղութային քաղաքականության մասին

Փողը և եռանդը պետք է ուղղել գաղտնի ընկերության ստեղծմանը և տարածմանը, որի նպատակը պետք է լինի բրիտանական տիրապետության տարածումն աշխարհում…, բրիտանական հպատակներով բոլոր երկրների գաղութաբնակեցումը…, հատկապես բրիտանական վերաբնակիչներով Աֆրիկա մայրցամաքի ներսի, Սուրբ հողի, Եփրատի հովիտների, Կիպրոս և Կանդիա կղզիների, ողջ Հարավային Ամերիկայի, Խաղաղ օվկիանոսի կղզիների…, Մալայան կղզիների, Չինաստանի և Ճապոնիայի առափնյա գոտիների բնակեցումը, ի վերջո՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների միացումը՝ որպես Բրիտանական տերության մի մաս…

Միջազգային հարաբերությունների կարգավորման նոր ձևերը

XIX դ. վերջին և XX դ. սկզբին աշխարհի բոլոր մասերի միջև ստեղծվեցին տնտեսական զանազան կապեր, ձևավորվեց համաշխարհային շուկան: Բացի տնտեսական գործոններից, միջազգային հարաբերությունների վրա սկսեցին ներազդել նաև տարբեր հասարակական շարժումներ և համաշխարհային կազմակերպություններ:

Դրանցից հատկապես առանձնանում էր խաղաղության կողմնակիցների շարժումը: Նրանց անվանում էին **պացիֆիստներ** (լատիներեն՝ խաղաղարար): Պացիֆիստները համոզված էին, որ խաղաղությունն այլընտրանք չունի, բոլոր հակամարտությունները պետք է լուծել բանակցությունների միջոցով: **1863 թ.** ստեղծվեց **Կարմիր խաչի միջազգային ընկերությունը**: Այն խնդիր ուներ օգնել պատերազմների և բնական աղետների ժամանակ տուժածներին: Կազմակերպությունը գործում է առայսօր:

Ժամանակի պետությունները նույնպես ձգտում էին իրենց հարաբերությունները խաղաղության սկզբունքով կարգավորել: Սակայն փոխհամաձյնությունը և զիջումները չդարձան գերակշռող:

Ավելի հաճախակիացան ռազմական բախումները: Ստեղծվեցին մեծ բանակներ, որոնք սպառազինվեցին նոր և ավերիչ զինատեսակներով: Պատերազմները մարդկային և նյութական մեծ վնասներ էին պատճառում: Անհրաժեշտություն առաջացավ մշակելու խաղաղության և պատերազմի հարցերի կարգավորման միջազգային նորմեր: Այդ նպատակով պետությունները **1889 թ.** և **1907 թ. Հաագայում** գումարեցին երկու համաժողովներ: Ընդունված որոշումներով սահմանվում էին պատերազմելու որոշակի կանոններ: Պատերազմող կողմերը պարտավոր էին մարդասիրաբար վերաբերվել վիրավորներին և գերիներին: Արգելվում էր թունավոր զենքերի օգտագործումը: Որոշվեցին թիկունքի խաղաղ բնակչության իրավունքները և պարտականությունները: Կարգավորվեցին նաև չեզոք երկրների իրավունքները և այլն: Այս որոշումները մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց ուժը:

Ռազմաքաղաքական դաշինքների առաջացումը

XIX դ. երկրորդ կեսից ռազմական բախումներն ու միջազգային ճգնաժամերը հաջորդում էին միմյանց՝ ընդունելով սպառնալի չափեր: Պետությունները արտաքին վտանգից հաջողությամբ պաշտպանվելու նպատակով սկսեցին դաշնակիցներ որոնել: Տեղի էր ունենում

շահերի ճշգրտում: Ի վերջո կատարվեց ուժերի վերադասավորում, որի արդյունքում Եվրոպայում ձևավորվեց երկու հակադիր ռազմաքաղաքական դաշինք:

Առաջինը ստեղծվեց այսպես կոչված **Եռյակ դաշինքը**: Գերմանիայի նախաձեռնությամբ **1879 թ.** փոխօգնության պայմանագիր կնքվեց Ավստրո–Հունգարիայի հետ: Երեք տարի անց դրան միացավ Իտալիան: Այսպես ռազմատենչ երեք երկրները միավորվեցին: Նրանց դաշինքն ուղղված էր Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի դեմ:

Ի պատասխան՝ ստեղծվեց վերջին երեք տերությունների դաշինքը: Նրանք կարողացան հարթել իրենց միջև առկա շահերի լուրջ հակադրությունը: **1893 թ.** Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կնքվեց դաշնագիր: Երկարատև բանակցություններից հետո Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջև **1904 թ.** կնքվեց համաձայնություն, որը հայտնի է **Անտանտ (սրտագին համաձայնություն)** անունով: Շուտով կարգավորվեցին նաև ռուս–անգլիական հարաբերությունները, և **1907 թ.** նրանց միջև կնքվեց պայմանագիր: Այսպես առաջացավ մեծ տերությունների երկրորդ դաշինքը, որը կոչվեց **Եռյակ միություն** կամ **Անտանտ**:

Եռյակ դաշինքի և Անտանտի անդամ երկրները փորձում էին ռազմական ճանապարհով հասնել համաշխարհային գերիշխանության: Իրենց զավթողական նպատակները նրանք քողարկում էին արդարության, ազգերի ինքնորոշման և ինքնապաշտպանության կարգախոսների տակ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ավարտվել աշխարհի գաղութային բաժանումը: Թվարկե՛ք խոշոր գաղութատեր երկրները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Աֆրիկայի գաղութացումն ավելի ուշ ավարտվեց:
2. Որո՞նք էին մեծ տերությունների միջև հակասությունների սրման գլխավոր պատճառները:
3. Ի՞նչ է իմպերիալիզմը: Ո՞ր երկրներն էին վարում իմպերիալիստական քաղաքականություն:
4. Ձեր կարծիքով՝ ի՞նչ ազդեցություն ունեին հասարակական շարժումները միջազգային հարաբերությունների վրա: Ովքե՞ր էին պացիֆիստները: Ե՞րբ է ստեղծվել Կարմիր խաչը:
5. Ի՞նչ կարևոր որոշումներ ընդունեցին Հաագայում կայացած երկու միջազգային համաժողովները:
6. Ե՞րբ և ո՞ր պետությունները ձևավորվեցին երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումները:
7. Ի՞նչ անուններով են հայտնի այդ դաշինքները: Իրականում ի՞նչ նպատակներ էին հետապնդում դրանց անդամ պետությունները:

Քննարկման հարց

Միջազգային հարաբերություններում հնարավո՞ր է ունենալ մշտական դաշնակիցներ:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Պացիֆիստ, Կարմիր խաչի միջազգային ընկերություն, իմպերիալիզմ (կայսերապաշտություն), Հաագայի միջազգային երկու համաժողովներ, Եռյակ դաշինք, Եռյակ միություն (Անտանտ), «Բրիտանական կայսրությունում արևը երբեք մայր չի մտնում»:

25 ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ (1914–1916 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Պատերազմի պատճառները, մասնակիցների նպատակները

Մեծ տերությունների միջև հակասությունները ոչ միայն չլուծվեցին, այլ ավելի խորացան: Ի վերջո, դրանք հանգեցրին համընդհանուր պատերազմի երկու ռազմաքաղաքական դաշինքների միջև: Պատերազմի գլխավոր պատճառներն ըստ բնույթի հետևյալն էին՝ **տարածքային, տնտեսական, ռազմական և գաղափարական**:

Աշխարհի գաղութային բաժանման ավարտից հետո պայքար ծավալվեց տարածքների և ազդեցության ոլորտների **վերաբաժանման** համար: Այդ հարցում հատկապես աչքի էին ընկնում նոր գաղութատեր երկրներ Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան:

Արդյունաբերական զարգացած երկրները ձգտում էին ձեռք բերել առևտրի համար նորանոր շուկաներ, տեր դառնալ հումքի հարուստ պաշարների: Առաջնային նպատակն էր ապահովել **տնտեսական և ֆինանսա-**

Ֆրանց Ֆերդինանդին սպանող՝ ուսանող Գավրիլո Պրինցիպը: Մահափորձից հետո նրա ձերբակալության պահը

կան գերազանցություն իրենց հակառակորդների նկատմամբ:

Խոշոր տերությունները սկսեցին մեծ գումարներ ծախսել իրենց բանակները հզորացնելու համար: Նրանց միջև ծավալվեց սպառազինությունների մրցավազք: Նպատակն էր **ռազմական** առումով նույնպես հասնելու գերազանցության հակառակորդների հանդեպ և պատրաստ լինել պաշտպանելու իերենց պետությունն ու գաղութները:

Տերություններից յուրաքանչյուրը նախօրոք մշակել էր պատերազմի իր նպատակները և ծրագիրը: Այդ երկրներում մեծ տարածում գտավ **ազգայնամոլությունը**, որը քարոզում էր ատելություն ու թշնամանք այլ ազգերի նկատմամբ: Տեղի էր ունենում պատերազմի **գաղափարական** նախապատրաստում:

Այսպես՝ **Գերմանիայի** նպատակն էր հաստատել իր գերիշխանությունը Եվրոպայում: Նա ուզում էր զավթել անգլիական և ֆրանսիական գաղութները, մասնատել Ռուսաստանը: **Ավստրո-Հունգարիան** նպատակ ուներ իր լիակատար ազդեցությունը տարածելու Բալկաններում: **Օսմանյան կայսրության** ծրագիրն էր գրավել Կովկասը, Ղրիմը, Իրանական Ատրպատականը և ծավալվել մինչև Ալթայ: Այսինքն՝ իրագործել իր պանթյուրքական նկրտումները:

Անտանտի երկրներից **Մեծ Բրիտանիայի** հիմնական նպատակն էր պահպանել իր գաղութները և թուլացնել գյխավոր ախոյան Գերմանիային:

Ֆրանսիան հույս ուներ վերադարձնել ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ կորցրած տարածքները, ինչպես նաև զավթել Հռենոսի ձախ ափը և գերմանական գաղութները:

Իր հերթին **Ռուսաստանը** ծրագրել էր իրականացնել իր դարավոր նպատակը՝ գրավել Բոսֆոր ու Դարդանել նեղուցները և դուրս գալ Միջերկրական ծով: Ինչպես նաև՝ գրավել Արևմտյան Հայաստանը և ամուր հաստատվել Մերձավոր Արևելքում: Արդյունքում՝ Օսմանյան կայսրությունը պետք է մասնատվեր:

ԲՈՍՆԻԱՅԻ ՍԱՐԱԵՎՈ ՔԱՂԱՔՈՒՄ ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ՖՐԱՆՑ ՖԵՐԴԻՆԱՆԴԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ 1914 Թ. ՀՈՒԼԻՍԻ 23-ԻՆ ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՎԵՐՋՆԱԳԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԵՐԲԻԱՅԻՆ

1. Սերբական մամուլում արգելել հակաավստրիական քարոզչությունը:
2. Փակել հակաավստրիական բոլոր կազմակերպությունները:
3. Դպրոցական ուսուցման համակարգից հանել հակաավստրիական քարոզները:
4. Հեռացնել բոլոր այն պետական պաշտոնյաներին և սպաներին, որոնք մասնակցել են հակաավստրիական քարոզչությանը:
5. Ապահովել ավստրիական իշխանությունների մասնակցությունը՝ ճնշելու Սերբիայում ծավալվող այն շարժումները, որոնք ուղղված են Ավստրո-Հունգարիայի դեմ:
6. Շուտափույթ քննել և պատժել Ֆրանց Ֆերդինանդի սպանության մեղավորներին:
7. Սերբական կառավարությունը պետք է բացատրություն տա սպանության կապակցությամբ պաշտոնատար որոշ անձանց արած հայտարարությունների առթիվ:
8. Սերբական կառավարությունը պետք է անհապաղ տեղյակ պահի Ավստրո-Հունգարիային նշված բոլոր պահանջների կատարման մասին:

Զավթողական նպատակներ էին հետապնդում նաև պատերազմի մյուս մասնակիցները՝ **Իտալիան, Ճապոնիան, Բուլղարիան** և ուրիշներ:

Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը

Առաջին աշխարհամարտը ծագեց Եվրոպայում: Այն սկսվեց Բալկանյան թերակղզում: Այստեղ բախվում էին երկու հակադիր դաշինքների շահերը, և պատահական չէ, որ Բալկանները պատկերավոր անվանում էին «վառոդի տակառ՝ Եվրոպայի տակ»: Պատերազմի սկսվելու հետ կապված դիպուկ է արտահայտվել ԱՄՆ – ի նախագահ Վ. Վիլսոնը. **«Բոլորը փնտրում և չեն գտնում այն պատճառը, որից սկիզբ առավ պատերազմը: Զուր են նրանց որոնումները, այդ պատճառը նրանք չեն գտնի: Պատերազմն սկսվել է ոչ թե ինչ-որ մեկ պատճառից, պատերազմը սկիզբ է առել բոլոր պատճառներից միաժամանակ»**:

Պատերազմի պատճառները կային, տերությունները նախապատրաստվել էին դրան, մնում էր առիթը այն սկսելու համար: **1914 թ. հունիսի 28-ին** սերբ ազգայնականները Սարաևոյում իրականացրին Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը: Դա էլ հանդիսացավ առիթը: Ավստրո-Հունգարիան ուղիղ մեկ ամիս անց պատերազմ հայտարարեց Սերբի-

ային: Ռուսաստանը հանդես եկավ Սերբիայի պաշտպանությամբ և սկսեց ընդհանուր զորահավաք: Ի պատասխան՝ Գերմանիան **1914 թ. օգոստոսի 1-ին** (հին տոմարով՝ հուլիսի 19-ին) պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Այդ օն էլ ընդունված է անվանել **Առաջին աշխարհամարտի սկիզբը**:

Պատերազմի մեջ մտան նաև Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան: Հետագայում ներքաշվեցին բազմաթիվ պետություններ Ամերիկայից, Ասիայից, որոնք առավելապես միացան Անտանտին: Այսինքն՝ համաեվրոպականից այն վերաճեց համաշխարհային պատերազմի: Այն կոչվում է **Առաջին աշխարհամարտ**, երբեմն՝ Մեծ պատերազմ:

Պատերազմի գլխավոր ճակատները

Առաջին աշխարհամարտը ծավալվեց տարբեր աշխարհամասերում: Ռազմական գործողություններ էին ընթանում մոտ մեկ տասնյակի հասնող ռազմաբեմերում: Սակայն գլխավոր ճակատները երկուսն էին: Առաջինը **Արևմտաեվրոպական (Ֆրանսիական) ճակատն**

Եվրոպան Առաջին աշխարհամարտի տարիներին

Անգլիական բանակը Առաջին աշխարհամարտում

Լուսանկարում՝ նոր զինատեսակ՝ տանկ: Լայնորեն կիրառվում էին նաև գնդացիրներ, հզոր հրանոթներ, սուզանավեր և զենքի այլ տեսակներ: Դրանք բերեցին մարտերում զոհերի թվի աննախադեպ աճի:

էր, որը ձգվում էր ֆրանս-գերմանական սահմանով և Բելգիայով: Երկրորդը՝ **Արևելաեվրոպական (Ռուսական) ճակատն** էր, որն անցնում էր ռուս-գերմանական և ռուս-ավստրիական սահմանների երկայնքով՝ Բալթիկ ծովից մինչև Սև ծով:

Պատերազմի վճռական տեղամասերից էր նաև **Կովկասյան ճակատը**: Պատերազմի սկզբից երեք ամիս անց Օսմանյան կայսրությունը միացավ Եռյակ դաշինքին: Սկսվեց ռուս-թուրքական հերթական բախումը: Ռազմական գործողությունները տեղի էին ունենում գլխավորապես Հայաստանում:

Պատերազմն ընթանում էր նաև Բալկաններում, Միջագետքում, Սիրիայում, Հեռավոր Արևելքում, Աֆրիկայում:

1915 թ. սեպտեմբերի 15-ին Հալեպի նահանգապետարանին հղված Թալեաթ փաշայի ծածկագիր հեռագիրը

Հալեպի նահանգապետարանին
Ձեզ նախապես հաղորդվել էր, որ կառավարությունը որոշել է ընկերության (Միություն և առաջադիմություն կուսակցության) հրամանով ամբողջովին վերացնել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին: Այդ հրամանին և որոշմանը դեմ դուրս եկողները չեն կարող մնալ կայսրության պաշտոններում: Որքան էլ որ անսովոր թվան ձեռնարկված միջոցները, պետք է վերջ տրվի հայերի գոյությանը՝ առանց սեռ ու տարիք հաշվի առնելու: Չպետք է նաև տուրք տալ խղճի խայթերին:

Ներքին գործերի նախարար՝ **Թալեաթ**



Ռազմական գործողությունները 1914-1916 թվականներին

Առաջին աշխարհամարտի ռազմական գործողությունները մղվում էին ցամաքում, ծովում և օդում: Մասնակից տերությունները ծրագրել էին շատ արագ ջախջախել հակառակորդներին ու տոնել հաղթանակ, սակայն նրանց սպասումները չարդարացան: Պատերազմը ձգձգվեց:

Առաջին տարվա իրադարձություններից առանձնանում է Արևմտաեվրոպական ճակատում **1914 թ. սեպտեմբերին** տեղի ունեցած **Մառնի** ճակատամարտը: Ֆրանս-անգլիական զորքերը կանգնեցրին գերմանացիների հարձակումը դեպի Փարիզ և ստիպեցին նահանջել: Երկու կողմերից զոհվեց և վիրավորվեց 600 հազար մարդ: Ֆրանսիայի արագ ջախջախման գերմանական ծրագիրը ձախողվեց, Արևմտյան ճակատում ուժերը հավասարվեցին:

Օգոստոսի կեսին **Ճապոնիան** վերջնագիր ներկայացրեց, իսկ մի քանի օր անց պատերազմ հայտարարեց Գերմանիային: Նա ծրագրել էր զավթել Խաղաղ օվկիանոսի գերմանական տիրույթները և իրեն ենթարկել Չինաստանը:

Կովկասյան ճակատում 1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը Սարիղամիշի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքական բանակը ծանր պարտություն կրեց (վերհիշե՛ք Կովկասյան ճակատի մասին Հայոց պատմության համապատասխան դասը):

Իտալիան 1915 թ. անցավ Անտանտի, իսկ **Բուլղարիան** Գերմանիայի կողմը: Եռյակ դաշինքը այդպիսով վերածվեց **Քառյակ դաշինքի**: Նույն տարում Ավստրո-Հունգարիան և Բուլղարիան պարտության մատնեցին սերբերին, նվաճեցին և ավերեցին Սերբիան:

Ռուսական զորքերը 1915 թ. ծանր վիճակի մեջ էին դրել Ավստրո-Հունգարիային: Սակայն Գերմանիան օգնության հասավ: Այս անգամ նա որոշել էր շարքից հանել Ռուսաստանին, և մեծ ուժեր տեղափոխեց Արևելաեվրոպական ճակատ: Չնայած Ռուսաստանը ծանր կորուստներ ունեցավ, սակայն շարունակեց պատերազ-

Երիտթուրքական իշխանությունը համարեց, որ պատերազմի պայմաններում ստեղծվել է նպաստավոր դրություն նախօրոք մշակած հայաջինջ ծրագիրն իրականացնելու համար: Թուրքական պետության այդ ծանրագույն հանցագործությանը՝ Մեծ եղեռնին, զոհ գնացին 1,5 միլիոն հայեր: Ցեղասպանության ենթարկվեցին նաև Օսմանյան կայսրությունում ապրող հույները, ասորիները: Միայն Երկրորդ աշխարհամարտից հետո (տե՛ս նաև Հայոց պատմության համապատասխան դասը) ընդունվեցին միջազգային օրենքներ, որոնցով ցեղասպանությունը որակվում է որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն:

մը: Իսկ Կովկասյան ճակատում ռուսական բանակը (հայ կամավորների մասնակցությամբ) հաղթանակներ էր տանում:

Պատերազմի երրորդ տարում Արևմտաեվրոպական ճակատում խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ **Վերդենի** մոտ: **1916 թ. փետրվարից մինչև դեկտեմբեր** ընթացած կռիվներում կողմերից ոչ մեկը վճռական հաջողության չհասավ: Այսպես կոչված **«Վերդենյան մսաղացում»** ֆրանս - անգլիական կողմը կորցրեց 750 հազար, իսկ գերմանացիները՝ 450 հազար մարդ: Անգլո-ֆրանսիական զորքերը փորձեցին հակահարձակման անցնել **Սոմ գետի** մոտ: Ճակատամարտը տևեց **հունիսից մինչև նոյեմբեր**, կողմերի կորուստները մեծ էին՝ միասին գերազանցեցին մեկ միլիոնը: Սակայն ուժերի հավասարակշռությունը Ֆրանսիական ճակատում պահպանվեց:

Արևելաեվրոպական ճակատում ռուսական բանակը ջախջախեց Ավստրո-Հունգարիային, որով փրկեց պարտված Իտալիային: Ռուսաստանը կարևոր հաղթանակներ տարավ նաև կովկասյան ճակատում և գրավեց Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը՝ Տրապիզոնից մինչև Բիթլիս:

Այսպիսով՝ ի մի բերելով 1914-1916 թթ. ռազմական գործողությունների արդյունքները, կարող ենք նշել որ Անտանտի երկրների կողմն էր ընդհանուր հաջողությունը: Քառյակ միության երկրները զգալիորեն թուլացան, սակայն դեռ չէին կորցրել վերջնական հաջողության հասնելու հույսը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին համաշխարհային պատերազմի գլխավոր պատճառները: Ներկայացրե՛ք հակադիր խմբավորումների անդամ պետությունների ռազմաքաղաքական նպատակները:
2. Ինչո՞ւ է ասվում, որ անխուսափելի էր դարձել Մեծ պատերազմը:
3. Համաձա՞յն եք պատերազմի սկսվելու վերաբերյալ Վ. Վիլսոնի տեսակետի հետ, ինչո՞ւ: Ո՞ր իրադարձությունը հանդիսացավ Առաջին աշխարհամարտի առիթը:
4. Ե՞րբ սկսվեց պատերազմը: Ինչո՞ւ է այն կոչվում համաշխարհային, էլ ի՞նչ անուններով է հայտնի:
5. Նշե՛ք աշխարհամարտի գլխավոր ճակատները:
6. Թվարկե՛ք 1914-1916 թթ. ռազմական հիմնական իրադարձությունները և դրանց արդյունքները:
7. Հայաստանը ի՞նչ ծանր փորձության ենթարկվեց Առաջին աշխարհամարտի տարիներին:

Գործնական աշխատանք

Լրացրե՛ք Առաջին աշխարհամարտին վերաբերող աղյուսակը:

	Պատճառները, առիթը	Մասնակիցները	Գլխավոր ճակատները	Ռազմական գործողությունները
1914-1916 թթ.				
1917 – 1918 թթ.				

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Առաջին աշխարհամարտ (Մեծ պատերազմ), «վառոդի տակառ՝ Եվրոպայի տակ», Արևմտաեվրոպական (Ֆրանսիական) ճակատ, Արևելաեվրոպական (Ռուսական) ճակատ, Կովկասյան ճակատ, Քառյակ դաշինք, Մառնի, Սարիղամիշի և Սոմի ճակատամարտեր, «Վերդենյան մսաղաց», ցեղասպանություն, Մեծ եղեռն:

26 ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Նոր ռազմաքաղաքական իրավիճակ 1917 թվականին

«»Աշխարհամարտի շարունակումը 1917 թ. առաջացրեց նոր ռազմաքաղաքական իրավիճակ: Նախ՝ ավելացավ պատերազմող երկրների քանակը: ԱՄՆ-ը, Հունաստանը, Չինաստանը և Բրազիլիան միացան Անտանտին և հզորացրին նրա առանց այդ էլ մեծ ներուժը:

Հետաքրքրական է ԱՄՆ – ի դիրքորոշումը պատերազմի ընթացքում: Նա առևտուր էր անում երկու հակամարտող կողմերի հետ, ինչը հսկայական եկամուտներ բերեց: Եվ պատահական չէր, որ աշխարհի ոսկու պաշարի կեսից ավելին հայտնվեց ամերիկյան դրամատներում: Սակայն ԱՄՆ-ը որոշեց միանալ Անտանտին, որովհետև վերջինիս հաղթանակը միայն ժամանակի հարց էր: Պատերազմին մասնակցելով՝ նա նպատակադրվել էր տարածել իր ազդեցությունը Լատինական Ամերիկայում, Խաղաղ օվկիանոսի ավազանում և Հեռավոր Արևելքում:

Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում

Երկու դաշինքների գլխավոր տերությունները պատերազմի պատճառով լուրջ հիմնախնդիրների առջև կանգնեցին: Հատկապես աղետալի էր Քառյակ միության երկրների վիճակը: Ջորքի համալրման հնարավորություն այլևս չկար, տրանսպորտի և վառելիքի խիստ պակաս կար, վրա հասավ սովը: Նրանք հայտնվեցին նաև Անտանտի շրջափակման մեջ:

Դժվարին վիճակում էին նաև Անտանտի երկրները. տնտեսությունը անկում էր ապրում, իսկ ժողովուրդը պահանջում էր շուտափույթ ավարտել պատերազմը: Բոլորը հոգնել էին երկարատև պատերազմից:

Անտանտի հիմնադիր տերություններից հատկապես Ռուսաստանյան կայսրությունը հայտնվեց ծանր իրավիճակում: 1917 թ. սկզբին այստեղ տնտեսության անկումն աղետալի չափերի հասավ, մայրաքաղաքում հացի խիստ պակաս կար: Սկսվեցին հուզումներ, որոնք ընդգրկեցին հասարակության տարբեր խավեր: **Փետրվարի վերջին դրանք վերաճեցին ժողովրդավարական հուժկու հեղափոխության:** Ռոմանովների միապետությունը տապալվեց: Ստեղծվեց գործադիր իշխանության նոր մարմին՝ **Ժամանակավոր կառավարություն**: Այն կառավարելու էր երկիրը մինչև Սահմանադիր ժողովի գումարումը: Հեղափոխության ընթացքում և դրանից հետո ստեղծվեցին նաև իշխանության ընտրովի մարմիններ՝ **բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդներ**: Վերջիններս վերահսկում էին Ժամանակավոր կառավարության գործունեությունը: Շուտով Ռուսաստանը հռչակվեց ժողովրդավարական հանրապետություն:

Ժամանակավոր կառավարությանը չհաջողվեց լուծել երկրի առջև ծառացած հիմնախնդիրները: Նա հեղինակազրկվեց: Օգտվելով դրանից՝ ծայրահեղ մարքսիստների կուսակցությունը (բոլշևիկներ) **1917 թ. հոկտեմբեր 25-ին** (նոր տոմարով՝ նոյեմբերի 7-ին) տապալեց Ժամանակավոր կառավարությանը և վերցրեց իշխանությունը: Նույն օրը հրավիրված Խորհուրդների համառուսաստանյան երկրորդ համագումարը Ռուսաստանը հռչակեց **Խորհրդային հանրապետություն**: Բոլշևիկներն ստեղծեցին նոր կառավարություն՝ **Ժողովրդական կոմիսար-**



ՎԼԱԴԻՄԻՐ ՈՒԼՅԱՆՈՎ
(ԼԵՆԻՆ)
(1870–1924)

Ռուսական մարքսականների ծայրահեղ թևի (բոլշևիկներ) առաջնորդ: Համոզված էր, որ պետք է բռնի ուժով գրավել իշխանությունը և հաստատել ունեզուրկ խավերի բռնատիրությունը: Գլխավոր դերն այդ գործում վերագրում էր բանվոր դասակարգին: Գրել է բազում աշխատություններ այս գաղափարի հաստատման համար: Ստեղծել է կազմակերպված և մարտունակ կուսակցություն: 1905–1907 թթ. հեղափոխության ժամանակ փորձել է իրագործել իր ծրագիրը, բայց պարտվել է: Վտարանդվել է Շվեյցարիա:
1917 թ. հուլիսին բոլշևիկները նորից են փորձել գրավել իշխանությունը: Պարտվել են և հայտարարվել օրենքից դուրս: Հոկտեմբերին կատարեցին պետական հեղաշրջում, կազմեցին կառավարություն՝ Լենինի գլխավորությամբ: Սկսեցին բռնություններ:

Բրեստ–Լիտովսկի բանակցությունները

ների խորհուրդ՝ իրենց առաջնորդ **Վ. Լենինի** գլխավորությամբ: Համագումարն ընդունեց նաև օրենքներ պատերազմից դուրս գալու, հաշտություն կնքելու և հողի մասին: Բոլշևիկները խնդիր էին դրել Ռուսաստանում կառուցել **սոցիալիստական հասարակություն**: Բազմազգ Ռուսաստանում նրանք քայլեր արեցին ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա լուծելու ազգային հարցը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը կտրուկ փոխեց աշխարհաքաղաքական իրավիճակը: Բոլշևիկները ծրագրել էին հրահրել **համաշխարհային հեղափոխություն** և սոցիալիստական կարգեր հաստատել աշխարհի շատ երկրներում, առաջին հերթին պատերազմող պետություններում: Այլապես՝ բոլշևիկները հույս չունեին, թե կարող են երկար պահել իրենց իշխանությունը:

Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությունը

Բոլշևիկների նախատեսած համաշխարհային հեղափոխությունը տեղի չէր ունենում: Այդ պատճառով նրանք դիմեցին պատերազմող կողմերին՝ առաջարկելով կնքել արդարացի հաշտություն առանց բռնազավթումների և ռազմատուգանքների: Դիմումին արձագանքեցին միայն Քառյակ միության երկրները: Արևելաեվրոպական և Կովկասյան ճակատներում հաստատվեց զինադադար:

ՔԱՂՎԱԾՔ ԱՆՏԱՆՏԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ 1918 Թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՄՈՒԴՐՈՍՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԶԻՆԱԴԱԴԱՐԻՑ

ՀՈԴՎԱԾ 1. Բացել Դարդանել ու Բոսֆոր նեղուցները և ազատ մուտքը Սև ծով: Դաշնակիցների կողմից Դարդանել և Բոսֆոր նավահանգիստների ռազմական նվաճում:
ՀՈԴՎԱԾ 4. Դաշնային բոլոր ռազմագերիներին և ներկալված հայերին պետք է հավաքել Կ. Պոլսում, որպեսզի առանց որևէ պայմանի հանձնվեն դաշնակիցներին:
ՀՈԴՎԱԾ 5. Թուրքական բանակի անհապաղ զորացրում, բացի սահմանապահ և ներքին կարգը պահպանող զորքերից:
ՀՈԴՎԱԾ 6. Բոլոր ռազմանավերի հանձնում…
ՀՈԴՎԱԾ 15. Դաշնակիցներն առանձնացնելու են սպաներ, որոնք հսկելու են բոլոր երկաթուղիները, այդ թվում՝ Անդրկովկասի այն երկաթուղիները, որոնք այժմ Թուրքիայի վերահսկողության տակ են գտնվում…
ՀՈԴՎԱԾ 24. Հայկական որևէ վիլայեթում անկարգությունների դեպքում դաշնակիցներն իրավունք ունեն գրավել դա:

Սակայն բոլշևիկների հաշվարկը սխալ դուրս եկավ: Երեք ամիս տևած բանակցություններից հետո նրանք ստիպված էին ստորացուցիչ պայմաններով միայնակ, առանց Անտանտի դաշնակիցների, **առանձին (սեպարատ) պայմանագիր** կնքել Քառյակ միության հետ: **1918 թ. մարտին 3-ին Բրեստ-Լիտովսկում** ստորագրված հաշտության պայմանագրով Ռուսաստանը հրաժարվեց Լեհաստանից, Ուկրաինայից, Բելառուսի մեծ մասից, Մերձբալթիկայից: Բացի այդ՝ վճարելու էր խոշոր ռազմատուգանք:

Գերմանիայի աջակցությամբ պայմանագրում տեղ գտան նաև Թուրքիայի պահանջները: Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր իր զորքերն անհապաղ դուրս բերել Արևմտյան Հայաստանից: Ավելին, նա հանձն էր առնում նաև Թուրքիային վերադարձնել Կարսը, Արդահանը և Բաթումը:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը միաժամանակ փրկեց Քառյակ միության երկրներին: Գերմանիան, որ արդեն կանգնած էր պարտության եզրին, իր ուժերը կենտրոնացրեց Ֆրանսիական ճակատում և **1918 թ. գարնանը** անցավ հարձակման: Գերմանական զորքերը հուլիսին հասան համարյա Փարիզի մատույցները:

Ռազմական գործողությունները վերսկսվեցին նաև Կովկասյան ճակատում: Թուրքական զորքերը գրավեցին Արևմտյան Հայաստանը և մտան Այսրկովկաս ու Արևելյան Հայաստան: Ռուսական բանակին փոխարինած

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
ՄԻ ՀԱՏՎԱԾ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԴԱՏԱՎՃՌԻՑ
Դատը կայացել է 1919 թ.

«Ներկա հետաքննության հիմնախնդիրը հետևյալն է. հայերի տեղահանության ընթացքում տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները... ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրականացվել են վերոհիշյալ անձանցից բաղկացած «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով և գաղտնի հրամաններով»:
«Օրենսգրքում առկա... հոդվածների հիման վրա Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազըմը դատապարտվում են մահվան, իսկ Ջավիդը, Մուստաֆա Շերեֆը, Մուսա Քյազիմը՝ 15-ական տարի ժամկետով աքսորի: Փախուստի մեջ գտնվողներին զրկել քաղաքացիական իրավունքներից, բռնագրավված ունեցվածքի հարցում գործել համաձայն օրենքի»:

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Մնդանդրի ճնշման տակ պարտված Օսմանյան պետությունն սկսեց դատավարություն Հայոց ցեղասպանության կապակցությամբ: Սակայն դատարանը փորձում էր Հայոց ցեղասպանությունը բարդել ոչ թե պետության, այլ կառավարության գլուխ կանգնած անձանց վրա: Փաստաթուղթը վկայում է, որ այն ժամանակ թուրքական պետությունն ընդունել է ցեղասպանության փաստը: Փախուստի մեջ գտնվողների դատավճիռն իրագործեցին հայ վրիժառուները:

հայկական զորքը կարողացավ կանգնեցնել նրանց առաջխաղացումը, տանել կարևոր հաղթանակներ: **1918 թ. հունիսի 4-ին** Բաթումում կնքված հաշտությամբ Կովկասյան ճակատում պատերազմն ավարտվեց (տե՛ս նաև Հայոց պատմության համապատասխան դասը):

Քառյակ միության հաջողությունները ձեռք բերվեցին գերագույն ջանքերի գնով, սակայն նրանց ներուժն այլևս սպառված էր: Անտանտը համալրեց իր ուժերը, միացան նաև ամերիկյան թարմ զորքեր, և **1918 թ. սեպտեմբերին** անցավ հակահարձակման բոլոր ճակատներում: Նախ պարտվեցին և պատերազմից դուրս եկան Գերմանիայի դաշնակիցներ Բուլղարիան, Օսմանյան կայսրությունը և Ավստրո-Հունգարիան: Գերմանիան ի վիճակի չէր շարունակելու պատերազմը: Բացի այդ՝ նոյեմբերի սկզբին երկրում հեղափոխություն սկսվեց, որի արդյունքում միապետությունը տապալվեց:

Գերմանիան ընդունեց իր անվերապահ պարտությունը և **1918 թ. նոյեմբերի 11-ին** ստորագրեց զինադադարի պայմանագիրը: Այսպես ավարտվեց ավելի քան չորս տարի տևած Մեծ պատերազմը:

Առաջին աշխարհամարտի գլխավոր հետևանքները

Մեծ պատերազմն ահռելի կորուստներ պատճառեց մարդկությանը, ծանր հետևանքներ ունեցավ արդյունաբերական հասարակության համար: Մեծ էր մարդկային զոհերի թիվը: Միայն մասնակից երկրների զինված ու-

Հայոց մեծ եղեռնի տարիների վավերագրերից

ժերը տվեցին **մոտ 10 միլիոն սպանված, 20 միլիոնն էլ վիրավորվեց և խեղանդամ դարձավ**: Սովի և համաճարակների զոհ դարձան թիկունքի միլիոնավոր խաղաղ բնակիչներ:

Պատերազմող երկրներն ունեցան նաև հսկայական **նյութական կորուստներ**: Պատերազմական ծախսերը միջին հաշվով կազմեցին մեծ տերությունների ազգային հարստության 1/3-ը: Ավերվեցին բազմաթիվ քաղաքներ, գյուղեր, արդյունաբերական ձեռնարկություններ, երկաթուղիներ, ճանապարհներ, կամուրջներ և այլն:

Չնայած դժվարին իրավիճակին՝ զարգացում ապրեց **ռազմական արդյունաբերությունը**: Կատարելագործվեց պատերազմ վարելու գիտությունը՝ ռազմարվեստը: Մարտական գործողությունների ժամանակ օգտագործվեցին ռազմական տեխնիկայի և զենքի նոր տեսակներ՝ հրասայլեր, կրականետներ, օդանավեր, սուզանավեր և այլն: Կիրառվեց նաև քիմիական զենք: Այս ամենի արդյունքում պատերազմը դարձավ ավելի ավերիչ և մահաբեր:

Պատերազմի գլխավոր հետևանքներից մեկը երիտթուրքերի կողմից իրագործված **ցեղասպանության** միջոցով հայերին իրենց հայրենիքի մեծ մասից զրկելն էր: Պատերազմից հետո **Մեծ եղեռնը** իրավական և քաղաքական գնահատական չստացավ: Ահա թե ինչու հետագայում կատարվեցին ցեղասպանական բազմաթիվ հանցագործություններ:

Առաջին աշխարհամարտն ունեցավ նաև դրական հետևանքներ: Պատմության թատերաբեմից հեռացան **Ավստրոհունգարական, Ռուսաստանյան, Օսմանյան և Գերմանական կայսրությունները**: Չորս նախկին տերությունների տարածքում առաջացան նոր բազմաթիվ ազգային պետություններ՝ Չեխոսլովակիա, Լեհաստան, Ֆինլանդիա, Ուկրաինա, Հայաստան և այլն: Տեղի ունեցան նաև ծողովրդավարական հեղափոխություններ, որոնց արդյունքում տապալվեց կառավարման միապետական ձևը, տարածվեց ժողովրդավարությունը: Իսկ Ռուսաստանում, առաջինը աշխարհում, սկսվեց նոր՝ սոցիալիստական հասարակության կառուցման գործընթացը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ընդհանուր կողմերով ներկայացրե՛ք ռազմաքաղաքական իրավիճակը 1917 թվականին: Ձեր կարծիքով՝ ինչու՞ ԱՄՆ-ը միացավ Անտանտին:
2. Ե՞րբ է տապալվել միապետությունը Ռուսաստանում, ո՞ւմ անցավ գործադիր իշխանությունը: Ի՞նչ էին խորհուրդները և ի՞նչ դեր էին խաղում:
3. Ե՞րբ բոլշևիկները եկան իշխանության: Ինչպե՞ս էր կոչվում և ո՞վ գլխավորեց գործադիր իշխանության նոր մարմինը: Ի՞նչ որոշումներ ընդունեց Խորհուրդների համառուսաստանյան երկրորդ համագումարը: Ի՞նչ նպատակներ ունեին բոլշևիկները:
4. Ինչո՞ւ բոլշևիկները համաձայնվեցին առանձին հաշտության պայմանագիր կնքելու Քառյակ միության հետ: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ պայմանագիրը:
5. Ե՞րբ և ի՞նչ իրադարձություններով ավարտվեց Առաջին աշխարհամարտը:
6. Ներկայացրե՛ք Առաջին աշխարհամարտի գլխավոր հետևանքները:

Գործնական աշխատանք

Շարունակե՛ք լրացնել Առաջին աշխարհամարտին վերաբերող աղյուսակը՝ կատարելով ավելացումներ երկրորդ և վերջին սյունակներում:

Նոր հասկացություններ, անուններ

Փետրվարյան հեղափոխություն, Ժամանակավոր կառավարություն, Հոկտեմբերյան հեղափոխություն, խորհուրդներ, Խորհրդային հանրապետություն, համաշխարհային հեղափոխություն, առանձին (սեպարատ) պայմանագիր, Բրեստ-Լիտովսկի պայմանագիր:

27 ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Կրթության և գիտության զարգացման ընդհանուր միտումները

Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում Եվրոպայի և Ամերիկայի երկրներում մշակույթը բարձրացավ որակական նոր մակարդակի: Նրա արդյունքները սկսեցին հասու դառնալ հասարակության լայն խավերին: Դա էր պահանջում արդյունաբերության բուռն զարգացումը: Անհրաժեշտ էին նոր տեխնիկային տիրապետող բանվորներ: Բարձրագույն կրթություն ստացած ճարտարագետները դարձան տնտեսության ղեկավարման հիմնական օղակը:

Ասվածը հնարավոր դարձավ դպրոցական համակարգի կատարելագործման հետևանքով: 1870–ական թթ. զարգացած բոլոր երկրներում **տարրական կրթությունը դարձավ պարտադիր**: Ընդլայնվեց միջնակարգ կրթության համակարգը, որի ծրագրերում մեծ տեղ էին զբաղեցնում բնագիտական առարկաները: Ավանդական համալսարանների կողքին **տարածում ստացան տեխնիկական բուհերը**, որոնք պատրաստում էին **ճարտարագետներ**:

Գիտությունն սկսեց ընկալվել որպես հասարակության առաջընթացի կարևորագույն նախապայման: Պետությունները և առանձին ձեռներեցները հովանավորում էին հետազոտական հիմնարկների գործունեությունը՝ ինստիտուտներ, կենտրոններ, ակադեմիաներ: Սերտացավ տարբեր երկրների գիտնականների համագործակցությունը: Ստեղծվեցին միջազգային գիտական հիմնադրամներ, որոնք պարգևներ էին սահմանում հետազոտական լավագույն արդյունքների համար: Դրանցից ամենահայտնին **Շվեդական ակադեմիայի Նոբելյան հիմնադրամն էր**: Այն գործում է առ այսօր:

Ա. ՆՈԲԵԼ
(1833–1896)

Շվեդ գործարար և գյուտարար: Հայտնագործել է դինամիտը (ուժանակ): Համաձայն կտակի՝ նրա հարստության հիման վրա ստեղծվել է հիմնադրամ: Դրանից Շվեդիայի Արքայական ակադեմիան 1901 թ. ի վեր մրցանակներ է շնորհում առավել աչքի ընկած գիտնականներին, ավելի ուշ՝ նաև գրողներին և խաղաղության գործիչներին: Նկարում՝ Նոբելյան մրցանակի մեդալը:



ՉԱՐԼԶ ԴԱՐՎԻՆ
(1809–1882)

Անգլիացի մեծ բնագետ, էվոլյուցիոն (տևափոխական) տեսության ստեղծողը: Իր «Տեսակների ծագումը» և «Մարդու ծագումը» գրքերում ցույց է տվել, որ բույսերի և կենդանիների տեսակները տևական ժամանակի ընթացքում փոփոխվում են: Համոզված էր, որ մարդը ևս միլիոնավոր տարիների զարգացման ուղի է անցել:

Հիմնարար գիտությունները

Նոր արդյունքներ արձանագրվեցին գիտության այս բնագավառում: Դրանց հեղինակները տարբեր երկրների ականավոր գիտնականներ էին՝ անգլիացիներ, ֆրանսիացիներ, գերմանացիներ, ռուսներ, ամերիկացիներ և այլք:

Տեսական նոր հետազոտությունների արդյունքում արմատապես փոխվեցին աշխարհի վերաբերյալ մարդկության պատկերացումները: Անգլիացի **Չ. Դարվինն** ստեղծեց մի կուռ տեսություն, որը բացատրում է կենդանական տեսակների միլիոնավոր տարիներ տևած աստիճանական զարգացումը՝ պարզից դեպի բարդը: Ռուս **Դ. Մենդելեևը** հայտնաբերեց քիմիական տարրերի պարբերականության օրենքը: Դրա շնորհիվ որոշարկվում է բոլոր տարրերի ճշգրիտ տեղը համակարգում: Կանխագուշակվում են անգամ այն տարրերը, որոնք գիտությանը դեռ հայտնի չեն: Գերմանացի **Ա. Այնշթայնը** մշակեց տիեզերական ժամանակի, տարածության, նյութի զանգվածի, էներգիայի, շարժման նոր տեսություն: Դա արմատապես փոխեց տիեզերքի վերաբերյալ պատկերացումները, որոնք ձևավորվել էին Ռ. Դեկարտի և Ի. Նյուտոնի ժամանակներից ի վեր:

Հատկապես տպավորիչ էին փորձարարական գիտությունների ձեռքբերումները: Ստեղծվեցին **գենետիկան (Գ. Մենդել), մանրէաբանությունը (Լ. Պաստյոր), էլեկտրադինամիկան (Ջ. Մաքսվել), ատոմային ֆիզիկան (Է. Ռեզերֆորդ, Ն. Բոր)** և այլն: Քիմիկոսներին հաջողվեց ստանալ նոր արհեստական նյութեր, որոնք



«Մերսեդեսի» առաջին մոդելը (1901)

ներդրվեցին արդյունաբերության տարբեր բնագավառներում: և առտնին կյանքում

Խոշոր ճարտարագետ–գյուտարարների ջանքերով գիտության նվաճումներն ստացան կիրառական նշանակություն: Հայտնաբերվեցին **ռադիոն (Գ. Մարկոնի), հեռախոսը (Ա. Բելլ), ներքին այրման շարժիչը (Գ. Դայմլեր), էլեկտրական լամպը (Թ. Էդիսոն)**: Դրանք և այլ գյուտեր էականորեն փոխեցին մարդկանց կյանքն ու կենցաղը:



ԴՄԻՏՐԻ ՄԵՆԴԵԼԵԵՎ
(1834–1907)

Ռուս նշանավոր քիմիկոս: Անչափ աշխատասեր էր, սկզբունքային և նվիրված գիտությանը: Բոլորի կողմից սիրված էր և հարգված: Իր հայտնագործած՝ քիմիական տարրերի պարբերական աղյուսակը անմահացրել է մեծ գիտնականին:

- *Քննարկվող ժամանակաշրջանում հիմնարար գիտությունները հայոց միջավայրում պատշաճ զարգացում չստացան: Պատճառը համալսարանների, գիտական այլևայլ ընկերակցությունների բացակայությունն էր: Դա իր հերթին պայմանավորված էր ազգային պետականության բացակայությամբ:*
  Այնուամենայնիվ, աշխարհի տարբեր գիտական հիմնարկներում երևացին հայ խոշոր գիտնականներ՝ հանքաբան Ա. Արծրունի (Ռուսաստան), քիմիկոս Ջ. Չամչյան (Իտալիա), ճարտարագետ Հ. Աղամյան (Ռուսաստան, Գերմանիա) և այլոք:

Հումանիտար գիտություններ

Արդյունաբերական հասարակության զարգացումը նոր խնդիրներ առաջադրեց հումանիտար գիտություններին: Դա սերտորեն կապված էր հասարակական հարաբերությունների, մարդու և նրա կենսագործունեության միջավայրի փոփոխությունների հետ: Դրանց գիտական բացահայտումը վերապահված էր ինչպես ավանդական, այնպես էլ նոր ձևավորվող հասարակական գիտություններին: Դրանցից էին **իմաստասիրությունը (փիլիսոփայություն), պատմագիտությունը, տնտեսագիտությունը, լեզվաբանությունը, իրավագիտությունը**: Բազում հետազոտություններ, հանրամատչելի գրքեր նպաստեցին հումանիտար գիտությունների զարգացմանն ու տարածմանը:

Հույժ կարևոր էր նոր գիտության՝ **հոգեբանության** ի հայտ գալը: Այն խնդիր ուներ ուսումնասիրելու մարդու



ԱԼԲԵՐՏ ԱՅՆՇԹԱՅՆ
(1879–1955)

Հարաբերականության տեսության ստեղծողը: Իր հիմնարար աշխատություններով խթանել է արդիական ֆիզիկայի շատ բնագավառների հետագա զարգացումը:



ԶԻԳՄՈՒՆԴ ՖՐՈՅԴ
(1856–1939)

Ավստրիացի անվանի հոգեբույժ: Մարդու հոգեբանության նորովի մոտեցման՝ հոգեվերլուծության հիմնադիրն է: Հետագայում այդ մեթոդը խորացվեց և լայն տարածում գտավ:

ներաշխարհը, նրա զգայությունները, հույզերը, ապրումները, մտավոր գործողությունները:

- *Հումանիտար գիտություններից հայոց միջավայրում հատկապես զարգացում ապրեց հայագիտությունը: Ասպարեզ իջավ Ռուսաստանի և Եվրոպայի համալսարաններում կրթություն ստացած գիտնականների մի բույլ, որն իր ուսումնասիրության խնդիրը դարձրեց հայ գրականությունը, լեզուն, պատմությունը: Դրա խոշորագույն ներկայացուցիչներից էին Ղ. Ալիշանը, Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Ն. Ադոնցը և այլք:*

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք կրթության և գիտության զարգացման գլխավոր միտումները XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:
2. Ինչո՞վ կարելի է բացատրել գիտության աննախադեպ զարգացումը:
3. Ձեր կարծիքով՝ ո՞րն է հիմնարար գիտությունների գլխավոր նվաճումը:
4. Թվարկե՛ք գիտական նվաճումները:
5. Ինչի՞ հետ էր կապված հումանիտար գիտությունների զարգացումը: Ի՞նչ նոր ուղղություններ առաջացան:

Նոր հասկացություններ, անուններ

Միջնակարգ կրթություն, տեխնիկական բուհ, Նոբելյան միջազգային մրցանակ, ճարտարագետ, գենետիկա, մանրէաբանություն, էլեկտրադինամիկա, ատոմային ֆիզիկա, աստղաֆիզիկա, հեռախոս, ռադիո, էլեկտրական լամպ, հոգեբանություն, Չ. Դարվին, Դ. Մենդելեև, Ա. Այնշթայն

28 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶ)

Գրականությունը և թատրոնը

Կյանքի ճշմարտացի պատկերումը դարձավ XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի գրողների ստեղծագործության նպատակը: Արդյունաբերական հասարակության մարդու ներաշխարհը՝ բարու և չարի, ստորի և հերոսականի, նեղ անձնականի և հասարակականի բախումներով, կազմեց դրա բովանդակությունը: «Կյանքը ինչպես որ կա». ահա գրական նոր սերնդի հավատամքը:

Այս դիտանկյունից հատկապես առանձնանում էին խոսքի ֆրանսիացի վարպետները՝ **Է. Զոլան և Գի դը Մոպասանը**: Ռուս գրականության մեջ մարդու, հասարակության, պատմության հիմնախնդիրները գեղարվեստական կերպավորում են ստացել **Ֆ. Դոստոևսկու և Լ. Տոլստոյի** ստեղծագործություններում:

Նշանակալից էին անգլիական, ամերիկյան, գերմանական գրականությունների նվաճումները: Դրանք տարբեր դիտանկյուններից բացահայտում էին կյանքի լուսաստվերները՝ հումոր և երգիծանք (**Բ. Շոու**), գոյության պայքար և հերոսացում (**Ջ. Լոնդոն**), կենսական ինքնահաստատում և իմաստություն (**Թ. Ման**) և այլն:

Հասարակական կյանքում մեծ կարևորություն ուներ թատրոնը: Մեծ ու փոքր քաղաքներում գործում էին տասնյակ թատրոններ:

Ի հայտ եկան բազում նոր թատերագիրներ՝ ռուս **Ա. Չեխովը**, ֆրանսիացի **Է. Ռոստանը**, նորվեգացի **Հ. Իբսենը**, և այլք: Համաշխարհային հռչակ էին վայելում մեծատաղանդ այնպիսի դերասաններ, ինչպիսիք էին **Է. Դուզեն, Ս. Բեռնարը**:

ԳԻ ԴԸ ՄՈՊԱՍԱՆ
(1850–1893)

Ֆրանսիացի գրող, իրապաշտական (ռեալիստական) ուղղության հետևորդ, մանրապատումի վարպետ: Պատկերել է «փոքր մարդկանց» կյանքը և ներաշխարհը:
Գրել է նորավեպեր (նովելներ)՝ «Սիրելի բարեկամ», «Մի կնոջ պատմություն» և այլն: Դրանք մեծապես ազդել են համաշխարհային գրականության վրա:

◆ *1860–1870–ական թթ. ձևավորվող հայ արհեստավարժ թատրոնը համաքայլ էր թատերական այս նվաճումներին: Թիֆլիսի և Կ. Պոլսի բեմերում ներկայացվում էին Վ. Շեքսպիրի, Հ. Իբսենի, և այլոց*



ԲԵՐՆԱՐԴ ՇՈՈՒ
(1856–1950)

Անգլիացի մեծ երգիծաբան: Բացառիկ արվեստով ծաղրել է մարդկանց արատները: Իր թատերգություններում դա արել է ճշգրիտ կարճ դատողության միջոցով, որը կարող է ընդհանուրի կարծիքին հակառակ լինել: Օրինակ՝ «Ով կարող է, կատարում է, ով չի կարող, սովորեցնում է»: Համարվում է եվրոպական երգիծական դրամայի նոր ձևերի ստեղծողը և տարածողը:

ստեղծագործությունները: Ասպարեզ իջան հայ խոշոր թատերագիրներ Ա. Շիրվանզադեն և Լ. Շանթը: Ի հայտ եկան ականավոր դերասաններ Պ. Աղամյանը և Միրանույշը: Երիտասարդ Վ. Փափազյանն իր դերասանական մկրտությունն ստացել էր Ս. Բեռնարի թատրոնում:

Խոշորագույն նվաճումներից մեկն էլ կինոարվեստի (կինեմատոգրաֆիա) ստեղծումն էր: **1895 թ. Լուի և Օգյուստ Լյումիեր եղբայրները Փարիզում առաջին անգամ ցուցադրեցին իրենց «շարժուն լուսանկարը»**: Քչերն էին գիտակցում, որ կատարվել է դարակազմիկ հայտնագործություն:

Կերպարվեստը և ճարտարապետությունը

Կերպարվեստի խոշորագույն առաջընթաց արձանագրվեց Ֆրանսիայում: Մի խումբ երիտասարդ նկարիչներ հեռացան ավանդական գեղանկարչությունից: Իրենց կտավներում նրանք սկսեցին կարևորել իրերից ստացած **անմիջական տպավորությունը (իմպրեսիոն)**: Տպավորություն, որն արդյունք էր բնական լույսի և մարդկային հույզերի համադրության: Այդ նկարիչները կոչվեցին իմպրեսիոնիստներ՝ **Կ. Պիսարո, Կ. Մոնե, Է. Դեգա, Օ. Ռենուար** և այլք:

Նույնատիպ որոնումներ առկա էին նաև քանդակագործության մեջ: Դրանց խոշորագույն արտահայտիչը դարձավ **Օ. Ռոդենը**: Մարմարից ու բրոնզից պատրաստ-

Կինեմատոգրաֆի գյուտարարներ ֆրանսիացի Լյումիեր եղբայրները և նրանց ստեղծած՝ աշխարհում առաջին կինոխցիկը

Իմպրեսիոնիզմի խոշոր ներկայացուցիչ, ֆրանսիացի նկարիչ Կլոդ Մոնեի «Առագաստներ Արժանտիերում» (1872) կտավը:
Գեղարվեստի այս ուղղությունը իր անունը ստացավ Կ. Մոնեի «Տպավորություն: Ծագող արև» (1872) գործի անվանումից:

ված նրա արձանները փառաբանել են մարդու գեղեցկությունը և զգայուն ներաշխարհը:

- *Հայկական միջավայրում ի հայտ եկավ նկարիչների մի համաստեղություն, որն օգտագործում էր ֆրանսիական նվաճումները՝ ազգային նոր գեղանկարչություն ստեղծելու համար՝ Հ. Այվազովսկի, Վ. Սուրենյանց, Մ. Սարյան:*

Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլին բնորոշ էր քաղաքային կյանքի բուռն աճը: Քաղաքների հատակագծումը վերածվեց արվեստի, որը նպատակ ուներ ստեղծելու մարդու կյանքի և գործունեության հարմարավետ միջավայր՝ հրաժարվելով ավելորդ ճոխություններից:

Սկսեցին կառուցվել երկնաքերներ (բազմահարկ շենքեր), արագընթաց ճանապարհներ, կամուրջներ: Ավտոմեքենան և մետրոպոլիտենը դարձան խոշոր քաղաքների անբաժանելի մասը: Դարաշրջանի խորհրդանիշը դարձավ **Փարիզի Էյֆելյան աշտարակը** (1889 թ.):

ԷՅՖԵԼՅԱՆ ԱՇՏԱՐԱԿ

Բարձրությունը 306 մ է:
Կառուցվել է Ա. Էյֆելի նախագծով:

ՕԳՅՈՒՍՏ ՌՈԴԵՆ
(1840–1917)

Ֆրանսիացի մեծ քանդակագործ: Գործերին բնորոշ են և՛ իրապաշտությունը, և՛ խոր գաղափարական հագեցվածությունը: Համաշխարհային արվեստում կանգնած է մեծագույն քանդակագործների կողքին:

ՋՈՒԶԵՊԵ ՎԵՐԴԻ
(1813–1901)

Իտալացի երգահան, օպերային արվեստի անգերազանցելի վարպետ: Ստեղծել է օպերաներ, որոնք այսօր էլ հռչակ են վայելում աշխարհի բեմերում: Լավագույն օպերաներն են՝ «Ռիգոլետտո», «Տրավիատա», «Ամիդա», «Օթելլո»:

Օգյուստ Ռոդեն. ֆրանսիացի նկարիչ Ժյուլ Բաստիեն Լեպաժի քանդակը: Այն այժմ տեղադրված է Երևանի կենտրոնում՝ ի նշան հայ–ֆրանսիական բարեկամության:

Երաժշտությունը և օպերան

Զարգացան երաժշտական ազգային դպրոցները: Խորացավ դրանց կապն ազգային ավանդույթների հետ: Սիմֆոնիկ երաժշտությունը հասավ մեծ բարձունքների: Դրան իրենց նպաստը բերեցին եվրոպական բոլոր ազգերի ներկայացուցիչները՝ ֆրանսիացի **Կ. Դեբյուսին**, նորվեգացի **Է. Գրիգը**, գերմանացի **Յ. Բրամսը** և այլք:

Վերելք էր ապրում օպերային արվեստը: Շարունակում էր ստեղծագործել իտալացի մեծագույն երգահան **Ջ. Վերդին**, որի **«Ամիդա»** և **«Ռիգոլետտո»** օպերաները համարվում են այդ ժանրի չգերազանցված նմուշները: Նույն չափանիշին համապատասխանում է նաև ֆրանսիացի **Ժ. Բիզեի «Կարմենը»**:

Օպերային արվեստի անանց արժեքներ են ստեղծել գերմանացի **Ռ. Վագները**, իտալացի **Ջ. Պուչինին**, ռուս **Պ. Չայկովսկին** և այլք:

- *Երաժշտության ասպարեզում ևս հայկական միջավայրը համաքայլ էր եվրոպական նվաճումներին: Տ. Չուխաջյանի «Արշակ II» օպերայով (1868 թ.) սկզբնավորվեց ազգային օպերային արվեստը: Ա. Սպենդիարյանն ստեղծեց հայկական սիմֆոնիկ երաժշտության առաջին նմուշները: Իսկ մեծն Կոմիտասը հայ ազ-*

գային երգը մշակեց՝ օգտագործելով եվրոպական երաժշտական արվեստի նվաճումները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչն էր բնորոշ XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի գեղարվեստական գրականությանը:
2. Նշեք այս ժամանակաշրջանի գեղարվեստական խոսքի վարպետներին:
3. Արվեստի ինչ նոր ճյուղ ձևավորվեց XIX դարի վերջին:
4. Ինչ է իմպրեսիոնիզմը: Նշեք ականավոր նկարիչ իմպրեսիոնիստների:
5. Ինչ զարգացում ունեցավ հայկական մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:
6. Ներկայացրեք արվեստի և տեխնիկայի բնագավառում կատարված նորությունները:
7. Երաժշտության ո՞ր ճյուղերն էին զարգացած XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:

Գործնական աշխատանք

Լրացրեք աղյուսակը. նշված բնագավառների ինչ գործիչներ գիտեք՝ ըստ երկրների:

	Գրականություն	Թատրոն	Կերպարվեստ	Երաժշտություն
Ֆրանսիա				
Անգլիա				
Ռուսաստան				
Գերմանիա				
Իտալիա				
Հայաստան				

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Իրապաշտություն, «Կյանքը ինչպես որ կա», Է. Զոլա, Գի դը Մոպասան, Ֆ. Դոստոևսկի, Լ. Տոլստոյ, Ա. Չեխով, Է. Ռոստան, Հ. Իբսեն, Է. Դուզե, Ս. Բերնար, կինոարվեստ, Լ. և Օ. Լյումիեր, իմպրեսիոնիզմ, Կ. Պիսարո, Կ. Մոնե, Է. Դեգա, Օ. Ռոդեն, Էյֆելյան աշտարակ, Ջ. Վերդի, Ժ. Բիզե, Ջ. Պուչինի, Պ. Չայկովսկի

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Նոր դարերի երկրորդ փուլում Արևմուտքի երկրների մեծ մասում հաստատվեց արդյունաբերական հասարակությունը: Համաշխարհային պատմական առաջընթացում տիրապետող դիրքի հասավ Եվրոպան: Չնայած անհավասարաչափ զարգացմանը՝ մյուս աշխարհամասերի երկրները և ժողովուրդները դանդաղորեն էին ընթանում արդյունաբերական հասարակության ուղիով. բացառություն էին ԱՄՆ–ն ու Ճապոնիան:

   - *Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլը: Ո՞ր երկրներն առաջ անցան Անգլիայից իրենց զարգացման մակարդակով և ինչո՞ւ: Ինչ է նշանակում երկրների անհավասարաչափ զարգացում, որո՞նք էին այդ երևույթի պատճառները:*

2. XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին գիտությունը դարձավ արտադրողական հզոր ուժ: Գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրումը տնտեսության մեջ առաջացրեց կարևոր փոփոխություններ ամբողջ հասարակության կյանքում:

   - *Գիտության և տեխնիկայի ներդրումը ինչ փոփոխություններ առաջացրեց տնտեսության մեջ: Ինչ է մենաշնորհը: Ինչ հետևանքների հանգեցրեց մենատիրությունների առաջացումը: Ներկայացրե՛ք հասարակության ընկերային կառուցվածքը, որո՞նք էին գլխավոր դասակարգերը: Ինչ դեր էր խաղում միջին խավը:*

3. Արդյունաբերական առաջավոր երկրներում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին ձևավորվում է ժողովրդավարական հասարակություն: Քաղաքական ասպարեզում կային երեք հիմնական հասարակական հոսանքներ՝ պահպանողականներ, ազատականներ և սոցիալիստներ:

   - *Բնորոշե՛ք երեք հիմնական հասարակական հոսանքները, նշե՛ք այդ ուղղությունների հայտնի գործիչների: Ինչ է կուսակցությունը, թվարկե՛ք ձեզ հայտնի մի քանի կուսակցություններ, այդ թվում՝ հայկական: Ներկայացրե՛ք ժողովրդավարական հիմնական ձեռքբերումներն այս շրջափուլում:*

4. XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Ֆրանսիայում, Ռուսաստանում և ԱՄՆ–ում առաջացան հեղափոխական ճգնաժամեր, որոնք տարբեր արդյունքներ ունեցան:

   - *Որոնք էին ԱՄՆ քաղաքացիական պատերազմի պատճառները և գլխավոր արդյունքները: Ո՞ր իրադարձություններից հետո և ե՞րբ է ընդունվել Ֆրանսիայի Երրորդ հանրապետության Սահմանադրությունը, ինչ նշանակություն ունեցավ այն: Ե՞րբ է տեղի ունեցել և ինչ հետևանքներ է ունեցել Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը:*

5. Ազգային պետությունների առաջացումը նոր դարաշրջանի կարևոր գործընթացներից էր: Գերմանիայում դա տեղի ունեցավ «երկաթով և արյամբ»: Իտալիայի վերամիավորումն ընթացավ համազգային պայքարի ուղիով: Երկու երկրներում էլ հռչակվեցին ժողովրդավարական ազատություններ: Բուռն զարգացում ապրեց տնտեսությունը: XX դարի սկզբին նրանք դարձան զարգացած երկրներ:

   - *Պարզաբանե՛ք Գերմանիայի միավորման նախադրյալները և նշանակությունը: Ո՞վ էր Օ. Բիսմարկը և ինչ դեր է խաղացել այդ գործում: Ինչ է Ռիսորջիմենտոն: Ե՞րբ սկսվեց և ավարտվեց Իտալիայի միավորումը: Քաղաքական ինչ կարգեր հաստատվեցին Գերմանիայում և Իտալիայում միավորումից հետո:*

6. Օսմանյան տիրապետությունը մի քանի հարյուր տարի կասեցրեց Բալկանյան երկրների զարգացումը: XVIII–XIX դարերում սկսեց ձևավորվել տեղի ժողովուրդների ազգային ինքնագիտակցությունը: Անկախության համար տևական պայքարն ավարտվեց միայն XX դարի սկզբին: Աշխարհի քաղաքական քարտեզի վրա երևացին նոր ինքնիշխան պետություններ:

   - *Ինչ պայմաններ նպաստեցին Բալկանյան երկրների ազատագրական պայքարի վերելքին: Ժամանակագրական սանդղակի միջոցով ներկայացրե՛ք նրանց անկախացման գործընթացը:*

7. Նոր դարերում ազգային պետությունների կողքին շարունակում էին գոյություն ունենալ բազմազգ տերությունները, որտեղ տիրող ազգի գերիշխանության ներքո ապրում էին նվաճված ազգեր: Եվրոպայում ասվածի վառ դրսևորումը Ավստրիան և Ռուսաստանն էին: Նրանք զարգանում էին արդյունաբերական ուղիով, բայց ունեին չլուծված ազգային հիմնախնդիրներ:

- *Բացատրեք բազմազգ տերություն և երկմիասնական տերություն հասկացությունների իմաստը: Թվարկեք Ավստրո–Հունգարիայում և Ռուսաստանում ապրող ժողովուրդների: Ինչ դրսևորումներ ուներ ազգային ճնշումն այդ տերություններում:*

8. XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության բարենորոգման փորձերը ձախողվեցին: Ձևավորվեց երիտթուրքական շարժումը: Երիտթուրքերի իրականացրած 1908 թ. պետական հեղաշրջման արդյունքում համիդյան բռնապետությունը տապալվեց: Իրանում այս ժամանակաշրջանում տարածվեցին լուսավորական գաղափարներ, 1905–1911 թթ. տեղի ունեցավ հեղափոխություն:

- *Ինչո՞ւ Օսմանյան կայսրությունում բարենորոգումների նոր փորձերը XIX դարի երկրորդ կեսին ձախողվեցին: Բացատրեք պանիսլամիզմ և պանթյուրքիզմ հասկացությունների իմաստը: Ինչ կարգ հաստատվեց տերությունում 1908 թ. հեղաշրջումից հետո: Ինչո՞ւ երիտթուրքերը որդեգրեցին ազգայնամոլական քաղաքականություն: Ինչ վիճակում էր Իրանը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Ներկայացրեք իրանական հեղափոխության արդյունքները:*

9. Արևելքի երկու մեծ երկրները՝ Ճապոնիան և Չինաստանը, XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին հասան զարգացման նոր հանգրվանի:

- *Ո՞ր իրադարձությունների արդյունքում Ճապոնիայում հաստատվեց սահմանադրական միապետություն: Վերհանեք նրա զարգացման հիմնական արդյունքները: Ո՞ր տերությունների միջև ազդեցության գոտիների բաժանվեց Չինաստանը: Ինչ նշանակություն ունեցավ Չինաստանի 1911–1912 թթ. հեղափոխությունը:*

10. XIX դարի վերջին ավարտվեց աշխարհի գաղութային բաժանումը, հետամնաց երկրները համաշխարհային տնտեսության մաս կազմեցին, ինչպես նաև հաղորդակից դարձան արդյունաբերական առաջադիմությանը: Մեծ տերությունների միջև սրվեց պայքարը բաժանված աշխարհի վերաբաժանման համար:

- *Ո՞ր երկրները պայքար սկսեցին բաժանված աշխարհի վերաբաժանման համար: Գնահատեք Հաագայում կայացած երկու միջազգային համաժողովների որոշումները: Երբ և որ երկրներից ձևավորվեցին Եռյակ դաշինքը և Անտանտը: Ներկայացրեք հակամարտ խմբավորումների անդամ տերությունների գլխավոր նպատակները:*

11. Տերությունների միջև եղած արմատական հակասությունները, տիրող ազգայնամոլությունը և ծավալապաշտությունը հանգեցրին Մեծ պատերազմի: Մի-

մյանց բախվեցին երկու ռազմաքաղաքական միավորում՝ Եռյակ դաշինքը և Անտանտը, որոնց պատերազմի ընթացքում հարեցին բազմաթիվ պետություններ:

- *Երբ է սկսվել և ավարտվել Առաջին աշխարհամարտը: Թվարկեք պատերազմի գլխավոր ճակատները, ներկայացրեք 1914–1916 թթ. կարևոր ռազմական իրադարձությունները: Հայոց և համաշխարհային պատմությունից սովորածը համադրելով՝ ներկայացրեք հայ ժողովրդի կորուստներն ու ձեռքբերումները աշխարհամարտի տարիներին:*

12. Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում՝ 1917–1918 թվականներին, ստեղծվեց նոր ռազմաքաղաքական իրավիճակ: Փոխվեց և ընդլայնվեց պատերազմի աշխարհաքաղաքական ընդգրկումը:

- *Ո՞ր երկրները միացան Անտանտին 1917 թ.: Պարզաբանեք 1917 թ. ռուսաստանյան երկու հեղափոխությունների պատճառները և արդյունքները: Ներկայացրեք աշխարհամարտի գլխավոր արդյունքները:*

13. Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում մշակույթը հասավ զարգացման նոր մակարդակի: Գիտական հայտնագործությունները էականորեն փոխեցին աշխարհի մասին պատկերացումները:

- *Վերհանեք կրթության և գիտության զարգացման պատճառները և արդյունքները այս շրջափուլում:*

14. Մեծ առաջընթաց ապրեց գեղարվեստական մշակույթը: Արվեստի և գրականության ասպարեզներում ստեղծվեցին մնայուն արժեքներ: Դրանք մարդկության հոգևոր ժառանգության անբաժանելի մասն են:

- *Ցո՛ւյց տվեք գրականության և արվեստի բնորոշ կողմերը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին, բացատրե՛ք դասանյութում եղած նոր հասկացությունները: Թվարկե՛ք գրականության և արվեստի նշանավոր գործիչների և նրանց ստեղծագործությունների անուններ:*

ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ

Աբսոլյուտիզմ (միահեծանություն) – Ծագում է լատիներեն «բացարձակ» բառից: Հաճախ անվանում են նաև բացարձակ միապետություն: Միապետի իշխանությունը ոչնչով սահմանափակված չէ, արքայի կամքը օրենք է: Չկա սահմանադրություն: Այս առումով հատկանշական են Լուի XIV–ի խոսքերը. «Պետությունը ե՛ս եմ»:

Ազատական (լիբերալ) – Ծագում է լատիներեն «ազատ» բառից: Հասարակական շարժում, որ ձևավորվել է XIX դ. սկզբին, սակայն ծաղկել է նույն դարի երկրորդ կեսին: Դեմ էր հասարակական ցնցումներին և հեղափոխություններին: Կողմ էր աստիճանական և նպատակասլաց բարենորոգումներին: Նպատակն էր սահմանադրական կարգի և ժողովրդավարության ստեղծումը:

Ազգայնականություն (նացիոնալիզմ) – Ծագում է լատիներեն «ազգ» բառից: Գաղափարների ամբողջություն, համաձայն որի՝ ազգի բարգավաճումը և բարեկեցությունը համարվում են առաջնային: Փոքր ազգերի համար ազգայնականությունը պաշտպանության միջոց է՝ ընդդեմ մեծ ազգերի ճնշումների: Ազգայնականությանը հակադիր դրսևորումն **ազգայնամոլությունն** է, որը սեփական ազգից բացի չի հանդուրժում այլ ազգերի:

Ահաբեկչություն (տեռորիզմ) – Ծագում է լատիներեն «վախ, սարսափ» բառից: Մարդկանց ահաբեկումը (սպանություն, հետապնդում, բանտարկում և այլն) քաղաքական համոզմունքների և գաղափարների համար: Այն ավելի մեծ չափեր է ընդունում հեղափոխությունների ժամանակ:

ԱՄՆ–ի Անկախության հռչակագիր – Ընդունվել է 1776 թ. հուլիսի 4–ին Ֆիլադելֆիա քաղաքում հրավիրված Համաժողովի (Կոնգրես) կողմից: Այն հռչակեց ամերիկյան ազգի իրավունքը՝ ստեղծելու իր ինքնուրույն կյանքը, ազատությունը և երջանկությունն ապահովող պետություն: Ի լուր աշխարհի հայտարարեց Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմավորման մասին:

Անձի անձեռնմխելիություն – Լուսավորականների հռչակած՝ մարդու բնական իրավունքներից մեկը: Մարդու նկատմամբ չպետք է կիրառել որևէ բռնություն, եթե օրենքով ու դատարանով ապացուցված չէ նրա մեղքը:

Ավտորիտարիզմ (անձնիշխանություն) – Ծագում է լատիներեն «հեղինակություն», «ազդեցություն» բառերից: Իշխանությունը կենտրոնանում է ուժեղ անհատականության ձեռքում՝ ընտրովի նախագահ, թագավոր կամ կայսր: Ժողովուրդը գնում է նրա հետևից՝ հավատալով խոսքին ու հեղինակությանը: Շատ դեպքերում, սակայն, չարաշահում է այդ վստահությունը և սկսում կառավարել իբրև բռնակալ: Այդպես եղավ, օրինակ, Նապոլեոն III–ի դեպքում (1852–1870):

Աշխարհի անհավասարաչափ զարգացում – XIX դ. երկրորդ կեսից արդյունաբերական որոշ երկրներ սկսեցին արագ զարգանալ՝ առաջ անցնելով նախկին առաջատարներից՝ Անգլիա, Ֆրանսիա, Հոլանդիա: Այդ նոր զարգացող երկրները՝ ԱՄՆ–ն, Գերմանիան, Ճապոնիան, պայքար ծավալեցին ազդեցության ոլորտների և գաղութների վերաբաժանման համար: Այս նույն ժամանակաշրջանում է՛լ ավելի խորացավ տարբերությունը Արևմուտքի

(Եվրոպա, ԱՄՆ) և Արևելքի (Օսմանյան կայսրություն, Իրան, Հնդկաստան, Չինաստան) զարգացման մակարդակների միջև:

Աշխարհի արհեստանոց – XVIII դ. մինչև XIX դ. երկրորդ կեսը այս համարումն ուներ Անգլիան: Նրա արդյունաբերությունն ամենազարգացածն էր, ապրանքները՝ ամենաարդիականն ու որակյալը: Դրանք ամենաէժանն էին և ողողել էին բոլոր շուկաները:

Առաջին կայսրություն – 1804 թ. Ֆրանսիայում անցկացվեց հանրաքվե, որի արդյունքում Նապոլեոնը հռչակվեց «բոլոր ֆրանսիացիների կայսր»: Այսպես հիմնվեց Առաջին կայսրությունը, որը տևեց մինչև 1814 թ.:

Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլ – Ընդգրկում է XIX դ. երկրորդ կեսից մինչև 1918 թ.՝ Առաջին աշխարհամարտի ավարտը: Կարևորագույն հատկանիշներն են արտադրության վերազինումը գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներով, բաժնետիրական ընկերությունների և մոնոպոլիաների (մենատիրություններ) առաջացումը, համաշխարհային շուկայի և գաղութային համակարգի ձևավորումը, զարգացած երկրներում ժողովրդավարության խորացումը, զանգվածային կրթության համակարգի արմատավորումը և այլն:

Արդյունաբերական հեղաշրջում – Արտադրության մեքենայացման գործընթաց, որն սկսվեց XVIII դ. 60–ական թթ.: Մանուֆակտուրային փոխարինելու եկավ մեքենագործարանային արտադրությունը: Գիտության և տեխնիկայի նվաճումներն սկսեցին լայնորեն ներդրվել արտադրության մեջ՝ կյանքի կոչելով նոր նյութեր, սարքավորումներ, էներգիայի աղբյուրներ:

Արևելյան հարց – Եվրոպական դիվանագիտության հիմնախնդիր՝ կապված Օսմանյան տերության հետագա ճակատագրի հետ: Վերջինիս թուլացման և քայքայման պայմաններում արդիական դարձավ հպատակ ազգերի ազատագրության և սեփական պետությունների ստեղծման հեռանկարը: Դրանից օգտվելով՝ մեծ տերություններն աշխատում էին օսմանյան Թուրքիան վերածել կիսագաղութի: Հարցն առաջացել է արդեն XVIII դ. վերջին: Դրա բաղկացուցիչ մասն էր նաև Հայկական հարցը:

Արհեստակցական միություններ – Հասարակական կազմակերպություններ, որոնք բանվորներն ստեղծել են իրենց իրավունքները պաշտպանելու համար: Առաջինը դրանք երևացին Անգլիայում XVIII դ. վերջին: XIX դ. երկրորդ կեսից արհմիութենական շարժումը մեծ թափ ստացավ: Ի հայտ եկան խոշոր արհմիություններ, որոնց անդամների թիվը հասնում էր միլիոնների: Ասվածի վառ օրինակներ կային ԱՄՆ–ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, մյուս զարգացած երկրներում:

Ափիոնի պատերազմ – Ծավալվել է Չինաստանում 1839–1842 թթ.: Անգլիացիները մաքսանենգ ճանապարհով Չինաստան էին ներմուծում ափիոն (հաշիշ) և վաճառում բարձր գներով: Շուտով չինացիների շրջանում թմրամոլությունը հասավ վտանգավոր չափերի: Կառավարությունը փորձեց կանգնեցնել անգլիացիներին: Սկսվեց պատերազմ, որն ավարտվեց չինական կողմի պարտությամբ: Կնքված պայմանագրով Չինաստանն իր դռները բացում էր գաղութարարների առջև:

Բազմազգ տերություն – Տերություն, ուր տիրապետող ազգի գերիշխանության ներքո իրենց պատմական հայրենիքում ապրում են բազում ազգեր՝ ենթարկվելով տնտեսական, քաղաքական, ազգային, կրոնական և մշակութային խտրականության և բռնաճնշումների:

Բաժնետիրական ընկերություն – Արտադրական ձեռնարկություն (կամ դրանց ցանց), որի հիմնական կապիտալը պատկանում է մարդկանց մի խմբի: Յուրաքանչյուրն ունի իր մասնաբաժինը և ըստ դրա էլ ստանում է եկամուտ:

Բանվորներ – Վարձու աշխատանքով ապրող մարդիկ: Նրանց վարձում են ձեռներեցները և վճարում ըստ կատարված աշխատանքի որակի և քանակի: Սովորաբար ձեռներեցների և բանվորների միջև ծագում են հակասություններ: Դրանց կարգավորման նպատակով զարգացած երկրներում XIX դ. ընդունվեցին բազմաթիվ օրենքներ: Վերջիններս սահմանափակում էին աշխատաժամանակը, բանվորներին տալիս ապահովագրություն՝ հիվանդության ու ծերության դեպքերում և այլն:

Բոլշևիկներ – Ռուսական մարքսականների մեծամասնությունը կազմող թևը: Կողմ էին ծայրահեղ գործողությունների: Իրենց առաջնորդ Վ. Լենինի գլխավորությամբ ձգտում էին ուժով գրավել իշխանությունը: Երազում էին ամբողջ աշխարհում կոմունիզմ (համայնավարական կարգ) կառուցել:

Բորսա – Արդյունաբերական տնտեսության կարևոր հիմնարկություն, որտեղ ձեռներեցները հանդիպում էին, քննարկում միմյանց առաջարկները և կնքում տնտեսական տարաբնույթ գործարքներ:

Գաղութ – Այստեղ՝ արդյունաբերական որևէ տերության իշխանության ներքո գտնվող երկիր, որը զրկված էր ինքնուրույն տնտեսական, քաղաքական, հասարակական զարգացման հնարավորությունից: Մայր երկրի (մետրոպոլիա) տնտեսական կցորդն էր: Այստեղից արտահանում էին բնական հարստություններ՝ շահագործելով տեղաբնիկների էժան աշխատուժը: Գաղութացումն սկսվել է դեռ XV դ., սակայն իր ծաղկմանն է հասել XIX դ. երկրորդ կեսին: Բացի բացասական հետևանքներից, այն հանգեցրել է նաև դրական արդյունքների: Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի ժողովուրդները ծանոթացել են արդյունաբերական հասարակության նվաճումներին:

Գիտությունը՝ արտադրողական ուժ – Ի տարբերություն միջնադարի՝ արդյունաբերական հասարակությունում գիտությունն ունի կիրառական նշանակություն: Նրա արդյունքները լայնորեն ներդրվում են արտադրության մեջ՝ ստեղծելով նոր նյութեր, սարքավորումներ, էներգիայի աղբյուրներ: Այս գործընթացն առավել տարածում ստացավ արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլում:

Դաշնություն (ֆեդերացիա) – Ծագում է լատիներեն նույնիմաստ բառից: Առանձին պետությունների և պետական կազմավորումների միություն է: Դաշնության անդամները պահպանում են իրենց իրավունքների մի մասը: Ունեն տեղական սահմանադրություն, խորհրդարան, կառավարություն և դատական համակարգ: Սակայն դրանք ենթակա են դաշնային սահմանադրությանը և կառավարման մարմիններին: Առկա է ընդհանուր քաղաքացիություն: Դաշնային պետության օրինակ են ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Գերմանիան, Բրազիլիան և այլն:

Դոմինիոն – Լատիներեն «տիրույթ» բառից է, բրիտանական գաղութային համակարգում երկիր, որն ուներ ներքին լրիվ ինքնավարություն, սակայն ենթարկվում էր անգլիական թագին:

Դրամատուն (բանկ) – Ծագում է լատիներեն «դրամափոխարան» բառից: Ձեռնարկություն, որտեղ իրացվում է դրամական կապիտալի առուծախ, ընդունվում են ավանդներ և տրամադրվում վարկեր: Դրամատներն արդյունաբերական արտադրության անբաժանելի մասն են: Նրանց միջոցով ազատ կապիտալը ներդրվում է տնտեսության զանազան ճյուղեր և նպաստում դրանց զարգացմանը:

Ենիչերի – Թուրքերեն՝ «նոր զորք»: Օսմանյան հետևակային զորամասեր: Դրանք ստեղծվում էին մանկահավաքների միջոցով: Այսինքն՝ մանուկ հասակում ծնողներից (հիմնականում քրիստոնյա) խլում էին զավակներին, դարձնում իսլամի մոլեռանդ զինվոր:

Եռյակ դաշինք – 1879–1882 թթ. Գերմանիայի, Ավստրո–Հունգարիայի և Իտալիայի միջև կնքված պայմանագրերի արդյունքում ստեղծված դաշինք՝ ուղղված Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ:

Եռյակ միություն (Անտանտ) – Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1904 թ. կնքված ռազմաքաղաքական դաշինք, որին 1907 թ. միացավ Ռուսաստանը:

Երիտթուրքեր – Թուրքական բուրժուազիայի ազգայնական շարժում: 1889 թ. ստեղծել է «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը: Խնդիր ուներ վերականգնելու 1876 թ. սահմանադրությունը: Իր շուրջ համախմբել է հայկական, արաբական, հրեական, հունական ընդդիմադիր ուժերը և 1908 թ. կատարել պետական հեղաշրջում: Հռչակել է ժողովրդավարական ազատություններ, սակայն շուտով հրաժարվել դրանցից՝ ներկայանալով իբրև ծայրահեղ ազգայնամոլներ: Երազում էր ստեղծել պանթուրքական (համաթուրքական) տերություն՝ Բոսֆորից մինչև Միջին Ասիա: Այդ ճանապարհին կանգնած բոլոր ազգերը ենթակա էին ոչնչացման, առաջին հերթին՝ հայությունը: Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքական կառավարությունն իրագործեց Հայոց մեծ եղեռնը:

Երկմիասնական տերություն – Տերություն, որտեղ տիրապետող են երկու ազգ՝ մյուս ենթակա ազգերի ազատագրական ձգտումները ճնշելու համար: Նրանց միջև կնքվում է դաշինք՝ իշխանության հստակ բաժանումով: Ասվածի լավագույն օրինակը 1867 թ. ձևավորված Ավստրո–Հունգարիան էր:

Երրորդ հանրապետություն – Հիմնվել է Ֆրանսիայում 1870 թ. սեպտեմբերին՝ Նապոլեոն III կայսեր խայտառակ պարտությունից հետո: 1875 թ. սուր պայքարի պայմաններում ընդունվել է նրա Սահմանադրությունը: Երրորդ հանրապետությունը գոյատևել է մինչև 1940 թ.:

Ընկերային (սոցիալական) ապահովագրություն – Պետության, ձեռնարկատերերի և աշխատավորների մուծումների հաշվին ստեղծվում է հիմնադրամ, որից աշխատավորներին նյութական օժանդակություն (թոշակ) է հատկացվում հիվանդության և ծերության դեպքում: Այս համակարգը զարգացած երկրներում տարածում է գտել XIX դ. երկրորդ կեսից:

Թանզիմաթ – Ծագում է արաբերեն «բարենորոգում» բառից: Օսմանյան տերության այս բարենորոգումներն ընդգրկում էին 1830–1860–ական թթ.: Դրանք ձեռնարկեցին եվրոպական կրթություն ստացած և լուսավորական գաղափարներով տոգորված որոշ պետական գոր-

ծիչներ: Նպատակն էր տերության բոլոր ազգերի ներկայացուցիչներին տալ իրավահավասարություն, անձի, գույքի անձեռնմխելիություն, խղճի (կրոն) ազատություն, հավասար հարկեր: Այդ ճանապարհով բարենորոգիչները հույս ունեին կանգնեցնելու տերության անկումը: Սակայն պահպանողականների ճնշման ներքո այս փորձերը ձախողվեցին:

Թորի – Քաղաքական կուսակցություն Անգլիայում, որն առաջացել է XVII դ. վերջին: XIX դ. երկրորդ կեսին ստացավ պահպանողական անվանումը:

Ժողովրդավարություն (դեմոկրատիա) – Ծագում է հունարեն «ժողովուրդ» և «իշխանություն» բառերից: Կառավարման մի համակարգ, որտեղ գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովրդավարության հիմքը իրավահավասար քաղաքացիներն են: Օգտվում են համընդհանուր ընտրական իրավունքից, ունեն անձի և սեփականության անձեռնմխելիություն, խոսքի, խղճի (կրոնի) ազատություն: Այս ամենն ամրագրված է երկրի հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ: Ժողովուրդն իր իշխանությունն իրագործում է ընտրովի խորհրդարանի և կառավարության միջոցով:

Իշխանության տարանջատման սկզբունք – Մշակել է անգլիացի լուսավորական Ջ. Լոկը, զարգացրել՝ ֆրանսիացի Մոնտեսքյոն: Համաձայն դրա՝ արդյունավետ գործառելու համար պետական իշխանությունը պետք է տարանջատվի երեք ճյուղի: **Օրենսդրական**, որը պետք է ներկայացնի ժողովրդի կողմից ընտրված խորհրդարանը: Այն պետք է օրենքներ մշակի՝ պարտադիր բոլոր քաղաքացիների համար: **Գործադիր**, որը կոչված է ի կատար ածելու օրենքները և կառավարելու երկիրը: Այս նպատակով ստեղծվում է կառավարություն: **Դատական**, որը կոչված է հետևելու օրենքների ճշգրիտ կատարմանը և օրինականության պահպանմանը:

Լուսավորական շարժում – Գաղափարական, կրթական և քաղաքական շարժում, որ ծավալվեց Եվրոպայում XVII–XVIII դդ.: Նպատակն էր հաղթահարել միջնադարյան ավանդական պատկերացումները մարդու, հասարակության, բնության վերաբերյալ: Ստեղծել է պատկերացումների մի նոր համակարգ՝ կառուցված բանական արժեքների վրա: Շարժումն սկսվել է Անգլիայում, բայց իր գագաթնակետին է հասել շնորհիվ ֆրանսիական լուսավորականների: Նրա գաղափարները կենսական են առ այսօր:

Լուսավորյալ միապետ – Միապետների այս տեսակը պատմական ասպարեզ է իջել XVII–XVIII դդ.՝ Ֆրանսիայում, Ռուսաստանում, Պրուսիայում, Ավստրիայում: Լուսավորական գաղափարների ոգով կատարել են բազմաթիվ բարենորոգումներ: Զգտում էին հին ավատատիրական կարգերը հաշտեցնել արդյունաբերական զարգացման հետ: Դա անհնար էր, և XVIII դ. վերջերին լուսավորյալ միապետները հեռացան պատմական ասպարեզից:

Խաղաղության կողմնակիցների միջազգային շարժում – Այլ խոսքով՝ պացիֆիստական շարժում: Բառը ծագում է լատիներեն «խաղաղություն» բառից: Նրա մասնակիցները համոզված են, որ խաղաղությունն այլընտրանք չունի, բոլոր հակամարտությունները կարելի է լուծել խաղաղ բանակցությունների ճանապարհով:

Խղճի ազատություն – Մարդու իրավունքը դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու որևէ մեկը:

Ծանր արդյունաբերություն – Արդյունաբերության այն ճյուղերի ընդհանուր անվանումը, որոնք իրականացնում են մետաղների, աշխատանքային գործիքների, մեքենաների, սարքավորումների, փոխադրամիջոցների, էներգիայի տարբեր տեսակների արտադրություն:

Կայսերապաշտություն (իմպերիալիզմ) – Գաղափարախոսություն և քաղաքականություն, հատկանշական է արդյունաբերական հասարակություններին: Հումքի, էժան աշխատուժի համար զարգացած երկրներն սկսում են ծավալվել և նոր տարածքներ գրավել կամ ազդեցության գոտիներ ձեռք բերել ինչպես Եվրոպայում, այնպես էլ աշխարհի բոլոր ծագերում՝ Ասիա, Աֆրիկա, Ամերիկա: Գործընթացն ավելի ծավալվեց XIX դ. երկրորդ կեսին: Այս նպատակով օգտագործվում էին ամենատարբեր միջոցներ՝ ռազմական ուժ, դիվանագիտություն, տնտեսական ճնշում և այլն:

Կանցլեր – Գերմաներեն «դիվանապետ», «քարտուղար» բառերից: Նախապես համարվում էր գերմանական (մասնավորապես Պրուսիայի) արքաների գրասենյակի ղեկավար: Նա կազմում էր արքայական հրամանները և հետևում դրանց կատարմանը: Հետագայում սկսեց կատարել վարչապետի գործառույթները՝ ղեկավարում էր գործադիր իշխանության բոլոր օղակները: Կանցլերի դերն առավել կարևորվեց միացյալ Գերմանիայում: Օ. Բիսմարկը հայտնի է որպես Գերմանիայի ամենաականավոր կանցլերներից մեկը:

Կապիտալ – Ունեցվածք, որը ներդնելով արտադրության մեջ՝ ձեռներեցը նոր շահույթ է ստանում: Ժամանակի ընթացքում կապիտալը դառնում է սեփականության հիմնական ձևը և կազմում կապիտալիստական հասարակության հիմքը:

Կիսագաղութ – Ավանդական հասարակական կյանքով ապրող երկիր, որը գաղութի չի վերածվել և անմիջականորեն չի կառավարվում գաղութարարների կողմից, սակայն վերջիններս, տարբեր լծակներով (տնտեսական, դիվանագիտական, ռազմական) ճնշումներ գործադրելով, նրա կառավարությունից զիջումներ են կորզում: Այսպիսի երկրներից էին Օսմանյան կայսրությունը, Իրանը, Չինաստանը: Գաղութարարները երբեմն դրանք բաժանում էին ազդեցության գոտիների:

Կոմունիզմ (համայնավարություն) – Ուտոպիական տեսություն, որը ծագում է լատիներեն «ընդհանուր» բառից: Համաձայն դրա գաղափարախոսների (Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Լենին)՝ հեղափոխության միջոցով ստեղծված բանվորների պետությունը պետք է վերացնի մասնավոր սեփականությունը և ստեղծի համապետական սեփականություն: Ամեն ոք, անկախ իր աշխատանքից, պետք է օգտվի բոլոր բարիքներից: Կոմունիզմի զարգացած շրջափուլում պետությունը, կատարելով իր դերը, պետք է վերանա:

Կոնսուլություն – 1799–1804 թթ. կառավարման ձև Ֆրանսիայում: Իշխանությունն անվանապես պատկանում էր տասը տարով ընտրված երեք կոնսուլներին, իսկ իրականում՝ առաջին կոնսուլ Ն. Բոնապարտին:

Կուսակցություն – Համախոհ մարդկանց քաղաքական կազմակերպություն, որի խնդիրը հասարակության բարենորոգումն է՝ ըստ իր որդեգրած գաղափարների և գործողության ծրագրերի: Այդ նպատակով կուսակցությունները ձգտում են հասնել իշխանության, որպեսզի իրականացնեն իրենց ծրագրերը:

Համազգային շուկա – Արդյունաբերական հասարակության զարգացմանը համընթաց՝ տվյալ երկրի տարբեր շրջաններ մասնագիտանում են արտադրության մեկ կամ մի քանի բնագավառներում՝ գյուղատնտեսական ապրանքներ, տեքստիլ արտադրություն, սարքաշինություն և այլն: Ուստի անհրաժեշտություն է ծագում համազգային շուկայի մակարդակով կազմակերպելու նրանց առևտուրն ու փոխանակությունը: Այս հենքի վրա երկիրը միավորվում է իբրև միասնական տնտեսական միավոր:

Համընդհանուր ընտրական իրավունք – Բոլոր չափահաս բնակիչները (տղամարդիկ և կանայք) քաղաքացի են և իրավունք ունեն մասնակցելու ինչպես տեղական, այնպես էլ համապետական մարմինների ընտրություններին:

Հայդուկ – Հունգարերեն՝ «հետևակ»: Դրանք մարդիկ էին, որոնք ոչ մեծ զինված խմբերով պայքարում էին օսմանյան նվաճողների դեմ: Հայկական միջավայրում տարածված էր դրա նաև արաբերեն համարժեքը՝ «ֆիդայի»:

Հեղափոխություն – Հասարակական–քաղաքական գործընթաց, որի դեպքում պատմական կարճ ժամանակահատվածում ուժային եղանակով կատարվում են արմատական փոփոխություններ: Հեղափոխությունները սովորաբար դրսևորվում են երկու ձևով: Մի դեպքում գերակայում են զուտ հասարակական հիմնախնդիրները, մյուս դեպքում դրանց գումարվում են նաև ազգային խնդիրները՝ ազատագրության, վերամիավորման, ինքնիշխան պետության ստեղծման:

Հիմնարար գիտություններ – Նպատակ ունեն ուսումնասիրելու բնության կարևորագույն օրենքներն ու օրինաչափությունները՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և այլն:

Հումանիտար գիտություններ – Հետազոտում են մարդու և նրա հասարակական կյանքի այլազան խնդիրները՝ տնտեսություն, քաղաքական կառույց, պատմություն և այլն:

Ձեռներեց – Կոչվում է նաև բուրժուա, կապիտալիստ: Ունի ունեցվածք, որը ներդնելով արտադրության, տրանսպորտի, դրամական գործարքների և այլ բնագավառներում՝ ստանում է եկամուտ: Ձեռներեցների դասն սկսվել է ձևավորվել արդյունաբերական հասարակության կայացմանը զուգընթաց:

Մանուֆակտուրա – Ծագում է լատիներեն «ձեռքի գործ», «ձեռքի աշխատանք» բառերից: Արտադրական ձեռնարկություն, որն սկսել է ձևավորվել XVI դ. վերջից: Դրանում աշխատանքը հիմնականում ձեռքով էր արվում, սակայն կար աշխատանքի բաժանում և մասնագիտացում: Յուրաքանչյուր բանվոր մասնագիտանում էր մեկ կամ մի քանի գործողության մեջ: Դա շեշտակի ավելացնում էր աշխատանքի որակը և արտադրողականությունը:

Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր – Ընդունվել է 1789 թ. օգոստոսի 26–ին Ֆրանսիայում: Հաստատում էր քաղաքացիների իրավահավասարությունը: Իշխանության աղբյուր էր ճանաչում ազգի հավաքական կամքը: Շեշտում էր մարդկանց բնական իրավունքը՝ լինելու ազատ, ունենալու մասնավոր սեփականություն, դիմակայելու ցանկացած բռնաճնշման, ազատորեն արտահայտելու իր կարծիքը, անձամբ կամ ներկայա-

ցուցիչների միջոցով մասնակցելու պետության կառավարմանը: Սա նոր դարաշրջանի կարևորագույն իրավական փաստաթղթերից է:

Մեծ հեղափոխություն – Այսպես է կոչվում 1789–1799 թթ. Ֆրանսիայում ծավալված հեղափոխությունը: Իր գաղափարներով, առաջադրած և իրագործած նպատակներով այն հսկայական ազդեցություն է ունեցել համաշխարհային պատմության վրա:

Մենատիրություն (մոնոպոլիա) – Ձեռներեցների միավորում, որը իր ձեռքն է առնում արտադրության այս կամ այն բնագավառը: Իրենք են որոշում արտադրության պայմանները և ապրանքի շուկայական գները: Մոնոպոլիաների ի հայտ գալով խախտվեց ազատ մրցակցությունը՝ արդյունաբերական հասարակության հիմնական սկզբունքներից մեկը: Շատ պետություններ, աշխատելով պաշտպանել մանր և միջին արտադրողների շահերը, մտցնում են հակամենատիրական օրենքներ:

Մերկանտիլիզմ (առևտրայնություն) – Ծագում է լատիներեն «շուկա», «առևտուր» բառերից: Նպատակն է ավելի շատ ապրանք արտահանել և ստանալ մեծ շահույթ: Այսօր էլ առևտրայնությունը համարվում է տնտեսվարության հիմնական սկզբունքներից մեկը:

Միջազգային կարմիր խաչի ընկերություն – Ձևավորվել է 1863 թ. Շվեյցարիայում՝ Ա. Դյունանի ջանքերով: Խնդիր ունի օգնելու ռազմական հակամարտություններից և բնական աղետներից տուժածներին: Կազմակերպությունն իր առաքելությունը շարունակում է առ այսօր:

Միջին խավ – Արդյունաբերական երկրներում հասարակական հիմնական խավը: Ձևավորվել է XIX դ.: Ընդգրկում էր միջին և մանր ձեռներեցներին, մտավորականությանը: Նրա շարքերը համալրեցին նաև որակյալ բանվորները: Բոլորն ապրում էին միջին բարեկեցությամբ: Այս խավը մեղմեց հարուստների և աղքատների միջև առկա հակասությունները, կայունություն հաղորդեց հասարակական կյանքին:

Յակոբիններ – Մեծ հեղափոխության ծայրահեղական թևի ներկայացուցիչներ: Նրանց ակումբը գտնվում էր Ս. Հակոբի եկեղեցում (այստեղից՝ անվանումը): Ղեկավարներից էին Մ. Ռոբեսպիերը, Ժ. Դանտոնը և այլք: Երազում էին ընդհանուր հավասարության և համաշխարհային հեղափոխության մասին: Օգտվելով երկրում ստեղծված ծանր պայմաններից՝ 1793 թ. գրավեցին իշխանությունը և հաստատեցին իրենց բռնատիրությունը: Հազարավոր մարդկանց մահվան դատապարտեցին առանց դատ ու դատաստանի: 1794 թ. նրանց բռնատիրությունը տապալվեց: Ղեկավարները մահապատժի ենթարկվեցին:

Չարտիզմ – Ծագում է անգլերեն «չարտեր» (գիր, հրովարտակ) բառից: Զանգվածային հասարակական–քաղաքական շարժում Անգլիայում 1830–1850–ական թթ.: Հիմնական պահանջներն էին համընդհանուր ընտրական իրավունքը և պետական կյանքի ժողովրդավարացումը: Ճիշտ է, կառավարությունը մերժեց չարտիստների պահանջագրերը և ճնշեց նրանց շարժումը, բայց հետագա տարիներին կատարեց նրանց պահանջները:

Պահպանողականություն (կոնսերվատիզմ) – Ծագում է լատիներեն «պահպանել», «խնայել» բառերից, հասարակական–քաղաքական հոսանք: Պահպանողական անվանում են ավանդապահ և չափավոր հայացքներ ունեցող անձանց, նաև կուսակցություններին:

Պլանտացիա – Ծագում է լատիներեն «տնկարան» բառից: Խոշոր հողատիրական տնտեսություն է: ԱՄՆ–ում դրանք տարածված էին հարավային նահանգներում: Աճեցնում էին բրինձ, շաքարեղեգ, թեյ, կակաո, սուրճ, արմավ, ծխախոտ և այլն: Հիմնական աշխատողները սևամորթ ստրուկներն էին:

Ռայխստագ – Գերմաներեն «տերություն» («կայսրություն») և «խորհուրդ» բառերից: Միացյալ Գերմանիայի գերագույն օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի անվանումը: Այստեղ ընդունվում էին համագերմանական բոլոր օրենքները:

Սյոգուն – Ճապոնիայում այսպես էին անվանում գլխավոր զորավարին, հետագայում՝ այն իշխանին, որը կայսեր անունից կառավարում էր երկիրը: Վերացվել է հեղափոխության ժամանակ (1867 թ.):

Սոցիալիզմ (ընկերվարություն) – Ձևավորվել է լուսավորականների հասարակական դաշինքի տեսության հիման վրա: Ծագում է լատիներեն «ընկեր», «դաշնակից» բառերից: Սոցիալիզմի ժամանակ մարդիկ միավորվում են ընդհանուր շահերով: Պետությունը կարգավորում է արտադրությունը և հոգ տանում, որպեսզի քաղաքացիներն օգտվեն նյութական և հոգևոր բարիքներից:

Վիգ – Քաղաքական կուսակցություն Անգլիայում, որն առաջացել է XVII դ. վերջին: XIX դ. երկրորդ կեսին ստացել է Լիբերալ անվանումը:

Վիեննայի վեհաժողով – Նապոլեոնին հաղթած պետությունների ղեկավարների համաժողովը 1814–1815 թթ.: Նպատակն էր Եվրոպայում վերականգնել նախկին կարգերը: Վերահաստատվեցին տապալված արքայատոհմերը: Վերաձևվեցին Եվրոպայի պետական սահմանները, և շատ ազգեր զրկվեցին պետություն ունենալու իրավունքից: Սա հետադիմության ժամանակավոր հաղթանակն էր: Դրանում տոն էին տալիս Ավստրիան, Ռուսաստանը, Անգլիան և Պրուսիան:

Տեղական ինքնակառավարում – Զարգացած երկրներում առանձին վարչական միավորները (գյուղական, քաղաքային բնակավայրեր) իրավունք ունեն ընտրությունների միջոցով ստեղծելու իրենց կառավարման տեղական մարմինները: Դրանք սովորաբար տնօրինում են տեղական առողջապահության, կրթության, բնապահպանության, շինարարության և այլ խնդիրներ:

Ցեղասպանություն (գենոցիդ) – Մի ազգի կողմից մեկ այլ ազգի, ընկերային կամ կրոնական խմբի լրիվ (կամ մասնակի) ֆիզիկական ոչնչացումը: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության 1948 թ. բանաձևի՝ ցեղասպանությունը մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն է: Երիտթուրքական կառավարության 1914–1916 թթ. իրականացրած հայոց զանգվածային կոտորածները գնահատվել են որպես XX դ. առաջին ցեղասպանություն, որը աշխարհին հայտնի է Հայոց մեծ եղեռն անունով:

Փակ պետություն – Պետություն, որի «դռները փակ են օտարների առջև»: Նրանց առևտրի և ձեռներեցության հնարավորություն չի տրամադրվում: Այս կերպ պետությունն աշխատում է պահպանել դարերով արմատացած իր քաղաքական, տնտեսական և մշակութային առանձնահատկությունները: Ասվածի լավագույն օրինակը Չինաստանն ու Ճապոնիան

էին: Միայն XIX դ. երկրորդ կեսին եվրոպական երկրների ճնշման ներքո նրանք ստիպված եղան բացել իրենց սահմանները:

Փառահեղ հեղափոխություն – Անգլիացիներն այսպես էին անվանում իրենց պատմության 1688–1689 թթ. իրադարձությունները: Երկրում հաստատվեց սահմանադրական միապետություն: Ընդունվեց «Իրավունքների մասին օրենքը», որն իշխանության միակ աղբյուր ճանաչեց ազգի հավաքական կամքը:

Փարիզի կոմունա – 1871 թ. մարտի 18–ին պրուսական զորքերի կողմից պաշարված Փարիզում սկսվեց ապստամբություն: Ժողովուրդն ստեղծեց իր իշխանությունը, որը պատմությանը հայտնի է Փարիզի կոմունա անվամբ: Գոյություն է ունեցել ընդամենը 72 օր: Կառավարական ուժերը դաժանությամբ ճնշել են այն:

Օսմանիզմ – Թուրք ազգայնական շարժում 1860–1870–ական թթ.: Մասնակիցներն իրենց անվանում էին նոր օսմաններ: Հիմնական նպատակն էր թուրքացնելու Օսմանյան տերության հպատակ ազգերին և ստեղծելու միասնական օսմանյան ազգ: Կարողացան մշակել և ընդունել Սահմանադրություն (1876 թ.): Սակայն նոր գահ բարձրացած Աբդուլ Համիդ II սուլթանը դա չեղյալ հայտարարեց, հալածեց և աքսորեց նոր օսմաններին:

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

XVII –XIX դ. առաջին կես – Արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլը
1600 թ. – Արևելահնդկական ընկերության ստեղծումը Անգլիայում
1640–1660 թթ. – Հեղափոխությունն Անգլիայում
1653–1658 թթ. – Կրոմվելի պրոտեկտորատը
XVII դ. երկրորդ կես – Բնական իրավունքի տեսության ստեղծումը Ջոն Լոկի կողմից
1688–1689 թթ. – «Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում
XVIII դ. – Լուսավորության դարը Եվրոպայում և Ամերիկայում
1722 թ. – Սեֆյան արքայատոհմի անկումն Իրանում
1751–1776 թթ. – Աշխարհում առաջին հանրագիտարանի հրատարակումը Դ. Դիդրոյի խմբագրությամբ
1760–ական թթ. – Արդյունաբերական հեղաշրջման սկիզբը Անգլիայում
1768 թ. – Առաջին շոգեշարժիչի ստեղծումը Ջ. Ուատտի կողմից
1775–1783 թթ. – Անկախության պատերազմը և ԱՄՆ–ի կազմավորումը
1776 թ. հուլիսի 4 – Անկախության հռչակագրի ընդունումը Ֆիլադելֆիայում
1784 թ. – Շոգեմեքենայի ստեղծումը Ջեյմս Ուատտի կողմից
1787 թ. – ԱՄՆ–ի Սահմանադրության ընդունումը
XVIII դ. վերջ–XIX դ. կես – Ռիսորջիմենտոյի մշակույթի ծաղկումն Իտալիայում
XVIII դ. վերջ – XIX դ. սկիզբ – Աֆրիկայի գաղութացման սկիզբը
1789 թ. հուլիսի 14 – Հին կարգերի խորհրդանիշ՝ Բաստիլ ամրոցի գրավումը
1789 թ. օգոստոսի 26 – «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» ընդունումը
1791 թ. – Առաջին սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում
1792–1799 թթ. – Առաջին հանրապետությունը Ֆրանսիայում
1793– 1794 թթ. – Յակոբինյան դիկտատուրան
1794 **թթ.** – Ղաջարների հարստության հաստատումը Իրանում
1799 թ. նոյեմբերի 9 – Կոնսուլության հաստատումը Ֆրանսիայում
1804–1814 թթ. – Նապոլեոն I. Առաջին կայսրությունը Ֆրանսիայում
1807 թ. – Շոգենավի ստեղծումը
1810–1820–ական թթ. – Անկախության պատերազմները Լատինական Ամերիկայում
1812 թ. – Նապոլեոն I–ի արշավանքը Ռուսաստան
1812 թ. օգոստոս – Բորոդինոյի ճակատամարտը
1813 թ. հոկտեմբեր – Լայպցիգի ճակատամարտը
1814–1815 թթ. – Վիեննայի վեհաժողովը
1821–1830 թթ. – Հույն ժողովրդի ազատագրական պատերազմը օսմանյան տիրապետության դեմ և Հունաստանի անկախացումը
1830–1850–ական թթ. – Չարտիստական շարժումը Անգլիայում

1839–1876 թթ. – Թանզիմաթի դարաշրջանը Օսմանյան կայսրությունում
1839–1842 թթ. – Ափիոնի առաջին պատերազմը
XIX դ. կես–XX դ. սկիզբ – Արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլը
1848–1849 թթ. – Հեղափոխությունները Եվրոպայում
1848–1852 թթ. – Երկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում
1851 թ. – Լոնդոնի համաշխարհային ցուցահանդեսը
1852–1870 թթ. – Երկրորդ կայսրությունը Ֆրանսիայում
1854 թ. – Ամերիկա–ճապոնական անիրավահավասար պայմանագրի կնքումը
1859–1861 թթ. – Ռումինական պետության առաջացումը
1861 թ. – Ճորտատիրության վերացումը Ռուսաստանում
1861–1865 թթ. – Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ–ում
1866 թ. – Հյուսիսգերմանական միության ստեղծումը, ավստրո–պրուսական պատերազմը
1867 թ. – Ավստրիական տերության վերածվելը Ավստրո–Հունգարիա տերության
1867–1868 թթ. – Հեղափոխությունը և կայսերական իշխանության վերականգնումը Ճապոնիայում
1870–1871 թթ. – Ֆրանս–պրուսական պատերազմը
1870 թ. սեպտեմբեր – Երրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
1871 թ. հունվար – Գերմանական տերության հռչակումը
1871 թ. մարտ–մայիս – Փարիզի կոմունան
1875 թ. – Երրորդ հանրապետության Սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում
1876–1909 թթ. – Աբդուլ Համիդ II՝ օսմանյան սուլթան
1877–1878 թթ. – Ռուս–թուրքական պատերազմը:
1878 թ. հունիս–հուլիս – Բեռլինի վեհաժողովը, Հայկական հարցի միջազգայնացումը, Սերբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և Չեռնոգորիայի անկախության ճանաչումը
1879–1882 թթ. – Եռյակ դաշինքի ստեղծումը
1886 թ. մայիսի 1 – Չիկագոյի բանվորների ելույթը, որը դաժանորեն ճնշվեց: Մայիսի 1–ը հետագայում դարձավ աշխատավորների համերաշխության միջազգային օր
1889 թ. – Ճապոնիան՝ սահմանադրական միապետություն
1895 թ. – Առաջին կինոսարքի գյուտը
1896–1897 թթ. – Առաջին դիզելային շարժիչի ստեղծումը
1904 թ. – Միության համաձայնագրի (Անտանտ) կնքումն Անգլիայի և Ֆրանսիայի միջև
1904–1905 թթ. – Ռուս–ճապոնական պատերազմը
1905–1907 թթ. – Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը
1905–1911 թթ. – Հեղափոխությունն Իրանում
1907 թ. – Ռուսաստանի միանալն Անտանտին
1908 թ. – Երիտթուրքական հեղաշրջումը
1911–1912 թթ. – Հեղափոխությունը Չինաստանում: Միապետության անկումը
1912 թ. – Օսմանյան Թուրքիայի դեմ Բալկանյան առաջին պատերազմը
1914 թ. օգոստոսի 1 – Առաջին աշխարհամարտի սկիզբը

1914 թ. – Ճակատամարտ Մառն գետի շրջանում

1914–1916 թթ. – Հայոց Մեծ եղեռնը

1915 թ. հունվար – Օսմանյան զորքի պարտությունը ռուսներից Սարիղամիշում

1915 թ. – Եռյակ դաշինքի վերածումը Քառյակ դաշինքի

1916 թ. – Վերդենի ճակատամարտը

1917 թ. փետրվարի 27 – Փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում

1917 թ. ապրիլ – ԱՄՆ–ի՝ պատերազմի մեջ մտնելը

1917 թ. հոկտեմբերի 24–25 – Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում

1918 թ. մարտի 3 – Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումը, Խորհրդային Ռուսաստանի միակողմանի դուրս գալը պատերազմից

1918 թ. հունիսի 4 – Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը, պատերազմի ավարտը Կովկասյան ճակատում

1918 թ. հոկտեմբերի 30 – Մուդրոսի զինադադարի կնքումը, Օսմանյան կայսրության պարտությունը աշխարհամարտում

1918 թ. նոյեմբերի 11 – Գերմանիայի անձնատուր լինելը. Առաջին աշխարհամարտի ավարտը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱԿՈՒԼԸ
XVII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ

1. ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 6
2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 12
3. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ 18
4. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒՂԻՆ 22
5. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 28
6. ՆԱՊՈԼԵՈՆԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ (1799–1815). 34
7. ԵՎՐՈՊԱՆ 1815–1850 ԹԹ. (ՀԵՏԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ, ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ) 40
8. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 1830–1840–ԱԿԱՆ ԹԹ. 45
9. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՆ) . 50
10. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆ) 55
11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVII – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) 61
12. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) 66
13. ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ (XVII ԴԱՐ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) 71

ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ. 75

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ԶԱՐԳԱՑԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ
XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ

14. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱԿՈՒԼԸ 80
15. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ. 85
16. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՄՆ–ՈՒՄ 90
17. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 94
18. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄՆ–ՈՒՄ ԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 98
19. ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (ԳԵՐՄԱՆԻԱ, ԻՏԱԼԻԱ) 104
20. ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (ԲԱԼԿԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ). 109

21. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԲԱԶՄԱԶԳ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԱՎՍՏՐԻԱ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ) . . . 114

22. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ (ՕՍՄԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՆ) 119

23. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ (ՃԱՊՈՆԻԱ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆ) 125

24. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 130

25. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ (1914–1918 ԹԹ.) 134

26. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 140

27. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 146

28. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 150

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ 155

ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ 159

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 169

Ալբերտ Անդրանիկի Ստեփանյան
Ռուբեն Արամի Սաֆրաստյան
Արամ Սրապիոնի Նազարյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ԴԱՐԵՐ

Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի
8–րդ դասարանի համար

Հրատարակչության տնօրեն՝ Է. Ս. Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ա. Ա. Բաղդասարյան
Խմբագիր՝ յան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Փարսադանյանյան
Համակարգչային ձևավորումը՝ Գ. Ա. Հարությունյանի
Շապիկի համակարգչային մշակումը՝ Գ. Ա. Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 000 տպ. մամ.: Տպաքանակը՝ 000 օրինակ:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28
Ֆաքս՝ (+37410) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am